

# Gorçnakan Hamarakalowt'iwn

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Duzenjian, I. N. (1832-1902). Gorçnakan Hamarakalowt'iwn. 1884.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

\*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

\*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

\*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

\*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter [reutilisation@bnf.fr](mailto:reutilisation@bnf.fr).

ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՈՐ ՊԱՐՈՒՆԱԿԷ

ՄԱՅՆ Ա. -- Տարերք վաճառականութեան . -- Վաճառականական բոլոր  
ձեւերն եւ օրինակներն , ինչպէս են , Հաշուեցոյց , Հանազան տեսակ  
տոմսակք , Վիճաթից եւ Տպագիր Փոխանակագիրք , Ղնթացիկ-  
հաշիւք , Ձեղի ջուրցակք եւ այլն . -- Վաճառականական կարեւոր  
հաշիւք . -- Բաղաւածք վաճառականական օրինագրոց եւ  
դրոշմաւորոց : ՄԱՅՆ Բ. -- Տարաբանագրութիւն . -- Պարզ եւ  
Կրկնակ-տոմար . -- Բառնայուցակ :

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՃՈՐՈՑԵՆԸ ԿՍՐՆԻՐ ԵՐԻՇԼՈՒԹՅՈՒՆ

Ի ՊՆՏԱՅԻՆ ԳՐԱՐԱՆՈՒՆ

Ի Ե. ՅՈՒՋԵՆՏԵԱՆԷ


ՎԱՅՆՈՒՆՆԵՐ ԳՆԱՅԻՆՆԵՐՈՒՆ ՍԵՆԵՐԸ Կ ՊՈՒՆՈՒՆ



Կ. ՊՈՒՆՈՒՆ

ՏՊԱԳՐ. ՆՈՒՆ Կ. ՊՈՒՆՈՒՆՆԵՐ

1884










Ն. Ն.:

64236  
254

**Գ Ո Ր Ժ Ն Ն Կ Ա Ն**  
**Հ Ա Մ Ա Ր Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն**

Հանրապետության կառավարության  
Պատվոքի վարչության հրամանով

Հեղինակին անորսագրութիւնը չկրող  
օրինակք: անխաշեր են:



---

Տպագրիչ եւ փորագրիչ Նլան Կ. Պերպերեան եւ ԸՆԿ.

Պոլիս, Սուլթան Համամ, Հօճախան փողոց, 14

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՈՐ ՊԱՐՈՒՆ ԱԿԷ

ՄԱՍՆ Ա. — Տարերք վաճառականութեան . — Վաճառականական բոլոր  
ձեւերն եւ օրինակներն , ինչպէս են , Հաշուեցոյց , Զանազան տեսակ  
տոմսակք , Վիճառիպ եւ Տպագիր Փոխանակագիրք , Ընթացիկ-  
հաշիւք , Զեղչի ցուցակք եւայլն . — Վաճառականական կարեւոր  
հաշիւք . — Քաղուածք վաճառականական օրինագրոց եւ  
դրոյմատրոց : ՄԱՍՆ Բ. — Տոմարակալութիւն . — Պարզ եւ  
Կրկնակ-տոմար . — Բառացուցակ :


Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՃՈՒՆՑԵՆԸ ԿՐԵՒՈՐ ՅԵՒԵԼՈՒՆԹՈՎՔ

Ի ՊԵՏՍ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

Ի Ն. ՏԻԻԶԷՆՃԵԱՆԷ

ՎԱՆԵՐԱՅԵԱԼ ՎԱՃՅՈՒԱԿԱՆՆԵԿԱՆ ՍԵՆԵԿԷՆ Կ. ՊՈԼՍՈՅ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1884

THE  
LIBRARY  
OF THE  
CONGRESS  
PHOTODUPLICATION  
SERVICES  
DIVISION  
510 MAZDAH DRIVE  
ALEXANDRIA, VA 22304



# ՎԱՃԱՌ-ԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՆԵԱԿ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

## Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր



ՎԱՃԱՌ-ԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՆԵԱԿ Կ. ՊՈԼՍՈՅ

Տեսնելով Տ. Նշան Տիւզնեանի վերջին 13/25 Յունիս ամսա-  
թուով մատուցած խնդրագիրն, որով կուզէր վաւերացման վկա-  
յագիր մը ստանալ « Գործնական Համարակալութիւն » անուն  
գրքին համար, զոր ինք երկասիրած եւ ՚ի լոյս ընծայած է  
երկրորդ տպագրութեամբ եւ հայերէն լեզուաւ, հրամանաւ Կայ-  
սերական Նախարարութեան հանրային կրթութեան :

Ի նկատ առնելով տեղեկագիրն Յանձնախմբին ում պաշտօն  
տրուած էր քննել սոյն գիրքն :

Նկատելով որ նմանօրինակ հանրագուտ եւ վաճառականա-  
կան գործեր հարկ է որ ըստ ամենայնի քաջալերուին .

Տեսնելով ժողովոյն որոշումը ,

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ԹԷ՝

Վաւերացուցած է վերոյիշեալ գիրքն, որոյ մի օրինակն՝ հե-  
ղինակին ստորագրութիւնը կրող եւերեք հարիւր քառասուն եւ  
չորս երեսներէ բաղկացեալ, Սենեկին դիւանատան մէջ պահուած  
է ի թիւ 71, եւ

ԿԸ ՅԱՆՁՆԷ սոյն վկայագիրս առ Տ. Նշան Տիւզնեան,  
հեղինակ յիշեալ գրքին, ի դէպ ժամու եւ ի տեղու զայն գործա-  
ծելու համար :


Կ. Պոլիս, 18/30 Օգոստոս 1884

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
(Ստոր.) ՍԲ. ԱԼԷԳՍԱՆՏՐԻՏԻ

ՆԱԽԱԳԱՀ  
(Ստոր.) Ա. ԱԶԱՐԵԱՆ

(Կնիք)





**CERTIFICAT.**

LA CHAMBRE DE COMMERCE DE CONSTANTINOPLE

Vu la demande en date du 25 Juin dernier présentée par M. Nichan Duzéndjian à l'effet d'obtenir un certificat d'approbation pour l'ouvrage intitulé *Comptabilité pratique* qu'il vient de composer et publier en seconde édition et en langue arménienne, par autorisation du Ministère Impérial de l'Instruction publique ;

Prenant en considération le rapport de la Commission chargée d'examiner cet ouvrage ;

Considérant que de pareilles œuvres d'utilité publique et commerciale doivent de toute manière être encouragées ;

Vu l'arrêté de l'Assemblée ;

**DÉCLARE**

Avoir approuvé le susdit ouvrage, dont un exemplaire revêtu de la signature de l'auteur et contenant trois cent quarante quatre pages est déposé aux archives de la Chambre sub N° 71, et

**DÉLIVRE** le présent certificat à M. Nichan Duzéndjian, auteur du dit ouvrage, pour en faire usage en temps et lieu opportuns.

A Constantinople, cejourd'hui. le 18/30 Août 1884.

*Le Secrétaire Général*

(Signé) : SP. ALEXANDRIDI.

*Le Président*

(Signé) : A. AZARIAN.

THE UNIVERSITY OF CHICAGO  
PHYSICS DEPARTMENT

REPORT OF THE  
COMMISSION ON THE STATUS OF  
THE PHYSICS DEPARTMENT

FOR THE YEAR 1967

CHICAGO, ILLINOIS

1968

PHYSICS DEPARTMENT

CHICAGO, ILLINOIS

1968

PHYSICS DEPARTMENT

CHICAGO, ILLINOIS

1968

ԱՊ

ՄԵԾԱՊԱՏԻԻ ՏԷՐ

Տ. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

ՆՈՒՐԻ

ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆՕՔ

Ի ՆՁԱՆ ՄԵԾԻ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Ն. ՏԻԶԷՆՃԵԱՆ

40 10

THE UNIVERSITY OF

CHICAGO

LIBRARY

1000 S. MICHIGAN AVE.

CHICAGO, ILL. 60607

UNIVERSITY OF CHICAGO

## Յ Ա Ռ Ն Ա Յ Ա Ք Ն Ն

Ներկայ գործնյա վրայ խօսելի յառաջ՝ պարտ անձին համարիմ յայտնել աստանօր իմ անկեղծ շնորհակալիքս այն ամեն սենցուրեանց եւ ուսուցչաց, որք գնահատելով իմ Գործնական Տոմարագիտութեան (\*) արժէքն, հաճեցան իբր դասագիրք ընդունիլ զայն իրենց խնամոց յանձնուած վարժարանաց մէջ:

Իմ առաջին աշխատասիրութեան գոհած ընդունելութիւնը բաւական քաջայերութիւն մ'եր ինձ համար, եւ միանգամայն ճշմարիտ եւ զօրաւոր ապացոյց մը՝ թէ ազգը գիտե ճանչնայ խնամով պատրաստուած օգտակար գործոց յարգը եւ թէ այդպիսի գործոց համար տարուած աշխատութիւնք յաւետ կամ նուազ արդիւնաւոր կրնան ըլլալ: Այս համոզմամբ եւ վստահութեամբ՝ համարձակեցայ ձեռնարկել այս երկրորդ տպագրութեան, ջխնայելով ռեւէջանք եւ խնամք զայն առաւել կատարեալ եւ ընդարձակ գործելու համար ըստ զարգացման եւ յառաջադիմութեան ազգային վաճառականութեան:

Ո՛րչափ որ ճանչցուած է համարակալութեան ուսման կարեւորութիւնը, նոյնչափ եւ զայն աւանդող գրքին կատարելութիւնը յոյժ զգայի եղած է այն ազգաց մէջ, յորս վաճառականութիւնը հսկայաբայլ յառաջադիմած է, մինչ զի նորանոր աշխատութիւնք միմեանց կը յաշորդեն, մին քան զմիւսն առաւել ճոխ, առաւել կատարեալ:

Արդ թանկ որ մեր ազգն այ ըստ զարգացման երկրին վաճառականութեան եւս քան զեւս կ'զգայ եւ կը ճանչնայ համարակալութեան պետքը, հարկ անհրաժեշտ է ուրեմն որ ունենայ միշտ իւր վարժարանաց համար դիւրութեանց եղանակի մը վրայ հիմնեալ ըստ բաւականին կատարեալ դասագիրք մը Տոմարակալութեան, որ կարենայ ըստ ամենայնի գոհացնել իւր պետքը: Կը յուսամ որ իմ այս աշխատասիրութիւնս պիտի բաւէ զեք առ այժմ այդ ծառայութիւն մատուցանել ազգային վարժարանաց:

Ուսանող մը բուն Տոմարակալութեան սկսելի կտմ երիտասարդ

(\*) Գործնական Տոմարագիտութեան տպագրեալ է տպարանի Արամեան և Պ. Պ. շահ 1878:

մը առեւտրական գործոց ձեռնարկելէ յառաջ՝ պէտք է որ ստացած լինի, կարելի եղածին չափ, վաճառականական եւ դրամական գործոց վերաբերեալ տարրական կարեւոր ծանօթութիւններն, առանց որոց, լոկ չոր Տոմարակայութիւն մը գիտնալով, տեսականէն գործնականին անցած պահուն, կամ թէ ըսեմք, դպրոցական շրջանակէն վաճառականական ասպարեզը մտած ժամանակ, իր անձին եւ կամ այլոց ծանօթութեան մէջ օգտակար լինելու համար բաւական երկար ժամանակ պիտի անցընէ ասպարդիւն կերպով, մինչեւ որ գործի մէջ ուսանի զանոնք. եւ այն՝ եթէ կանոնաւոր եւ օրինաւոր համարակայութեան համաձայն գործ վարող վաճառականի մը քով մտնելու բախտն ունենայ, որոց նուագութիւնը արդարեւ ցաւալի եւ ճշմարիտ իրողութիւն մ'է այսօր : Այս տեսութեամբ, սոյն գործս, ինչպէս նախորդն, երկու գլխաւոր մասանց բաժնեցի. առաջին մասը յատկացուցի վաճառականական ամենահարկաւոր գիտելեաց, ուր աշակերտն պիտի ուսանի թէ ի՛նչ է վաճառականութիւնը կամ առեւտուրը, պիտի ծանօթանայ վաճառականութեան եւ դրամական բազմատեսակ գործառնութեանց, ինչպէս են, Գնումն, վաճառումն, Գանձումն, վճարումն, Յանձնառութիւն եւլն. պիտի տեսնէ անդ՝ վաճառականական զանազան թղթոց ձեւերն եւ օրինակներն իրենց ընդարձակ բացատրութիւններովն. ինչպէս են, հաշուեցոյց, փոխանակագիր, զանազան տոմսակներ, բեռնագիր, զնման եւ վաճառման հաշիւներ եւլն : Այս ամէն թղթերն գործի մէջ ընդհանրապէս գաղղիերէն լեզուաւ գործածուելուն համար, անոնց գաղղիերէն օրինակներն եւս դրած են ՚ի դիւրութիւն ուսանողին : Նաեւ կը տեղեկանայ թէ՛ ո՛չք են վաճառական, գործարանատեր, մեծարանակ-վաճառական, փոքրարանակ-վաճառական, յանձնառու ասարանաց, նաւայարդար եւլն : Ընթացիկ-հաշիւներն, որոց ամէն տեսակներն եւս դրած են, այս մասին մէջ բաւական ընդարձակ տեղ մը գրաւած են, եւ այս ալ իրաւամբ, վասնզի վաճառականութեան մէջ մեծ կարեւորութիւն ունին անոնք :

վաճառականական թղթոց օրինակներն տալով եւեթ ջբաւականացայ, այլ նաեւ օգտակար դատեցի իւրաքանչիւրին տակ մասնաւոր հրահանգներ դնել առ ՚ի վարժութիւն, որոց ձեւերն աշակերտը պարտի ինքնին պատրաստել, որով տեսականին հետ՝ մասամբ իւր գործնականն ալ կ'ուսանի : Այս մասին մէջ պիտի գտնէ նաեւ վաճառականութեան եւ սեղանաւորութեան մէջ ամենակարեւոր եղող հաշիւներն, ինչպէս են, տոկոսի, գեղջի, փոխանակագրոց եւլն հաշիւներ, զորս մանրամասնօրէն եւ դիւրեմբընելի եղանակաւ մը ցոյց տուած են :

վաճառականական թղթոց վրայ խօսած ժամանակս, ոչ թէ



առեւորդ ինչ համարեցի, այլ օգտակար իսկ դատեցի յառաջ բերել Վաճառականական Օրինագրքին (\*) յիշեալ քղթոց վերաբերեալ յօդուածներն, որոց ծանօթութիւնն եւս ոչ նուազ կարեւոր է քե՛ր ուսանողաց եւ քե՛ր արդէն վաճառականութեամբ զբաղող ամեն անձանց համար: Այս առթիւ մասնաւորապէս կը յանձնարարեմ առեւտրով զբաղող գաւառացի եւ Պոլսեցի ազգայնոց, որ քե՛ր Վաճառականական Օրինագրքին եւ քե՛ր Դրօշմատրոց Օրինատետրէն յառաջ բերած յօդուածներս ուշադրութեամբ սերտեն: Երկրորդ մասը կը պարունակէ Տոմարակալութիւնն. ուսանողն որ Ա. մասին մեջ վաճառականութեան այլ եւ այլ գործերն ուսան, ճանչցան այն ամեն քղթերն որք զանազան ձեւերով վաճառականական հրապարակին վրայ կը շրջաբերին, եւլն, այս երկրորդ մասն սովբած ժամանակ՝ անոնց վերաբերեալ զանազան գործողութեանց արձանագրութեան համար դժուարութեան չպիտի մատնուի բաւական է որ Տոմարակալութեան սկզբունքն լաւ ըմբռնած լինի:

Վաճառականութեան մեջ՝ սովորաբար գործածելի բազում օտար բառեր կան, որոց հարազատ նշանակութիւնն ունեցող մասնաւոր բառեր քեւս կը պակասին առ մեզ, բայց անոնք որ երկարժամանակեայ կիրառութեամբ ընդունուած ու ճանչցուած են՝ գործածեցի, իսկ չեղածներուն համար ըստ կարելւոյն հայերէն բառեր յարմարցուցի. միանգամայն գործոյս վերջը վաճառականական բառերու ցուցակ մ՛այ դրի անոնց առաջ նշանակելով իրենց գաղղիերէն նշանակութիւններն, որպէսզի ուսանողն գործի մեջ այդ տեսակ բառեր լսած կամ տեսած ժամանակ չշփոթի:

Վերջապէս օգտակար համարեցի գետեղել դասագրքիս սկիզբն հրահանգալից նամակ մը, յորում գրեթէ կատարելապէս նշանակուած են այն յատկութիւնք եւ ծանօթութիւնք, որք հարկաւոր են վաճառականութեան պատուաւոր ասպարէզը մտնելու փափար ունեցող ամեն կարգի անձանց:

Ի դեպ է աստ ըսել քե՛ր անոնք որ տակաւին կը կարծեն քե՛ր օտար դասագրոց միջոցաւ այ լաւ կրնան ուսանիլ աշակերտք համարակալութիւնն, մեծապէս կը սխալին. զի՛ եթէ իմ այս աշխատասիրութիւն ենթադրելով իսկ քե՛ր չունենայ ուրիշ առաւելութիւններ օտար դասագրոց վրայ, գեթ սա կրկին եական առաւելութիւններն ունի որ նախ՝ գաղղիերէն գործոց մեջ չկան այն հարկաւոր ծանօթութիւնք, որք բնիկ վաճառականութեան կը վերաբերին եւ որոց առաւել պէտք ունի մեր վարժարաններէն ել-

(\*) Թիմարէի Վաճառականութիւն:


նող է. վաճառականութեան ասպարէզը մտնելու պատրաստուող  
 սերունդը , եւ երկրորդ թե՛ օտար դասագրոց միջոցաւ զայն ու-  
 սանելու համար հարկ պիտի ըլլայ անպատճառ օտար լեզու մը  
 սովորիլ կամ սովրած ըլլայ կատարեալ կերպով , որ ոչ նուազ  
 դժուարութիւն մ'է բազմաց եւ մանաւանդ գաւառացւոց համար .  
 եւ ճիշդ այս պատճառաւ է որ յաճախ մեր ազգային դպրոցական  
 շրջանն աւարտող պատանիք այս կարեւոր ուսման վրայ վերա-  
 ցական կամ անկայուն գաղափար մը միայն ստանալով կը մեկնին  
 անտի : Իսկ այս ամէն նկատողութենէ վեր , ջվայէ՞ր որ մեր այ  
 մեր ուսանողութեան համար հաշուակալութեան յատուկ դա-  
 սագիրք մ'ունենամք :

Իմ ըսածներուս ճշմարտութիւնն է աշխատասիրութեանս ար-  
 փքն առաւելապէս անոնք միայն կարող են գնահատել եւ գնա-  
 հատած են , որք արդէն գործի մեջ ըլլալով ի մօտոյ գիտեն եւ  
 կ'զգան անոր կարեւորութիւնն ու օգտակարութիւնը :

Քաջայոյս եմ եւ իրանունք իսկ ունիմ յուսալու թե՛ ներկայ  
 գործս եւս , գոր՛ ինչպէս ըսի , առաւել օգտակար լաւելուածովք  
 ճոխացուցած եմ քան զիւր նախորդն , իւր արժանի ընդունելու-  
 քիւնը պիտի գտնէ թե՛ ազգային վարժարանաց պատուարժան  
 տեսչութեանց կողմանէ եւ թե՛ այն ամէն երիտասարդաց , որք  
 վաճառականութեան պատուաւոր ասպարէզը թեւակօխելու կը  
 պատրաստուին :

Ն. Տ.

Պէշկեթաշ , 1 Յունիսար 1884



Ան երիտասարդ ոմն որ՝ վաճառականութեան ասպարեզն մտնելու համար՝  
խորհուրդ կը խնդրէր փորձառու վաճառականէ մը :

Ազնիւ բարեկամ ,

Ընկալայ քու նամակն , յորում առեւտրական ասպարեզը մտնելու  
դիտաւորութիւնդ յայտնելով խորհուրդ կը հարցնես ինձ այդ մա-  
սին , և կը վաճառքիս գիտնալ թէ ո՞չք են ասպարեզով միջոցք բարի և  
պարկեշտ վաճառական մը լինելու :

Ահաւասիկ իմ խորհուրդս այդ մասին :

Յառաջ քան զամենայն , ջանա՛ ըստ կարի պէտք եղած ծանօթու-  
թիւններն ստանալ , և մանաւանդ այն ծանօթութիւններն՝ որք վա-  
ճառականութեան կը վերաբերին . միանդամայն պէտք է ունենաա  
անստգիւտ , ուղիղ և անկեղծ ընթացք մը , որով կարենաս գտնել  
կանխաւ վստահութիւն և ընդարձակ վարկ , որք էական սլայման-  
ներն են տեւականութեան և զարգացման ամէն ձեռնարկի :

Մի մտաբերեր դու ինքնին գործի ձեռնարկելու շատ կանուխ ,  
վասն զի երիտասարդ մը չունի տակաւին այն փորձաւորութիւնն և  
գիտութիւնն , որք հարկաւոր են այդպիսի ձեռնարկի մը համար ,  
մի ընէր նոյնը նաեւ ծերութեան մէջ , յորում մարդ չունենալով բը-  
նականաբար այն եռանդն և կորովն , զորս պարտի ՚ի կիր առնուլ  
իւր գործոց մէջ , անխոյժ կը գտնուի բարեղէս առիթներէն օգուտ  
քաղելու . ծերութեան յատուկ անդդայութեան և դանդաղութեան  
պատճառաւ . չափազանց զգուշութիւնն եւս երբեմն անակնկալ կեր-  
պով կործանուին կը պատճառէ մարդուս :

Յեռնարկելիք գործոյդ ընդարձակութեանը համեմատ և անձնա-  
կան պէտքերդ ու տանդ ծախքերն հոգալու չափ դրամագլուխ ձեռք  
չբերած գործի մի սխիւր : Ասա ՚ի միտ առ թէ , ըստ բնական՝ օրի-  
նաց ոչինչ կը լինի յոչնչէ , և թէ՛ այլոց քսակէն քաղելով՝ մարդ կը  
յետնի փոխանա՛լ յառաջդիմելու , և վերջապէս կը կործանի :

Առաջին և դիւաւոր աշխատութիւնդ լինի բոլոր առմարներդ  
կարգի և կանոնի դնել . միշտ նայէ՛ որ բոլոր գործողութիւններդ  
արձանագրես կամ արձանագրել տաս փորձ և հմուտ հաշուակալի  
մը ամենայն ճշգութեամբ և կարգաւորութեամբ :

Փոյթ ունեցիր մանաւանդ նամակներդ կանոնաւոր և յատակ ո-  
ճով գրելու , որովհետեւ ամէն տեսակ գործոց մէջ , մանաւանդ  
վաճառականութեան մէջ՝ լաւ նամակագրութիւն գիտնալն հազուա-  
գիւտ և յոյժ յարգի է :

Մի ծուլանար քեզ գրուած նամակաց պատասխաններն ժամա-  
նակին տալու , վասն զի այդ կերպով կերեւին քու փոյթդ և ու-  
շադրութիւնդ , զոր ունիս քու թղթակցացդ շահուց նկատմամբ , և  
այդ կերպով կը յաջողիս նորանոր գործեր դանել :

Ջանա՛ ամէն կողմն պատուաւոր թղթակիցներ ունենալու , ծանօթ իրենց ուղղամտութեամբն , ճշդապահութեամբն և յարատեւութեամբն :

Զգոյշ կեցիր անոնցմէ որ երկդիմի բնաւորութիւն և կասկածելի համբաւ մ'ունին . զգալապէս պիտի աճի քու վարկդ ցորչափ տեսնեն որ դու միմիայն քաջընտիր տուներու հետ գործ կընես :

Պարկեշտութեամբ և իբրեւ խոհեմ և խելացի մարդ վարուէ՛ ամէնուն հետ և ամէն պարագայի մէջ . այդու պիտի առաւելու քու պատիւդ և այդու ձեռնտուութիւն պիտի կարենաս գտնել քու նեղութեան կամ կարօտութեան ժամանակներուդ մէջ :

Մի՛ մոռնար առջի վիճակդ՝ երբ բարերաստ կացութիւն մ'ունենաս , մի՛ հպարտանար երբ գործիդ մէջ յաջողութիւն գտնես , և երբէք մի՛ անարգեր դժբախտ մարդիկն . յիշէ՛ որ բախտին մէկ ձախողուածքը միլիօններն յոչինչ կը դարձնէ :

Քու խոստումներդ ու պարտականութիւններդ ճշդութեամբ եւ ուշադրութեամբ կատարէ՛ :

Առանց լաւ խորհելու , երբէք մի՛ ձեռնարկեր գործի , այլ կանխաւ լաւ խորհէ՛ և կըռէ՛ ինչ որ պիտի ընես . շատ քիչ անգամ տեսնուած է որ յախուռն և անխորհուրդ կերպով գործի ձեռնարկող մարդիկ յաջողին :

Կանոնաւոր և համեստ կենցաղ մը վարէ՛ . կարգ ու կանոն դիր բոլոր ծախուցդ . այդ բանը մարդուս վարկը կը պահպանէ . աւելի դիւրին է խնայել քան թէ շահիլ . և խնայողութեամբ պահուած ստակ մը իրական շահ մ'է :

Եթէ՛ նեղութեան կամ տաղնապալի կացութեան մէջ գտնուիս , նախ և առաջ խորհուրդ հարցո՛ւր . բայց ջանա՛ զդուշութեամբ ընտրել այնպիսի խորհրդատու մը , որ անշահասէր և լուսամիտ անձ մ'ըլլայ . և նայէ՛ որ այն կարգի մարդոց մէջէն ընտրես որ քեզ նման ճիշդ միւսնոյն պարագային մէջ գտնուած ըլլան . և ապա այլոց ոմանց կարծիքն ալ ա՛ռ և ըստ այնմ շարժէ : Շատ վաճառականք որ կործանած են և կը կործանին , պատճառն ուրիշ բան չէ , եթէ ոչ՝ այլոց խորհուրդ չհարցնելն և իրենց անձին վրայ չափազանց վստահութիւն ունենալն :

Գործունեայ , աշխատասէր , պարկեշտ և արդարասէր եղի՛ր , բայց չըլլայ թէ կարծես որ քու ունեցած տաղանդդ և բարեմասնութիւններդ ապահով երաշխիք են՝ քեզ համար բարերաստ յաջողութիւն մը պատրաստելու . ո՛չ . այլ գէթ 'ի ներքուստ հաւաստի պիտի մնաս խղճմտանքդ մաքուր և անսողիւտ ըլլալուն , այն է խոհեմութեան և իմաստութեան կանոնաց համաձայն գործած ըլլալուդ . և ինչ որ ալ լինի քու գործոցդ վախճանը , պիտի վայելես միշտ խելացի մարդոց յարգանքն և հաւանութիւնն :

# ԳՈՐԾՆԱԿԱՆ

## ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

---

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

---

## ՏԱՐԵՐՔ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

---

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

---

### Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Վաճառականութիւնը մարդկային գործունէութեան նշաններէն մին է . մին է այն գործողութիւններէն , որոցմով միայն մարդիկ իրենց պէտքերն կը հոգան . վերջապէս այն շղթային մէկ օղակն է , որ նախ անհատներն՝ և ապա ազգերն միմեանց հետ հաղորդակցութեան մէջ կը դնէ : Վաճառականութիւնը՝ ապրանք , դրամ , արժէթուղթ , միով բանիւ , երկրագործութեան և ճարտարութեան ամէն տեսակ արտադրութիւններն փոխանակելու , և այս տեսակ փոխանակութեանց վերաբերեալ բաղմազան գործողութեանց կամ ձեռնարկութեանց կիրառութիւնն է :

Նախնական ժամանակներն՝ վաճառականութիւնը կամ առեւտուրն ուրիշ կերպիւ չէր ըլլար , բայց եթէ անհրաժեշտ պիտանի եղող կամ զարդի վերաբերեալ իրերն՝ նմանօրինակ կամ տարասեռ նիւթոց հետ փոխանակելով . զորօրինակ , հողագործ մը երբ երկաթի պէտք ունենար , մաս մը ցորեն կը բերէր քաղաք և կը փոխանակէր զայն երկաթի հետ , այսինքն , մաս մը ցորեն կուտար և տեղը մաս մը երկաթ կառնէր : Սակայն ժամանակէ մը յետոյ , մարդիկ՝ այս տեսակ առեւտրոց դժուարութիւններն և անոր պատճառած անտեղութիւններն ու վնասներն տեսնելով , միւս կողմէ



ուսկին և արծաթն գտնուելով և անոնցմէ դրամ շինուելով, սկսան այլեւս դրամը գործածել իբր լաւագոյն միջոց փոխանակութեան ամէն տեսակ ապրանաց : Այս կերպով, հողագործը՝ փոխանակ ուղղակի մի փոխանակութիւն ընելու, երկու փոխանակութիւն կրնէ յաջորդաբար . հետեւապէս ցորենը քաղաք բերող և փոխարէն երկաթ առնուլ ուզող հողագործը՝ նախ կը վաճառէ իւր ցորենը և փոխարէն դրամ կառնէ, յետոյ դրամը կուտայ և երկաթ կը գնէ : Աւրոյիչեալ երկու գործողութեամբ՝ հողագործը էապէս դարձեալ փոխանակած եղաւ իւր ցորենը երկաթի հետ : Սակայն դրամին գործածութեամբն հողագործը մի քանի առուելութիւններ ունեցաւ . զորօրինակ, կարող եղաւ իւր ցորենը վաճառել այնպիսի մէկու մը, որ անոր պէտք ունենալով թերեւս պատրաստ էր երկաթը ծախողէն աւելի գին վճարել ցորենին . և երկրորդ, դրամն ՚ի ձեռին ունենալով՝ կարող էր այլ եւս երկաթն այնպիսի մէկէ մը գնել, որ դրամի պէտք ունենալով՝ յօժար էր ուրիշներէ աւելի աժան գնով ծախել իւր երկաթը :

Այս կերպով, երկու ապրանաց, այն է՝ ցորենին և երկաթին արժէքներն բաղդատուեցան և երկուքին համար առանձին գիներ որոշուեցան ըստ չափու . վասնզի, եթէ հարիւր հօխայ ցորենը 200 ղուրուշի վաճառուեցաւ և մէկ կենդինար երկաթն ալ նոյնչափ դրամով առնուեցաւ, ըսել է թէ հարիւր հօխայ ցորենը և մէկ կենդինար երկաթն հաւասար արժէք ունեցան :

Ժամանակէ մ'ալ վերջը՝ վարկի սովորութիւնն հաստատուելով, անոնք որ իրենց առած ապրանաց փոխարէն ապրանք կամ դրամ տալու դիւրութիւն չունէին, իրենց ստորագրութեամբը քղքեր տուին, որք իբր դրամ չըջարեութեան մէջ գործածուեցան :

Այսպէս ահա վաճառականութիւնը՝ փոխանակութեան միջոցներուն բաղմանալովն սկսաւ հետզհետէ զարգանալ և հասաւ այն աստիճանին յորում կը գտնուի այսօր :

Քաղաքակրթութեան յառաջադիմութեամբն ինչպէս որ աշխատութիւնը բաժնուեցաւ մարդոց մէջ, և արուեստից զանազան ճիւղերն զատուեցան իրարմէ ; վաճառականութեան գործերն ալ այլեայլ դասերու բաժնուեցան : Այսպէս, վաճառականութեան երկու գլխաւոր ճիւղերն, այն է՝ վաճառաց արտածութեան և ներածութեան գործերն զատուեցան ներքին վաճառականութենէն, մեծաքանակ-վաճառականութիւնը՝ փոքրաքանակ-վաճառականութենէն, ինչպէս նաև զատուեցան միջնորդութեան, ապրանք փոխադրելու կամ պահելու, ստակ գանձելու և վճարելու գործերն, և այլն :

**ՓՈՐԾՔ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ**

Օրէնքը վաճառականական գործ կը ճանչնայ ամէն տեսակ ապրանքայ գնումն և անոնց վաճառումը թէ՛ նախնական վիճակի մէջ և թէ՛ զանոնք գործելէ յետոյ , գործածութեան համար ո՛ր եւ է վաճառելի իր ուրիշի մը վարձու տալն , ինչպէս նաեւ ճարտարութեան , յանձնարարութեան , միջնորդութեան , գործակալութեան , փոխանակագրի գործողութեանց , սեղանաւորութեան , ապրանքայ փոխադրութեան , ասլահովագրութեան , պայմանագրութեան և այլն ձեռնարկութիւններն :

**ԱՊՐԱՆՔ ԿՄՐ ՎԱՃԱՌՔ**

Փոխանակութեան համար գործածուած ամէն իր ապրանք կամ վաճառք կըսուի . կամ աւելի որոշ կերպիւ ըսելով , թէ՛ նախնական և թէ՛ գործուած ամէն նիւթք , ինչպէս են , այծի մորթն և կոշկակարին շինած կոշիկներն , խաղողն և գինեւանին սլաորատած գինին , ցորենն և հացը , փայտն և ձեռակերտք , որք վաճառատուններու , կրպակներու , տօնավաճառներու , շուկայներու մէջ և հրատարակներու վրայ կը ծախուին վաճառք կըսուին :

Սակայն հողագործէն , կոշկակարէն , գինեւանէն և կամ որեւիցէ մէկէ մը առնուած վաճառքն այլեւս վաճառք չըսուիր , երբ գնողն միմիայն իւր պիտոյից գործածելու համար առած ըլլայ զայն , և ո՛չ վերատին ծախելու :

**ՎԱՃԱՌԵԼԻ ԻՐՔ**

Ամէն ինչ որ կը գնուի , կը վաճառուի , կը փոխանակուի , կը պեղչուի , և վարձու կը տրուի , վաճառականական լեզուաւ , վաճառելի իրք կըսուին : Հետեւաբար արմտիք , դրամք , մետաղեայ նիւթք , տոմսակք , փոխանակագիրք , պետական արժէթուղթք , բաժնեթուղթք , վաճառականական կարասիք , դրամագլուխ , նաւ և շէնք , և այլն , վաճառելի իրեր են :

**ՎԱՃԱՌԱԿԱՆՔ**

Օրէնքը վաճառական կը ճանչնայ զանոնք , որք միմիայն և գըլխաւորապէս առեւտրական գործերով կ'զբաղին , այսինքն ապրանք կը գնեն՝ ոչ թէ սպառելու՝ այլ վաճառելու համար , և կամ ապրանք կը վաճառեն և անոնց տեղ ուրիշ ապրանք կը գնեն վերատին վաճառելու նպատակաւ :

Ընդհանրապէս վաճառականին գործն է ապրանքը գնել այն տեղէն ուր աւելի աժան են կամ անոնց արտադրութեան տեղէն , և զանոնք փոխադրել ու ծախել ուրիշ տեղեր , ուր աւելի սուղ են և ուր



աւելի պէտք կայ անոնց, նաև աժան գնով մեծ քանակութեամբ գնել և սուղ գնով փոքր քանակութեամբ ծախել : Երբեմն վաճառականը շահադիտութիւն ալ կրնէ . այսինքն, ապրանքի մը գինը անկած ատեն կը գնէ զայն , և կսպասէ որ գինը վրայ դրած ատեն ծախէ :

Հոս յառաջ կը բերեմք Վաճառականական Օրինագրքին հետեւեալ երկու յօդուածներն .

Յօդ. 1. Թիճարէթի մէջըլու օլան վէ թիճարէթէ տայիր սլա սէնէտաթ ադթը մուգավէլէ իտէն էշխասա թիւճար իթլագ օլունուր » :

Յօդ. 2 « Եիրմի պիր եաշընը թէքմիլ իտէն շախս ուսուլու թիճարէթէ սիւլիւքէ մէզուն օլուպ , օն սէքիզ եաշընը թէքմիլ իտէնլէր տախի վէլի վէ եա վասիսի թարաֆընտան թէքքէֆիւլ վէ թիճարէթխանէ ճանխիլինտէն արայէի բուխսաթ օլամատրգճա թիճարէթէ սիւլիւքէ մէզուն օլմայա » :

Վաճառականութեան սլարապող անձը պէտք է ունենայ հետեւեալ ծանօթութիւններն .

1. Իւր ձեռնարկած վաճառականութեան վերաբերեալ ապրանայ վրայ կատարեալ և ճիշդ տեղեկութիւն ունենալու համար պէտք է գիտնայ .

Ա. Ապրանքին վաճառականական և , եթէ ունի , գիտական անունը :

Բ. Թէ ապրանք մը ո՛ր երկրի մէջ կարտադրի և ո՛ր երկրէն կը բերուի :

Գ. Թէ ի՛նչ բանի և ի՛նչ կերպով կը գործածուի :

Դ. Զանոնք ծախելու համար պէտք եղած սովորութիւններն , սլայմաններն , և անոնց փոխարէնն գանձելու եղանակն և ծախու առնուած տեղէն մինչեւ վաճառատունն ըլլալիք ծախքերն .

Ե. Ապրանքի մը կեղծը :

Զ. Ապրանք մը պահելու և պատասխարելու համար հարկ եղած խնամքներն :

2. Ճիշդ և գործնական ծանօթութիւն ունենալու է վաճառականական օրինաց և մաքսային տրոց վրայ :

3. Վաճառականի մը համար անհրաժեշտ է նաեւ ծանօթութիւն ունենալ առեւտրական իրաւախոհութեանց և դատական օրինաց և կանոնաց մասին , Վաճառականական Օրինագիրքն յաճախ սերտելով :

Ընդհանրապէս սովորութիւն եղած է որ վաճառական մը կամ վաճառականական ընկերութիւն մը նոր գործի սկսած ժամանակ չըջարեցական նամակաւ մը իրենց ձեռնարկած գործին տեսակը , և իրենց տան անունը կը ծանուցանեն , և իրենց գործառնութեանց վերաբերեալ ո և է թուղթ այդ անուամբ կատորագրեն : Այս կարգի չըջարեցական նամակներն , ըստ գործոյն , շատ տեսակ կըլլան . բայց անոնց վրայ ընդհանուր գաղափար մը տալու համար բաւական կը համարիմ միայն հետեւեալ օրինակն դնել հոս :

Կ. Պոլիս, 1/13 Յունուար 1884

S.

Պատիւ ունիմք ծանուցանել Ձեզ թէ քաղաքիս մէջ առեւտրական տուն մի  
հաստատած եմք ընդ սնուամբ ,

Կ. ԲԱՐՍԵՂԵԱՆ և Ընկ.

որ պիտի զբաղի՝ ամէն տեսակ վաճառաց արտածութեան և ներածութեան , փո-  
խանակագրոց միջնորդութեան և յանձնարարութեան վերաբերեալ գործովք :

Հաճեցէք, Տ. ծանօթանալ մեր ընկերական ստորագրութեանց որ 'ի ստորեւ,  
և ընդունիլ մեր խորին յարգանաց հաւաստիքն :

ԿԱՐԱՊԵՏ ԲԱՐՍԵՂԵԱՆ  
ՄԻՔԱՅԷԼ ԲԱՐՍԵՂԵԱՆ  
ՊԵՏՐՈՍ ԹՈՐՈՍԵԱՆ

Տ. Կ. Բարսեղեան պիտի ստորագրէ,	Կ. ԲԱՐՍԵՂԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
Տ. Մ. Բարսեղեան պիտի ստորագրէ,	Կ. ԲԱՐՍԵՂԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
Տ. Պ. Թորոսեան պիտի ստորագրէ ,	Կ. ԲԱՐՍԵՂԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Constantinople, le 1/13 Janvier 1884

M.

Nous avons l'honneur de vous informer que nous venons de fonder sur  
cette place et sous la raison sociale

G. PARSEGHIAN et Cie

une maison qui s'occupera des opérations de toutes espèces de marchandises  
d'importation et d'exportation, de commission et de courtage sur le change.

Veillez prendre note de nos signatures respectives ci-dessous et d'agréer  
M. l'assurance de notre considération distinguée.

GARABED PARSEGHIAN  
MIKAEL PARSEGHIAN  
BEDROS TOROSSIAN

M. G. Parseghian signera ,	G. PARSEGHIAN ET CIE.
M. M. Parseghian signera ,	G. PARSEGHIAN ET CIE.
M. B. Torossian signera ,	G. PARSEGHIAN ET CIE.

ԳԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Ինչպէս որ վաճառականութիւնն այլեւայլ ճիւղերու բաժնուած է, վաճառականք ալ ըստ այնմ զանազան կարգերու կը բաժնուին, որք են,

- Գործարանատէրք և Տարազագործք .
- Ներկարարք .
- Մեծաքանակ - վաճառականք .
- Փոքրաքանակ - »
- Յանձնառուք ապրանաց .
- Միջնորդք »
- Յանձնառուք փոխադրութեան .
- Սեղանաւորք և դրամափոխք .
- Միջնորդք փոխանակագրի .
- Ձեռնարկուք .
- Նաւայարդարք .
- Նաւապետք .
- Աւանդառուք .
- Ապահովագրողք, և այլն .

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐԻ ԵՒ ՏԱՐԱԶԱԳՈՐԾԻ

Գործարանատէր և Տարազագործ կ'ըսուին անոնք որ նախնական նիւթեր գործածելով՝ գործարաններու միջոցաւ նոր ձեւ մը կուտան անոնց . գործընտանիք, տարազագործք բուրդն իւր նախնական վիճակէն գործուելու վիճակին մէջ կը դնեն, այն է՝ կը մանեն, կը ներկեն, կը հիւսեն, կը գործեն և կամ այս գործողութիւններէն գոնէ մին կը կատարեն :

Գործարանատէրք և տարազագործք երկու կարգի կը բաժնուին, ոմանք իրենք կը դնեն նախնական նիւթերը, կը գործեն և ուրիշ ձեւի մը վերածելով՝ իրենք կը վաճառեն զանոնք թէ՛ փոքրաքանակ - վաճառականաց և թէ՛ ուղղակի սպառողաց :

Գործարանատէրաց երկրորդ դասը կը կազմեն անոնք՝ որք իրենց յանձնուած նախնական նիւթերն կը գործեն և վերստին տիրոջը կը յանձնեն զանոնք, վասն զի իրենց սեպհական ապրանքը չ'ըլլալուն՝ զանոնք ծախելու իրաւունք չ'ունին :

Այս կարգի գործարանատէրք ալ ապրանաց միայն պատրաստութենէն կը շահին : Գործարանատէր կրնան ըսուիլ նաեւ հացագործըն, կօշիկարն, դերձակն, ճաշարանապետն, և այլն : Կան արուեստներ որոց համար մեծագումար դրամագլխով ընդարձակ գործարաններ հաստատուած են, որք լի են զանազան մեքենայներով

և բազմաթիւ գործաւորներով . կան ուրիշ արուեստներ ալ որոց համար քիչ դրամագլխով փոքրիկ գործարաններ հաստատուած են , ուր գործարանատէրն առանձին կամ քանի մը գործաւորներու հետ կ'աշխատի . ասոնք ընդհանրապէս Արուեստագետ կը կոչուին , ինչպէս են կօշկակարն , դերձակն , երկաթագործն , ևայլն :

Ն Ե Ր Կ Ա Ր Ա Ր Ք

Ներկարարը՝ նախնական նիւթոց , անկուածոց նիւթոց, կերպասներու , մորթերու , մանածներու՝ իրենց նախնական գոյնէն տարբեր գոյն մը կուտայ , որով այն նիւթերն թէ՛ աւելի յարմար կ'ըլլան գործածութեան և թէ՛ աւելի շահաւոր կերպիւ կը վաճառուին :

Մ Ե Ծ Ա Ք Ա Ն Ա Կ - Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ք

Մեծաքանակ վաճառականն այն է որ իւր ունեցած մեծագուժար դրամագլխովն մեծ քանակութեամբ ապրանք կը գնէ արտադրողէն , այսինքն , գործարանատէրէն , և կը վաճառէ ամբողջ մասերով . զորօրինակ , տախառով , հակով , ևայլն :

Այս կերպով , մեծաքանակ-վաճառականը՝ գործարանատիրոջ և փոքրաքանակ-վաճառականաց միջեւ դրեթէ միջնորդի դեր կը կատարէ :

Փ Ո Ք Ր Ա Ք Ա Ն Ա Կ - Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ք

Փոքրաքանակ-վաճառականը՝ մեծաքանակ-վաճառականէն ապրանք կը գնէ ամբողջ մասերով , այսինքն , տախառով , հակով , ևայլն , և կը վաճառէ զանոնք սպառողաց մանր քանակութեամբ , այսինքն , հօխայով , կանգուճով , հատով , ևայլն :

Յ Ա Ն Ջ Ն Ա Ռ Ո Ւ Ք Ա Պ Ր Ա Ն Ա Յ

Յանճնառուք ապրանաց կը կոչուին անոնք որք այլոց հաշուոյն համար թէ՛ ապրանք կը գնեն և թէ՛ կը վաճառեն , և գործին ու պարագային համեմատ՝ իրենց աշխատութեան փոխարէն այսչափ 0/0 վարձք մը կ'առնուն , որ կ'ըսուի յանճնավարձք կամ յանճնառողջէք . զորօրինակ , Վարնեցի վաճառական մը Պոլսէն ապրանք գնել կ'ուզէ . բայց մէկ կողմանէ երթեւեկութեան ծախքն և միւս կողմանէ իւր գործին գլխէն հեռանալուն անպատեհութիւնն ՚ի հաշիւ առնելով , կը տեսնէ թէ՛ փոխանակ ինքը Պոլիս գալով ապրանք գնելու և տանելու , իրեն համար աւելի շահաւոր պիտի ըլլայ զանոնք ուրիշի մը ձեռօք բերել տալ . ուստի նամակաւ կ'իմացընէ յանճնառուին՝ իրեն պէտք եղած ապրանքը . յանճնառուն ալ կը գնէ , պա-

տատել կուտայ, կ'ապահովագրէ և նաև կամ շոգեկառք բեռցներ  
տալով կ'ուղարկէ զանոնք :

Յանձնառուին պարտքն է հաւատարմարար, խնայութեամբ և  
խնամօք կատարել իրեն յանձնուած հրամաններն, և շատանալ միայն  
սովորական յանձնաւողչէքովն, առանց որեւէ յաւելուած մ'ընելու  
ուրիշի մը հաշուոյն համար գնած ապրանաց գնոյն վրայ և առանց  
ուրիշի մը հաշուոյն համար ծախած ապրանաց գինը պակաս ցոյց  
տալու :

**ՄԻՋՆՈՐԴՔ ԱՊՐԱՆԱՅ**

Միջնորդ ապրանաց կ'ըսուի անոր՝ որոյ միջոցաւ կը կատարուին  
չատ անգամ երկու վաճառականաց մէջ առուծախի գործողութիւնք .  
օրինակի աղագաւ, վաճառական մը իւր ունեցած թիֆթիկը ծա-  
խելու գործն միջնորդին կը յանձնէ, նա ալ այն ապրանքին վրայ  
գործ ընող վաճառականաց հետ յարաբերութիւն ունենալով՝ անոնց  
իւրաքանչիւրին թիֆթիկի համար որ աստիճան պէտք ունենալուն  
կը տեղեկանայ և որու որ աւելի գին բռնել տայ՝ անոր կը ծախէ :

Միջնորդք՝ իրենց աշխատութեանց փոխարէն՝ իրենց միջոցաւ  
կատարուած գործողութեանց գումարին վրայ այսչափ 0/0 վարձք մը  
կ'առնուն, որուն կ'ըսուի միջնորդութիւն կամ միջնորդք :

**ՅԱՆՁՆԱՌՈՒՔ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փոխադրութեան յանձնառու կ'ըսուին անոնք՝ որ ծովու և ցա-  
մաքի ճանապարհաւ ամէն տեսակ ապրանք փոխադրել տալու գոր-  
ծով կ'զբաղին :

Վաճառականք իրենց փոխադրելի վաճառքներն ուղղակի անոնց  
ձեռքը կը յանձնեն, անոնք ալ՝ երկաթուղւոյ և շոգենաւու ընկե-  
րութեանց և ջորեսպանաց հետ մասնաւոր պայմանադրութիւն կամ  
կարգադրութիւն ըրած ըլլալով, նոյն վաճառքներն իրենց որոշեալ  
տեղերը կ'ուղարկեն և իրենց այս աշխատութեան փոխարէն որոշ-  
եալ վարձք մը կ'առնուն :

**ՍԵՂԱՆԱԻՈՐՔ ԵՒ ԴՐԱՄԱՓՈՒՔ**

Վաճառականական գործառնութեանց ընդարձակուելուն պատ-  
ճառաւ, հեռաւոր և օտար երկիրներ բնակող և գործով յարաբերու-  
թիւն ունեցող վաճառականք փոխադարձաբար իրարու պարտական  
կ'ըլլան միշտ : Չանազան երկիրներ գտնուող պարտական անձինք չեն  
կրնար իրենց պարտքն վճարելու համար մեծաքանակ հնչուն դրա-  
մոց գումարներ հայթայթել, և թէ մետաղ դրամոց փոխադրութեան  
պատճառաւ զանազան դժուարութիւններ կը կրեն յաճախ, եւ երբ

կանխիկ դրամով իսկ վճարել կարելի ըլլայ, քիչ չատ ծախք պէտք է ընել փոխադրութեան համար, ասկէ զատ փոխադրութեան միջոցին վտանգ ալ կրնայ սլատահիլ և կամ չատ ուշ հասնիլ որոշեալ տեղն. ուստի թէ այս եւ թէ ուրիշ ամէն տեսակ անպատեհութեանց առաջքն առնելու համար՝ սեղանաւորաց արուեստին պէտքն յոյժ զգալի եղած է վաճառականութեան մէջ: Փոխանակագրի մասին մէջ ընդարձակօրէն բացատրած եմք թէ՛ ինչպէս սեղանաւորի մը միջոցաւ դրամ կը դրկուի օտար երկիր կամ հեռաւոր քաղաք մը սլարտուց վճարման համար:

Սեղանաւորաց գլխաւոր գործողութիւնք հետեւեալներն են.

1. Վաճառելի թղթեր կը զեղչեն այսչափ  $0\%$  տոկոսով և նկայմանաժամին կը գանձեն. այսինքն, թուղթը կը դնեն հարիւրին այսչափ բան սլակաս տալով և թղթին վճարման օրն ստակը կ'առնուն սլարտական անձէն՝ թուղթը ետ տալով իրեն:

2. Իրենց ստորագրութիւնը կը դնեն այլոց առեւտրական թղթոց վրայ. օրինակի աղագաւ, վաճառական մը՝ որ դրամատան մը քով բաց հաշիւ, այսինքն, սլահեստի դրամ չ'ունի, կամ ծանօթ անձ մը չ'է, երբ պէտք եղած երաշխաւորութիւնը չ'ունեցող՝ ուրիշի մը կամ իւր ստորագրութեամբ թուղթ մը զեղչել կամ սլարտուց փոխարէն տալ ուզէ, այսպիսի սլարագայի մէջ՝ իւր կացութիւնը ճանչցող սեղանաւորի մը կը դիմէ և անոր ստորագրութեամբն՝ երաշխաւորել կուտայ իւր թուղթը, որով կարելի կ'ըլլայ գործածել զայն իւր պէտքին:

3. Փոխատուութիւն կ'ընեն, փոխարէն ընդհանրապէս արժէքաւոր նիւթեր, պետական արժէթղթեր, կամ մեծ ընկերութեանց բաժնէթղթեր եւ երբեմն կալուածներ՝ ի գրաւ առնելով, ըստ սլարագային այսքան առ հարիւր գումար մը սլակսեցընելով անոնց օրուան արժէքէն:

4. Արուեստական և սեղանաւորական ընկերութեանց կը մասնակցին որոշեալ դրամագլուխ մը դնելով:

5. Տէրութեան փոխատուութիւններ ընելու գործը վրանին կ'առնուն:

6. Քիչ տոկոսով փոխատուութիւն կ'ընեն դրամատէրներէ, որք աւելորդ դրամնին չահեցնելու տեղ կը փնտռեն միշտ, և բարձր տոկոսով փոխատուութիւն կ'ընեն սլարկեշտ և հաստատուն վաճառականաց կամ արհեստաւորաց, որք ստակի պէտք կ'ունենան յաճախ:

7. Ոսկի և արծաթ դրամներու, հանրային արժէթղթոց և ընկերութեանց բաժնէթղթոց վրայ շահագիտութիւն կ'ընեն, մէկ հրապարակէ մը սլակաս գնով առնելով ուրիշ հրապարակի մը վրայ բարձր գնով ծախելով:



8. Վաճառականաց հրամաններուն համեմատ՝ թէ՛ իրենց հրապարակին վրայ և թէ՛ հեռաւոր տեղեր անոնց ունեցած պահանջքը կը գանձեն կամ անոնց հաշուոյն համար ստակ կը վճարեն :

9. Իրենց թղթակիցներուն համար ընթացիկ-հաշիւներ կը բռնեն, զորս մասնաւոր կարգադրութեան կամ երկրին սովորութեան համեմատ երեք ամիսը, վեց ամիսը կամ տարին անգամ մը կը գոցեն և վերստին կը շարունակեն :

10. Իրենց թղթակցաց քաջած փոխանակագրերն կ'ընդունագրեն, անոնց վրայ փոխանակագիր կը քաշեն և օտար հրապարակներէ աժան գնով փոխանակագիր բերել տալով բարձր գնով կը վաճառեն :

11. Ուրիշի մը հաշուոյն համար պետական արժէթղթեր կամ ընկերութեանց բաժնէթղթեր կը գնեն կամ կը վաճառեն :

Սեղանաւորին շահը կը գոյանայ գանձած, վճարած կամ ընդունած փոխանակագրոց համար իւր առած յանձնառողջէքէն, իւր փոխառած և փոխ տուած դրամոց տոկոսներուն տարբերութենէն, դրամոց, արժէթղթոց և փոխանակագրոց վրայ ըրած շահագիտութենէն և այն ընկերութեանց տարեկան շահու բաժիններէն որոց ընկեր եղած է :

Սեղանաւորին յանձնառողջէքն ըստ տեսակի գործողութեան կը փոխուի . քիչ կ'ըլլայ յանձնառողջէքն՝ երբ ուրիշի մը հաշուոյն համար փոխանակագիր ծախէ, ուրիշի մը առնելիքը գանձէ և կամ այնպիսի պարտք մը վճարէ որոց փոխարէնը կանխաւ ստացած է . իսկ բարձր կ'ըլլայ իւր յանձնառողջէքն՝ երբ սեղանաւորն ինք անձնապէս իւր ստորագրութեամբը պարտական ըլլայ ուրիշի մը համար :

Դրամափոխք կ'ըսուին անոնք, որոց գլխաւոր գործն է ընդհանրապէս բնիկ կամ օտար երկրի ոսկի, արծաթ և այլ ամէն տեսակ դրամ ուրիշ դրամի հետ, դրամատոմս և թղթադրամ ոսկիի հետ փոխանակել և այլն :

#### ՄԻՋՆՈՐԴՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐԻ

Փոխանակագրի միջնորդ կ'ըսուին անոնք որ ուրիշի մը հաշուոյն համար փոխանակագիր, պետական և ուրիշ հանրային արժէթղթեր և զանազան բաժնէթղթեր գնելու և վաճառելու գործոց միջնորդութիւն կ'ընեն իրենց համար վարձք մ'առնելով :

Կան միջնորդներ որք ըստ բաւականի դրամագլխոյ տէր լինելով՝ իրենց հաշուոյն համար իսկ փոխանակագիր կը գնեն և շահով կը ծախեն միանգամայն միջնորդէք ալ առնելով :

#### ՁԵՌՆԱՐԿՈՒՔ

Ձեռնարկու կ'ըսուին անոնք որք յանձն կ'առնուն, կանխաւ ո-



որոշեալ պայմանաց համեմատ, ճանապարհ, կառուղի, երկաթուղի ջրանցք, կամուրջ, և այլն, շինել. ինչպէս նաեւ բանակի մը կամ տէրութեան պաշտօնատան մը պիտոյքն մատակարարել :

Ձեռնարկուք իրենց ստանձնած գործին համար պէտք եղած նիւթերն իրենք կը գնեն և գործաւորներ կը բանեցնեն, ապա ուրեմն դրամագլուխ մը կը դնեն, և ձեռնարկած գործերնին աւարտելէ վերջը՝ իրենց կանխաւ վճարած դրամոց և աշխատութեանց փոխարէն՝ գործին շինութեանն համար որոշեալ գումարը կ'ստանան :

Ն Ա Ի Ա Յ Ա Ր Դ Ա Ր Ք

Նաւայարդար կ'ըսուի այն որ նաւ մը կը գնէ կամ կը վարձէ, նաւապետին և նաւաստեաց հետ դաշինք կ'ընէ, նաւագնացութեան միջոցին ամէն ինչ որ հարկաւոր է իւր ծախքովը կը պատրաստէ, և իւր կամ այլոց վաճառքն բեռցնելով որոշեալ նաւահանգիստ մը կը ղրկէ : Այս գործին համար մասնաւոր ընկերութիւններ ալ կազմըուած են :

Ն Ա Ի Ա Պ Ե Տ Ք

Նաւապետք ալ վաճառական կը համարուին, վասն զի սոքա եւս շատ անգամ թէ՛ նաւայարդարին և թէ՛ ուրիշի մը հաշուոյն համար ապրանք կը գնեն և կը վաճառեն :

Ա Ի Ա Ն Դ Ա Ռ Ռ Ի Ք

Աւանդառու կ'ըսուի նա որ վաճառատան մը հաշուոյն համար ստակ կը վճարէ կամ կանխավճար կուտայ անոր, տուած ստակին փոխարէն ապրանք առնելով, զորօրինակ . ըսեմք թէ վաճառական մը 1000 լիրայի պէտք ունի, այդ գումարը ձեռք բերելու համար կրնայ դրամատան մը կամ մասնաւոր դրամատիրոջ մը քով 1200 լիրայի արժողութեամբ ո՛րեւէ վաճառք գրաւի դնել և 1000 լիրայի գումարն ստանալ անկէ որոշեալ պայմաններով :

Այս տեսակ գործողութեանց մէջ, ընդհանրապէս ապրանաց օրուան արժէքին վրայ 20-30 զեղչ մ'ընելով ստակ կը տրուի, որովհետեւ կրնայ ըլլալ որ նոյն վաճառաց գնոյն վրայ հետզհետէ անկում տեղի ունենալով՝ անոնց արժէքն նուազի, և փոխ տրուած գումարն չկարենայ ծածկել : Աւանդառուն իրաւունք կրնայ ունենալ իւր քով գրաւ դրուած վաճառքն 'ի հարկին ծախել և իւր պահանջքն ստանալ՝ հանդերձ բանած տոկոսներովն, և այն ատեն պարտաւոր է աւելցած գումարն աւանդատուին վերադարձնել :

Ա Պ Ա Հ Ո Վ Ա Գ Ր Ո Ղ Ք

Ապահովագրող կ'ըսուի այն անձին կամ ընկերութեանց որ որոշեալ գնով մը մեծամեծ շէնքեր, տուներ, վաճառատուներ, կարասիք, վաճառք, նաւ և կեանք կ'ապահովագրեն որոշեալ գումարի մը վրայ. այսինքն, սլարտականութիւն կ'ստանձնեն անոնց այրած, վնասուած, ընկղմած և մեռած ատեն՝ անոնց համար որոշեալ փոխարէններն հատուցանել ապահովագրել տուողին: Այսպէս ապահովագրութիւնք զանազան տեսակ կըլլան, ապահովագրութիւն ընդդէմ հրդեհի, կենաց համար և ծովու վրայ սլատահելիք վտանգաց դէմ:


Ապահովագրութեան վերաբերեալ սլայմանք յատկապէս թղթի վրայ տպագրուած են, ապահովութեան դնել տուող անձին անուան և ապահովութեան դրուելիք իրին տեղերն բաց մնալով, ուր 'ի վերջոյ գրչագրով կը լեցուին:

Վաճառականի մը համար յոյժ կարեւոր է իւր ապրանքներն ապահովութեան դնել տալ. մանաւանդ երբ քիչ կամ շատ վտանգաւոր ըլլայ այն ճամբան, որով պիտի գայ կամ պիտի երթայ ապրանք մ'իր որոշեալ տեղն: Այսպէս շատ անգամ վաճառականն՝ ապահովադիր ընկերութեանց տուած դոյզն գումարով մը մեծամեծ գումարներ կորսնցնելու դժբաղդութենէն զերծ կը մնայ:

Վաճառականք ընդհանրապէս իրենց ապրանաց արժէքին վրայ % 10 յաւելում մ'ընելու սովորութիւն ունին, իբր փոխարէն նոյն ապրանքէն գոյանալիք չահուն:

Ապահովութեան համար մասնաւոր ընկերութիւններ կան հաստատուած եւրոպական մեծ մայրաքաղաքաց մէջ, որք ճիւղեր ունին բոլոր մեծ քաղաքներու մէջ. ինչպէս են Լոնտրայի «Նորթ Պրոթիչ Էնտ Մէրքընթայլ»-ի, Փարիզի «Լա Փոնսիէռ»-ի և այլ ընկերութիւնք, որք մասնաւոր գործակալութիւններ ունին Պոլսոյ մէջ եւս:

Ապահովագրողին առած գնոյն կ'ըսուի ապահովագին կամ ապահովողք:



# ԳՂՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ



## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ ՎԱՃԱՌ-ԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Վաճառականութեան գլխաւոր և սովորական գործողութիւններն հետեւեալներն են .

Գնումն .

Վաճառումն .

Ի հաշիւ վաճառումն աւանդադիր ապրանաջ .

Գնումն և վաճառումն ապրանաջ յանձնառոյշէքով .

» » ընկերակցութեամբ .

Փոխանակութիւն ապրանաջ .

Վճարումն .

Գանձումն .

Վճարումն և գանձումն 'ի հաշիւ .

Կարգադրութիւն հաշուոյ .

Զեղչումն վաճառելի թղթոց .

Վաճառումն » »

Վարկ բանալ և վարկ ընել .

Փոխանցումն հաշուոյ .

### Գ Ն Ո Ւ Մ Ն

Վաճառականական առմամբ , գնումն կ'ըսուի ո՛ր և է վաճառք կամ վաճառելի արժէնիւթ մը որոշեալ գնով ծախու առնելու գործողութեան : Գնման գործողութիւնք երկու կերպ կ'ըլլան . կանխիկ և ապառիկ : Կանխիկ կ'ըլլայ , երբ ապրանաջ արժէքն գործողութեան կատարուած օրն կամ 4-5 աւուր մէջ դրամով վճարուի :

#### Օրինակ

Գնեցի Գրիգոր Յակոբեանէն 50 ծրար ամերիքան 6 լիպրանոց , գին 36 ղուրուշ , և վճարեցի կանխիկ դրամ 1800 ղուրուշ :

Ապառիկ կ'ըլլայ , երբ ապրանաջ փոխարէնը 31 , 61 . 91 , 121 և այլն օրէն վճարուի : Ինչպէս ուրիշ երկիրներ , Պոլսոյ մէջ եւս կարեւոր վաճառմունք ընդհանրապէս ապառիկ կ'ըլլան , գնողին ստորագրութիւնը կրող տոմսակներով և կամ ուրիշ վաճառելի թղթերով :

#### Օրինակ

Գնեցի Պ. Գարրիէլեան և Ընկ.էն 100 ծրար սափաշպուր 6 ղուպ-

նոց և տուրի փոխարէն ՅԱ օրէն վճարելի տոմսակ մը . այսինքն , առած ապրանքիս արժէքը պիտի վճարեմ ՅԱ օր վերջը :

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ւ Մ Ն

Որոշեալ գնով ապրանք մը ուրիշի մը տալու գործողութեան վաճառումն կ'ըսուի : Ինչպէս գնումը , նոյնպէս և վաճառումը երկու կերպ կ'ըլլայ , այն է՝ կանխիկ և ապառիկ : Վաճառումը գնման հակառակ գործողութիւնն է . այսինքն , ապրանքն առնողը գնման իսկ տուողը վաճառման գործողութիւն մը կատարած կ'ըլլայ :

Վաճառումը կանխիկ է , երբ ծախած ապրանքիս արժէքն անմիջապէս ստանամ :

Օրինակ

Ծախեցի Պետրոս Գէորգեանի 50 ծրար մատամբօլ գին 60 դր. և փոխարէն արժէքն 3000 դր. ստացայ :

Ապառիկ է , երբ ծախած ապրանքիս արժէքը փոխանակ անմիջապէս ստանալու , որոշեալ պայմանաժամէ մը վերջը ստանամ :

Օրինակ

Ծախեցի Գրիգոր Սիմօնեանի 100 կապոց կապոյտ մանած Ն՞. 8, գին 60 դր. փոխարէն արժէքն 6000 դր. 91 օրէն վճարելի :

Ի ՀԱՇԻՒ ՎԱՃԱՌՈՒՄՆ ԱՒԱՆԴԱԴԻՐ ԱՊՐԱՆԱՑ

Փոխառութեան մը փոխարէն կամ ուրիշ հաշուով մէկու մը քով աւանդ դրուած կամ յանձնարարութեամբ ղրկուած ապրանաց մէկ մասն կամ ամբողջն՝ նոյն ապրանաց տիրոջ հաշուոյն համար ծախելու գործողութեան՝ ՚ի հաշիւ վաճառումն աւանդադիր ապրանաց կ'ըսուի . զորօրինակ , 20 սնտուկ աֆիօն ունիմ , և կ'ուզեմ Լօնտրա ղրկել ծախելու , բայց որովհետեւ ինձ յատուկ ներկայացուցիչ մը չ'ունիմ հոն , ուստի այսինչ անուն անձին կը ղրկեմ որ լաւագոյն գին մը գտած ժամանակ իմ հաշուոյս ծախէ զանոնք : Այս տեսակ պարագայներու մէջ , ապրանքը ղրկողը՝ դեռ ապրանքը չ'ծախուած , կրնայ կանխավճար մ'առնուլ փոխանակագիր մը քաշելով այն անձին վրայ որոյ քով աւանդ դրած է իւր ապրանքը :

ԳՆՈՒՄՆ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄՆ ԱՊՐԱՆԱՑ ՅԱՆՁՆԱՌՈՂՁԷՔՈՎ

Երբ յանձնառու մը ուրիշի մը հաշուոյն համար ո՛ր և է ապրանք գնէ կամ վաճառէ ՚ի փոխարէն այսչափ 0/0 վարձք մ'առնելով՝ սոյն գործողութեան կ'ըսուի գնումն եւ վաճառումն յանձնառողքերով . զորօրինակ , Պոլսեցի վաճառական մը Մանչէսթըրէն ո՛ր և է ապրանք

բերել կ'ուզէ , բայց որովհետեւ ինք հոն մասնաւոր մէկը չ'ունի որ իր ուզած ապրանքն գնէ և ղրկէ , ուստի հոն գտնուող յանձնակա- տարի մը կը ղիմէ և անոր ձեռք բերել կուտայ՝ այսչափ 0/10 վարձք մը տալով անոր տարած աշխատութեանը համար :

**ԳՆՈՒՄՆ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՄԲ**

Երկու կամ աւելի վաճառականք մասնաւոր գործի մը համար առ- ժամանակեայ կերպիւ ընկերակցութիւն մը կազմելով՝ նոյն գործոյն վերաբերեալ ապրանք կը գնեն և կը վաճառեն , այս գնման և վա- ճառման գործողութեանց , որ  $\frac{1}{2}$  ,  $\frac{1}{3}$  ,  $\frac{1}{4}$ ի հաշուով կ'ըլլան , ըն- կերակցող անձանց ունեցած բաժնին համեմատ , կ'ըսուի գնումն եւ վաճառումն ընկերակցութեամբ , որմէ գոյացած շահուն կամ վնասին ընկերք իրենց ունեցած բաժնին համեմատ կը մասնակցին : Օրինա- կի համար , Պետրոս Թորոսեան և Յակոբ Գրիգորեան ընկերութիւն մը կազմեցին հանքածուխի վրայ գործ ընելու համար . Պետրոս զը- րաւ ընկերութեան դրամադրխոյն  $\frac{2}{3}$ ը և Յակոբ  $\frac{1}{3}$ ը . արդ հաշիւ տեսած օրերնին՝ Պետրոս պիտի ստանայ գոյացած շահուն  $\frac{2}{3}$ ը և Յակոբ՝  $\frac{1}{3}$ ը , իսկ եթէ վնաս մ'ունեցած ըլլան , Պետրոս պիտի կրէ գոյացած վնասուն  $\frac{2}{3}$ ը և Յակոբ  $\frac{1}{3}$ ը :

**ՓՈՒԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԱՊՐԱՆԱՑ**

Ապրանք , վաճառելի թղթեր , եւ բաց ՚ի դրամէն , ուրիշ ա- մէն տեսակ վաճառելի արժէնիւթ տալով , փոխարէնը նոյն արժո- ղութեամբ մէկ կամ աւելի տեսակ ապրանք առնելու գործողու- թեան կ'ըսուի փոխանակութիւն : Թէև ամէն առեւտուր փոխանա- կութիւն է , սակայն վաճառականութեան մէջ սովորութիւնն եղած է առանց դրամի միմիայն արժէնիւթով եղած առուտուրը փոխա- նակութիւն անուանել . զորօրինակ , 100 հօխայ խահուէ տուի Յա- կոբին ՚ի գին 10 ղուրուշի և փոխարէն առի 200 հօխայ շաքար ՚ի գին 5 ղուրուշի . ինչպէս կ'երևի , իմ տուած 100 հօխայ խահուէս որ 1000 ղուրուշ կ'արժէ 200 հօխայ շաքարի հետ փոխանակեցի որ նոյնպէս 1000 ղուրուշի արժէք ունի :

**Վ Ճ Ա Ր Ո Ւ Մ Ն**

Հաշուեցուցակի , տոմսակի , փոխանակագրի և ուրիշ գրաւոր կամ բերանացի խոստման մը փոխարէն իրական դրամ տալու գործողու- թեան կ'ըսուի վճարումն , զորօրինակ , Պ. Յակոբեանէն 300 հօխայ թիֆթիկ առի և փոխարէն տուի կանխիկ դրամ 6000 ղշ . սոյն ի- րական գումարը տալու գործողութեան վճարումն կ'ըսուի :

Գ Ա Ն Ձ Ո Ւ Մ Ն

Հաշուեցուցակի, տոմսակի, փոխանակագրի և ուրիշ գրաւոր կամ բերանացի խոստման մը փոխարէն դրամ առնելու գործողութեան կ'ըսուի գանձումն . զորօրինակ, ծախեցի Մ. Պետրոսեանի 80 պարկ ալիւր 8000 դրչի և փոխարէն առի 31 օրէն վճարելի տոմսակ մը : արդ տոմսակին օրը լրացած ըլլալով՝ 8000 դուրուչը ստացայ Մ. Պետրոսեանէն . սոյն գումարն ստանալու գործողութեան գանձումն կ'ըսուի :

Վեարման եւ գանձման գանազան եղանակներ

Վաճառականութեան մէջ վճարումն և գանձումն մէկ քանի եղանակներով կ'ըլլան, որոց ամենէն աւելի գործածականներն են հետեւեալներն .

1. Միայն իրական դրամով . զորօրինակ, Ա. Աստուածատուրեանէն 10 հակ վաթէր մանած առի 'ի գին 10 լիրայի և վճարեցի կանխիկ դրամ 100 լիրա :

2. Դրամով եւ ո՛ր եւ ի տոմսակով կամ փոխանակագրով . զորօրինակ, Ա. Աստուածատուրեանէն 10 հակ վաթէր մանած առի 'ի գին 10 լիրայի, որոց համար կանխիկ դրամ վճարեցի 30 լիրա, և մնացեալ 70 լիրային համար ալ 31 օրէն վճարելի տոմսակ մը տուի :

3. Միայն տոմսակով կամ միայն փոխանակագրով . զորօրինակ, Ա. Աստուածատուրեանէն 10 հակ մանած գնեցի 'ի գին 10 լիրայի և տուի 31 օրէն վճարելի 100 լիրայի փոխանակագիր մը :

Վճարումն և գանձումն երկու պայմաններով կ'ըլլան, այն է,

1. Վճարումն և գանձումն առանց զեղչի .

2. Վճարումն և գանձումն զեղչով .

Եթէ մէկն իւր գնած կամ ծախած ապրանաց արժէքն ամբողջապէս վճարէ կամ ստանայ, առանց անկէ բան մը պակսեցնելու, կ'ըսուի վճարումն կամ գանձումն առանց զեղչի . զորօրինակ, Ա. Աստուածատուրեանէն գնեցի 10 հակ վաթէր մանած 'ի գին 10 լիրայի, և վճարեցի 100 լիրա . արդ՝ որովհետեւ 10 հակ մանածը 10ական լիրայէն 100 լիրա կ'ընէ, և ես 100 լիրան ամբողջապէս վճարեցի առանց անկէ բան մը պակսեցնելու, ուրեմն առած ապրանքիս արժէքն առանց զեղչի վճարած եղայ : Եւ կամ Միհրան Մալխասեանին ծախած 10 հակ մանածիս փոխարէնը 110 լիրան գանձեցի . արդ՝ որովհետեւ ծախած ապրանքս 110 լիրայի էր, և ես 110 լիրան ամբողջապէս ստացայ, ուստի ծախած ապրանքիս արժէքն առանց զեղչի գանձած եղայ :

Եթէ ապրանքն առնողը իւր գնած ապրանաց ընդհանուր



գումարին մէն մի հարիւր դահեկանին վրայ որոշեալ բան մը պակ-  
սեցնելով վճարէ , գեղջով վճարումն կամ գանձումն կ'ըսուի . զոր-  
օրինակ , Պ. Գարրիէլեան և Ընկ.էն գնեցի 200 ծրար ամերիքան գին  
50 դրշ . և փոխարէն վճարեցի 1% զեղջով 9900 դրշ : Արդ՝ 200  
ծրար ամերիքանը 50ական դրշ էն 10000 դրշ կ'ընէ , բայց որով-  
հետեւ ես 9900 դրշ տուի , ուրեմն առած ապրանքիս արժէքն զեղ-  
ջով վճարած եղայ : Եւ և կամ , ծախեցի Հ. Քօստի Էֆրէմի-  
տիին 200 ծրար ամերիքան գին 55 դրշ . և փոխարէն ստացայ 1%  
զեղջով 10890 դրշ : Արդ՝ 200 ծրար ամերիքանը 55 դրշ էն կ'ընէ  
11000 դրշ . բայց որովհետեւ 10890 դրշ . ստացայ ես , ուրեմն ծա-  
խած ապրանքիս փոխարէնը զեղջով գանձած եղայ :

ՎՃԱՐՈՒՄԸ ԵՒ ԳԱՆՁՈՒՄԸ Ի ՀԱՇԻՒ

Երբ վաճառական մը կամ սեղանաւոր մը՝ ուրիշ վաճառականի մը  
կամ սեղանաւորի մը հրամանին համեմատ , անոր հաշուոյն համար  
երրորդի մը ստակ վճարէ , նոյն գործողութեան կ'ըսուի վճարումն  
'ի հաշիւ . զորօրինակ , Իզմիրի Գ. Արգարեանի հրամանին համե-  
մատ և անոր հաշուոյն համար վճարեցի հոս իւր եղբօրը 200 լիրա  
օսմանեան :

Երբ վաճառական մը կամ սեղանաւոր մը՝ ուրիշ վաճառականի  
մը կամ սեղանաւորի մը հրամանին համեմատ անոր հաշուոյն հա-  
մար երրորդէ մը ստակ առնէ , նոյն գործողութեան կ'ըսուի 'ի հա-  
շիւ գանձումն . զորօրինակ , Մանչէսթըրի Գ. Սահակեանի հրամա-  
նին համեմատ և անոր հաշուոյն համար՝ Պ. Մինասեան վճարեց ինձ  
100 լիրա օսմանեան :

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՇՈՒՈՅ

Երբ մէկը վաճառականի մը կամ սեղանաւորի մը ո՛նէ գումար  
պարտք ունենայ , և զայն ամբողջապէս վճարելու չափ դրամ չ'ու-  
նենալով՝ իւր պարտքը ծածկելու չափ տոմսակ , փոխանա-  
կագիր , ապրանք , արժէթուղթ , և այլն տալով հատուցանէ՝ այս-  
պիսի գործողութեան կ'ըսուի կարգադրութիւն հաշուոյ . զոր-  
օրինակ , Կ. Ասլանեանի 50000 դրշի պարտքս վճարեցի հետևեալ-  
ներն տալով՝

Իւր հրամանին 81 օրէն վճարելի տոմսակ մը	9000
Պրուսայի վրայ 21 աւուր փոխանակագիր մը	10000
Հարիւր հատ երկաթուղեաց արժէթուղթ	21000
Զանազան ապրանք	10000
	<u>50000</u>



Կարգադրութիւն հաշուոյ կ'ըսուի նաեւ երբ մէկը վաճառականի մը հետ շարունակաբար առուտուր ընելէ յետոյ, անոր քով ունեցած հաշիւը մաքրէ և գոցէ :

**ՋԵՂՁՈՒՄՆ ՎԱՃԱՌԵԼԻ ԹՂԹՈՅ**

Պայմանաժամ ունեցող կամ հեռաւոր քաղաքի մը մէջ վճարելի եղող զանազան անձանց ստորագրութեամբ տոմսակներ կամ զանազան անձանց վրայ քաշուած փոխանակագրեր գնելու գործողութեան կ'ըսուի գեղջումն վաճառելի թղթոց : Զեղջումն կ'ըսուի, որովհետեւ առած թղթին իրական արժէքն կը վճարէ, և անուանական արժէքն պայմանաժամին կ'ստանայ :

Պէտք է գիտնալ թէ՛ որոշեալ պայմանաժամէ մը կամ օտար երկրի մէջ վճարելի թղթերն երկու տեսակ արժէք ունին, այն է, անուանական արժէք, որ թղթին մէջ թէ՛ թուանշաններով և թէ՛ խոշոր գրերով կը գրուի, և իրական արժէք, որ անուանական արժէքէն զեղջն, յանձնառողէքն, և այլն իջնելով մնացեալ զուտ գումարն է, որ կը վճարուի :

**Օրինակ**

Գ. Յակոբեանի՝ թուականէն 90 օր յետոյ վճարելի 10000 զուրուշնոց պարտամուրհակն տարեկան 0<sup>10</sup> 12ով զեղջեցի :

**Այսինքն**

10000 զուրուշնոց թուղթ մը 9700 զուրուշի գնեցի :

Արդ՝ 10000 զրշը թղթին անուանական արժէքն է, իսկ 9700 զրշը անոր իրական արժէքն է :

**ՎԱՃԱՌՈՒՄՆ ՎԱՃԱՌԵԼԻ ԹՂԹՈՅ**

Երբ վաճառական մը կամ սեղանաւոր մը՝ պարտամուրհակ, փոխանակագիր և կամ այս կարգի թուղթ մը ծախէ դրամով, այսինքն՝ թուղթն իր անուանական արժէքովը տալով՝ անոր իրական արժէքն ստանայ, նոյն գործողութեան կ'ըսուի վաճառումն վաճառելի թղթոց :

Այս գործողութիւնը վաճառելի թղթոց զեղջման հակառակ գործողութիւնն է :

**Օրինակ**

Թղթապանակիս մէջ գտնուած Մ. Պողոսեանի 10000 զրի փոխանակագիրն, որ 91 օր յետոյ վճարելի է, 0<sup>10</sup> 12ով զեղջել տուի :

Այսինքն

10000 զրշ.ի փոխանակագիրս 9800 զրշի ծախեցի :

Վաճառելի թղթոց զեղջման և վաճառման գործողութիւնք թէպէտեւ վաճառականութեան մէջ ալ կը պատահին, սակայն դրամականի վերաբերեալ ըլլալով, առաւել սեղանաւորական գործողութիւնք կ'ըսուին քան թէ վաճառականական :

ՎԱՐԿ ԲԱՆԱԼ ԵՒ ՎԱՐԿ ԸՆԵԼ

Վարկ բանալ և վարկ ընել մէկու մը իրարմէ տարբեր բաներ են :

Վարկ բանայն տեսակ մը հրաման է, զոր վաճառական մը կամ սեղանաւոր մը իր մէկ կամ մէկ քանի թղթակցաց կ'ուղղէ, յանձնարարելով անոնց որ այս անուն անձին այսչափ գումար մը վճարեն իր հաշուոյն համար :

Սոյն հրամանը նամակի ձեւով գրութեամբ մը կ'ըլլայ, որ կ'ըսուի վարկագիր :

Վարկագրի հնարուելուն գլխաւոր պատճառն այս է որ ճանապարհորդ մը՝ փոխանակ իրական դրամ կամ որոշեալ պայմանաժամէ մը վճարելի փոխանակագիր տանելու իւր հետ, իւր կատարելիք գործին և ճանապարհի ծախուց համար պէտք եղած գումարն կանխաւ սեղանաւորի մը քով կը թողու և վարկագիր մը կ'առնու անկէ՝ նորա մէկ թղթակցին վրայ այն քաղաքին մէջ գտնուող, ուր մտադիր է երթալ :

Վարկագրին առաւելութիւնն այս է որ ճանապարհորդ մը ազատ է անոր մէջ նշանակեալ գումարն չգործածելու, եթէ իր առաջադրած գործը չկատարուի, կամ՝ թէ որ իւր ծախքն կանխաւ ենթադրած գումարէն պակաս ըլլայ, իւր պիտոյից չափ դրամ առնելու մինչդեռ. եթէ վրան իրական դրամ առնէ, այս առաւելութիւններն չունենալէ զատ, կրնայ զանազան վտանգաց և անպատեհութեանց հանդպիլ, և եթէ փոխանակագիր առած ըլլայ վրան, պարտաւոր է անոր փոխարէնն ստանալ պայմանաժամին իսկ, թէեւ նոյն միջոցին ամենեւին պէտք չունենայ դրամի :

Վարկագիրք զանազան ձեւերով կրնան գրուիլ, բայց անոնց ամէնուն ալ իմաստը գրեթէ միեւնոյնն ըլլալով, բաւական կը համարիմ մի օրինակ միայն դնել հոս :

Վ Ա Ր Կ Ա Ք Ի Ր

Կ. Պոլիս , 20 սեպտեմբեր 1882

S.

Մարտիկա

Պատիւ ունիմ Ձեզ յանձնարարել գրամատոյցս Պ. (իմ բարեկամս , կամ իմ գործակատարս) որուն կրնաք մինչեւ հինգ հազար ֆրանք վճարել , փոխարէնը իմ հաշուոյս անցընելով :

Պ. Ձեզ պիտի տայ առած գումարներուն դէմ՝ երկերկու օրինակով ընկալագիր , որոց մէկ օրինակն Ձեր քով պիտի մնայ , իսկ միւսն ինձ պիտի դրկէք :

(Ստորագրութիւն)

Ահաւասիկ Պ. ի ստորագրութիւնը

(Ստորագրութիւն)

LETTRE DE CRÉDIT.

Constantinople, le 20 septembre 1882

M.

Marseille

J'ai l'honneur de vous recommander le porteur de la présente, M. (mon ami ou mon employé); vous voudrez lui payer jusqu'à concurrence de cinq mille francs dont vous débiterez mon compte.

M. vous remettra ses reçus par duplicata; l'un d'eux restera chez vous l'autre me sera envoyé.

(Signé)

Voici la signature de M.

(Signé)

Վարկագիր տուող սեղանաւորն կամ վաճառականն անմիջապէս կ'իմացընէ այս գործողութիւնը այն թղթակցին կամ թղթակցաց , որոց հրաման տուած է , ուրիշ նամակաւ մը որ կ'ըսուի Ձեկուցագիր վարկի բացման , և հետեւեալ իմաստով կը գրուի :

ՋԵԿՈՒՑԱԳԻՐ ՎԱՐԿԻ ԲԱՑՄԱՆ

Կ. Պոլիս, 20 սեպտեմբեր 1882

S.

Մարսիլիա

Ներկայիս գեկուցանեմ Ձեզ որ հինգ հազար ֆրանքի համար Ձեր վրայ վարկագիր մը տուած եմ քաղաքիս վաճառականներէն Պ. Ին :

Ներփակեալ պիտի գտնէք յիշեալին ստորագրութիւնը կրող թուղթ մը որոյ միայն պէտք է վստահութիւն ընէք :

(Ստորագրութիւն)

LETTRE D'AVIS DE CRÉDIT

Constantinople, le 20 septembre 1882

M.

Marseille

Nous formons la présente pour vous faire part que nous venons de délivrer à M. de notre ville, une lettre de crédit sur votre caisse de la somme de cinq mille francs.

Ci-inclus vous trouverez un bulletin portant la signature de M. à laquelle seule vous devrez ajouter foi.

(Signé)

Սովորութիւն եղած է վարկագիրն ստացող անձին ստորագրութիւնը դնել տալ գեկուցագրին մէջ կամ զատ թղթի մը վրայ, որպէս զի այն թղթակիցն որ պիտի վճարէ նշանակեալ գումարն՝ կարող ըլլայ բաղդատել զայն այն ընկալագրոց ստորագրութեան հետ, զորս պիտի առնէ ամէն անգամ որ ստակ վճարէ : Ասկէ կը հետեւի թէ վարկագիրը վաճառելի թուղթ չեն, և անոր մէջ նշանակեալ գումարն այն անձը միայն կրնայ ստանալ որոյ անուամբ տրուած է վարկագիրն :

Իսկ մէկու մը վարկ ընելն պարզապէս մէկու մը վրայ վստահութիւն ունենալ կը նշանակէ, այսինքն, ո՛րքէ դրամագլուխ մը վստահիլ անոր, որոշեալ ժամանակէ մը վերջը նոյնն իրեն վերադարձնելու պայմանաւ :

Վարկն հետեւեալ պարագայներու մէջ կ'ըլլայ .

Պայմանաժամով ապրանք ծախելով, այսինքն, ապառիկ տալով :

Կանխիկ դրամ փոխ տալով :

Ո՛ր և է գումարի մը համար երաշխաւոր ըլլալով, և այլն :

Վարկն երկու եղանակաւ կ'ըլլայ, այն է,

Ա. Փոխարէնով վարկ, այսինքն, 'ի փոխարէն ո՛ր և է տոմսակ, փոխանակագիր կամ իբր գրաւ՝ արժէթուղթ և կամ ո՛ր և է արժէ-  
քաւոր բան մ'առնելով :

Բ. Բաց վարկ, այսինքն, 'ի փոխարէն առանց բան մ'առնելու :

#### ՓՈՒՍԱՆՑՈՒՄՆ ՆԱՇՈՒՈՅ

Փոխանցումն հաշուոյ կ'ըսուի այն գործողութեան, որով վաճա-  
ռական մը ուրիշի մը քով իւր ունեցած առնելիքը կամ հաշիւը ու-  
րիշ վաճառականի մը կը փոխանցէ. զորօրինակ. դիցուք թէ Կ. Ար-  
գարեան 200 լիրայի սլահանջք մ'ունի Կեսարիա Գ. Սարգիսեանի  
վրայ, և միւս կողմէն հաշիւ ունի դարձեալ նոյն քաղաքին մէջ  
Բարսեղ Ջայլաքեանի քով. արդ, Կ. Արգարեան կը գրէ Գ. Սարգիս-  
եանի որ իրեն սլարտուց գումարն, այն է 200 լիրան Բարսեղ Ջայ-  
լաքեանի վճարէ :

Ինչպէս կ'երեւի, այս գործողութեամբ՝ Կ. Արգարեանի Գ. Սար-  
գիսեանի քով ունեցած 200 լիրայի հաշիւն Բարսեղ Ջայլաքեանի փո-  
խանցեցաւ. այսինքն, հաշիւ մը մէկուն քովէն ելաւ և ուրիշի մը  
քով անցաւ :

Փոխանցման գործողութիւնը առաւել տօնավաճառաց մէջ տեղի  
կ'ունենան, որովհետեւ ապրանք գնողներն՝ վճարմանց կարգադրու-  
թեան համար աւելի լաւ կը համարին այս միջոցն քան թէ դրամ  
տանիլ հետերնին : Վաճառականական գործառնութեանց մէջ ստէպ  
կը պատահին հաշուի փոխանցումներ, որք ընդհանրապէս նամակաւ  
կը կատարուին :

Վաճառականական գործողութիւն կրնայ համարուիլ նաեւ այն  
գործողութիւնն որով՝ պայմանաժամին չվճարուած կամ չվճարուելիք  
վաճառելի թղթի մը տեղ ուրիշ նոր թուղթ մը կը շինուի :

Երբ փոխանակագիր վճարող մը կամ ո՛ր և է տոմսակի մը ստո-  
րագրութեան տէրը տեսնէ որ պայմանաժամուն չպիտի կարենայ և  
կամ չէ կրցած վճարել անոր փոխարէնը, և կ'ուզէ առաջին թղթին տեղ  
ուրիշ նոր թուղթ մը տալ, առաջնոյն պայմանաժամէն աւելի երկար  
պայմանաժամէ մը վճարելի, կրնայ իւր առաջին թուղթը նորոգել  
թղթին տիրոջ հաճութեամբն :

Անվճար մնացած թղթի մը տեղ անպատճառ միեւնոյն տեսակ  
թուղթ տալ հարկ չըլլար : Փոխանակագիր մը քաշողն կրնայ իւր ըս-

ստորագրութեամբ, ո՛րք է տումսակ մ'ալ տալ իւր վճարելիք փոխանակագրին տեղ. նոյնպէս տումսակի մը ստորագրութեան տէրը կրնայ անոր տեղ իւր ստորագրութեամբը փոխանակագիր մը կամ ուրիշ թուղթ մը տալ դարձեալ անվճար թղթին տիրոջ հաճութեամբն :

## ԳՆՈՒՄ ԵՐՐՈՐԴ

### ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՊՐԱՆԱԾ

Ապրանաց փոխադրութիւնք ծովու կամ ցամաքի ճանապարհաւ կը կատարուին : Ցամաքի ճանապարհաւ ապրանք փոխադրելու միջոցներն են, երկաթուղի, կառք, ջորի, ուղտ, ևայլն. իսկ ծովու ճանապարհաւ փոխադրելու միջոցներն են, շոգենաւ, նաւ, նաւակ, լաստափայտ ևայլն :

Ապրանք մ'անվնաս կերպիւ փոխադրելու համար՝ հարկ է զանոնք կանոնաւոր կերպիւ պատատել և հակ շինել. ասկէ յառաջ կուգան գոստ կշիռ, անգոստ կշիռ, և ապրայ, զորս կարեւոր է մի առ մի բացատրել :

### Պ Ա Տ Ա Տ ՈՒ Մ Ն

Կան շատ ապրանքներ որոնք չօչափումէ, խոնաւութենէ, օդէն, իրարու զարնուելէն, և կամ, եթէ հեղուկ են, թափուելու վտանգէն ազատ մնալու համար, առանց որեւէ բանի մը մէջ պատրաստարելու կարելի չէ փոխադրել : Ապրանք մը որեւէ բանի մէջ, այսինքն, հակի, պարկի, կտաւի, մորթի, կողովի և կամ սնտուկի մէջ պատասպարելու գործողութեան պատատումն կ'ըսուի. իսկ ընդհանուր կերպիւ պատատ կ'ըսուի ամէն պատասպարող նիւթոց, ինչպէս են, պարկ, տակառ, սնտուկ, կարաս, չոր խոտ և կամ ուրիշ տեսակ ամաններ :

Ապրանք մը իւր տեսակին, արժէքին և տեղւոյն հեռաւորութեան համեմատ կը պատասպարուի :

Դիւրաբեկ նիւթերն ընդհանրապէս սնտուկի մէջ կը դրուին, որոց վրայ սեւ ներկով շէշ մը կը դժեն, սնտուկին մէջ դիւրաբեկ ապրանք գտնուելը հասկցնելու համար :

Վաճառականութեան մէջ սովորաբար հաւ կ'ըսուի սնտուկին , տակառին , և ըն , թէ՛ պարունակող և թէ՛ պարունակեալ նիւթերն միասին առնելով :

ՋՈՒՏ ԵՒ ԱՆՋՈՒՏ ԿՇԻՌ

Ապրանքի մը գոտ կշիռն լոկ ապրանքին կշիռն է , առանց պատատին կշիռն հաշուելու . իսկ անգոտ կշիռը ամբողջ հակին կշիռն է որ թէ՛ պատատին և թէ՛ ապրանքին կշիռներն միանգամայն կը պարունակէ . զորօրինակ , պարկ մը խահուէ կշռեցինք 70 հօխայ եկաւ , յետոյ ապրանքը պարունակող պարկն միայն կշռելով ունեցանք 2 հօխայ . արդ՝ 70 հօխան պարկին անգոտ կշիռն է , յորմէ զեղչելով պատատին 2 հօխան , կը մնայ 68 հօխայ , որ է խահուէին գոտ կշիռն :

Ա Պ Ր Ա Յ

Ապրանքը պարունակող նիւթին կշռոյն կ'ըսուի ապրայ կամ տարա , որ հակին անգոտ կշռէն կը զեղչուի զուտ կշիռը գտնելու համար : Վերը տրուած օրինակին մէջ պարկին 2 հօխայ ծանրութիւնը ապրայ կ'ըսուի : Ասկէ կը հասկցուի որ ապրանաց փոխադրութեան գինը անգոտ կշռոյն վրայ կը վճարուի . իսկ գնելու և ծախելու գործողութիւնք ընդհանրապէս զուտ կշռոյն վրայ կ'ըլլան , այսինքն ապրայն զեղչելով : Ծանրութեան հաշուով որոշեալ մաքսատուրքն եւս զուտ կշռոյն վրայ կը տրուի . բայց , դիւրութեան համար , մաքսատուներ իբրեւ ապրայ որոշեալ բան մը կը զեղչէ հակ գլուխ , ըստ տեսակի ապրանաց և պատատման :

Մ Ա Ք Ս Ա Տ Ո Ւ Ն

Մաքսատուն ըսելով պէտք է հասկնալ տէրութեան այն հաստատութիւններն ուր որոշեալ տուրք մը կ'առնուի երկիրը մտած ապրանաց վրայ :

Մաքսատուներ թէ՛ ներս մտնելիք և թէ՛ դուրս ելնելիք ապրանաց համար յատկապէս ընդարձակ մթերանոցներ ունին :


Վաճառականը մաքսը մտած իւր ապրանաց վրայ հարկ եղած տեղեկութիւններն պարունակող ցուցակ մը կ'ուտայ իւր մաքսի պաշտօնէին , որ ըստ այնմ քննել տալով ապրանքը , մաքսատուրքը կը վճարէ և ապրանքն իւր տիրոջ վաճառատուներ կը ղրկէ :

Մ Ա Ք Ս Ա Տ Ո Ւ Ր Ք

Ապրանաց համար մաքսատան վճարուած տուրքին կ'ըսուի մաքսա-



տուրք : Այս տուրքն ապրանաց տեսակին , կշռոյն , արժէքին և չափին համեմատ աւելի կամ պակաս կ'ըլլայ , վասնզի ամէն տեսակ ապրանաց համար մասնաւոր գներ որոշուած են և այն գնոց վրայ 0 8 մաքսատուրք սահմանուած է , որք նշանակեալ են յատկապէս տրպազրեալ տեսրի մը մէջ , որ կ'ըսուի Ռարէֆ :



## Գ Լ Ո Ւ Մ Չ Ո Ր Ր Ո Ր Դ



### Վ Ա Ր Չ Ք Ե Ի Ջ Ե Ղ Չ Ք

Վաճառականութեան մէջ ընդհանրապէս վարձք ըսելով պէտք է հասկնալ այն ամէն փոխարինութիւն , որ աշխատութեան մը համար կը տրուի , զորօրինակ .

- Յանձնառողջէք .
- Երաշխողջէք .
- Միջնորդջէք .

Իսկ գեղջ կ'ըսուի ինչ որ բանի մը արժէքէն կը պակսեցնեն ,

- Ջեղջ ապրանաց .
- Տժգին .
- Տոկոս .
- Փոխանակագին .
- Դրամագեղջ .

### Յ Ա Ն Ձ Ն Ա Ռ Ո Ղ Չ Է Ք

Յանձնառողջէքն տեսակ մը վարձք է զոր գնող մը կը վճարէ յանձնառուին , այսինքն իւր հաշուոյն համար ապրանք գնող և ծախող վաճառականին :

Յանձնառողջէքը՝ կամ կատարուած գործողութեան գումարին վրայ այսչափ 0 և կամ մէն մի հակի , սնտուկի , տակառի և այլնի համար որոշեալ բան մը կ'ըլլայ : Յանձնառողջէքն 1-3 0 կ'ըլլայ ընդհանրապէս , և խիստ քիչ անդամ 3 էն աւելի , իսկ դրամական յանձնառողջէքն  $\frac{1}{8}$  ,  $\frac{1}{4}$  ,  $\frac{1}{2}$  , 0 կ'ըլլայ :

### Ե Ր Ա Շ Խ Ո Ղ Չ Է Ք

Երաշխողջէքը կրկին յանձնառողջէք մ'է , զոր յանձնառու մը կ'առնէ երբ մէկու մը հաշուոյն համար ապառիկ ապրանք ծախէ՝ անոր վճարմանն ինք պատասխանատու ըլլալու պայմանաւ :

Երաշխողչէքն ընդհանրապէս յանձնառողչէքին կրկինը կամ անոր քանի մը պատիկը կ'ըլլայ, այն է, 2, 3, 4 0/0 :

Մ Ի Զ Ն Ո Ր Դ Զ Է Ք

Միջնորդք՝ իրենց ձեռք եղած գնման կամ վաճառման ո՛ր է գործողութեան գումարին վրայ այսչափ 0/0 վարձք մը կ'առնուն, որ կ'ըսուի միջնորդչէք : Միջնորդչէքի համար օրէնքը բան մը որոշած չէ, բայց գործողութեան և տեղւոյն համեմատ 1/8, 1/4, 1/2, 1, 2 0/0 կրնայ ըլլալ :

Ջ Ե Ղ Զ Ա Պ Ր Ա Ն Ա Ց

Վաճառականութեան մէջ՝ հաշուեցուցակի մը գումարը պայմանաժամէն առաջ վճարուած ատեն այսչափ առ 0/0 բան մը պակաս կը տրուի, որուն կ'ըսուի գեղջ : Այս զեղջը ընդհանրապէս ամիսը 0/0 1 հաշուով կ'ըլլայ. բայց գործին և պարագային համեմատ 0/0 1 1/2 կամ 2 ալ կրնայ ըլլալ :

Տ Ժ Գ Ի Ն

Տժգին ըսելով պէտք է հասկնալ հաշուեցուցակի մը ընդհանուր գումարէն բան մը պակսեցնել՝ ասորանաց զեղջին պէս, բայց սատարութեամբ որ տժգինն ընդհանուր գումարէն ո՛ր է գումար մը իջնել կը նշանակէ, մինչդեռ գեղջն կը նշանակէ ընդհանուր գումարին վրայ սովորաբար այսչափ առ հարիւր հաշուով բան մը պակսեցնել :

Տժգինն պատահական պատճառներով տեղի կ'ունենայ, ինչպէս են, կշռոյ կամ չափոյ պակասութիւն, գոյներու տգեղութիւն, նաևու մէջ պատահած վնաս. ասկէ դատ, տժգինը հաշուեցուցակի մը փոխարէնը վճարուելու միջոցին կը կարգադրուի, մինչդեռ զեղջն ապրանքն յանձնուած պահուն իսկ կը կարգադրուի հաշուեցուցակին վրայ :

Ըսածնիս օրինակով մը բացատրեմք .

Յ. Ճնտրգլեանէն գնեցի հակ մը տպածոյ, որոյ արժէքն էր ըստ հաշուեցուցակին 120 լիրա. այս գումարէն իջնելով սովորական զեղջն 2 0/0, կը մնայ զուտ պարտքս Լ. օսմ. 117. 60 : Սակայն հակը բանալով տեսնուեցաւ որ ասորանաց մէկ մասը ծովու ջրէ վնասուած է. արդ՝ բնական է որ կանխաւ սակարկուած և որոշուած գումարէն բան մը պակսեցնելու իրաւունք ունիմ, ուստի կ'առաջարկեմ Յ. Ճնտրգլեանի որ իմ զուտ պարտքէս լիրա օսմ. 17. 60ը իջնէ վնասեալ ասորանաց համար : Ահա սոյն լիրա օսմ. 17. 60ի գումարն է որ տժգին կ'ըսուի, որ՝ ինչպէս տեսնուեցաւ՝ զեղջէն բոլորովին տարբեր բան է :

Տ Ո Վ Ո Ս

Փոխ տրուած դրամի մը համար այսչափ առ հարիւր վարձք մը կամ շահ մը կ'առնուի , կամ որ նոյնն է՝ փոխ առնուած դրամի մը համար այսչափ առ հարիւր վարձք մը կը տրուի , որ կ'ըսուի տոկոս կամ վաշխ :

Վաճառականութեան մէջ տոկոսի այլեւայլ սակագիւններ կան և հրապարակին վրայ դրամին շատութեան կամ նուազութեան համեմատութեամբ կը բարձրանայ կամ կը նուազի : Թուրքիոյ մէջ տոկոսի օրինական սակագիւնն է տարին 0% 12 . սակայն ըստ գործոյն աւելի կամ պակաս ալ կրնայ ըլլալ :

Փ Ո Խ Ա Ն Ա Կ Ա Գ Ի Ն

Փոխանակագին ըսելով պէտք է հասկնալ այն շահն զոր լուծայափոխ մը կամ դրամափոխ մը կ'առնու՝ երկրին ո՛ր և է մէկ տեսակ դրամն ուրիշ տեսակի մը հետ փոխանակելու համար . զորօրինակ , օսմ. լիրան արծաթ մէճիտիյէի կամ արծաթ մէճիտիյէն օսմ. լիրայի հետ :

Փոխանակագին կ'ըսուի նաեւ այն շահն զոր սեղանաւոր մը կ'առնու՝ ո՛ր և է գումարի մը փոխարէնը հեռաւոր քաղաքի մը մէջ վճարելու համար , որ ընդհանրապէս փոխանակագրի միջոցաւ կը կատարուի , և երկու տեսակ կ'ըլլայ , ներքին և արտաքին :

Ներքին փոխանակագինն այն է զոր սեղանաւոր մը կ'առնուիւր ծախած այն փոխանակագրին վրայ , զոր նոյնատեսակ դրամով կը փոխանակէ . այսինքն , իրական օսմ. ոսկի կ'առնու և փոխարէն օսմ. ոսկւոյ փոխանակագիր կուտայ , և որ վճարելի է այնպիսի հեռաւոր քաղաքի մը մէջ ուր նաեւ միեւնոյն տեսակ դրամ կը գործածուի :

Ներքին փոխանակագիւնն ընդհանրապէս այսչափ 0% կ'ըլլայ , և տեղւոյն հեռաւորութեան կամ գործոյն համեմատ կը տարբերի 1/2 , 1 , 2 և մինչեւ իսկ 3-4 0% . զորօրինակ , դիցուք թէ Պոլիս գործընող վաճառական մը Կարնոյ վրայ քաշուած , այսինքն , Կարին վճարելի 100 լիրանոց փոխանակագրի մը պէտք ունի . սա կը դիմէ սեղանաւորի մը և 100 լիրանոց փոխանակագիր մը կ'առնու անկէ 1/2 0% շահ մը վճարելով . այսինքն , 100 լիրանոց փոխանակագիր մը կ'առնու և 100 1/2 լիրա կը վճարէ , 1/2 լիրան իբրեւ փոխանակագին վճարելով :

Ներքին փոխանակագին կ'ըսուի նաեւ այն շահն , զոր սեղանաւոր մը կ'առնու իրեն ծախուած այն փոխանակագրոց վրայ , որք հեռաւոր քաղաքաց մէջ գանձելի են . օրինակի համար , Պոլիս բընակող վաճառական մը Կարնոյ մէջ վճարելի 100 լիրանոց փոխանա-

կազիր մ'ունի , բայց առեւտրական յարաբերութիւն մը չունենալով այն քաղաքին հետ , սեղանաւորի մը կը ծախէ իւր փոխանակազիրն 1 % շահ մը տալով , կամ որ նոյնն է , 1 % վնաս մ'ընելով . ուրեմն , փոխանակազիրն փոխարէնն եղող 100 լիրան ստանալու համար , վճարած եղաւ 1 լիրա փոխանակազիրն և կամ 100 լիրային տեղ ստացաւ 99 լիրա , մնացեալ 1 լիրան սեղանաւորին թողլով իբր փոխանակազին :

Իսկ արտաքին փոխանակազինն այն է զոր սեղանաւոր մը կ'առնու իր ծախած օտար երկրի մէջ վճարելի փոխանակազրոց համար , զոր երկրին դրամով կը փոխանակէ . այսինքն , երկրին դրամը կ'առնու և փոխարէն օտար երկրի մէջ օտար դրամով վճարելի փոխանակազիր կուտայ . զորօրինակ , Պոլիս գործ ընող վաճառական մը Մանչէսթէր 100 սթէռլին լիրա դրկելու պէտք ունենալով՝ կը դիմէ սեղանաւորին և մէն մի սթէռլին լիրային ոսկի դրամ 108-110 կամ աւելի դրչ. վճարելով 100 սթէռլին լիրանոց փոխանակազիր մը կ'առնու :

Պէտք է գիտնալ մասնաւորապէս սա կէտն թէ՛ ներքին փոխանակազինն , այսինքն , նոյն տեսակ դրամով փոխանակուած փոխանակազրոց համար առնուած շահն , որ՝ ինչպէս ըսինք ,  $1\frac{1}{2}$ -4% կ'ըլլայ , միայն սեղանաւորին ընելիք փոքրիկ շահէն և ուրիշ խեղ մը ծախքերէ կը բաղկանայ . ինչպէս են , թղթատարի կամ հեռագրի ծախք , իւր թղթակցին տալիք յանձնառողչէքն ևն : Բայց արտաքին փոխանակազինն տարբեր երկիրներու մէջ գործածուած դրամոց թէ՛ չափու և թէ՛ տեսակի կողմանէ ունեցած յարգէն կախումն ունի . զորօրինակ , անգղիական սթէռլին լիրան իր չափովն 10 դրչ. ոսկի դրամ աւելի յարգի է քան օսմ. լիրան , այսինքն , օսմ. լիրան 100 դրուչ արժէք ունենալով , սթէռլին լիրան 110 դրչ. ոսկի դրամ կ'արժէ : Ահա այդ զանազան դրամոց արժէքին տարբերութիւնն է որ՝ ստէպ ելեւէջներ ընելով այլևայլ պատճառանօք՝ փոխանակութեանց վրայ շահ մը յառաջ կը բերէ որ է արտաքին փոխանակազինն :

Ինչպէս տեսնուեցաւ , արտաքին փոխանակազինն ներքին փոխանակազնոյն պէս այսչափ % չէ , այլ ըստ ժամանակին փոփոխուելու ենթակայ է միշտ , ինչպէս են ուրիշ ասորանաց գներն :

#### Դ Ր Ա Մ Ա Ջ Ե Ղ Ջ

Դրամական կամ սեղանաւորական գործողութեանց մէջ գեղջ ըսելով պէտք է հասկնալ , տոկոսիք , յանձնառողչէք , փոխանակազին , որք վաճառելի թղթոց անուանական արժէքէն կը զեղչուին , որով մնացորդը կ'ըլլայ նոյն թղթին զուտ կամ իրական արժէքը :

Վաճառելի թղթոց վրայ եղած զեղջը գնող սեղանաւորին համար շահ մ'է , իսկ ծախող վաճառականին համար վնաս մ'է :

## ԳՂՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ



### ՋԱՆԱՋԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՔ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՆ

Վաճառականութեան վերաբերեալ նախնական գիտելիքն ուսանելէ յետոյ, խիստ կարեւոր է միանգամայն ճանչնալ զանազան գործառնութեանց վերաբերեալ գրութիւններն :

Վաճառականութեան մէջ գործածուող գրութեանց գլխաւորներն հետեւեալք են, որոց վրայ մի առ մի սլիտի խօսիմք :

1. Հաշուեցուցակ .
2. Հաշուեգիր գնման .
3.       »       վաճառման .
4. Փոխադրագիր .
5. Բեռնագիր .
6. Ստացագիր կամ ընկալագիր .
7. Դարձի հաշիւ .
8. Հաշուեցուցակ փոխանակագրի .
9. Զեղչի ցուցակ .

### Հ Ա Շ Ո Ւ Ե Ց Ո Ւ Ց Ա Կ

Վաճառականութեան մէջ ամենէն յաճախ գործածուած գրութիւնը կամ թուղթը հաշուեցուցակն է, որոյ վրայ ապրանք ծախողը կը նշանակէ սովորաբար սեւ վաճառման գործողութեան մը կարեւոր մանրամասնութիւններն, և կուտայ կամ կը զրկէ զայն ապրանքը գնողին, եթէ սա ուրիշ քաղաք մը գտնուի :

Հաշուեցուցակի մը մէջ պէտք է նշանակել .

1. Այն տեղոյն անունն ուր գործողութիւնը կատարուած է, և վաճառման թուականը .

2. Գնողին անունն և տեղը և անմիջապէս յետոյ պարտի բառը .

3. Ծախողին անունը՝ առջին առ. նախդիրն գնելով .

4. Եթէ ապրանքը հեռու տեղ մը զրկուի, պէտք է զրեւ ինչ միջոցաւ զրկուած ըլլալը, այսինքն թէ՛ չողենաւով կամ չողեկաւքով .

5. Ապրանայ կարեւոր մանրամասնութիւններն, այսինքն, քանակը, տեսակը, որակը, գինը, իսկ յուղարկուած ապրանքը համար՝ ա-

սոնցմէ զատ պէտք է գրել նաեւ անգուտ կշիւր , ապրայն , զուտ կշիւր , ինչպէս նաև հականց նշանագրերն և թիւերն .

6. Եթէ մէկ քանի տեսակ ապրանք ըլլայ , իւրաքանչիւր ապրանքին դիմը իւր քանակին հետ բազմապատկելով գոյացած մասնակի գումարները , և սոյն մասնակի գումարաց ընդհանուր գումարը .

7. Մախքերն , յանձնառողչէքն և միջնորդչէքը , զորս ապրանաց ընդհանուր գումարին վրայ պէտք է աւելցնել , յետոյ սովորական զեղչը , ինչպէս նաև տժգինը , եթէ կայ , զորս ապրանաց գումարէն պէտք է հանել .

8. Ի՛նչ տեսակ դրամով (1) և ի՛նչ հաշուով վճարուիլը .

9. Ի՛նչ պայմաններով ծախուած ըլլալը .

Ընդարձակ գործ ընող վաճառականք մասնաւորապէս վիճագրեալ կամ տպագրեալ հաշուեցուցակի թղթեր չինել կուտան , որոց ճակատը իրենց անունն ու հասցէն գրուած (2) կ'ըլլայ , և ոմանց վրայ ալ իրենց գործին տեսակը կամ իրենց ծախած ապրանաց տեսակները կարդաւ նշանակուած կ'ըլլան :

Վաճառականն իւր տուած հաշուեցուցակներն սովորաբար կանխաւ կ'ընդօրինակէ տետր վաճառման անուամբ մասնաւոր տետրակի մը և կամ ձեռատետրին մէջ . իսկ ընդունած հաշուեցուցակները ամսէ ամիս կը ծրարէ եւ տարեգլխուն ամէնքը մէկ կապոց կ'ընէ :

Հաշուեցուցակի երեք տարբեր օրինակներ դրած եմք , որոց առաջինը կը ներկայացնէ պարզ հաշուեցուցակ մը փոքրաքանակ վաճառականի մը կողմանէ տրուած . երկրորդը կը պարունակէ հաշուեցուցակը տուող վաճառականին անունը , տեղը և գործին տեսակը , իսկ երրորդը՝ վաճառեալ ապրանաց հակերուն նշանագրերն և թիւերն , ինչպէս նաև ապրայնի և զեղչի գործողութիւններ :

Ուրիշ զանազան ձևերով հաշուեցուցակներ ալ կրնան շինուիլ , բայց ինչպէս դրուած օրինակներէն կ'երևի , անոնց հիմնական ձևերը գրեթէ միևնոյնն են , և անոնց պարունակութեանց վերաբերեալ մանրամասնութիւնք միայն կը տարբերին իրարմէ :

(1) Թուրքիոյ մէջ գէշ սովորութիւն մը դարձած է շատ անգամ առուտուրի մէջ օսմ. լիրան՝ որ իբրև ոսկի դրամ 100 զըշ կ'արժէ , 105-112 և թերեւս ասկէ ալ աւելի հաշուով գործածելու :

(2) Որովհետեւ Թուրքիոյ մէջ զանազան ազգութիւններ կը գտնուին , ուստի շատ վաճառականք իրենց տպեալ հաշուեցուցակաց ճակատն իրենց անունը , տեղը և գործին տեսակը՝ իրենց լեզուէն զատ՝ տաճկերէն , յունարէն , պուլկարերէն և հրէարէն գրերով ալ գրել կուտան . բայց ոմանք ալ միայն գաղղիերէն գրելով կը շատանան :



Ա. ՕՐԻՆԱԿ ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿԻ

Կ. Պոլիս, 8 յուլիս 1888

Տ. Յ. Գրիգորեան, Կեսարացի, Պարտի առ Պ. Սրապեան իրեն ծախուած հետեւեալ ապրանաց համար.

30	Կապոց վաթէր Թ. 12/14	40	1200	—
10	» Կապոյտ մանած Թ. 20/24	70	700	—
20	» Կարմիր մանած Թ. 20	90	1800	—
25	» վաթէր սպիտակ Թ. 8/14	50	1250	—
20	» Գուլպացու թիրէ ճերմակ Թ. 16/24	55	1100	—
30	» » » գունաւոր Թ. 10/12	80	2400	—
10	» Էքսթրա Թ. 12/14	45	450	—
10	» » Թ. 20/24	55	550	—
5	» վաթէր սպիտակ Թ. 28/32	60	300	—
			9750	—
	Լ. 0. 106 շրշէն =		91.98	
	<u>վճարելի 91 օրէն</u>			
Ա	Բ	Գ	Դ	Ե

- Վերոյգրեալ հաշուեցուցակին սիւնոց բացատրութիւններն են .
- Ա. սիւնին մէջ գրուած թուանշանները ծախուած ապրանաց իւրաքանչիւրին քանակութիւնը կը ցուցնեն .
- Բ. սիւնին մէջ ապրանաց տեսակներն հանդերձ իրենց մանրամասնութեամբք .
- Գ. սիւնին մէջ իւրաքանչիւր ապրանքի գինը .
- Դ. սիւնին մէջ իւրաքանչիւր ապրանք իւր գնովն բազմապատկելով՝ արտադրեալ մասնակի գումարն .
- Ե. սիւնին մէջ նոյն գումարներուն հարիւրորդները .



Բ. ՕՐԻՆԱԿ ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿԻ

# Ա. ԵՒ Խ. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

## ԹՂԹԱՎԱՃԱՌ

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ, ՀԱԶՕԲՈՒԼՕ ԽԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Թիի 4

Թիի 4

# A & H. KORASSANDJIAN

P A P E T E R I E

SULTAN HAMAM; HAZZOPULO HAN

CONSTANTINOPLE

N. 4  
Articles

N. 4  
de bureau

Կ. Պոլիս, 13 Հոկտեմ. 1883

Տ. Յ. Պաշթաձեան Կարենցի

Պարտի

12	Ծրար նամակի թուղթ	40	480	—
10	Հատ տետրակ ընդօրինակութեան	18	180	—
20	Շիշ մեղան »	8	160	—
10	Տուղինա մատիտ	5	50	—
5	Տուփ գրչի ծայր	3 <sup>1</sup> / <sub>2</sub>	17	20
3	Օրհաշուի տետրակ	60	180	—
3	Մայր հաշուի տետրակ	80	240	—
2	Մամուլ ընդօրինակութեան	120	240	—
			1547	20

Վճարելի կանխիկ Լ. Օ. 108 ղշ. 5ն

Գ. ՕՐԻՆԱԿ ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿԻ

# Թ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ Ի Կ. ՊՈԼԻՍ, ԿԱԼԱԹԱ

ՔԻՒՐԷՔՃԻԼԷՐ, ԹԻՒ 10



Տ. Արշակ Պօպուեան, յստնետառն 'ի Պոլիս, Պարտի  
ստ Թ. Պետրուեան հետնետալ ապրանսաց արժեքն .

Թ. Պ.									
Թ. 8-12	Հինգ պարկ ընտիր աճառ								
	Թ. 8 9 10 11 12								
	Հ. 78 82 75 79 76	390							
	Ապրայ	12							
	Զուտ կշիռ	378	4	1512	—				
Կ. Մ.	Զեղչ 5 %			75	20			1436	20
Թ. 101	Զորս պարկ շաքար								
» 108	Թ. 101 108 114 116								
» 114	Հ. 56 58 62 54	230							
» 116	Ապրայ	11							
	Զուտ կշիռ	219	4 1/2	985	20				
	Զեղչ 3 %			29	20				
	Լ. 0. 108 յըշէն = Լ. 0. 22, 15							956	—
	<u>Վճարելի 31 օրէն</u>							<u>2592</u>	<u>20</u>
	Կ. Պոլիս 28 մարտ 1883								
Ա	Բ	Գ	Դ	Ե	Ե	Զ	Զ		

Վերոյգրեալ հաշուեցուցակին սիւնոց բացատրութիւններն են .

Ա. սիւնին մէջ գրուած են հսկանց նշանագրերն և թիւերն .

Բ. սիւնին մէջ ապրանսաց տեսակներն հանդերձ իրենց մանրամասնութեամբ .

Գ. սիւնին մէջ ապրանսաց կշիռներն .

Դ. սիւնին մէջ ապրանսաց գիներն .

Ե. Ե. սիւներուն մէջ անզուտ գումարներն իրենց հարիւրորդովն .  
 Զ. Զ. սիւներուն մէջ զուտ գումարներն իրենց հարիւրորդովն :

Նոյն հաշուեցուցակին մէջ հականց կշիւներն զատ զատ գրուած են՝ հաւասար չափով չըլլալնուն համար . հետեւաբար երբ միւսնոյն չափով մէկէն աւելի հակեր, պարկեր եւ գանուին, հարկ չկայ զանոնք միառմի նշանակել :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ք

1. Յ. և Մ. Կարաղեան եղբարք ծախեցին Բ. Զամպաքճեանի՝ 1882 օգոստոս 13ին՝ 2 ծրար անթափ ապածոյ 30 ինչ . լայնքով 95 երտ. գ. 2 զրչ. երտ.ը — 5 ծրար գունաթափ անկուածոյ 32 ինչ . լայնքով 200 երտ. գ. 2  $\frac{1}{2}$  զրչ. — 10 ծրար անթափ անկուածոյ 35 ինչ . լայնքով 440 երտ. գ. 3  $\frac{1}{2}$  զրչ. — 6 ծրար ամերիքան 7 լիւրանոց գ. 35 զրչ. — Օսմ. լիրան 112 զրչ. էն — վճարելի 91 օրէն :

2. Մանուկ Գօշուսեան, յանձնառու ՚ի Կ. Պոլիս, ծախեց 1883 ապրիլ 10 ին, Պ. Մինասեանի 5 հակ բուրդ Տ. Ն. նշանագրով, թ.  $\frac{1}{3}$  ին մէջ 60ական և  $\frac{4}{5}$  ին մէջ 58ական հօխայ. — ապրայ 25 հօխայ, — հօխան 15 զրչ. գնով . 5% զեղչ կանխիկ վճարման համար :

3. Պ. Գարրիէլեան և Ընկ. մեծաքանակ-վաճառական ճերմակեղէն ապրանաց, ՚ի Կ. Պոլիս, ծախեցին 1883 մայիս 22ին Մ. Թաղ-ւորեանի 2 հակ ճերմակ մատամբօլ, նշանագիր B. K. & C<sup>ie</sup> թ. 2820/21 . մէն մի հակ կը սարուհակէ 100 ծրար . ծրարը 88 զրչ. գնով . օսմ. լիրան 110 զրչ. էն . 2% զեղչ . վճարելի 31 օրէն :

Հ Ա Ն Ո Ւ Ե Գ Ի Ր Գ Ն Մ Ա Ն

Գնման հաշուեցիւր ըսելով պէտք է հասկնալ այն հաշիւն զոր յանձնառու մը, աւանդառու մը և կամ ո՛ր և է վաճառական մը ուրիշ քաղաք մը գտնուող անձի մը կը զրկէ՝ անոր հրամանին համեմատ և հաշուոյն համար առած և յուզարկած վաճառքներուն համար :

Գնման հաշուեգրոյն մէջ, ապրանաց վերաբերեալ մանրամասնութիւններէն զատ, պէտք է նշանակել անոնց գներն, չափերն, մասնակի գումարներն, յետոյ անոնց ընդհանուր գումարին վրայ պէտք է աւելցնել յանձնառողչէքը, միջնորդչէքը, եթէ կայ, և այն ամէն տեսակ ծախքերն զորս յանձնառուն կ'ընէ ապրանաց պատասման և փոխադրութեան համար, ինչպէս նաեւ ապահովագրինն և նաւաւարձքն կամ կառավարձքն :

Ըսածնիս օրինակով մը բացատրեմք :

Կարնեցի Գ. Մըսրեան նամակաւ հրաման կուտայ մեզ իւր հաշուոյն համար 10 հակ զանազան տեսակ տպածոյ դնել և դրկել իրեն : Մեք եւս ըստ իւր հրամանին յիշեալ ապրանքները գնելով կ'ուղարկեմք իրեն . ուստի պէտք է որ գնման հաշիւն ալ իրեն դրկեմք , որպէսզի գիտնայ իւր հաշուոյն համար առնուած ապրանաց բոլոր մանրամասնութիւններն և արժէքներն , և ըստ այնմ ստակ դրկէ մեզ 'ի հաշիւ իւր սլարտուց :

Ահաւասիկ վերոյգրեալ գործողութեան համար Գ. Մըսրեանի դրկուած գնման հաշուեգրոյն օրինակը :

**Ա. ՕՐԻՆԱԿ ԳՆՄԱՆ ՀԱՇՈՒՆԳՐԻ**

Կ. Պոլիս , 10 Մարտ 1883

Հաշուեգիր գնման 10 հակ տպածոյից, զոր գնեց Պ. Յակոբեան՝ Կարնեցի Տ. Գ. Մըսրեանի հրամանէն հաւեմատ եւ անոր հաշուոյն համար եւ յոռարկեց այսօր իւր հասցէին ի Տրապիզոն Գաղղիական Հոգեւարով .

Գ. Մ.	Թ.	Մ.	Երկրանդ տպածոյ	ՅՅ ինչէս	Եարտ	Գ.		
	1	35	Մր. երկրանդ տպածոյ	36 ինչէս	1000	2 <sup>1</sup> / <sub>2</sub>	2500	—
	»	2	» Յ/գոյն	» անթափ »	900	3 <sup>1</sup> / <sub>2</sub>	3150	—
	»	3	» Աստարցու մատամբօլ	» »	800	2	1600	—
	»	4	» Ա/գոյն կարմիր տպածոյ	34 »	1050	3	3150	—
	»	5	» » ցպաւոր	» 36 »	1045	3 <sup>1</sup> / <sub>8</sub>	3265	20
	»	6	» Կրմր. տմքօ անկուածոյ	38 »	1055	3 <sup>1</sup> / <sub>2</sub>	3692	20
	»	7	» Գունաթափ տպածոյ	32 »	905	2	1810	—
	»	8	» Ճերմակ յատակ	» ծաղկ. 36 »	900	2 <sup>1</sup> / <sub>2</sub>	2250	—
	»	9	» Կրմր. տպծ. դեղին. ծաղկ	36 »	995	5	4975	—
	»	10	» » սթրնճ. տպածոյ	36 »	1040	3 <sup>1</sup> / <sub>8</sub>	3250	—
							29643	—
		20	» Պատատ ամերիքան 6 լիպրա			30	600	—
			<b>Ծախք</b>				30243	—
			Հակողչէք 10 հակի 25 դրչէն		250	—		
			Նաւողչէք 10 » 20 »		200	—		
			Փոխադրողչէք 10 » 5 »		50	—		
			Ապահովողչէք		27	—		
			Յանձնառողչէք 2 % 29643ին վրայ		593	—	1120	—
			Լ. 0. 110 դրչէն =	Լ. 0. 285. 12			31363	—
			<u>Վճարելի 91 օրչէն</u>					

Յիշեալ գնման հաշուեզրին համեմատ՝ Գ. Մըրթեան 30243 ՂՐ պարտական է մեզ այն ասորանաց համար զորս իւր հաշուոյն համար գնած եմք : Արդ պէտք է դիտել որ ասորանաց արժէքին (30243) գումարին վրայ աւելցուած են նաեւ 0% 2 յանձնառուողչէք, որ կ'ընէ 593 ՂՐ և 327 ՂՐ այլ և այլ ծախուց գումար մը, վասն զի Գ. Մըրթեան ոչ միայն ասորանաց արժէգինը պարտական է մեզ, այլ նաեւ անոնց համար մեր ըրած բոլոր ծախքերն և որոշեալ յանձնառուողչէքն :

Բ. ՕՐԻՆԱԿ ԳՆՄԱՆ ՀԱՇՈՒԵԳՐԻ

**ԹԵՔԷՆԱՆ ԵՂՐԱՐՔ** Յանձնառուք ի Մարսիլիա .

Տ. Մ. Արամեանի հրամանին համեմատ՝ իոր հաշուոյն համար գնած են « Օրոր » շոգեկառոյղ տոյարիսը եմք հետեւեալ ասորանքներն .

Մ. Ա.				
Թ. 6/17	12 տկ. շքր. գումար կը. 2040 քիլ. 100 ք. 70 ֆ.		1428	—
	Չեղչ 5%		43	—
			1385	—
Թ. 70/80	11 պրկ. խաչ. գումար կը. 900 քիլ. 7. 1,50 ֆ.	1350	—	—
	Չեղչ 4%	54	—	—
			1296	—
			2681	—
<b>Ծախք</b>				
	Կշռողչէք	6	50	
	Բեռնակրողչէք	32	50	
	Հակողչէք	25	—	
	Միջնորդչէք 0% 1	26	50	
	Յանձնառուողչէք 0% 2	53	50	144
	Բ. Ս. և Մ.		ֆր	2825
<b>Վճարելի Յուսվար ՅԱԻՆ</b>				
Մարսիլիա, 1 Յունվ. 1883				
ԹԵՔԷՆԱՆ ԵՂՐԱՐՔ				

**Գ. ՕՐԻՆԱԿ ԳՆՄԱՆ ՀԱՇՈՒԵԳՐԻ**

**Մանկարք, 12 Օգոստոս 1883**

Գնման հաշուեգիր 3 հակմանց՝ Կ. Մոռյատեանի ձեռամբ թեղորոսած « Սայտըն » շոգեկտրին վրայ՝ ՚ի հաշիւ Տրք. Գ. Վարդանեան եւ Հնկրց. ՚ի Կ. Պոչիս .

Գ. Վ. Ը.		Երտ.	Գին Շ.Բ.	Լ.Ս.	Շ.	Բ.	Լ.Ս.	Շ.	Բ.
420	110	Ծր. 40 ինչ. Լյնք. անկուածոյ	4200	-/4	70	—	—		
	5	» 32 » » սլատտ. 7 լիւլ.	—	5/6	1	7	6	71	7 6
421	40	» 44 » » բրդ. Ֆանէլա	1608	1/2				93	16 —
422	60	» 28 » » ստոր. անկուծ	2894	-/2 <sup>1</sup> / <sub>2</sub>	50	2	11		
	60	» 45 » » » »	2920	-/4	48	15	4		
	5	» 32 » » սլատտտ 7 լիւլ.	—	5/6	1	7	6	80	3 9
		<b>Տժգ. 12 ծր. ստոր. անկ. վրայ</b>		-/9	—	9	—	245	7 3
		16 » բրդ. Ֆանէլ. »		-/6	—	8	—		
		Զեղչ. 2 1/2 0/0 £ 151, 11, 3/4 »				17	—		
		3 1/2 » » 93, 16, — »			5	15	9		
					5	5	8	7	18 5
		<b>Ծախք</b>						237	8 10
		Ծալլողչք. հակողչ. փոխող ըողչ			5	10	4		
		Նաւողչէք			2	17	4		
		Ասլահողչէք				18	9	9	6 5
		Յանձնառողչ. 2 0/0 £ 237, 8, 10						4	15 —
		<b>Բ. Ս. Լ Մ.</b>					£	251	10 5
		<b>Վճարելի ՚ի 18 օգոս. 1883</b>							

Յանձնառու մը կամ վաճառական մը՝ ապրանքն բեռցնելէն անմիջապէս յետոյ, պարտի նամակաւ մը հաղորդել զայն ում որ կ'ուղարկէ ապրանքը, ներփակելով անոր մէջ յուղարկեալ ապրանաց հաշուեգիրն ու բեռնագիրն, և նշանակելով յայնմ մասնաւորապէս ապրանքին ինչ ճամբով ղրկած ըլլալն և վճարելի օրը : Սովորութիւն եղած է նաեւ յստակ կերպով գրել նամակին մէջ հաշուեգրոյն գումարը, և հրաւիրել ապսպրողն որ յետ քննութեան 'ի հաշիւ անցընէ և կամ փոխարէնը ղրկէ ըստ պայմանի :

Այս կարգի նամակք՝ ըստ գործողութեան՝ կրնան բազմաթիւ տեսակներով ըլլալ, բայց մեք ուսանողաց դաղափար մը տալու համար դնման հաշուեգրոց Բ. օրինակին ծանուցման նամակն կը դընեմք հոս :

Թ Է Ք Է Ե Ա Ն Ե Ղ Բ Ա Ր Ք

Մարտիլիա, 1 Յունվար 1884

Յ Ա Ն Ջ Ն Ա Ռ Ռ Ի Ք Ի Մ Ա Ր Ս Ի Լ Ի Ա

TEKÉIAN FRÈRES

COMMISSIONNAIRE

A MARSEILLE

Մեծարգոյ Տէր

Մ. Արամեան

'ի Կ. Պոլիս

Պատիւ ունիմք ծանուցանել Ձեզ որ այսօր մեկնող Օթօբ շոգենաւով յուղարկեցինք Ձեր ապսպրած 12 տակառ շաքարն և 11 պարկ խահուէն : Ներփակեալ կը գտնէք անոնց բեռնագիրն և հաշուեգիրն, որոյ գումարն է, Ցր. 2825.— զոր յետ քննութեան հաճեցէք անցնել 'ի մեր պահանջք Յունուար 31            թուականաւ :

Յիշեալ ապրանքներն յապահովութեան չդրինք, որովհետեւ այդ մասին հրաման չէիք տուած մեզ :

Յոյս ունիմք որ գոհ պիտի ըլլաք յիշեալ ապրանաց թէ՛ տեսակէն, թէ՛ գնոց աժանութենէն և թէ՛ ծախուց չափաւորութենէն, և պիտի հաճիք 'ի մօտ, նորանոր հրամաններ ղրկել մեզ, զորս պիտի ջանամք ձեզ նպաստաւոր կերպիւ կատարելու :

Հաճեցէք, Տէր, ընդունիլ մեր յարգանքներն :

Թ Է Ք Է Ե Ա Ն Ե Ղ Բ Ա Ր Ք



Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ք

1. Պ. Թիւրքեան, 'ի Կ. Պոլիս, գնեց 1883 յունիս. 2ին 3 հակ տպածոյ, 'ի հաշիւ Տրապիզոնցի Ա. Խտշեանի, Ա. Խ. նշանագրերով թ. 20|22. Իւրաքանչիւրին մէջ 50ական ծրար, — թ. 20|21ին մէջ 1500 ական և 22ին մէջ 1510 երտ. գ. 2  $\frac{1}{4}$  դրշ. — հակողչէք 25 ական դրշ. — փոխադրողչէք 8 դրշ. առ հակ. — նաւողչէք 20 դրշ. առ հակ. յանձնառողչէք 2% և ապրանաջ ընդհանուր գումարին վրայ  $\frac{1}{8}$  ասպահովողչէք հաշուելով. — Օսմ. Լ. 110 դրշ. էն — վճարելի 61 օրէն :

2. Գ. Սմբատեան, 'ի Սէլանիկ, 'ի հաշիւ Յ. Կարապետեանի, որ 'ի Կ. Պոլիս, 3 տակառ գինի կը գնէ և 1882 յունիս. 3 թուականաւ կը դրկէ նոյնին հասցէին՝ Փրանսական Տէլթա շոգենաւով. Յ. Կ. նշանագրերով, թ. 77|79, ընդամէնը 200 հօխայ, — գ. 3  $\frac{1}{4}$  դրշ. — զանազան ծախք 120 դրշ. — նաւողչէք 40 դրշ. առ տակառ. — յանձնառողչէք 1  $\frac{1}{2}$  % — ասպահովողչէք  $\frac{1}{2}$  % . — վճարելի կանխիկ. Օսմ. Լ. 108 դրշ. էն :

ՀԱՇՈՒԵԳԻՐ ՎԱՃԱՌՄԱՆ

Երբ յանձնառու մը կամ աւանդառու մը վաճառականի մը կողմանէ իրեն զրկուած ապրանքներն անոր հրամանին՝ համեմատ և անոր հաշուոյն համար ծախէ, պարտաւոր է նոյն ապրանաջ վաճառման հաշիւն անմիջապէս զրկել ապրանքին տիրոջ : Այս հաշիւը պարունակող գրութեան կ'ըսուի հաշուեգիր վաճառման :

Վաճառման հաշուեգրոյն մէջ ապրանաջ արժէից գումարէն պէտք է իջնել զեղչէն զատ՝ անոնց վաճառման համար եղած բոլոր ծախքերն, ինչպէս նաեւ միջնորդչէքն, յանձնառողչէքն և երաշխողչէքը, եթէ կայ :

Ըսածնիս օրինակով մը բացատրեմք :

Խ. Սարգիսեան, 'ի Կ. Պոլիս, ստացաւ Մանչէսթըրի Թ. Սրապեանի կողմանէ 3 հակ տպածոյ անոր հաշուոյն ծախելու համար : Արդ, ապրանքը ծախելով՝ հաշիւ մը կը դրկէ անոր, նշանակելով մի առ մի թէ ապրանքներն քանի՞ ծախուեցան, ինչ ծախքեր եղան և որչափ գուտ առնելիքը մնաց :

Հոս կը գնեմք վերոյգրեալ գործողութեան համար Խ. Սարգիսեանի առ Թ. Սրապեան զրկած վաճառման հաշուեգիրն :

Նոյն վաճառման հաշուեգրին համեմատ՝ Խ. Սարգիսեան պարտական է Թ. Սրապեանի ապրանաջ փոխարէնը, որ է 37190 դրշ. Սակայն, ինչպէս կ'երեւի,  $\frac{1}{2}$  % յանձնառողչէքն, որ կ'ընէ 744

Ա. ՕՐԻՆԱԿ ՎԱՃԱՌՄԱՆ ՀԱՇՈՒԵԳՐԻ

Հաշուեցիր վաճառման 3 հսկ տարածոյից՝ Մանէկսթըրի Տ. Թ. Սրապեանի հրատմանին հաճեալստ եւ ունոր հաշուոյն համար վաճառեալ ձեռամբ Խ. Սարգիսեանի 'ի Կ. Պոլիս .

Թ. Ա.	Թ. Ա.				
Թ. 1	150	Ծր. ճերմակ տարածոյ	4500	2 <sup>1</sup> / <sub>2</sub>	11250
» 2	200	» <sup>1</sup> / <sub>4</sub> . կարմիր տարածոյ	5900	3	17700
» 3	150	» գունաթափ	4425	2	8850
	15	» 32 ինչ. սլառատ 8 լիպր. 24 եարտ. 5ական ծրր. մէն մի հակի մէջ		56	540
					38340
		Զեղչ 3%			1150
		<b>Ծախք</b>			<b>37190</b>
		Մաքսատուրք 3 հականց	1339	—	—
		Միջնորդչէք 1%	372	—	—
		Փոխադրողչէք	80	—	—
		Յանձնառողչէք 2%	744	—	—
		<b>Բ. Ս. և Մ.</b>			<b>2535</b>
		Լ. Օ. 100 ղ. էն			<b>34655</b>
		Կ. Պոլիս, 20 Յունիւ. 1883			
		Խ. ՍԱՐԳԻՍԵԱՆ			

դրչ. և 1791 դրչի ծախուց գումարն ապրանաց արժէից (37190) գումարէն իջուած է, վասն զի յանձնառողչէքն, միջնորդչէքն և այլ զանազան ծախքերն Թ. Սրապեան սարտական ըլլալով՝ ապրանաց արժէից գումարէն պէտք է իջնել կամ վար դնել :

Թէ վերոյգրեալ և թէ միւս հաշուեգրոց մէջ տեսնուած Բ. Ս. և Մ. գրերն բաց 'ի սխալմունքի եւ մոռացմունքի բաւերուն սկզբնատառերն են, որք կը նշանակեն թէ հաշուեգրին գումարն ուղիղ է, եթէ հաշուի սխալմունք մը տեղի ունեցած կամ գործողութիւն մը մոռացմամբ դուրս թողուած չէ :

Բ. ՕՐԻՆԱԿ ՎԱՃԱՌՄԱՆ ՀԱՇՈՒԵԳՐԻ

Մարտիիս, 30 Յուլիս 1883

Հաշուեգիր վաճառման 38 ծրար մետաքսաց, որք Տրք. Հ. Բիրեանց եւ Ընկրց. Կողմանէ որկոսած եւ անոնց հաշուոյն համար ծախսուած եւ Լոնի Տեղան եւ Ընկրց. ձեռամբ.

Մ. Հ.					
1-38	1291	80	Քիլո. 38 ծրար պարսկական մետաքս		
	47	30	» ապրայ		
	1244	50	Զուտ կշիռ, քիլոն 27 Փրանքէն		33601 50
			Զեղչ 1 <sup>0</sup> / <sub>0</sub>		336 —
					33265 50
			----- Ծախս -----		
			Միջնորդչէք 1 <sup>0</sup> / <sub>3</sub> <sup>0</sup> / <sub>0</sub>	110	90
			Յանձնառողչէք և երաշխողչէք 3 <sup>0</sup> / <sub>0</sub>	997	95
			Նաւողչէք և ապահովողչէք	614	80
			Մաքսատուրք	75	40
			Փոխադրողչէք, նամակի, և այլն	90	45
			Մթերողչէք	91	20
			Ապահովողչէք հրդեհի դէմ 1 <sup>0</sup> / <sub>00</sub>	33	25
			Կշողչէք և մանր ծախքեր	37	90
					2051 85
			Բ. Ս. և Մ.	Քր	31213 65
					-----
					-----

ԼՈՒԻ ՏԵԿՐԱՆ ԵՒ ԸՆԿ.

Յանձնառու մը պարտի առաջին առթիւ վաճառականին ծանուցանել վաճառման գործողութիւնն նամակաւ մը ներփակելով միանգամայն վաճառման հաշուեգիրն :

Վաճառման հաշուեգրոց Ա. օրինակին վերաբերեալ ծանուցման նամակը կը դնեմք հոս :

Կ. Պոլիս , 20 Յունվար 1884

Մեծարգոյ Տէր Թ. Սրապեան

Մանչէսթըր

Ներկայիւս կը ծանուցանեմ ձեզ թէ՛ ձեր հրամանին համեմատ և ձեր հաշուոյն համար , ծախեցի և յանձնեցի ձեր շրկած Թ. 1/3 երեք հականց տըպածոյներն :

Ներփակեալ կը շրկեմ ձեզ սոյն վաճառման հաշուեգիրն , որոյ գումարն Լ. Օսմ. 346, 55 անցուցի 'ի Ձեր պահանջք Յունուար 19 թուականու :

Շատ ուրախ պիտի ըլլամ եթէ այս առաջին գործողութենէն գոհ մնալով հաճիք շարունակել ընդ իս ձեր յարաբերութիւններն , յորս պիտի ջանամ ամէն կերպով հաճելի ըլլալ ձեզ :

Ընդունեցէք , Տէր , իմ բարեկամական անկեղծ ողջոյններս :

Խ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ք

1. Ն. Թորոսեան՝ Մ. Համբարձումեանի կողմանէ իրեն շրկուած Ն. Թ. նշանագրերով և 1, 2, 3, 4, 5 թիւերով 5 պարկ ալիւրն կը ծախէ անոր հրամանին համեմատ և հաշուոյն համար , որոյ հաւաքական անգուտ կշիռն է 308 հօխայ . — ապրայ 3 հօխայ մէն մի պարկի համար . — գ. 2 շրշ. հօխան . — զեղչ 2 % . — ծախք . — փոխադրողչէք , մթերողչէք , կռողչէք ընդամէնը 50 շրշ. — միջնորդչէք 1 1/2 % . — յանձնառողչէք 2 % :

2. Յ. Գասպարեան՝ Մանչէսթըրի Գ. Պողոսեանի կողմանէ իրեն շրկուած Գ. Պ. նշանագրերով և 124/133 թիւերով 10 հակ մանածն կը ծախէ անոր հրամանին համեմատ և հաշուոյն համար , Թ. 124/126 հակերուն մէջ կայ 20ական կապոց վաթէր մանած թ. 8/10 գ. 40 շրշ. կապոցը . — Թ. 127/128ին մէջ 20ական կապոց վաթէր մանած թ. 16/24 գ. 47 շրշ. կապոցը — Թ. 129/131 ին մէջ 40 ական կապոց կապոյտ մանած թ. 28/32 գ. 75 շրշ. կապոցը — Թ. 132 133ին մէջ 120ական կապոց գուլպացու թիրէ սպիտակ , թ. 6/16 գ. 65 շրշ. կապոցը — զեղչ 3 % — միջնորդչէք 1 % — յանձնառողչէք 2 % — երաշխողչէք 2 % — ծախք , մաքսատուրք 10 հակին 1841 շրշ. — փոխադրողչէք և մանր ծախքեր 110 շրշ. — Օսմ. Լ. 105 շրշ. էն :

Փ Ո Ւ Ա Դ Ր Ա Գ Ի Ր

Փոխադրագիրը տեսակ մը պայմանագիր է որ կը կնքուի ապրանք յուղարկողին և կառավարին կամ ջորեպանին միջեւ , և որով այս վերջինները պարտականութիւն կ'ստանան իրենց յանձնուած ո՛ր և է վաճառք որոշեալ պայմանաժամու մը մէջ նշանակեալ անձին յանձնելու :

Փոխադրագրոց պարունակութեան վրայ որոշ ծանօթութիւն մը տալու համար , վաճառականական Օրինագրքին հետեւեալ յօդուածներն յառաջ կը բերեմք :

Յօդ. 61 « Իրսայից գայիմէսի թապիր օլունան սէնէտ մալ կէօն-տէրէն շախս իլէ քիրաճը վէ քէզալիք մալ կէօնտէրէն շախս իլէ սը-փարըքէար վէ էմանէթճի վէ քիրաճը պէյնինտէ օլան մուգավէլէյի հավի պիր սէնէտ տիր . »

Յօդ. 62 « Մէգքիւր իրսայից գայիմէսինտէ թարիս օլմաք վէ նագլ օլունաճագ էշեանըն մըգտար վէ ճընսը վէ բէնկլէրինին նէվի վէ քաչ կիւն զարֆընտա մահալինէ իսալ գըլընաճաղը վէ նագլ վէ իսալընա միւթէահհիտ օլան սըփարըքէար վէ էմանէթճինին իսմ ու շէօհրէթ վէ մահալը իգամէթի վէ էշեանըն քիմէ թէսլիմ օլունաճաղը վէ քիրաճընըն իսմ վէ շէօհրէթ վէ սաքին օլտուղը մա-հալը վէ իւճրէթը նագլիլէնին մըգտարը վէ թային օլունաճագ միւտ-տէթ զարֆընտա եթիշտիրէմէզ իսէ էտա օլունաճագ թագմինաթ քէյֆիլէթի մուհարրէր վէ միւնտէրիճ պուլունմագ վէ սըփարըքէար վէ էմանէթճի վէ եախօտ իրսալ իտէն շախս թարաֆլարընտան իմ-զա գըլընմագ վէ համիլի սէնէտտէ կէօնտէրիլէն էշեանըն նիւմէրօ վէ ալամէթի (նշանագիր) նէ իսէ իշարէթ օլունմագ վէ սէնէտը մէզ-քիւր սըփարըքէար վէ էմանէթճինին տէֆթէրինէ այնը իլէ գայտ գըլընմագ լագըմէտէն տիր . »

Այս ընդօրինակութիւնը կրնայ օգտակար ըլլալ, եթէ փոխադ-րագիրը կորսուելու ըլլայ և կամ վէճ մը տեղի ունենայ :

Փոխադրագիրն որոշեալ ձեւ մը չունի, բաւական է որ կանոնա-ւոր ըլլալու համար օրինաց պահանջած ամէն կէտերն ալ պարու-նակէ :

Յօդ. 63 « Քիրաճը մարիֆէթի իլէ նագլ օլունաճագ էշեատա խիլաֆը ատէթ պիր սէպէպէ մէսլնի օլմայարագ թէլէֆաթ վուգու պուլուր վէ էշեանըն ճընսը իճապընտան նէշէթ իտէն վէ եախօտ պիր մանիի գավի զուհուրունտան թէքվին իյլէյէն պօզուգլուգտան մատա հէր նէ կէօնա պօզուգլուգ զուհուր իտէր իսէ քիրաճը զամին (պա-տասխանատու) տիր . »

Յօդ. 64 « Խիլաֆը ատէթ պիր սէպէպ զուհուր իտուպ տէ, մուայէն օլան վատէսինտէ մահալինէ իսալ օլունմայան էմվալ վէ էշ-եանըն մէօհլէթի թէճավուղ իթմէսինտէն տօլայը քիրաճը մէսուլ տէյիլ տիր . »

Յօդ. 65 « Նագլ օլունան էմվալ վէ էշեա դասլզ օլունտգտան վէ քիրա վէ իւճրէթի տախի թէտիլէ վէ իթա գըլընտըգտան սօղրա, քիրաճը հագգընտա պիր կէօնէ իտտաա վուգու պուլուր իսէ մէսմու տէյիլ տիր . »

Արդ, 63 և 64 յօդուածոց տրամադրութիւններէն կը հետեւի թէ՛ նախ, ապրանքը փոխադրողն պատասխանատու է, եթէ՛ ա-ռանց արտաքոյ կարգի պատճառ մ'ըլլալու՝ ապրանքը ճամբայն

կորսուի , և կամ՝ այնպիսի վնաս մը կրէ որ նոյն իսկ ապրանաց գէշութենէն պատահած չէ : Իսկ , ընդհակառակն , պատասխանատու չէ , եթէ հեղուկ ապրանք մը թափի , և կամ դիւրաբեկ նիւթեր կտորին , եթէ կանխաւ այս մասին մասնաւոր կարգադրութիւն մը եղած չըլլայ : Երկրորդ , ապրանքն ուշ մնացած ատեն , այն անձը՝ որու պիտի յանձնուի ապրանքը , փոխադրողէն բան մը պահանջելու իրաւունք չկրնար ունենալ , եթէ նոյն յապադումը հարկադրիչ պատճառաւ մը տեղի ունեցած է , ինչպէս են , ողողմունք , փոթորիկք ևն :

Ուրեմն , թէ՛ ապրանքն ընդունելէ և թէ՛ փոխադրութեան վարձքը վճարելէ յառաջ , պէտք է մանրամասնաբար քննել զայն , և՛ եթէ մնասեալ տեսնուի՝ կանխաւ հաստատել վնասն և հատուցումն պահանջել . վասն զի , վաճառական մը ոչ միայն սոյն երկու կէտերն գործադրելէն յետոյ կառավարէն բան մը պահանջելու իրաւունքը կը կորսնցնէ , այլ անոնցմէ միայն մին կատարելէն վերջն ալ կը գրկուի դարձեալ իւր իրաւունքէն :

Այսպէս , եթէ վաճառական մը վնասեալ ապրանք մը ընդունի , իբրեւ փոխարէն իւր վնասուն՝ փոխադրագրին մէջ նշանակեալ վարձքը չվճարելով , և կարծէ թէ այս կերպով ամէն բան կարգադրուած է , կը սխալի և իրաւունքը կը կորսնցնէ . վասն զի , ժամանակ անցնելէ յետոյ , կրնայ ըլլալ որ փոխադրող կառավարն կամ ջորեպանն ևն , դատ բանայ վաճառականին դէմ , և դատարանն՝ չկրնալով այլևս հաստատել թէ ապրանքն որոյ ձեռք դտնուած ժամանակ վրձասուած է , դատաւարտէ զվաճառականն փոխադրութեան վարձքը և թերեւս ուրիշ ծախքեր ալ վճարելու :

Փոխադրագիրը դրոշմաւոր թղթի վրայ գրելու է , այսինքն թղթին վրայ դրոշմանիչ փակցնելու է :

Փոխադրագրին սարունակութեան մէջ բոլոր թուանշանները պէտք է գրով գրել , որպէս զի չըլլայ թէ փոխադրողն՝ որոյ քով պիտի մնայ փոխադրագիրը , թուանշաններն փոխէ՝ ի նպաստ իրեն , զորօրինակ , 726 զըշը 926 ընէ :

Փոխադրագրին ճակատը կամ ստորեւը պէտք է նշանակել այն գումարին հաշիւը , զոր ապրանքն ընդունող անձը պարտի վճարել : Սոյն գումարը կը բաղկանայ ընդհանրապէս փոխադրութեան վարձքէն և դրոշմատուրքէն . կան փոխադրագիրք որոց մէջ ասոնցմէ զատ կը նշանակուին նաեւ ապահովագիրն և վաճառաց արժէքն կամ նոյն արժէքին մնացորդը , եթէ կայ :

Որովհետեւ փոխադրութեան համար պայմանեալ օրերն փոխադրագրին թուականէն կ'սկսին բանիլ , ուստի պէտք է որ օրուան թիւը գրով նշանակուած ըլլայ , որպէս զի փոխադրողն թուանշաններուն վրայ փոփոխութիւն մը չընէ :



ՕՐԻՆԱԿ ՓՈԽԱԴՐԱԳՐԻ

# Ա. ՄԱԽՕԻՅԱՆ

## ՅԱՆՁՆԱՌՈՒ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ

Ի ՏՐԱՊԵՉՈՆ

Ոչ ոք իրաւունք պիտի ունենայ բան մը պահանգելու ինե՛, եթէ նախ իւր վնասուն փոխարեւը պահանգած չլլայ փոխադրողէն :

Փոխադրողէք 726  
Դրողմատուրք —  $\frac{1}{4}$   

---

ՄՐՆ 726  $\frac{1}{4}$

Տրապիզոն , տասնեւմեկ Մայիս 1883

Մեծարդոյ Տէր Յ. Ֆէնէրճեան

Դավրէժ

Նշագիր	Թիւ	Կիտ
Գ. Ս.	1	60
	2	58
	3	60
	4	59
	5	62
	6	63
	7	61
	8	57 $\frac{1}{2}$
	9	61 $\frac{1}{2}$
	10	63
		605

Աստուծոյ պաշտպանութեամբն և տեղւոյս Տէլիպաշ օղլու ջորեպանին ձեռամբ՝ պիտի ընդունիք տասն պարկ խահուէ , որոց ամէնուն վրայ ալ լուսանցքին մէջ դրուածին նման նշանադրեր և թիւեր նշանակուած են , ընդամէնը վեց հարիւր հինգ հօխայ : Ջորեպանը մինչեւ Ձեր վաճառատան դուռը պիտի բերէ զանոնք անվնաս երեսուն օրուան մէջ , պայմանաւ որ եթէ սոյն որոշեալ օրն անցնելու ըլլայ իւր վարձքին  $\frac{1}{3}$ ը վար պիտի դնէք : Պիտի վճարէք իրեն մէն մի հարիւր հօխային հարիւր քսան դրչ. նաեւ տասն փարայ՝ փոխադրողրիս դրողմատուրքին համար :

Ա. ՄԱԽՕԻՅԱՆ

ԾԱՆՕԹ. — Առանց իմ հաւանութեանս աւելցուած կամ աւրուած մասերն ոչինչ պիտի համարուին :



LETTRE DE VOITURE

**A. MAHOKIAN**

COMMISSIONNAIRE DE TRANSPORT

A TRÉBIZONDE

On sera sans recours contre le Commissionnaire, dans le cas d'avarie ou manque de marchandises, si au préalable on n'a fait ses diligences contre le voiturier.

Voiture	726
Timbre	— 1/4
	<hr/>
	726 1/4

Trébizonde, le onze Mai 1883

Monsieur O. Fénérdjian

TAURIS

Marques	Num.	Poids
K. S.	1	60
	2	58
	3	60
	4	59
	5	62
	6	65
	7	61
	8	57 1/2
	9	61 1/2
	10	65
		<hr/>
		605

A la garde de Dieu et sous la conduite de Délibachoglou muletier de notre ville, vous recevrez dans le délai de trente jours, sous peine au muletier de perdre le tiers du montant de sa voiture,

**dix sacs café**

le tout marqué et numéroté comme en marge, pesant ensemble six cent cinq ocques. Il les apportera devant la porte de votre magasin. Vous lui payerez cent vingt piastres pour cent ocques et rembourserez dix paras pour le timbre de la présente.

A. MAHOKIAN

**NOTA.** — Seront nulles toutes surcharges ou ratures non approuvées par le signataire.

Չանազան ձեւերով փոխադրագրեր կրնան ըլլալ, բայց անոնց ամէնուն ալ իմաստը միւսնայնն է, քանի որ ամէն փոխադրագրի մէջ օրինաց արամադրած կէտերն ամբողջովին պիտի նշանակուին :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

1882 Մարտ 28ին՝ Ա. Մախոխեան տասն հակ ապրանք դրկեց Տրապիզօնէն ՚ի Կարին Յ. Խրէեանի, Պէյթուլլահ անուն պարսիկ ջորեպանին ձեռամբ, — մէն մի հակի համար 80 դրչ փոխադրողչէք որոշելով, — 15 օրէն Կարին հասցնելու և՛ եթէ ուշ մնալու ըլլայ՝ վարձքին  $\frac{1}{2}$  ը վար դրուելու պայմանաւ, — դրոշմատուրք 10 փրյ. — հականց թիւերն են, 10 | 19 և նշանագրերը Յ. Խ. :

Բ Ե Ռ Ն Ա Գ Ի Ր

Բեռնագիրը տեսակ մ'ընկալագիր է, զոր նաւապետ մը կուտայ իւր նաւուն վրայ բեռցուած ապրանաց համար :

Բեռնագրին մէջ պէտք է նշանակել փոխադրելի ապրանաց տեսակը, քանակը և որակը : Անոր մէջ կը գրուին բեռնատիրոջ անունը, այն վաճառականին անունն և հասցէն առ որ կը յուղարկուի ապրանքը, նաւապետին անունն և բնակութիւնը, նաւուն անունն և տակառաչափը, <sup>(1)</sup> այն տեղն ուստի նաւը պիտի մեկնի և այն տեղն ուր պիտի երթայ, նաւողչէքն և՛ լուսանցքին մէջ՝ փոխադրելի ապրանաց նշանագրերն և թիւերն :

Բեռնագիրն կրնայ շինուիլ հրամանի, ներկայացնողին, և կամ որոշեալ անձի մը անուան :

Բեռնագիր մը գոնէ չորս օրինակ կը շինուի, մին բեռնատիրոջ համար, երկրորդն անոր համար որու կը յուղարկուի ապրանքը, երրորդն նաւապետին համար, և չորրորդն՝ նաւայարդարին համար :

Բեռնագրին չորս օրինակներն ալ կ'ստորագրուին բեռնատիրոջ և նաւապետին կողմանէ՝ ապրանաց բեռնաւորումէն յետոյ 24 ժամու մէջ :

Բեռնագիրն կրնայ վաճառելի թուղթ համարուիլ, այսինքն, բեռնատէրն կամ վաճառականն, որու կը յուղարկուի ապրանքն, կրնան բեռնագիրն ուրիշի մը ծախել, եթէ հրամանի է, գնողին ա-

(1) Տակառաչափը նաւուն մեծութիւնը, այսինքն, քանի՛ տակառաչափ պարունակելը կը ցուցնէ. ծովային տակառաչափը 1000 քիլօ է : Երբեմն՝ թէեւ թէթեւ, բայց բեռցնելու համար շատ աշխատութիւն պահանջող ապրանաց համար, եթէ 1000 քիլօէն ալ պակաս ըլլայ, դարձեալ մէկ տակառաչափ կը հաշուեն :

նուան փոխանցելով, եթէ ներկայացնողին է, առանց ո՛րէ գործողութիւն կատարելու, իսկ եթէ որոշեալ անձի մ'անուան շինուած ըլլայ, որ քիչ անգամ կը պատահի, նաւապետին ուղղեալ գրութեամբ մը միայն կարելի է ուրիշի մը տալ զայն :

Բեռնատէրն՝ իւր ձեռքն ունեցած բեռնապրին զօրութեամբ, կրնայ երբ ուզէ ճամբայն եղած ապրանքը ծախել, կամ ապրանքը ծովը նետուած ժամանակ, հաստատել թէ այսինչ ապրանքներն բեռնուած էին նոյն նաւուն վրայ : Վաճառականն՝ իւր ձեռքն ունեցած բեռնագրին պարունակութեան համեմատ, ապրանքը կը պահանջէ նաւը նաւահանգիստը մտած ատեն : Նաւապետն իւր քով ունեցած բեռնագրով կը հաստատէ թէ բեռնատիրոջ նկատմամբ յանձն առած պարտաւորութիւններն լիովին կատարած է, և նաւողչէքը կը պահանջէ, եթէ ապրանքը բեռնցողը չէ վճարած կանխաւ : Իսկ նաւայարդարն իւր բեռնագրով կարող կ'ըլլայ 'ի հաշիւ անցնել նաւողչէքն և ըստ այնմ կարգադրել իւր հաշիւներն նաւապետին հետ :

Շատ անգամ, ստակի պէտք ունեցող վաճառականք՝ բեռնագիր մը իբր գրաւ տալով սեղանաւորի մը, փոխառութիւն կ'ընեն անկէ :

Բեռնագրի շարադրութեան ձևերն ամէն նաւահանգստի մէջ կը տարբերին իրարմէ : Ամենահին ձևերով շարադրուած բեռնագիրներ կան, որք դարերէ 'ի վեր կը գործածուին Միջերկրականի մէկ քանի նաւահանգիստներու մէջ : Ուրիշներ ալ կան, որք աւելի նոր ոճով և աւելի կանոնաւոր կերպով գրուած են : Բայց ինչ ոճով ալ գրուած ըլլան, բեռնագիրք ամէն տեղ ալ գրեթէ միևնոյն վաճառականական արդիւնքն և օրինական զօրութիւնն ունին :

Բեռնագիրք սովորաբար տպեալ կ'ըլլան, որոց մէջ պարապ տեղեր ձգուած են 'ի վերջոյ հարկ եղածն ձեռքով գրելու համար :

Բեռնագրին պարունակութեան մասին այսչափ խօսելէ յետոյ, աւելորդ համարած եմք օրինակ մը դնել հոս, մանաւանդ որ նաւային ընկերութիւնք իրենք կը յանձնեն տպեալ բեռնագիրն, որով վաճառականն պէտք մը չունի զանոնք պատրաստելու :

#### ՍՏԱՅԱԳԻՐ ԿԱՄ ԸՆԿԱԼԱԳԻՐ

Ստացագիր կ'ըսուի այն գիրն որով ո՛րէ վճարման կատարուած ըլլալն 'ի հարկին կը հաստատուի : Ստացագիրն նոյն իսկ վճարումն եղած պահուն պէտք է առնուլ այն անձէն որում վճարում մը կ'ըլլայ : Առեւտրոյ մէջ եղած առհասարակ ամէն տեսակ վճարմանց համար ստացագիր առնել սովորութիւն եղած չէ :

Ստացագիր կ'առնուի հաշուեցուցակի մը և կամ առեւտրական թղթի մը գումարը վճարուած ատեն : Այս տեսակ վճարմանց համար

ստացողն՝ փոխանակ մասնաւոր ստացագիր մը տալու , նոյն իսկ վը-  
ճարեալ հաշուեցուցակին ներքեւ կամ վաճառականական թղթին ե-  
տին ստացայ կամ ստացանք բառը կը գրէ և անոր տակ կ'ստո-  
րագրէ . երբեմն թուական ալ կը դնեն ստացայ բառէն վերջը և  
ապա կ'ստորագրեն :

Կան ուրիշ տեսակ վճարումներ ալ որոց համար փորձառութիւնը  
կը պատուիրէ վճարողին ստացագիր առնուլ ստացողէն , որպէս զի  
ապագային մէջ ձեռքը դրաւոր ապացոյց մ'ունենայ նոյն ստակը  
վճարած ըլլալուն , եթէ զայն կրկին սահանջելու խնդիր ծագի :

Օրինակի աղագաւ . դիցուք թէ Ս. Գալստեան 200 լիրա արժո-  
ղութեամբ 10 ընտիր գորգեր կը գնէ Ն. Գրիգորեանէն , որ կը խոս-  
տանայ 25 օրէն յանձնել զանոնք , և 'ի հաշիւ 100 լիրա կուտայ ա-  
նոր : Արդ , հարկ է որ Ս. Գալստեան 100 լիրա համար ստացագիր  
մ'առնու Ն. Գրիգորեանէն , որպէս զի այս վերջինն ապրանքը յանձ-  
նած ատեն իրաւունք չունենայ ամբողջ 200 լիրա սահանջելու իրմէ :

Ահաւասիկ հոս կը դնեմք Ս. Գալստեանի առած ստացագրին օ-  
րինակը և ուրիշ երեք օրինակներ եւս , որոցմէ կրնայ հասկցուիլ  
թէ ինչ տեսակ ստացագայներու մէջ կ'առնուի ստացագիր :

**Ա. ՕՐԻՆԱԿ ՍՏԱՑԱԳՐԻ**

Ստորագրեալս կը յայտարարեմ որ ստացայ Տր. Ս. Գալստեանէ ,  
յանձնատոռ 'ի Կ Պոլիս , հարիւր լիրա Օսմանեան , 'ի հաշիւ տասն  
պարսկական գորգերոռ զորս իրեն ծախած եմ թողանկու 25 օր  
յետոյ յանձնելոռ պայմանաւ :

Կ. Պոլիս , 18 Յունվար 1883

Ն. ԳՐԻԳՈՐԵԱՆ

**Բ. ՕՐԻՆԱԿ ՍՏԱՑԱԳՐԻ**

Ստացայ Տր. Գ. Պողոսեանէ , խանութպան 'ի Մահմոտ  
փաշա , հազար քսան դրուլ մեծխոյնի դրամ , վասն եռամսեայ վարձոց  
տանս , զոր վարձոռ տոռած եմ իրեն ներկայ տարոյն Յունվար 1 ին  
սկսեալ :

Կ. Պոլիս , 10 Յունվար 1883

Գ. ԳԱՐԻԷԼԵԱՆ

Գ. ՕՐԻՆԱԿ ՍՏԱՑԱԳՐԻ

Ստացայ Տր. Մ. Արզարեանի հարիւր քսան լիբա Օսմանեան ,  
 Պ. Ն. Գասարեանի հրամանաւն եւ սնոր հաշոռոյն համար :

Կ. Պոլիս, 15 Ապրիլ 1883 ԱՐՇԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Դ. ՕՐԻՆԱԿ ՍՏԱՑԱԳՐԻ

Ստացայ , իբր առանդ , Տր. Գ. Վարդանեանի Ռոռնիի երկու-  
 թոռնեաց երեք բաժնեդրեր , 60142 , 44750 եւ 205940 թիւն-  
 ռոյ եւ 12<sup>րդ</sup> կտրոնն վրանիս , զորս , երբ պահանջի , պատրաստ եմ  
 իրեն վերադարձնել միեւնոյն վիճակիս մեջ :

Կ. Պոլիս, 11 Յուլիս 1883 Յ. ՍԱՔԱՆԱՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ք

1. Ա. Պետրոսեան՝ Մ. Սրապեանի ծախած սպրանայ արժէքն  
 7820 դրչ. ըստ հաշուեցուցակին կ'ստանայ 1882 Ապրիլ 12ին , որոյ  
 համար ստացագիր կուտայ :

2. Պ. Թորոսեան հրաման ստացաւ Կարնեցի Յ. Խրէեանէ , որ  
 անոր հաշուոյն համար Ս. և Ս. Կիւլպէնիեանէ 105 օսմ. լիբա առնէ .  
 Ս. և Ս. Կիւլպէնիեան սոյն գումարը վճարելով փոխարէն ստացա-  
 գիր մը կ'առնուն :

ԴԱՐՁԻ ՀԱՇԻԻ

Դարձի հաշիւ ըսուածն այն հաշիւն է որոյ մէջ սեղանաւոր մը  
 կը նշանակէ՝ պայմանաժամին չվճարուած փոխանակագրի մը դրա-  
 մագլխէն զատ , իւր ըրած բոլոր ծախքերն և մնասներն , ինչպէս են  
 բողոքման ծախքն , դրոշմատուրքն , թղթատարի ծախքն , բողոքման  
 օրէն մինչև փոխանակագրին փոխարէնին վճարման օրը բանած տո-  
 կոսներն , երկրորդ փոխանակագրինն և՛ , և կը դրկէ զայն այն անձին  
 կամ թղթակցին որմէ ստացած էր նոյն փոխանակագիրն :

Վաճառականական օրինագրքին՝ դարձի հաշուոյն վերաբերեալ  
 հետեւեալ յօդուածները յառաջ կը բերեմք :

Յօդ. 157 « Բօլիչանըն կէրի չէվիրմէսի ուրթ-ուէթ՝ եանի իատէ հիսապը թասպիր օլունուր պիր գըթ-ա տէֆթէրի միւֆրէտաթէ միւհ-թաճ տըր : »

Յօդ. 158 « Իչպու իատէ հիսապընտէ էվվէլա փրօթէսթօ օլունմուչ բօլիչանըն սէրմայէսի , իքինճի փրօթէսթօ մասարիֆի վէ գօմիսիօն վէ տէլլալլիյէ վէ թամզա բէսմի վէ մէքթուպ նագլիյէսի միսիլու պապը մուգաննէն մասարիֆի , իւչիւնճիւ՝ իւղէրինէ ուրթ-ուէթ վէճհի իլէ բօլիչա չէքիլիչ քիմէսնէնին իսմի վէ հէր նէ ֆիյաթլէ այընմըչ իսէ գամպիյօնըն բայիճի քէյֆիյէթլէրի մէսթուր օլուպ , գամպիյօ սըմսարը թարաֆընտէն վէ պու միսիլու սըմսար (միջնորդ) պուլունմատըլը եէրլէրտէ՝ իքի նէֆէր թաճիր ճանիպիլնտէն թասարիգ օլունմագ լազըմ տըր : Վէ փրօթէսթօ օլունմուչ բօլիչա թէմէսսիւքի վէ կէրէք փրօթէսթօ քեաղիտի վէ եախօտ փրօթէսթօ քեաղիտինին պիր գըթ-ա մուսատտագ սուրէթի պէրապէրճէ իրսալ օլունուպ , անճագ աքսինէ փօլիչա՝ ճէրանթէլէրին պիրի իւղէրինէ չէքիլուր իսէ , էտասը լազըմ կէլէն մահալտէն ան տարլ չէքիլտիկի մահալէ վարընճա գամպիյօնըն բաիճինի միւպէյին պէրվէճհի պալա պիր գըթ-ա շահատէթնամէ տախի պէրապէրճէ իրսալ օլունուր : »

Նթէ փոխանակագիրն ստացողն ընթացիկ-հաշիւ ունենայ զրկողին հետ , բողոքուած փոխանակագիրն արժէքն և եղած իրական ծախքերն անոր պարտքին կ'անցնէ պարզապէս , անվճար մնացած փոխանակագիրն սչայմանածամի թուականաւն , և փոխանակագիրն ետ կը զրկէ հանդերձ բողոքագրով և միայն իրական ծախքերն պարունակող դարձի հաշուով մը , առանց միջնորդչէք , տոկօսիք , երկրորդ փոխանակագին ևճ ծախքեր բարդելու :

Իսկ անոնք որ ընթացիկ-հաշիւ չունին զրկողին հետ , բողոքեալ փոխանակագիրն ամէն տեսակ ծախքերն պարունակող դարձի հաշուոյն հետ ետ կը զրկեն և իրենց պահանջքն կ'ստանան փոխարէն փոխանակագրի միջոցաւ , որոյ վրայ պիտի խօսիմք փոխանակագրի մասին մէջ :

Այս տեսակ դարձի հաշիւներն շատ անգամ շահու միջոց մ'եղած են կարգ մը սեղանաւորաց համար , որոնք փոխանակագրին չը վճարուելէն օգուտ քաղելով՝ չափազանց և անտեղի ծախքեր կ'առնուն նոյն փոխանակագիրն իրենց զրկող անձէն : Աւստի այս վեղձման առաջքն առնելու համար , շատ անգամ փոխանակագրին մէջ դարձ առանց ծախուց բառերն կը նշանակեն , որոյ վրայ պիտի խօսիմք վաճառականական թղթոց մասին մէջ :

Թէև օրէնքը միայն փոխանակագրոց համար դարձի հաշիւ զըրկել կը տրամադրէ , սակայն անվճար մուրհակաց համար ևս դարձի հաշիւ կրնայ զրկուիլ :



Դարձի հաշիւն պարզ թղթի մը վրայ կը գրեն , և գնդասեղով մ'ետ զրկուած փոխանակագրին կը կցեն զայն . երբեմն ալ բողոքագրոյն մէկ պարսպ երեսին վրայ կը նշանակեն :

Հետեւեալ օրինակը կը ներկայացնէ փոխարէն փոխանակագրի միջոցաւ գանձուած անվճար փոխանակագրոյ մը դարձի հաշիւն :

Ա. ՕՐԻՆԱԿ ԴԱՐՁԻ ՀԱՇՈՒՈՅ

Դարձի հաշիւ զոր պարտի Տր. Գ. Օհանեան , յանձնառու 'ի Կ. Պոլիս , առ Տր. Ա. Բագրատ , սեղանաոր 'ի Մարսիլիա .

Գումար բողոքեալ փոխանակագրին	Ֆր. 3000 . —
Չվճարուելուն համար բողոքագրի և այլ ծախք	» 6 . —
Միջնորդչէք և վկայողչէք	» 7 . 65
Ցանձնառողչէք $1\frac{1}{2}$ ‰	» 15 . —
Դրոշմատուրք փոխարէն-փոխանակագրի	» 3 . 35
Տոկոսիք	» 4 . —
Թղթատարի ծախք	» 3 . 30
	<hr/>
	Ֆր. 3039 . 30
Փոխարէն-փոխանակագրի վաճառումէն վնաս 1 ‰	» 30 . 70
	<hr/>
	Ֆր. 3070

Վերոյգրեալ երեք հազար եօթանասուն Ֆրանքի գումարն ստացած եմ՝ քաշելով Գ. Օհանեանի վրայ մի փոխանակագիր տեսօրին վճարելի իմ հրամանիս :

Ա. ԲԱԳՐԱՏ

Ստորագրեալքս , միջնորդք փոխանակագրի , կը վկայեմք որ Տր. Ա. Բագրատի՝ Տր. Գ. Օհանեանի վրայ քաշած փոխարէն-փոխանակագրին վնասն համաձայն է այս օրուան հրապարակի գնոյն , որ է 1 ‰ :

Մարսիլիա , 20 Սեպտ. 1883

ՄԱՐԹԵՆ , միջնորդ փոխանակագրի  
ԲԻԵՌ , » »



1. MODÈLE D'UN COMPTE DE RETOUR

*Compte de retour que doit M. K. Ohanian, commissi-  
onnaire à Constantinople, à M. A. Pakrad, banquier  
à Marseille.*

Principal de la lettre de change protestée	F <sup>rs</sup> . 3000 . —
Protêt faute de paiement et divers frais	» 6 . —
Courtage et certificat de l'agent de change	» 7 . 65
Commission $\frac{1}{2}$ ‰	» 15 . —
Timbre à la retraite	» 3 . 35
Intérêts	» 4 . —
Ports de lettre	» 3 . 30
	<hr/>
	F <sup>rs</sup> . 3039 . 30
Perte à la négociation de la retraite 1 ‰	» 30 . 70
	<hr/>
	<u>F<sup>rs</sup>. 3070 —</u>

De laquelle somme de **Trois mille soixante dix francs** je me rembourse par ma traite à vue sur M. K. Ohanian, à l'ordre de moi-même.

A. PAKRAD

Nous soussignés, agents de change, certifions que la perte à la retraite de M. A. Pakrad sur M. K. Ohanian, de Constantinople, est conforme au cours de ce jour.

Marseille, le 20 Septembre 1883

MARTIN, agent de change

PIERRE, » »

Իսկ հետեւեալ օրինակը կը ներկայացնէ ընթացիկ-հաշիւ ունե-  
ցող սեղանաւորի մը զրկած դարձի հաշիւն :

Բ. ՕՐԻՆԱԿ ԴԱՐՁԻ ՀԱՇՈՒՈՑ

*Դարձի հաշիւ .*

Գումար փոխանակագրին	£ 550 . — . —
Բողոքման ծախք	» — . 14 . —
Թղթատարի ծախք	» — . 2 . 6
Յանձնառողչէք $\frac{1}{2}$ ‰	» 2 . 15 . —
Արժէք նոյեմբեր 10 թուականաւ	<u>£ 553 . 11 . 6</u>

Բ. Ս. և Մ.

Լոնտրա , 19 նոյեմբեր 1883

ԱՆԿԼՕ - ՅՕՐԻՆ ՊԱՆԿ

Ա.ռ.

Տր. Գ. Յակոբեան

ի Կ. Պոլիս

2. MODÈLE D'UN COMPTE DE RETOUR

*Compte de retour.*

Principal de la lettre de change	£ 550 . — . —
Protêt	» — . 14 . —
Ports de lettre	» — . 2 . 6
Commission $\frac{1}{2}$ ‰	» 2 . 15 . —
Valeur au 10 Novembre 1883	<u>£ 553 . 11 . 6</u>

S. E. & O.

Londres, le 19 novembre 1883

ANGLO - FOREIGN BANK

A

M. K. Agopian

Constantinople



## ՎՃԱՐՄՈՒՆՔ

8	մարտ 1884	Լ. 0.	350 — երեք հարիւր յիստուն	շիրա	Օւմ.
11	»	»	400 — չորս հարիւր	»	»
15	»	»	200 — երկու հարիւր	»	»
17	»	»	100 — հարիւր	»	»
19	»	»	250 — երկու հարիւր յիստուն	»	»
25	»	»	247,40 <sup>1</sup> / <sub>4</sub> երկու հարիւր քառասուն եւ եօթն եւ 40 <sup>1</sup> / <sub>4</sub>	»	»
		Լ. 0.	1547,40 <sup>1</sup> / <sub>4</sub>		
			100		

Տոկոսիք Լ. 0.  $5,05\frac{1}{4}$   
 100



P A Y E M E N T S

8	Mars	1884	L. t.	350—	livres turques	trois cent cinquante
11	»	»	»	400—	»	quatre cents
15	»	»	»	200—	»	deux cents
17	»	»	»	100—	»	cent
19	»	»	»	250—	»	deux cent cinquante
25	»	»	»	247,40 <sup>1</sup> / <sub>4</sub>	»	deux cent quarante sept et 40 <sup>1</sup> / <sub>4</sub>
			L. t.	<u>1547,40<sup>1</sup>/<sub>4</sub></u>		
				<u>100</u>		

intérêts L. T. 5, 05<sup>1</sup>/<sub>4</sub>  
100

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ ՓՈԽԱՆԱԿԱԳՐԻ

Նրբ սեղանաւոր մը փոխանակագիր ծախէ , անոր հաշիւն ներկայացնող հաշուեցուցակ մը կուտայ գնողին , նշանակելով անոր մէջ փոխանակագրին գումարն և գինն , ինչպէս նաեւ թղթին տեսակն , թղթին վերաբերեալ օրուան տոկոսի սակագինն , այսինքն , Քրանքի փոխանակագիր ծախած ատեն , Գաղղիոյ սակագինն , իսկ սթէռլին լիրա ծախած ատեն , Անգղիոյ սակագինը , վճարման պայմանը , գնողին անունը և այլն : Ասկէ զատ , պէտք է նշանակել նաեւ Թուրքիոյ տոկոսի սակագինն , եթէ վաճառումն ապառիկ և տոկոսով եղած ըլլայ , այսինքն , եթէ փոխանակագրին արժէքն եղող օսմ. լիրայի գումարն մաս առ մաս վճարելու և անցած օրերուն համար տոկոս բանեցնելու սրայմանաւ ծախուած ըլլայ : Վաճառումն ապառիկ եղած ատեն , փոխանակագիրը գնողն պարտաւոր է ստորագրել հաշուեցուցակն :

Սեղանաւորք յատկապէս վիճառիւ հաշուեցուցակներ շինել կուտան իրենց անուամբ , գումարներուն , գնոյն , թուականին , տոկոսի սակագնոց և գնողին անունն տեղերն բաց թողլով , զորս յետոյ գրչով կը լեցնեն գործողութիւն մը եղած ատեն :

Ապառիկ ծախուած փոխանակագրի մը մասնաւոր վճարումներն իրենց թուականներով հաշուեցուցակին ետին կը գրուին պարտականին ստորագրութեան վրայէն սկսելով : Վճարուած գումարներն թէ թուանշանով և թէ գրով միանգամայն պէտք է գրել : Նրբ հաշուեցուցակի մը գումարն այսպէս մաս առ մաս վճարուելով ամբողջապէս հատուցուի , տոկոսի որոշեալ սակագնովն անցած օրերուն տոկոսիքն հաշիւ կ'ընեն , որոյ գործնական եղանակաց վրայ պէտք եղած ծանօթութիւնը տրուած են հաշուական գիտելեաց մասին մէջ :

Փոխանակագրի գլխաւոր միջնորդք ևս իրենց անուամբ տպեալ հաշուեցուցակներ կ'ունենան , յորս կը նշանակեն իրենց ձեռօք կատարուած գործողութեան մը մանրամասնութիւններն :

Փոխանակագրի հաշուեցուցակք ընդհանրապէս գաղղիերէն լեզուաւ կը գրուին :

Հոս կը դնեմք փոխանակագրոյ հաշուեցուցակի օրինակ մը , որ կը ներկայացնէ £ 1400 ի փոխանակագրի վաճառման մը վերաբերեալ բոլոր գործողութիւններն ամբողջովին կատարուած : Նոյն հաշուեցուցակին ետին նշանակուած են նաև գումարին արժէքն Լ. 0. 1547 . 40<sup>1</sup>/<sub>4</sub> ին մաս առ մաս վճարումներն և տոկոսիքը :

Հ Ր Ա . Հ Ա Ն Գ

Կ. Գէորգեան վաճառականը՝ 1884 փետրուար 18 ին կը գնէ Յովհաննէս Արևիկեան սեղանաւորէն ընդամէնը £ 520 ի փոխանա-



կագիր՝ նոյն թուականաւ Լոնտրայի վրայ քաշուած՝ դ. 110.  $\frac{171\frac{1}{2}}{40}$ . — այդ փոխանակագրոց £ 300ը 3 ամսուան են, և £ 220ը 1 ամսուան. — Լոնտրայի տոկոսի սակն է  $\frac{0}{100}$  3  $\frac{1}{2}$ . — փոխարէնը ամբողջապէս վճարած է գնած օրէն ութ օր յետոյ, տարեկան  $\frac{0}{100}$  12 տոկոսով. — Արդ, նախ պէտք է պատրաստել այս փոխանակագրի հաշուեցուցակը Յովհաննէս Կիւմէեանի կողմանէ տրուած. յետոյ հաշուեցուցակին գումարին վրայ անցած օրերուն տոկոսը հաշուել (1) :

**ԶԵՂԶԻ ՑՈՒՑԱԿ**

Երբ սեղանաւոր մը կամ վաճառական մը վաճառականական թղթեր զեղչել տալ ուղէ, զեղչողն ցուցակ մը կը շինէ նշանակելով անոր մէջ իւրաքանչիւր թղթին անուանական արժէքն, վճարման տեղն, պայմանաժամն, զեղչման օրերն, և ցուցակին ճակատը, ծախողին՝ այսինքն զեղչել տուողին անունն և գնողին՝ այսինքն զեղչողին անունը : Այս ցուցակը կ'ըսուի Զեղչի ցուցակ :

**Ա. ՕՐԻՆԱԿ ԶԵՂԶԻ ՑՈՒՑԱԿԻ**

**Բ Ի Է Թ Կ Ի Ի Զ Է Լ**

Փարիզ, 7 Փետրուար 1883

Զեղչի ցուցակ ստ Տր. Ս. Ասրսեան, 'ի Կ. Պոլիս.

Գումար	Քաղաք	Պայմանաժամ. Օր	Թիւ
2000	Մարսիլիոյ վրայ	Մարտ 5 26	52000
3000	»	Ապրիլ 10 62	186000
10000	»	» 30 82	820000
2000	Փարիզի	Մայիս 3 85	170000
17000			1228000
131 05	Տր. 102, 30, զեղչ $\frac{0}{100}$ 3 » 7, 50, դրոշմատուրք » 21, 25, յանձնողչէք $\frac{0}{100}$ $\frac{1}{8}$		
16868 95	Զուտ 'ի ձեր պահանջք, ամսոյս 8 թուականաւ		

(1) Հաշուական գիտելեաց մասին մէջ փոխանակագրի վաճառման գործողութեանց վերաբերեալ հաշիւները դրած եմք :

Չեղչի ցուցակին մէջ կը նշանակեն նաև զեղչի սակագինն , յանձնառողէքն , երկրին դրոշմատուրքն , և թղթատարի և այլ ծախքեր՝ եթէ ըլլան :

Թէ զեղչն և թէ բոլոր ծախքերն վաճառականական թղթոց անուանական ընդհանուր գումարէն կ'իջնեն , որոյ մնացորդը կ'ըլլայ նոյն թղթոց իրական արժէքն :

Ներուպիոյ մեծ հրապարակաց հետ , ինչպէս են , Լօնտրա , Փարիզ , Վիէննա ևն , յարաբերութիւն ունեցող սեղանաւորք կամ վաճառականք իրենց պարտքն օրին վճարելու համար՝ ընդհանրապէս նոյն քաղաքաց վրայ քաշուած փոխանակագիր կը զրկեն իրենց պարտատէրներուն , որոնք սոյն փոխանակագրերը զեղչել տալով , մնացեալ զուտ գումարը կ'անցնեն 'ի հաշիւ և զեղչի ցուցակը նամակաւ մը կը զրկեն փոխանակագրերն զրկող անձին :

Ըսածնիս օրինակով մը բացատրեմք .

Դիցուք թէ Ս. Ասլանեան , ի Կ. Պոլիս , Փետրուար 4 ին վճարելի 17000 Ֆրանքի գումար մը պարտք ունի Բիէռ Կիւզէլի , 'ի Փարիզ : Արդ , Ս. Ասլանեան սոյն պարտքը հատուցանելու համար հետեւեալ չորս հատոր փոխանակագիրներն կը գնէ ,

PIERRE GUZEL

Paris, le 7 Février 1883

*Bordereau à Monsieur S. Aslanian, Constantinople.*

Sommes	Villes	Échéances	Jours	Nombres
2000	S/ Marseille	Mars 5	26	52000
3000	» »	Avril 10	62	186000
10000	» »	« 30	82	820000
2000	» Paris	Mai 3	85	170000
17000				1228000
	Frs. 102, 30, escompte 3 %			
	» 7, 50, timbre mobil			
131 05	» 21, 25, m/com. 1/8 %			
16868 95	net à v/crédit. Valeur 8 courant			

2000	Ֆրանք	վճարելի	'ի Մարտիկա	մարտ	5 ին
3000	»	»	»	ապրիլ	10 ին
10000	»	»	»	»	30 ին
2000	»	»	'ի Փարիզ	մայիս	3 ին
<hr/>					
17000	Ֆրանք .				

Եւ կատարելով պէտք եղած փոխանցումներն , որոյ մասին պիտի խօսիմք փոխանակագրին մէջ , նամակաւ մը կը զրկէ զանոնք Բիէս կիւզէի : Սա եւս զեղջել տալով զանոնք , ինչպէս վերեւ բացատրեցինք , զեղջի հաշիւը պարունակող ցուցակը կը զրկէ անյապաղ Ս. Ասլանեանի , որ ըստ այնմ կ'իմանայ թէ տակաւին որչափ պարտքը մնացած է :

Բ. ՕՐԻՆԱԿ ԶԵՂԶԻ ՏՈՒՑԱԿԻ

ՊԱՆՔ ՕՎ ԷՃԻՐԻ

Լօնտրա , 6 Փետրուար 1882

Զեղջի ցուցակ առ Տր. Գ. Վահրամ 'ի Կ. Պոլիս .

				Լ. Ս.	Շ.	Բ.	
33	օր	թ.	56	4 <sup>0</sup> / <sub>10</sub>	171	—	Մարտ 11 ին
35	»	»	228	»	650	—	» 13 ին
38	»	»	380	»	1000	—	» 16 ին
79	»	»	395	»	500	—	Ապրիլ 26 ին
62	»	»	99	3 <sup>1</sup> / <sub>2</sub> <sup>0</sup> / <sub>10</sub>	160	—	» 9 ին
82	»	»	697	»	850	—	» 29 ին
					<hr/>		
					3331	—	
Զեղջ 4 <sup>0</sup> / <sub>10</sub>					£ 11. 12. 1		
» 3 <sup>1</sup> / <sub>2</sub> »					» 7. 12. 8		
Դրոշմատուրք					» 1. 15.—		
					<hr/>		
					£ 3310	—	
					<hr/>		
						19	9
					<hr/>		
						3	
					<hr/>		
							'ի ձեր պահանջը
							ներկայիս 8 թուկն .

Ընդարձակ գործ ընող սեղանաւորք մասնաւորապէս տպեալ և անուննին վրան նշանակուած զեղջի ցուցակի թղթեր կ'ունենան :

Զեղջի ցուցակի երկու օրինակներ դրած եմք , որոց առաջինը կը ներկայացնէ վերոյգրեալ գործողութեան համար Բիէռ կիւզէլի զրկած զեղջի ցուցակն , և երկրորդն կը ցուցնէ Պանք օվ Էճիբդ դրամատան կողմանէ զրկուած զեղջի ցուցակ մը : Առաջինը Ֆրանքի փոխանակագրոց , իսկ երկրորդը սթէուլին լիրայի փոխանակագրոց զեղջման հաշիւներ կը ներկայացնեն . բայց երկու ձեւերն ալ թէ՛ Ֆրանքի և թէ՛ սթէուլին լիրայի համար կարելի է գործածել :

BANK OF EGYPT

Londres, le 6 Février 1882

*Bordereau à M. K. Vahram, Constantinople.*

35	jours	N. 56	4 <sup>0</sup> / <sub>10</sub>	£ 171	—	—	au 11	Mars
35	»	» 228	»	» 650	—	—	» 13	»
38	»	» 380	»	» 1000	—	—	» 16	»
79	»	» 395	»	» 500	—	—	» 26	Avril
62	»	» 99	3 <sup>1</sup> / <sub>2</sub> <sup>0</sup> / <sub>10</sub>	» 160	—	—	» 9	»
82	»	» 697	»	» 850	—	—	» 29	»
				£ 3331	—	—		
				»				
Escompte 4 <sup>0</sup> / <sub>10</sub>				£ 11. 12. 1				
» 3 <sup>1</sup> / <sub>2</sub> »				» 7. 12. 8				
Timbre				» 1. 15—	20	19	9	
				£ 3310	—	3	Valeur 6 courant	



## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ



### Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ա Կ Ա Ն Թ Ո Ւ Ղ Թ Ք

Վաճառականք և սեղանաւորք՝ վարկով գործողութիւններ կատարած ժամանակ, զանազան ձեւերով թղթեր կը շինեն ստակի տեղ գործածելու համար, այսինքն զանազան տեսակ պարտամուրհակներ կ'առնուն կամ կ'ուտան ստակի տեղ :

Վաճառականութեան մէջ գործածուած այն ամէն պարտամուրհակք որ կրնան ծախուիլ կամ ուրիշի տրուիլ իբրեւ դրամ, փոխանցմամբ կամ առանց փոխանցման, ընդհանրապէս վաճառականական թուղթ կ'ըսուին :

Ըստ վաճառականական Օրինագրոց, վաճառականական թղթերն միայն երկու հատ են .

1. Փոխանակադիր .
2. Մուրհակ կամ տոմսակ 'ի հրաման .

Սակայն վաճառականութեան մէջ՝ սոյն երկու թղթերէն զատ՝ կան նաեւ հետեւեալ թղթերն, որոց վրայ մի առ մի նիւթի խօսիմք :

3. Մուրհակ կամ տոմսակ ներկայացնողին .
4. Համապարտ մուրհակ .
5. Վճարագիր կամ չէք .
6. Հրամանագիր .

### Փ Ո Ւ Ա Ն Ա Կ Ա Գ Ի Ր

Ընդհանրապէս վաճառականք հեռաւոր քաղաքէ մը կամ օտար երկրէ մ'ապրանք բերել տալով՝ պարտք կ'ուենեան հոն, և կամ օտար երկիր մը ապրանք դրկելով՝ պահանջք կ'ուենեան հոն : Սակայն չեն կրնան ո՛չ իրենց պարտքը հատուցանելու համար իրական դրամ դրկել և ո՛չ իրենց պահանջքը ստանալու համար իրական դրամ բերել տալ, քանզի իրական դրամոց փոխադրութիւնը թէ՛ ծախքի կը կարօտի և թէ՛ կրնայ վտանգի մը պատահիլ . ասկէ զատ, անկարելի է նաեւ՝ ուզուած ժամանակ տեղական հրապարակի վրայ, օտար երկրի վերաբերեալ դրամ գտնել պէտք եղած քանակութեամբ :

Այս անպատեհութեանց առաջքն առնելու համար, փոխանակագիրն հնարուած է :

Փոխանակագիր<sup>(1)</sup> կ'ըսուի այն թուղթն որով վաճառական մը կը հրաւիրէ հեռաւոր քաղաք մը կամ օտար երկիր գտնուող իւր պարտականն և կամ թղթակիցն որ իւր հաշուոյն համար որոշեալ ժամանակէ մը յետոյ որոշեալ գումար մը վճարէ, իրական դրամով, թղթին մէջ նշանակեալ այսինչ անուն անձին, որմէ ստացած է արդէն և կամ պիտի ստանայ իւր քաջած թղթին արժէքն, այսինքն անոր մէջ նշանակեալ գումարին փոխարէնը, և կամ վճարէ այն անձին հրամանովն ուրիշ անձի մը, և կամ այս կերպով նոյն թղթին տէր եղող վերջին անձին :

Հսաճնիս օրինակով մը բացատրեմք .

Մարտ 10 թուականաւ Պ. Յակոբեան՝ Կարնեցի Գ. Մըսրեանին 10 հակ ասրանք ղրկեց (տէս երես 47 Ա. օրինակ գնման հաշուեզրի) որոց փոխարէնը Լ. Օ. 285. 12, Կարին յիշեալին քով կը գտնուի : Ենթադրենք որ Համազասպ Պալլարեան ալ՝ Կարին նոյնչափ գումար մը ղրկելու պէտք ունի. ուստի, Պ. Յակոբեան յիշեալ գումարը կ'առնու Համազասպ Պալլարեանէն և փոխարէն կ'ուտայ անոր թուղթ մը, որով հրաման կ'ընէ Գ. Մըսրեանի որ մէկ ամիսէն վճարէ Համազասպ Պալլարեանի կամ նորա հրամանին Լ. Օ. 285. 12ի գումարը, զոր պարտական էր իրեն՝ ղրկած ասրանաց արժէքին համար . այս արուած թուղթին կ'ըսուի փոխանակագիր :

Ինչպէս կ'երեւի, միևնոյն փոխանակագրի միջոցաւ թէ՛ Պ. Յակոբեան իւր պահանջքն ստացած եղաւ առանց իրական դրամ բերել տալու, և թէ՛ Համազասպ Պալլարեան իւր ղրկելիք գումարը ղըրկած եղաւ, առանց իրական դրամ ղրկելու :

Փոխանակագիր շինելու գործողութեան կ'ըսուի փոխանակագիր քաշել : Փոխանակագիր մը շինողն՝ այն է ստորագրողն քաշող կ'ըսուի,

(1) Որոշ ծանօթութիւն մը չկայ թէ փոխանակագրի դրութիւնն ո՛ր թըուականին հնարուած է : Ոմանք կ'ըսեն թէ՛ այն հրէսյք հնարած են զայն, որք երկու արտաքսեցան Գաղղիայէն . նախ 638 թուականին Տակօպէո առաջնոյն, երկրորդ 1180ին Փիլիպպոս Օգոստոսի՝ և երրորդ՝ 1316ին Երկայն կոչեցեալ Փիլիպպոսի իշխանութեանց ժամանակ : Ա. քսորեալ հրէսյք, Գաղղիա գնացող ճանապարհորդաց և վաճառականաց կարճառոտ նամակներ կուտային՝ ուղղեալ Գաղղիա գտնուող այն անձանց, որոցմէ պահանջք ունէին կամ այն բարեկամաց որոց յանձնած էին իրենց դրամներն, և անոնց միջոցաւ ձեռք կը բերէին իրենց դրամներն :

Հստ սլոց, կիպէլեանց ձեռօք Խտալիայէն արտրեալ Ֆիօրէնցացիք հնարած են զայն, որք Լիօնի և ուրիշ քաղաքաց մէջ հաստատուելով, փոխանակագիրն հնարեցին Ֆիօրէնցայէն քաշելու համար այն դրամներն զոր չէին կրցած հաւաքել և հետ տանիլ կը կարծուի նաեւ թէ պարզապէս վաճառականական յարաբերութեանց հետզհետէ զարգանալովն փոխանակագրի պէտքն զգալի եղած և հնարուած ըլլայ : Փոխանակագրի դրութիւնն ինչ կերպով ալ հնարուած ըլլայ՝ նորա հնարումը վաճառականութեան համար խիստ օգտակար եղած է :

այն անձն՝ որոյ վրայ շինուած է փոխանակագիրն , վճարող , իսկ այն անձն՝ որոյ հրամանին շինուած է փոխանակագիրն , գնող կամ տէր : Այն անձն՝ որոյ վրայ քաշուած է թուղթը , ընդունող կ'ըսուի , երբ փոխանակագիրն ընդունելով՝ յանձն առնու վճարել պայմանօրին անոր մէջ նշանակեալ գումարն . գնողն կամ տէրն փոխանցող կամ իրաւատոն կ'ըսուի , երբ ուրիշի մը ծախէ փոխանակագիրն , և այս վերջինը կ'ըսուի իրաւատոն , որ նոյնպէս փոխանցող կ'ըլլայ երբ ծախէ փոխանակագիրն . իսկ կրող կամ ներկայացնող կ'ըսուի այն անձն որ ընդունողին ներկայացնելով փոխանակագիրն անոր մէջ նշանակեալ գումարը կ'ստանայ անկէ :

Մեր տուած օրինակին մէջ , Պ. Յակոբեան՝ քաշող . Գ. Մըսրեան՝ վճարող . Համազասպ Պալարեան՝ գնող կամ տէր են :

Փոխանակագիր մը օրինաւոր ըլլալու համար՝ պէտք է պարունակէ իւր մէջ այն ամէն մասերն զորս վաճառականական Օրինագիրքն կը տրամադրէ հետեւեալ յօդուածով :

Յօդ. 70 « Բօլիչա քեաղըտը սլիր մահալտէն տիկէր մահալէ չէքիւլուպ՝ էլպէթ պիր թարիսի օլմագ , վէ թէտիյէ օլունաճագ մէսլաւիլին մըգտարը վէ կէրէք ագճէի վէրէճէք շախսըն իամի , վէ նէ՝ վագըթ վէ նէ՝ մահալտէ թէտիյէ օլունաճագը թասրիհ օլունուպ , դարշուլուղը նուգուտ վէ էմթաատա՞ն մը իսլարէթ տիր , եօքսա պիր հիսապա մահսուպէն վէ եա պաչգա պիր ճիհէթտէն մի տիր պէեան օլունմագ լաղըմ տըր . վէ եա պիր շախսը դայըպըն էմրինէ՞ մէնութ մը տըր , եօքսա չէքէն ատէմին թասարրուֆընտա՞ մը տըր , սարահաթէն գիքր օլունուպ , անճագ պիր , իքի , իւչ , տէօրթ վէ պունտան գիյատէ նուսխէսի օլուր իսէ՝ անը տախի գիքր իտէրէք , գաչընճը նուսխէ օլուղընը պէյան իթմէք լաղըմ տըր : »

Գործնական ձեւ փոխանակագրի

Փոխանակագիր մը շինելու համար պէտք է գրել :

1. Թղթին ճակատը և ձախ կողմը՝ տեղուոյն անունն և քուականը , այսինքն , տարին , ամիսն և ամսոյն օրը . ամսոյն օրը և տարին թուանշաններով կը գրուին :

2. Նոյն տողին վրայ , աջ կողմը՝ Փ. Վ. Լ. Օ. սկզբնատառերն , որք գլխագիր կը գրուին , և ապա վճարելի գումարը , որ թուանշաններով կը գրուի : Փ. Վ. Լ. Օ. գրերն փոխանակագիր վասն լիրա օսմանեան բառերուն սկզբնատառերն են . փոխանակագրին արժէքն ինչ տեսակ դրամ որ ըլլայ՝ նոյն դրամին սկզբնատառերն կը գրուին Լ. Օ. գրերուն տեղ . զորօրինակ . Փ, գիրը կը գրուի երբ փոխանակագրին արժէքը Փրանք ըլլայ , Լ. Ս. գրերը կամ Զ



այս նշանը կը գրուի, եթէ Սթէյուլին լիբայ ըլլայ, և՛ : Ասոնց փոխանակագրին ճակատը գրուելուն պատճառն ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ առանց փոխանակագրի պարունակութիւնը կարդալու, մէկ նայուածքով հասկցուի փոխանակագրին դումարը :

3. Պայմանաժամը, որմէ կ'սկսի փոխանակագրին բուն գրութիւնը. փոխանակագրի մը պայմանաժամը գրով կը գրուի :

4. Հրահերց, որ կը գրուի հաճեցեք վճարել, կամ պարզապէս վճարեցեք բառով :

5. Փոխանակագրին քաներորդը, այսինքն, եթէ փոխանակագիրը միայն մէկ օրինակ շինուած ըլլայ՝ այս միակ փոխանակագրով կամ այսու փոխանակագրով կը գրուի. եթէ մէկ քանի օրինակ շինուած ըլլայ, այս առաջին, կամ երկրորդ, երրորդ, և՛ փոխանակագրով կը գրուի :

6. Հրամանը, որ փոխանակագիրը գնող կամ ո՛ր է գործողութեամբ ստացող անձին կը վերաբերի, և այսպէս կը գրուի ի հրաման Տր. կամ Տրք.....ի, այսինքն, եթէ սա հրաման ընէ վճարողին որ փոխանակագրին դումարն ուրիշի մը վճարէ, վճարողն անոր պիտի վճարէ : Երբ քաջողն փոխանակագիր մը շինուած ժամանակ գնող չունենայ, սովորաբար ի հրաման իմ կամ ի հրաման մեր կը գրէ :

7. Գումարը, որ հաստ և մեծ գրերով պէտք է գրել, որպէսզի մի գուցէ մէկը գրերն փոփոխելով փոխանակագրին դումարն աւելցնէ : Եթէ տպեալ փոխանակագրի մէջ դումարն գրով գրուելէ վերջը նոյն տողին վրայ պարսպ տեղ մնայ, հաստ գիծ մը քաշելով կը լեցնեն այն տեղը :

8. Արժեքը, որ կը ցուցնէ ինչ որ քաջողը՝ այսինքն ծախողն ընդունած է գնողէն : Արժեքը կանխիկ կամ դրամով ընդունուած է կը գրուի, եթէ գնողը կանխիկ դրամ տուած ըլլայ, արժեքը ապրանքով ընդունուած է կը գրուի, եթէ ապրանք տուած ըլլայ : Եթէ քաջողը իւր պարտքը վճարելու համար տայ փոխանակագիրն, արժեքն ՚ի հաշիւ կը գրուի : Փոխանակագրի մը արժէքն ընդունելու համար՝ անպատճառ փոխանակագիրը գնող մ'ըլլալու է. ուստի երբ քաջողն իւր հրամանին շինած ըլլայ փոխանակագիրն, յայնժամ քաջողն կը գրէ պարզապէս արժեքն յիս կամ ՚ի մեզ, որ ամենեւին նշանակութիւն մը չունի և փոխանակագիրն թերի կ'ըլլայ. բայց թէ որ քաջողն ուրիշի մը փոխանցէ, այսինքն ծախէ գայն, այն ատեն ըստ օրինի պէտք է նշանակել փոխանցման մէջ՝ ընդունուած արժէքին անունը, որով փոխանակագիրն կատարեալ և օրինաւոր կ'ըլլայ, քաջող, վճարող և գնող միանգամայն գտնուելով անոր մէջ :

9. Պատճառը, որ այսպէս կը գրուի՝ եւ անցուցեք ՚ի հաշիւ ..... որ կը նշանակէ թէ՛ փոխանակագիրն ինչ բանի փոխարէն որ քաջուած

է նոյնին հաշուոյն պիտի անցի : Պատճառը փոխանակագրին մէջ գրել ստիպողական չլլալով, շատ անգամ զանց կ'առնուի. և սեղանաւորք՝ որոց գործն է ընդհանրապէս իրենց թղթակցաց վրայ փոխանակագիր քաշել ու ծախել, փոխանակագրին մէջ պատճառ չեն նշանակեր. այլ պարզապէս կը գրեն եւ անցուցէք 'ի հաշիւ ըստ ծանուցման, եթէ յարմար դատեն նամակաւ մը ծանուցանել վճարողին անոր վրայ այսինչ հաշուոյ համար փոխանակագիր քաշած ըլլալին : Փոխանակագրի մը մէջ ըստ ծանուցման գրուած ատեն, փոխանակագիր քաշող անձը պարտաւոր է անպատճառ նոյն օրը նամակաւ մը ծանուցանել սոյն գործողութիւնն այն անձին, որոյ վրայ փոխանակագիրը կը քաշէ, որպէս զի նա եւս կանխաւ տեղեկութիւն ունենալով ընդունի և վճարէ փոխանակագիրն. այս վերջինը կրնայ մերժել և չվճարել փոխանակագիրն, եթէ կանխաւ տեղեկութիւն տրուած չըլլայ իրեն. և փոխանակագրին չընդունուիլը մեծ անպատուութիւն կը համարուի քաշողին համար : Իսկ եթէ յարմար չդատեն ծանուցանել, այսպէս կը գրուի եւ անցուցէք 'ի հաշիւ առանց ուրիշ ծանուցման :

10. Քաշողին ստորագրութիւնը, որ փոխանակագրին ներքեւ աջակողմն կը գրուի առանց հասցէն նշանակելու : Եթէ քաշողն ինքն իւր ձեռք գրած չըլլայ փոխանակագիրը, և կամ փոխանակագիրն ուրիշ լեզուաւ գրուած ըլլայ և ինք չհասկնայ, պէտք է որ ստորագրութենէն առաջ սա բառերը գրէ փոխանակագիր վասն (այսչափ գումար) ի, գումարն ամբողջապէս գրով գրելով :

Այս նախադրութիւնն երկու նպատակաւ կ'ընեն, նախ խարդախութեան առաջքն առնլու՝ և երկրորդ աւելի ապահովութիւն մը տալու համար վճարողին, որ փոխանակագիրը վճարելէ յետոյ, իւր ձեռքն աւելի վաւերական ընկալագիր մը ունեցած կ'ըլլայ իւր տուած գումարին համար :

11. Վճարողին հասցէն, որ փոխանակագրին ներքեւ ձախ կողմն կը գրուի հետեւեալ կերպով,

Ա. Տէր կամ Տեարք

( անունը և մականունը )

..... փողոց, թիւ .....

'ի ..... (քաղաքը)

Փոխանակագրի գործնական ձեւի մասին վերեւ գրուած բացատրութիւններն ամփոփելով՝ հոս կը դնեմք այն փոխանակագրին օրինակը, զոր Պ. Յակոբեան քաշած է Գ. Մըսրեանի վրայ 'ի կարին :

Թոշակասնէս երեսուն եւ մէկ օր յետոյ, վճարեցէք այս  
միակ փոխանակագրով 'ի հրաման Տ<sup>ր</sup>. Հանագարայ Պաշարեանի

*Էրկոշ հարիւր ութսուն եւ եօթն յիսու Օւակ, եւ ասանկերկոշ հարիւրըրդ*

արժէքը կանխիկ ընդունած եմ, եւ անցուցէք 'ի հաշիւ ըստ ծանուցման:


Առ մեծապատիւ

Տր. Գ. ՄԸՍՐԵԱՆ

Նոր-խան, Թիւ 10

'ի Կարին

Պ. ՅԱԿՈԲԵԱՆ



**Փոխարեւ փոխանակագրի**

Փոխանակագիրը քաշողն՝ անոր արժէքին չափ դրամ, ապրանք և կամ ուրիշ ո՛րեւէ արժէքաւոր բան պարտաւոր է դրկել կամ դրկած ըլլալ կանխաւ այն անձին որոյ վրայ փոխանակագիրը կը քաշէ, որ պէտքի պայմանաժամը լրանալուն փոխանակագիրն ընդունողը վճարէ զայն : Սոյն կանխաւ դրկուած դրամն կամ ապրանքն փոխարեւ կ'ըսուի : Եթէ քաշողն պահանջք ունենայ վճարողին վրայ, նոյն պահանջքն ալ փոխարէն կ'ըսուի :

Ահաւասիկ վաճառականական Օրինաց տրամադրութիւնքն փոխանակագրի փոխարէնի մասին :

Յօդ. 73. « Բօլիչանըն գարշուլըը բօլիչայը չէքէն քիմսէ թարաֆընտան վէ էկէր պաշքասընըն հիսապընա մահսուպէն քէչիտէ գըլընուր իսէ, օլ քիմէսնէ ճանիպինտէն թէտարիք օլունմագ լազըմ կէլիպ, լէտէլ իգթիզա կէրէք բօլիչա օլունան վէ կէրէք սօնրատան տէվր վէ հէվալէ գլընան ճէրանթալար հագգընտա տայիմա բօլիչա օլունան մէպլաղ իչիւն՝ պաշգասընըն հիսապընա մահսուպէն բօլիչա չէքէն քիմսէ զամին օլմագտան խէլաս օլամագ : »

Յօդ. 74. « Բօլիչանըն վատէսի կէլտիքտէ՝ իւղէրինէ բօլիչա չէքիլէն քիմսէնին զիմմէթինտէ քէչիտէ իտէն վէ եախօտ բօլիչայը սըփարըզ վէ էմր իյլէյէն քիմսէլէր՝ հիչ օլմագ իսէ բօլիչանըն մէպլաղը գասար ալաճագլարը օլմագ լազըմ տըր : »

**Ընդունելութիւն փոխանակագրի**

Այն անձն որոյ վրայ փոխանակագիրը մը քաշուած է՝ փոխանակագիրն իրեն ներկայացուած ատեն գրաւոր կերպով և իւր ստորագրութեամբն յանձն կ'առնու պայմանաժամին վճարել զայն . այս գրաւոր յանձնառութեան ընդունելութիւն կ'ըսուի :

Ընդունելութիւնն ապացոյց մ'է թէ ընդունողն փոխանակագրին փոխարէնն առձեռն ունի :

Ի տեսութեան կամ տեսօրին վճարելի փոխանակագրոց համար ընդունելութեան հարկ չկայ, քանի որ ներկայացուած պահուն իսկ պիտի վճարուի անոր արժէքն :

Օրէնքն հետեւեալ կերպիւ կը տրամադրէ ընդունելութեան գործողութիւնը :

Յօդ. 80. « Բօլիչանըն գապուլը քէյֆիյէթի իմզա իլէ թաստիգ օլունմագ, վէ ճագպուլըմ պըլ թապիրի իլէ պէյան գլընմագ վէ իպրազընտան սօղրա պիր վէ եա միւթէատէտ կիւն վէ եախօտ միւ-

Թէատէս մահ վատէսի վար իսէ՝ գապուլը Թարիխինի Թասրիհ իթմէք լազըմ կէլիպ , գապուլ օլունտուղը կիւն եազըլմամըլ իսէ բօւիչանըն Թարիխինտէն իթիպարէն վատէսի հուլուլինտէ աղճէսի վէրիլմէք լազըմ տըր : »

Յօդ. 81. « Պիր բօւիչանըն Թէտիյէսինի գապուլ իտէն շախարն մահալը իգամէթինտէ իճրա օլունմայուպտէ՝ պաշգա պիր մահալտէ փֆա օլունաճաղը Թագտիրտէ , Թէտիյէ իտէճէք քիմսէնին մահալը իգամէթի գապուլ իտէն ատէմ Թարաֆընտան իչարէթ օլունուր , քի ատէմ Թէտիյէսի Թագտիրինտէ , իգթիպասը իճրա օլունա : »

Յօդ. 82. « Բօւիչանըն գապուլը պիր շարթա մէրպութ օլմագ ճայիզ օլմայուպ , անճագ բօւիչատա մուայէն մէսպալիղին եալընըզ պիր մըգտարընա միւնհասըր օլմագ Թէճվիզ օլունուր իսէ տէ , եինէ պագի գալան մէսպալիզ իչիւն փրօթէսթօ իթմէք՝ համիլինին վաղիֆէյի զիմմէթի տիր : »

Յօդ. 83. « Բօւիչա քեաղըտը իպրազ օլունտըղը անտէ՝ վէ նիհայէթ եիրմի տէօրթ սահաթ զարֆընտա գապուլ օլունմագ կէրէք տիր . գալտըքի եիրմի տէօրթ սահաթ միրուր իտուպտէ՝ կէրույէրէտտ օլունմատըղը սուրէթտէ , իսթէր գապուլ օլունսուն իսթէր օլունմասըն , հէր քիմ Թէվքիֆ իթմիչ իսէ , անըն իւզէրինէ գալուպ , զարար վէ զիյանը իչիւն համիլ ինտինտէ մէսուլ տըր : »

Շատ անգամ ընդունողն՝ փոխանակագրին մէջ նշանակեալ գումարին և պայմանաժամին փոփոխուելուն առաջքն առնելու համար , ընդունած եմ բառերէն յետոյ , հետեւեալ բառերն եւս կ'աւելցնէ , վասն ..... ի , գումարն ամբողջապէս գրով գրելով , և վճարելի (այսինչ ամսոյ այսինչ օր) վճարօրին պատահած ամսոյն անունն և օրը գրելով , և յետոյ կը դնէ իւր ստորագրութիւնը :

Եթէ փոխանակագրի մը պայմանաժամը թուականէն ըլլայ , ընդունելութեան ներքեւ թուական դնել հարկ չէ . իսկ եթէ տեսութենէն ըլլայ , այսինքն տեսնելէն այսքան օր կամ ամիս վերջը վճարելի ըլլայ , այն ատեն պէտք է թուական դնել որ պայմանաժամն որոշուի : Եթէ թուական չդրուի , ըստ օրինի նոյն իսկ փոխանակագրին թուականէն կ'սկսի բանիլ պայմանաժամը , այսինքն տեսութենէն 30 օր կամ 2 ամիս յետոյ եղած պայմանաժամը թուականէն 30 օր կամ 2 ամիս յետոյ կը համարուի :

Ընդունելութիւնը՝ փոխանակագրին առաջին երեսին վրայ՝ ընդունողին հասցէին և քաջողին ստորագրութեան մէջտեղէն և փոխանակագրին գրերուն վրայէն խոտորնակ կերպով կը գրուի հետեւեալ բառերով , որուն գործնական ձեւը կը տեսնուի փոխանակագրի Բ. օրինակին վրայ :

Ընդունեցայ

Պ. ՍԱՀՅԱԿՅԱՆ

կամ

Ընդունեցայ վասն .....

Օսմ. կրթախ, վճարելի

8 Յունիս 1885

Պ. ՍԱՀՅԱԿՅԱՆ

Երբեմն ընդունելութիւնը կարմիր մեջանով ալ կը գրեն , սակայն ստորագրութիւնն անպատճառ սեւ մեջանով գրելու է :

**Միջամտութեամբ ընդունելութիւն**

Երբ մէկն իւր վրայ քաշուած փոխանակագիրն չընդունի , ուրիշ մը կրնայ ընդունիլ զայն և վճարել պայմանաժամին՝ քաշողին կամ փոխանցողաց միոյն հաշուոյն համար . այս ընդունելութեան միջամտութեամբ ընդունելութիւն կ'ըսուի , որ փոխանակագիրը բողոքուէն վերջը կրնայ կատարուիլ :

Փոխանակագրի մը միջամտութեամբ ընդունուելուն և հետեւաբար ուրիշի մը կողմանէ վճարուելուն պատճառն այն է որ՝ փոխանակագիրն չընդունուելով և ետ դրկուելով՝ ծախուց և դարձի հաշուոյ տեղի չմնայ և մանաւանդ քաշող վաճառականին ստորագրութեան արատ մը չգայ :

Ահաւասիկ օրինաց արամադրութիւնքն 'ի մասին միջամտութեամբ ընդունելութեան :

Յօդ. 84. « Բօլիչանրն ատէմ գապուլընա տայիր փրօթէսթօ օլտուղը հալտէ՝ բօլիչայը չէքմիչ վէ եախօտ զահրինէ վազը իմզա պիրլէ հավալէսինի գապուլ իթմիչ օլանլարըն պիրինէ իթիպարէն՝ թէվէսսիւթ իտէճէք պաշքա պիր քիմսէ թարաֆընտան գապուլը ճայիզ օլուպ , անճագ՝ թէվէսսիւթ քէյթիլյէթի բրօթէսթօ քեաղըտընտա գիրք օլունմագ վէ միւթէվէսսիթ թարաֆընտան իմզա գըլընմագ լազրմ տըր : »

Յօդ. 85. « Միւթէվէսսիթ օլան քիմսէ հէր քիմ իչիւն թէվէսսիւթ իթմիչ իսէ՝ պիլիհմալ թէվէսսիւթինի անա իխպար իթմէկէ մէճպուր տըր : »

Յօդ. 86. « Մատամ քի պիր ատէմ քէնտիսի իւզէրինէ քէչիտէ գըլընան բօլիչայը գապուլ իթմէյէ , հէր նէ գատար թէվէսսիւթ թարիզի իլէ պաշգասը թարաֆընտան գապուլ օլունմուչ իսէ տէ ,



եինէ համիլ օլան քիմսէ բօլիչայը քէշիտէ իթմիշ վէ կէրէք հավալէ- սինի դապուլ իյլէմիշ օլանլարըն ալէ յհլէրինտէ պիլծիւմէ իսթիհգա- գաթընը վիգայէ իտէրէք իտտիայէ սէլահիյէթի տէրքեար տըր : »

Պայմանաժամ

Պայմանաժամ կ'ըսուի այն որոշեալ թուականը յորում փոխանա- կազիր մը կը վճարուի :

Փոխանակազիրք զանազան պայմանաժամներով կըլլան :

Ահաւասիկ փոխանակազրի պայմանաժամներու մասին օրինաց արամադրութիւններն :

Յօդ. 87. « Բօլիչա քեաղըտը իպրազ օլունտըղընտէ վէ եախօտ իպրազը կիւնիւնտէն իթիպարէն պիր վէ միւթէատէտ եէվմ վէ մահ- տան սօնրա վէ եա թարիլիսի կիւնիւնտէն պաշլանարագ պիր վէ միւ- թէատէտ եէվմ վէ մահտան սօնրա վէ կէրէք պէհէր շէհրին եէվմը մուայէնինտէ վէ բանայիր միսիլու պիր վադթը մարուֆ վէ մախ- սուստէ թէտիյէ օլունմագ իւզրէ քէշիտէ գըլընուր : »

Յօդ. 88. « Ավիւն եանի կէօրիւլտիկի անտէ թէտիյէսի մէշ- րութ օլան բօլիչալար իպրազ օլունտըղը անտէ թէտիյէ գըլընուր : »

Յօդ. 89. « Իպրազը կիւնիւնտէն պիր վէ միւթէատէտ եէվմ վէ մահտան սօնրա թէտիյէ օլունմագ իւզրէ օլան բօլիչանըն վատէսի՝ դապուլը թարիլսինտէն , վէ ատէմ դապուլընա տայիր բրօթէսթօ գուհուրընտա՝ բրօթէսթօ քեաղըտընըն թարիլսինտէն իթիպարէն թային վէ թախսիս գըլընուր : »

Յօդ. 90. « Պիր բանայըրտա թէտիյէ օլունմագ բօլիչանըն վա- տէսի՝ հէման բանայըրըն խիթամընա մախսուս կիւնտէն պիր կիւն էվվէլ հուլուլ իտուպ , բանայըրըն եալընըզ պիր կիւն միւտտէթի օ- լուր իսէ , օլ բանայըրըն կիւնիւնտէ վատէսի գուհուր իտէր : »

Յօդ. 91. « Բօլիչանըն վատէսի հասէպ իւլ գանուլն եօրթու սայը- լան կիւնլէրտէն պիրինէ թէսատիւֆ իտէր իսէ , օլ եօրթուտան պիր կիւն էվվէլ թէտիյէ գըլընուր : »

Յօդ. 92. « Բօլիչալարըն թէտիյէսի իչիւն՝ միւրաաթ վէ միւսաա- տէ վէ ատէթը պէլտէ դապիլիւնտէն օլարագ , հէր տիւրվիւ մէօհլէթ իթասը քէյֆիյէթի լաղվ օլունմուշ տըր : »

Անգղիոյ մէջ՝ բաց 'ի տեսօրին վճարելի փոխանակազրերէն , պայ- մանաժամ ունեցող ամէն փոխանակազրոց պայմանաժամին վրայ ժողո տը կրաս անուամբ երեք օր եւս կ'աւելցնեն . այսինքն մայիս 16 ին վճարելի փոխանակազիր մը 19ին կը վճարուի :

Պայմանաժամի մը օրերն թուականին կամ տեսութեան յաջորդ օրէն կը համրուին . զորօրինակ , յունուար 1 ին քաշուած 15 աւուր պայմանաժամ ունեցող փոխանակազիր մը նոյն ամսոյն 16 ին վճա- րելի է :



Ամսականով պայմանաժամներն թուականին ամսոյ օրէն այսինչերորդ ամսոյ նոյն օրը կը հաշուեն . զորօրինակ , յունուար 4 թուականաւ քաշուած 2 ամիս պայմանաժամաւ փոխանակագիր մը մարտ 4 ին վճարելի է , առանց յունուար ամսոյ աւելի մէկ օրն և փետրուար ամսոյ պակաս օրերն հաշուելու :

Փոխանցումն

Փոխանցումն կ'ըսուի այն գրութեան որով փոխանակագրի մը տէրն՝ անոր մէջ նշանակեալ գումարն ստանալու իրաւունքն ուրիշի մը կուտայ :

Փոխանցումնք փոխանակագրին ետին կը գրուին . առաջին փոխանցումը՝ քաշողին ստորագրութեան կողմի ծայրէն կ'սկսի թղթին լայնութեամբ , որպէս զի նոյն առաջին փոխանցումը թղթին պարսպ լուսանցքին վրայ չիյնայ և անկարելի ըլլայ կտրել հանել զայն (1) :

Վաճառականական Օրէնքն փոխանցման մասին հետեւեալ տրամադրութիւններն կը պարունակէ .

Յօդ. 93. « Բօլիչանըն իսթիսհապ վէ թէմէլլիւքի (տէր ըլլալ) տէվր վէ հէվալէ թարիդի իլէ պիրպիրինէ ինթիգալ իտէր : »

Յօդ. 94. « Բօլիչա թահվիլլէրի իւզէրինատէ տէվր վէ հէվալէնին թարիսի օլմագ վէ բօլիչանըն մէպլաղը ախզ օլունտըղընը պէյան իթմէք վէ հէր քիմին էօհտէսինէ կէչմիշ իսէ անըն իսմինի զիքը իյլէմէք լազըմ տըր : »

Յօդ. 95. « Հավալէ քէյֆիյէթի՝ սալիֆիւզիքը մատտէտէ պէյան օլունան շէրայիթէ միւվաֆադաթ իթմէտիկի հալտէ , բօլիչանըն ինթիգալ վէ տէվրի իճրա օլունամայուլ , ատէթա վէքեալէթնամէ դապիլինտէն օլուր : »

Յօդ. 96. « Բօլիչանըն հավալաթընէ՝ եազըլտըղը կիւնատէն էվվէլ թարիս գօյմագ մէմնու օլուլ , հէրքիսպուընը իրթիքեալ իտէր իսէ՝ սախթէքեար օլմագ իւզրէ ատտ վէ շիւմար օլունուր : »

Ինչպէս կ'երեւի , սոյն տրամադրութիւններն չկատարելով , փոխանակագրի մը ետին պարզապէս ստորագրութիւն մը դնելն հակառակ է օրինաց . և այսպէս անկանոն փոխանակագիր մը պարզ փոխանորդագիր մը կը դառնայ : Այսու ամենայնիւ , միայն ստորագրութիւն մը դնելով ալ փոխանցումներ կ'ըլլան գործի մէջ , և երբ մէկն այս տեսակ փոխանակագիր մը դնէ , կրնայ փոխանցումը լեցընել ստորագրութեան վրայ , որով փոխանակագիրն կանոնաւոր և փոխանցելի կրնայ ըլլալ վերստին :

(1) Անգղիոյ վրայ քաշուած փոխանակագրոյ մը փոխանցմանց անուններուն մէջ տառասխալ մ'իսկ եթէ գտնուի , այսինքն փոխանցման մը հրամանին տիրոջ անունն և յաջորդ փոխանցողին որ միեւնոյն անձն է՝ ստորագրութիւնն եթէ տարբեր դրերով գրուին , նոյն փոխանակագիրն կը մերժուի :

Փոխանցումն հետեւեալ ձեւով կը գրուի .

Վճարեցիք 'ի հրաման Տր. կամ Տրք..... ին  
արժեքն ..... ընդունած եմ

Կ. Պոլիս ,..... 18.....

(Փոխանցողին ստորագրութիւնը)

Կրամատուներ և սեղանաւորք , որք փոխանակագրի վրայ ընդար-  
ձակ գործ կ'ընեն , ժամանակի կորուստ չըլլալու համար՝ փոխանց-  
ման համար փորագրեալ կնիք մ'ունին , որով փոխանցումը կոխելէ  
յետոյ , անուան , արժէքին և թուականին վերաբերեալ պարասլ  
տեղերը գրով կը լեցնեն :

Փոխանակագրի մը փոխանցողը ըստ օրինի երաշխաւոր են իրա-  
րու . սակայն շատ անգամ գործի մէջ փոխանակագիր մը գնողն փո-  
խանակ իւր անուանը շինել տալու , կեղծ կամ աննշան անձի մը  
հրամանին շինել կուտայ դայն , և ուրիշի մը ծախած ատեն , նոյն  
կեղծ կամ աննշան անձին ստորագրութեամբը կը փոխանցէ , գը-  
նողին գիտութեամբն և հաւանութեամբը , որով նոյն փոխանա-  
կագրին համար պարտական ըլլալէ կ'ազատի ինք : Այս տեսակ փո-  
խանակագիր մը չվճարուած ատեն , փոխանակագրին տէրն առանց  
նոյն կեղծ կամ աննշան անձին դիմելու , նոյն իսկ քաջողին կը դիմէ  
անոր արժէքն սլահանջելու համար : Այս կեղծ անունն օմ՝ տը պոռա  
կ'ըսուի :

Փոխանցում մը եթէ սխալ գրուի , այն փոխանցումը հաստ գծե-  
րով չկարգացուելու շափ կրնայ աւրուիլ և ուրիշ փոխանցում մը  
գրուիլ վերստին :

Երկայնորդ փոխանակագրի

Երբ փոխանակագրի մը ետին այլեւս փոխանցում գրելու տեղ  
չմնայ , փոխանակագրին տէրը պարզ թուղթ մը կը փակցնէ փոխա-  
նակագրին այն ծայրն ուսկից փոխանցմունք պիտի շարունակուին ,  
փոխանակագրին աւելի երկայնութիւն մը տալու համար : Այս փակ-  
ցուած թուղթը երկայնորդ կ'ըսուի , որուն վրայ կը դրուին այնու-  
հետեւ կատարուելիք փոխանցմունք :

Երբ այս առաջին երկայնորդն եւս լեցուի փոխանցումներով ,  
կրնայ ըլլալ որ երկրորդ մ'ալ աւելցուի , և մինչեւ իսկ երրորդ մ'ալ .  
բայց այս վերջինը շատ քիչ անգամ կը պատահի :

Երկայնորդին առաջին երեսին վրայ , այսինքն փոխանակագրին  
գրութեան կողմը , նոյն փոխանակագրին բոլոր կարեւոր մանրամաս-  
նութիւններն պէտք է նշանակել , կամ սլարգապէս ընդօրինակել .  
բայց այնպէս մը գրելու է որ երկայնորդին վրայ գրուած տողերը

փոխանակագրին վրայ աւարտին , այսինքն , իւրաքանչիւր տողին ծայրի մէկ քանի գրերը փոխանակագրին վրայ գրուին . ասկէ զատ , երկայնորդն փակցնողը՝ փոխանցման մէկ մասը փոխանակագրին վրայ գրելու է և մնացեալը երկայնորդին վրայ :

Սակայն երբ փոխանակագրի մը ետին այլեւս տեղ չմնայ փոխանցումն ընելու , առանց երկայնորդ փակցնելու ալ փոխանցումն կ'ըլլայ : Փոխանցող վերջին անձը՝ վերջին փոխանցման վրայէն , որ ինչպէս նաեւ միւս բոլոր փոխանցումներն ընդհանրապէս սեւ մեջանով գրուած կ'ըլլան , հակառակ ուղղութեամբ , այսինքն թուղթին երկայնութեանը իւր փոխանցումը կարմիր մեյանով կը գրէ յստակ երեւալու համար , և ստորագրութիւնը միայն սեւ մեջանով կը դնէ :

### Համերաշխութիւն

Երբ երկու կամ աւելի անձինք ո՛րեւէ դումար մը ամբողջապէս վճարելու սլարտական ըլլան իրարու համար , այսինքն իրենցմէ մէկ քանին միւսներուն և իւրաքանչիւրն ամենուն համար , սոյն սլարտականութեան կ'ըսուի համերաշխութիւն :

Համերաշխութեան մասին Օրէնքն հետեւեալ կերպիւ կը արամադրէ .

Յօդ. 97. « Բօլիչա քեաղըտընը իմպա վէ դապուլ իթմիչ վէ կերէք տէվր . վէ հավալէսինի տէրէօհտէ իյլէմիչ օլանլարըն ճիւմլէսի՝ համիլի (փոխանակագրին տէրը) ինտինտէ պիրպիրինէ միւթէքէֆֆիլ օլմագ իւզրէ ատտ օլունուր : »

Ուստի , երբ մէկն իր ձեռքը չվճարուած փոխանակագիր մ'ունենայ , սոյն անվճար թղթին դումարը կրնայ պահանջել բոլոր ստորագրողներէն , իրենց կարգաւ . այսինքն , նախ փոխանակագիրն իրեն տուող անձէն անոր արժէքը կը պահանջէ , և եթէ նա չվճարէ , կը դիմէ անկէ առջի փոխանցողին . այսպէս փոխանցողէ՝ ի փոխանցող դիմելով , վերջապէս կը դիմէ քաշողին և անկէ կը պահանջէ փոխանակագրին արժէքը : Ուրեմն փոխանակագրի մը քաշողն , ընդունողն , եթէ կայ , և բոլոր փոխանցողք սլարտական են միանգամայն և իւրաքանչիւրն առանձին առանձին այն մարդուն որոյ ձեռք կը դանուի փոխանակագիրն :

### Երաշխաւորութիւն

Երբ ուրիշ մէկը յանձն առնէ փոխանակագրի մը դումարը վճարելու՝ քաշողին , վճարողին կամ փոխանցողաց միոյն համար , սոյն յանձնառութիւնը կ'ըսուի երաշխաւորութիւն :

Երաշխաւորութեան մասին Օրէնքն այսպէս կը տրամադրէ .

Յօդ. 98. « Հէր պիր բօլիչանըն թէտիյէսի՝ դապուլ վէ հավալէ թարիգի իլէ իճրա օլունա կէլմէքտէ իսէ տէ , հինը հավալէտէ՝ հավալէ օլունան քիմսէ ադճէյի վէրէճէք ատէմէ իթիմատ իտէմէտիկի (եթէ չվատահի) թագտիրճէ, ալա թապիր օլունուր՝ իհիթիյաթէն խարիճտէն պիր քէֆիլ թալէպ վէ ախպընա մուգթէտիր օլապիլուր : »

Յօդ. 99. « Իչպու ալալ քէֆալէթի խարիճտէն պիր քիմսէ թարաֆընտան իթա օլունարադ բօլիչա իւղէրինէ թահրիր օլունմագ , վէ եախօտ պաշքաճա պիր սէնէտէ ըապթ իթտիրմէք միւսավի տիր . վէ ալալ թարիգի իլէ քէֆիլ օլան քիմսէ՝ բօլիչայը քէչիտէ վէ հավալէ իտէնլէր միսիլու պիրպիրլէրինէ քէֆիլ վէ զամին օլուր , մէկէրքի թարաֆէյնին պաշքաճա մուգալէլէլէրի սէպգաթ իթմիչ օլա : »

Երբ երաշխաւորութիւնն փոխանակագրին վրայ գրուի , երաշխաւոր եղող անձը վճարմանը համար կ'երաշխաւորեմ կամ երաշխաւոր վասն վճարման բառերը գրելով թուականը կը դնէ և ապա կ'ստորագրէ :

Փոխանակագրի վրայ գրուած երաշխաւորութիւն մը , որ ուրիշներ ալ կրնան տեսնել , հաճելի չկրնար ըլլալ այն անձին որոյ համար տրուած է այն . ուստի փոխանակագրի վրայ շատ քիչ անգամ և կամ ամենեւին երաշխաւորութիւն չեն գրեր :

Երբ առանձին թղթի վրայ ըլլայ , որ ընդհանրապէս աւելի գործածելի է , հետեւեալ կերպով կը գրուի :

ԵՐԱՇԽԱՊԻՐ

Ստորագրեալս՝ Գ. Սմբատեան՝ պարտիս , ներկայ երաշխաւորութեամբ , վճարել զգումարն երկու հարիւր անգղիական լիրայի փոխանակագրին , զոր քաշած է Մ. Քալվօքօրէսի 'ի 28 մայիս 1883 , վճարելի յՅ1 օգոստ. 1883 , 'ի վերայ Լ. Ռօտօքանաքի 'ի Լօնտրա , 'ի հրաման Ս. Յակոբեանի , որմէ փոխանցուած է հետզհետէ առ Մ. Սարգիսեան , Կ. Սերովբեան և Ե. Մինասեան , երբ Լ. Ռօտօքանաքի , որոյ համար կ'երաշխաւորեմ , սոյն փոխանակագրին գումարը չվճարէ :

Կ. Պոլիս , 10 Յունիս 1883

Գ. ՍՄԲԱՏԵԱՆ

A V A L

... 101 ...

Je soussigné, K. Simpadian, m'engage, par le présent aval, à payer la somme de deux cents livres sterling montant de la lettre de change datée du 28 mai 1883, à l'échéance du 31 Août 1883, tirée par Mr. M. Calvocoressi sur L. Rodocanachi à Londres à l'ordre de Mr. S. Agopian, passée à Mr. M. Sarkissian, G. Seropian et E. Minassian, dans le cas où Mr. L. Rodocanachi ne la payerait pas.

Constantinople, le 10 Juin 1883

K. SIMPADIAN

Վճարումն փոխանակագրի

Փոխանակագրի մը տէրն պէտք է որ անոր վճարումն պահանջէ ընդունողէն պայմանաժամը լրանալուն պէս : Փոխանակագիր մը վըճարելու համար պէտք է իրական դրամով հատուցանել անոր մէջ նշանակուած գումարն , առանց ապրանք կամ ուրիշ վաճառականական թուղթ մը տալու :

Օրէնքն հետեւեալ յօդուածները կը պարունակէ վճարման մասին :

Յօդ. 100. « Բօլիչա քեաղըտը իշարէթ իլէտիկի մէսքիւքեաթ իլէ թէտիյէ օլունմադ լազըմ տըր : »

Այսինքն , եթէ դրամին տեսակը օսմ. լիրա նշանակուած ըլլայ , օսմ. լիրա պէտք է վճարել . եթէ արծաթ մէճիտիյէ՝ արծաթ մէճիտիյէ պէտք է վճարել . եթէ սթէռլին լիրա կամ Ֆրանք նշանակուած ըլլայ , սթէռլին լիրա կամ Ֆրանք պէտք է վճարել :

Ընդհանրապէս փոխանակագիր մը որ երկրին մէջ որ պիտի վըճարուի , նոյն երկրին դրամին տեսակովը կը քաշուի . զորօրինակ , եթէ Կ. Պոլսէն Լօնտրայի վրայ փոխանակագիր քաշուի , անգղիական լիրա , այն է սթէռլին լիրա պէտք է քաշել . Փարիզի վրայ՝ Ֆրանք , Օտէսայի վրայ՝ ռուպլի և այլն : Այսու ամենայնիւ , կրնայ ըլլալ որ երբեմն մէկ երկրէ տարբեր երկրի վրայ տարբեր դրամով փոխանակագիր ալ քաշուի : Այս տեսակ փոխանակագիր մը՝ պայմանաժամուն լրացած օրը , նշանակեալ դրամին նոյն օրուան փոխանակագրնոյն համեմատ կը վճարուի երկրին դրամովը : Օրինակի համար , դիցուք թէ Փարիզէն 2000 Ֆրանքի փոխանակագիր մը քաշուած է 'ի Կ. Պոլիս Գ. Արչակի վրայ , վճարելի մարտ 18ին : Գ. Արչակ՝ մարտ 18ին փոխանակ 2000 Ֆր. իրական դրամ վճարելու , նոյն աւուր Ֆրանքի գնովն օսմ. լիրա կը վճարէ :



Յօդ. 101. « Բօլիչա ազճէսինի վատէսինտէն էվվէլ թէտիյէ իտէն քիմսէ՝ օլ բօլիչա հազգընտա պիր կէօնէ հիյլէ վէ Ֆէսատ իտտիա օլընտըղը հալտէ, մէսուլիյէթտէն խէլաս օլամայուլ, թէտիյէսի միւթէպէր օլուլ օլմատըղը՝ թիճարէթխանէ մարիֆէթի իլէ թէտղիզ վէ բույէթ օլունմազ լազըմ կէլուր : »

Յօդ. 102. « Պիր բօլիչայը վատէսինտէ պիր թարաֆտան մէն վէ թէնպիհ օլունմատըղը հալտէ՝ թէտիյէ իտէն քիմսէ պիւ քիւլիյէ պէրի իւզգիմմէ օլուր : »

Յօդ. 103. « Բօլիչանըն համիլի վատէսինտէն էվվէլ մէպլաղընը ախզ իյլէմէք իւզրէ իճպար օլունմազ : »

Յօդ. 104. « Բօլիչանըն թէտիյէսի՝ իքինճի վէ իւչիւնճիւ վէ տէօրտիւնճիւ վէ սայըր հէր հանկը նուսխէսի իլէ իճրա օլունուր իսէ՝ միւթէպէր օլուլ, անճազ թէտիյէ օլունան նուսխէտէ տիկէր նուսխէլէրին հիւքմի լաղվ օլունտըղը մուհարրէր օլմազ լազըմ տըր : »

Յօդ. 105. « Պիր բօլիչանըն իքինճի վէ իւչիւնճիւ վէ տէօրտիւնճիւ վէ սայըր նուսխէսի իլէ ազճէսինի վէրէն քիմսէ դապուլընը հավի վազը իմզա իթտիկի նուսխէյի իսթիրտատ (էթէ Ետ չաունէ) իթմէզ իսէ, իպրայի զիմմէթ օլամազ : »

Յօդ. 106. « Բօլիչանըն թէտիյէսինէ մուխալէֆէթ ճայիզ օլմայուլ, մէկէրքի՝ բօլիչա քեաղըտը զայ օլմուչ վէ Եախօտ համիլինին իֆլասը զուհուր իթմիչ օլա : »

Յօդ. 107. « Գապուլ օլունմամըչ բօլիչա քեաղըտը զայ օլտուգտա՝ իքինճի վէ իւչիւնճիւ վէ տէօրտիւնճիւ վէ սայիր նուսխէլէրինին պիրի իլէ մէպլաղընը թալէպ իթմէկէ սահիպինին սալահիյէթի տէրքեար տըր : »

Յօդ. 108. « Զայ օլան բօլիչա դապուլ օլունմուչ տէյի իչարէթ օլունմուչ իսէ, իքինճի վէ իւչիւնճիւ վէ տէօրտիւնճիւ վէ սայըր նուսխէլէրինին պիրի իլէ մէպլաղընըն թահսիլի՝ միւճէրրէտ թիճարէթխանէնին էմր վէ թէնպիհի իլէ քէֆալէթ իթասընա թէվազգուֆ (սպասեւ) իտէր : »

Յօդ. 109. « Բօլիչայը զայ իթմիչ պուլունան քիմսէ՝ իսթէր դապուլ օլունմուչ իսթէր օլունմամըչ՝ իքինճի վէ իւչիւնճիւ վէ տէօրտիւնճիւ վէ սայըր նուսխէլէրինտէն պիրինի իպրապ իտէմէզ իսէ, զայ օլան բօլիչանըն մէպլաղընը իտտիա, վէ թիճարէթխանէ մարիֆէթի իլէ բօլիչանըն սահիպի հազիզիսի օլտուղընը տէֆթէրի իլէ իսպաթ իտուլ քէֆիլ վէրտիքտէն սօնրա, ախզէ դատըր օլուր : »

Յօդ. 110. « Եօքարտա պէյան օլունան մատտէլէրին մանթուղլէրինճէ բօլիչանըն թէտիյէսի իտտիա օլունուլ տէ՝ իմթինա զուհուր իտէր իսէ, զայ օլան բօլիչանըն սահիպի պիր գըթա բրօթէսթօ քեաղըտընըն ախզի իլէ պիւ ճիւմէ իսթիհգազաթընը հըֆս վէ վիզայէ իտէր : Անճազ իչպու բրօթէսթօ քեաղըտը զայ օլմուչ բօլիչանըն վա-

տէսինտէն պիր կիւն սօնրա թահրիր օլունմագ վէ բրօթէսթօնրն իլանընա տայիր զիրտէ մէսթուր բուսում վէ դավայիտ վէ մէօհլէթլէրէ թաթպիգէն բօլիչայը քէշիտէ վէ հավալէ իտէնլէրէ իսպար գլընմագ լագըմ տըր :

Միգամտուքեամբ վեարումն

Ինչպէս որ՝ երբ փոխանակագիր մը չընդունուի ուրիշ մէկը կըրնայ միջամտութեամբ ընդունել զայն , նոյնպէս ալ՝ երբ փոխանակագիր մը չվճարուի , ուրիշ մը կրնայ քաշողին կամ փոխանցողներէն միոյն համար միջամտութեամբ վճարել զայն բողոքուելէն վերջը :

Ահաւասիկ Օրինաց տրամադրութիւնն այս մասին :

Յօդ. 115. « Բրօթէսթօ օլնուչ բօլիչանըն ագճէսի՝ բօլիչայը չէքմիշ վէ եա հավալէսինի դասուլ իթմիշ օլանլարըն պիրինէ հիւրմէթէն՝ ախէր պիր շախս թարաֆընտան թէվէսսիւթէն էտա օլունապիլուր , անճագ թէվէսսիւթ վէ թէտիյէ քէյֆիյէթլէրի բրօթէսթօ քեաղըտընըն իպարէսինտէ վէ եախօտ գէյլինտէ թասրիհ օլունմագ լագըմ տըր : »

Ի հարկին

Երբ փոխանակագրի մը քաշողն կամ փոխանցողներէն մին կասկած մ'ունենայ թէ՛ այն անձն որոյ վրայ քաշուած է փոխանակագիրն , չպիտի վճարէ զայն , միեւնոյն քաղաքին մէջ գանուող ուրիշ մէկը կը նշանակէ որ իւր հաշուոյն համար ընդունի կամ վճարէ փոխանակագիրն Ի հարկին , այսինքն երբ այն անձն որոյ վրայ քաշուած է փոխանակագիրն , չընդունի կամ չվճարէ զայն :

Այս ծանօթութիւնը կը գրուի սովորաբար թղթին ստորեւը , քաշողին ստորագրութեան ներքեւ , և կամ ուրիշ պարագ տեղ մը հետեւեալ բառերով .

Ի հարկին առ. Տր. կամ Տրք.....

Այս ծանօթութեան տակ ստորագրութիւն չեն դնէր :

Երբ նշանակեալ անձը կամ տունը հանրածանօթ չըլլայ , անոր հասցէն եւս կը գրուի վերոյգրեալ ծանօթութեան քով . և որպէսզի յիշեալ անձը կամ տունը հասկնայ թէ՛ որոյ կողմանէ եղած է իրեն այդ հրաւէրն , սոյն ծանօթութեան քով կը գրէ նաեւ ի հարկին.....ին , ծանօթութիւնը գրողն իւր անուան սկզբնատառերն միայն դնելով :

Այս միջոցը գործածողներուն գլխաւոր նպատակն այն է որ փոխանակագիր մը չընդունուելուն համար բողոքուելով ետ չդրկուի . և հետեւաբար իրենց վարկը չկտորի և իրենց ստորագրութեան պատուոյն արատ մը չգայ :



Ինչպէս կ'երեւի, այս տեսակ պարագայի մէջ է որ ուրիշ մէկը կը միջամտէ փոխանակագիր մը ընդունելու կամ վճարելու. վասնզի փոխանակագրին տէրն ըստ այն ծանօթութեան, ՚ի հարկին կը դիմէ այն նշանակեալ անձին՝ փոխանակագիրն ընդունել կամ վճարել տալու համար :

#### Առանց ծախուց կամ դարձ առանց ծախուց

Երբ փոխանակագիր մը քաշողն ուզէ որ փոխանակագիրը չվճարուած ժամանակ չբողոքուի, և հետեւաբար զանազան ծախքերով դարձի հաշուոյ ալ տեղի չմնայ, իւր ստորագրութեան տակ սա բառերը կը գրէ, առանց ծախուց կամ դարձ առանց ծախուց: Այս բառերէն սա կը հասկցուի թէ փոխանակագիրն քաշողը պատրաստ է անոր գումարը վճարել, երբ պայմանաժամին չվճարուի :

Այս բառերը պարունակող փոխանակագիր մը ուրիշի մը փոխանցուած ժամանակ, պէտք է որ անձնիւր փոխանցող նոյն բառերը գրէ իւր ստորագրութեան տակ, որպէս զի վճարօրին ըստ այնմ շարժի փոխանակագրին տէրը :

#### Ստացագիր փոխանակագրի

Երբ մէկն իւր վրայ քաշուած փոխանակագիր մը վճարելու ըլլայ, ստակն առնող անձէն ստացագիր մը կ'առնու: Ինչպէս արդէն ըսուեցաւ, այս տեսակ վճարմանց համար ստակն առնողը փոխանակ առանձին ստացագիր մը տալու, նոյն իսկ փոխանակագրին ետին ստացայ բառը կը գրէ և ապա կ'ստորագրէ :

Փոխանակագրի մը վերջին տէրը, պայմանաժամին ստակն առնելու համար ընդունողին ներկայանալէ առաջ, ստացագիրը կը գրէ փոխանակագրին վրայ. բայց թէ որ փոխանակագիրը չվճարուի, անպատճառ պէտք է աւրել զայն :

Շատ վաճառականք փոխանակագրին երեսին վրայ սեւէ մէկ կողմը կը գրեն իրենց ստացագիրն: Այսպէս պէտք է ընել մանաւանդ երբ փոխանակագիրն երկայնորդ ունենայ :

#### Իրաւունք եւ պարտք փոխանակագրի տիրոջ

Փոխանակագրի մը տիրոջ պարտուց և իրաւանց մասին պէտք եղած ծանօթութիւններն ստանալու համար, պէտք է դիմել վաճառականական Օրինագրքին թիւ 117-129 տասն երեք յօդուածոց, որք բաւական ընդարձակ ըլլալով՝ անյարմար կը լինէր հոս յառաջ բերել զանոնք միտա մի. այսու ամենայնիւ, անոնցմէ մէկքանին դրած եմք բողոքագրի վրայ խօսած ատեննիս :

Փոխանակագիր 1 ին, 2<sup>րդ</sup>, 3<sup>րդ</sup>, 4<sup>րդ</sup> եւ այլն

Փոխանակագրոց առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, և մինչեւ հինգերորդ օրինակներն կրնան շինուիլ: Առաջին և երկրորդ օրինակներն կը շինուին գլխաւորապէս հետեւեալ երկու պարագայից մէջ.

Նախ, երբ փոխանակագրի մը գնողն ուզէ որ Ա.ը կամ Բ.ը ընդունելութեան ղրկէ (1) և միանգամայն միւս օրինակը ծախելու կարող ըլլայ: Երկրորդ, երբ քաջողն ուզէ ծախել երկու օրինակներէն մին և միեւնոյն ժամանակ ընդունելութեան ղրկել միւս օրինակը:

Այս երկու պարագայից մէջ ալ, փոխանակագրի մը ընդունելութեան ղրկուած օրինակը կրնայ թողուիլ այն անձին քով, որու ղրկուած է ընդունել տալու համար, և միւս օրինակը կրնայ շրջաբերութեան հանուիլ: Այս վերջին օրինակին վրայ՝ քաջողին ստորագրութեան տակ հետեւեալ բառերը կը գրուին,

Առաջինը (կամ երկրորդը) ընդունելութեան համար ղրկուած է առ. ....

Երբ շրջաբերութեան հանուած օրինակն (Ա. կամ Բ.) որ ընդունուած չէ, հասնի այն տեղն ուր պիտի վճարուի, չընդունուած օրինակն որու ձեռք որ գտնուի, ընդունուած փոխանակագիրը պահող անձին կը դիմէ նա, և իւր ձեռքը գտնուած օրինակը ցուցնելով՝ արդէն ընդունուած փոխանակագիրը կ'առնէ անոր քովէն: Սակայն ընդունուած փոխանակագիրը տուող անձը, միւս օրինակին տակը գրուած Ա.ը (կամ Բ.ը) ընդունելութեան ղրկուած է առ. .... բառերը աւերելով, հետեւեալ բառերը կը գրէ,

Ա.ը (կամ Բ.ը) յանձնուած կամ տրուած է .....ին

Վճարորին, փոխանակագրին տէրը ընդունուած օրինակին վրայ ստացագիրը կը գրէ և ստակն առնելէ յետոյ, վճարողին կը յանձնէ երկու օրինակներն ալ, որք միայն մէկ փոխանակագրի արժէք ունին:

Փոխանակագրի մը երկրորդ, երրորդ, և այլն օրինակներն կը շինուին, երբ՝ հեռաւոր երկրի մը մէջ վճարելի ըլլալով, վախցուի թէ մի՛ գուցէ ճամբան կորսուին:

Երբ փոխանակագրի մը երկրորդ, երրորդ, և այլն օրինակներն շինել պէտք ըլլայ, առաջին օրինակին մէջ կը գրուի այս առա-

(1) Սեղանաւորը ընդհանրապէս իրենց թղթակցաց կը ղրկեն փոխանակագիրն ընդունել տալու համար, իսկ եթէ փոխանակագրի մը տէրն թղթակցից չունենայ նոյն քաղաքին մէջ, կրնայ ինքն ուղղակի ընդունելութեան ղրկել զայն այն անձին որոյ վրայ քաջուած է:

Փոխանակագիր մ'ընդունելութեան ղրկելու համար պէտք է մասնաւորապէս նամակ մը գրել ում որ պիտի ղրկուի, ընդունուելիք օրինակն յայնմ՝ ներփակելով:

ջին փոխանակագրով , (երկրորդն եւ երրորդն ոչ գոյով կամ ոչ գոյով վճարեալ) , երկրորդ օրինակին մէջ կը գրուի այս երկրորդ փոխանակագրով (առաջին եւ երրորդն ոչ գոյով կամ ոչ գոյով վճարեալ) այսպէս փակագծի մէջ :

Այսպէս գրուելուն պատճառն այս է որ՝ եթէ միեւնոյն փոխանակագրին արժէքն առաջին կամ երկրորդ օրինակով վճարուած ըլլայ , երկրորդ կամ երրորդ օրինակով ևս չվճարուի , որով քանի մը օրինակներով շինուած փոխանակագրի մը արժէքն մէկ անգամ միայն կարելի է ստանալ :

**Օրինակ կամ պատճեն փոխանակագրի**

Երբ փոխանակագրի մը տէրն ուզէ ընդունելութեան ղըրկել իւր ձեռքը գտնուած առաջին փոխանակագիրն , և քաշող անձն հեռաւոր քաղաք մը բնակի , այնպէս որ նոյն փոխանակագրին երկրորդը բերել տալու համար երկար ժամանակ հարկ ըլլայ , փոխանակագրին տէրն , փոխանակ քաշողէն երկրորդ մը բերել տալու , առաջնոյն մէկ պատճենը կը շինէ , այսինքն , բառ առ բառ և բնագրին մէջ տեսած ուղղագրութեամբ պարզ թղթի մը վրայ կ'օրինակէ փոխանակագիրն և բոլոր փոխանցումներն : Քաշողին և փոխանցողաց ստորագրութիւններն օրինակելէ առաջ , (ստորագրեալ) բառը կը գրեն և վերջին փոխանցումն ընդօրինակելէ յետոյ , անոր տակ կը գրեն սա բառերը փակագծի մէջ (մինչեւ հոս օրինակուած է) :

Փոխանակագրի մը պատճենին առաջին երեսին ստորեւը պէտք է գրել , բնագիրն ընդունելութեան ղրկուած է առ..... փոխանակ առաջինը կամ երկրորդը ըսելու , որով , ինչպէս ըսած եմք արդէն ընդունելութեան վրայ խօսած ատեննիս , կը հասկցուի թէ նոյն օրինակուած փոխանակագրին բնագիրն ընդունուած և ուրիշի մը քով ՚ի պահ գրուած ըլլալով , անոր պատճենին վերջին տիրոջ պիտի յանձնուի :

Այս տեսակ փոխանակագրի մ'ալ ստակն առնուած ատեն , ստացագիրն բնագրին վրայ կը գրուի , այսինքն ըստ կանոնի , ընդունուած փոխանակագրին վրայ , որ միանգամայն քաշողին հարազատ ստորագրութիւնը կը կրէ :

Երբ փոխանակագիր մը կորսուի , դողցուի կամ ո՛րեւէ կերպով մ'աւրուած ըլլալով բոլորովին անգործածելի ըլլայ , անոնց ալ պատճեններն կը շինուին :

Փոխանակագրի մը պատճենին վրայ , թուականին և թուանշաններով գրուած գումարին մէջտեղը , օրինակ կամ պատճեն բառը պէտք է գրել :

**Ի հաշիւ քաշուած փոխանակագիրք**

Երբ մէկը փոխանակագիր մը քաշէ ուրիշի մը հաշուոյն համար , առինքն , ուրիշ մէկն հրաման ընէ իրեն որ փոխանակագիր մը քաշէ

իւր (հրամայողին) հաշուոյն համար , սոյն փոխանակագիրն կ'ըսուի 'ի հաշիւ քաշուած փոխանակագիր :

Այս տեսակ փոխանակագրոց մէջ, փոխանակ ամբողջ անուանը գըրելու այն անձին որոյ հաշուոյն համար կը քաշուի փոխանակագիրն , սովորաբար անոր անուան սկզբնատառերն միայն կը նշանակեն . վասն զի այն անձը միայն՝ որոյ վրայ քաշուած է փոխանակագիրն , հասկընալու պէտք ունի թէ՛ որոյ հաշուոյն համար քաշուած է թուղթն :

Իւր հաշուոյն համար ուրիշի մը ձեռօք փոխանակագիր քաշել տալու պարագայներն այնքան շատ են և այնքան յաճախ կը պատահին՝ որ զանոնք մի առ մի նշանակել երկար ըլլալով, անոնցմէ մին միայն յառաջ կը բերեմք հոս , որմէ ղիւրաւ կարելի է հասկնալ միւսներն ևս :

Ենթադրենք թէ՛ Ա. Մովսէսեան , որ Աեսարիոյ մէջ վաճառական է , և 'ի Կ. Պոլիս թղթակից ունի Աոստիկեան եղբարք յանձնառուներն , Իզմիրի մէջ Ս. Գրիգորեանէն 200 լիրայի վաճառք գնէ , և Ս. Գրիգորեան ուզէ իւր պահանջքն ստանալ Պոլսոյ վրայ փոխանակագրով : Այս պարագային մէջ , Ա. Մովսէսեան կրնայ հրաման տալ Ս. Գրիգորեանին որ իւր հաշուոյն համար փոխանակագիր քաշէ իւր թղթակցաց՝ Աոստիկեան եղբարց վրայ 'ի Կ. Պոլիս :

Ուրիշ մեկու մը ձեռամբ վճարելի փոխանակագիր

Ուրիշ մեկու մը ձեռամբ վճարելի փոխանակագիրն այն է որ՝ թէեւ այսինչ անձին կամ տանը վրայ քաշուած կ'ըլլայ , սակայն ուրիշ մեկու մը ձեռամբ կը վճարուի :

Այս տեսակ փոխանակագրոց մէջ , որոյ վրայ որ քաշուած է թուղթն՝ անոր հասցէին տակ կը նշանակեն նաեւ այն անձին հասցէն որոյ ձեռամբ պիտի վճարուի փոխանակագիրն՝ հետեւեալ կերպով .

Վճարելի առ Տր. կամ Տրք..... (փողոց , թիւ , քաղաք) .

Շատ անգամ քաշողն՝ փոխանակ անձին անունն նշանակելու , միայն քաղաքին անունը կը գրէ , և փոխանակագիրն ընդունողը թղթին վրայ կը նշանակէ այն անձն կամ տունը որոյ ձեռամբ պիտի վճարուի փոխանակագիրը :

Ուրիշի մը ձեռամբ վճարելի փոխանակագիր շինելու համար շատ պատճառներ կան . զորօրինակ , կարելի է որ այն անձն՝ որոյ վրայ քաշուած է փոխանակագիրն , այն երկրին մէջ հաստատուած չըլլայ , այսինքն , օտարական կամ ճանապարհորդ մ'ըլլայ , կրնայ ըլլալ նաեւ որ այնպիսի տեղ մը բնակի որ անոր հետ հաղորդակցելու գիւրութիւն չըլլալով , դժուար ըլլայ հոն երթալ փոխանակագիրը գանձելու համար , և կամ թէ քաշողն չուզէ վճարել ընդունողին ձեռամբ կամ այն քաղաքին մէջ ուր կը բնակի նա :

Ուրիշի մը ձեռամբ վճարելի փոխանակագրի նկատմամբ ըսածնիս օրինակով մը բացատրեմք :

Գաղղիոյ մէջ գտնուող գործարանատէր մը՝ Պոյիս Ռ. և Գ. Սէմէր-ձեան եղբարց ապրանք կը զրկէ և արժէքին համար անոնց վրայ Յամիս պայմանաժամաւ փոխանակագիր մը կը քաշէ՝ Գաղղիոյ մէջ ուրիշ ինչ տան մը ձեռամբ վճարուելու պայմանաւ : Սէմէրձեան եղբարք փոխանակագիրն ընդունելէ յետոյ, Գաղղիոյ մէջ գտնուող դրամատուն մը, զորօրինակ, Գուէտի Լիօնէն կը նշանակեն թուղթին մէջ իրենց հասցէին տակ կամ ընդունելութեան ներքեւ, և ընդունուած փոխանակագիրն դարձեալ գործարանատիրոջ կը զրկեն : Սակայն պէտք է դիտնալ որ Գուէտի Լիօնէին ձեռամբ վճարելի գրելով, ըսել չէ թէ Գուէտի Լիօնէն պարտական է անպատճառ ստակները վճարելու, այլ Սէմէրձեան եղբարք, վճարօրին մօտ, այդ փոխանակագրին գումարը Գուէտի Լիօնէին պարտաւոր են զրկել իրրեւ փոխարէն իրենց վճարելի թղթին, որով նոյն դրամատունն ալ օրին կը վճարէ զայն :

Այս տեսակ փոխանակագիր մը եթէ նշանակեալ տան ձեռամբ չվճարուի անոր փոխարէնն ստացած չլլալուն համար, նոյն տունն՝ ըստ օրինի՝ պարտական չէ վճարելու զայն, քանի որ ինք չէ ընդունողը :

Ուստի, եթէ Սէմէրձեան եղբարք իրենց ընդունած փոխանակագրին փոխարէնը կանխաւ չզրկեն, Գուէտի Լիօնէն ըստ օրինի կրնայ մերժել զայն և չվճարել :

#### Բողոքագիր

Երբ փոխանակագիր մը չընդունուի կամ չվճարուի, փոխանակագրին տէրը պարտաւոր է երկրին օրինաց համեմատ հաստատել տալ պաշտօնական գրով մը թէ փոխանակագիրն չէ ընդունուած կամ չէ վճարուած : Սոյն պաշտօնական գիրն բողոքագիր կ'ըսուի :

Բողոքագրի մասին այսպէս կը տրամադրէ վաճառականական Օրինագիրքը .

Յօդ. 118. « Բօլիչանըն համիլի վատէսի հուլուլ իթտիկի կիւն բօլիչա ազձէսինին թէտիյէսինի իսթէմէք լազըմ տըր : »

Յօդ. 119. « Բօլիչանըն վատէսի հուլուլ իտուպ տէ՛ թէտիյէսինտէն իմթինա օլունտըղը թագտիրտէ վատէնին Ֆէրտասի կիւնի՝ ատէմ թէտիյէսի հագգընտա քօթէնթօ թապիր օլունուր պիր գըթա սէնէա իլէ իտտիա օլունմագ լազըմ տըր : Անձագ հասէպ իւլ գանոն՝ եօրթու սայըլան կիւնլէրտէն պիր կիւնէ թէսատիւֆ իտէր իսէ, օլ կիւն թէխիր իլէ՝ իրթէսի կիւնի իտտիայա թէչէպպիւս օլունուր : »

Յօդ. 127. « Քէզալիք բօլիչանըն վատէսի հուլուլինտէ գարչուլըղընը իսալ իյլէտիկինի՝ քէչիտէ իտէն ատէմ իսպաթ իտէպիլուր իսէ, մէրքումըն ալէյհինէ տավա իթմէկէ՝ բօլիչանըն համիլի վէ ասհապը հավալաթըն իսթիհգագլէրի գալմագ . վէ պու թագտիրտէ հէր քի-



մին իւզերինէ բօլիչա քէշիտէ օլմուշ իսէ՝ եալընըզ օլ քիմսէ ալէյհի-  
նէ տավա իթմէկէ համիլին իսթիհգաղը տէրքեար տըր : »

Յօդ. 130. « Բօլիչանըն ատէմ գասուլը վէ եախօտ ատէմ թէտի-  
յէսի ճիհէթլէրի իլէ թէրթիպի լաղըմ կէլէն բրօթէսթօ քեաղըտլէրի  
պիր մաարուֆ մահքէմէ վէ եա մէճլիս մարիֆէթի իլէ բրօթէսթօնըն  
չէրայիթի լաղըմէսինէ ըիայէթ օլունարագ բօլիչայը թէտիյէ իտէճէք  
քիմսէ վէ իճապընա կէօրէ էլլիլընէա ('ի հարկին) թապիր օլունուր ի-  
քինճի տէրէճէտէ թէտիյէսինի հավալէ իթտիլի քիմսէ պուլտըրըլուպ,  
գասուլ վէ թէտիյէտէն իմթինալէրինի թահգիգ իթտիքտէն սօնրա  
թահրիր օլունմագ լաղըմ տըր : »

Յօդ. 131. « Բրօթէսթօ քեաղըտընտէ թէրգիմ օլունաճագ մէվատ՝  
բօլիչա թէմէսիլքինին լաֆղ պէլաֆղ իպարէսի , վէ գասուլ վէ հա-  
վալաթը , վէ կէրէք հինի իղթիզատա գասուլ իտէճէք էլլիսարն քէյ-  
ֆիյէթլէրի , վէ բօլիչա մէպլաղընըն մութալէպէ օլունտըղը , վէ ագ-  
ճէսինի վիրէճէք քիմսէ հաղըր օլուպ օլմատըղը , վէ թէտիյէտէն վէ  
վաղը իմզատան ատէմ գուտրէթ վէ իմթինա քէյֆիյէթլէրի իչարէթ  
զըլընմագտան իպարէթ տիր : »

Յօդ. 141. « Թէտիյէ օլունմամըշ բօլիչանըն կիւզէլթէսի բրօթէս-  
թօ կիւնիւնտէն իթիպարէն հիսապ օլունուր : »

#### Փոխարէն-փոխանակագիր

Բողոքուած փոխանակագրի մը տէրն իրաւունք ունի , իւր պա-  
հանջքն ստանալու համար, փոխանակ իւր համերաչխներն 'ի դատ  
քաշելու , անմիջապէս անվճար փոխանակագիրը քաշողին կամ անոր  
փոխանցողաց միոյն վրայ նորէն փոխանակագիր մը շինելու և ծախե-  
լու : Սոյն փոխանակագիրն՝ փոխարէն-փոխանակագիր կ'ըսուի , և  
կը պարունակէ բողոքեալ փոխանակագրին գումարն , զանազան  
ծախքերն , և կրկին փոխանակագրին , ինչպէս ըսինք արդէն դարձի  
հաշուոյն մէջ :

Ահաւասիկ ինչ որ կը տրամադրէ Օրէնքն փոխարէն - փոխանա-  
կագրի մասին .

Յօդ. 134. « Ընթացիկ տէտիքլէրի՝ պիր բօլիչա մահալինէ պիլ-  
վուսուլ գասուլ օլունմայուպ , բրօթէսթօ ուսուլը իճրասընտան պաշ-  
գա , բօլիչանըն համիլի բօլիչանըն հավի օլտուղը մէպլաղը՝ բօլիչա-  
յը քէնտույէ իրսալ իտէն քիմսէ իւզերինէ թէքրար աքսինէ բօլիչա  
իթմէք մանասընա արը : »

Յօդ. 135. « Բրօթէսթօ օլմուշ բօլիչանըն ըէսիւլմալը վէ մէսա-  
րիֆի վէ քամպիյօ թէֆավիլթի ասըլ բօլիչայը չէքէն շախս թարա-  
ֆընտան վէ եախօտ ճէրանթալէրին (փոխանցող) պիրի ճանիպին-  
տէն լիէճլիթ թահսիլ բօլիչանըն համիլի ԷՆԷԷ թապիր օլունուր՝  
եանի պիր գըթա ճէտիտ բօլիչա թանգիմինէ մէճպուր օլուր : »

Հոս կը դնեմք դարձի հաշուոյն Ա. օրինակին վերաբերեալ փոխարէն-փոխանակագրին օրինակը .

Մարտիիս , 20 Սեպտ. 1883

Փ. Վ. Ֆր. 3070

Տեսօրին վճարեցիք այս միակ փոխանակագրով , 'ի հրաման իմ , երեք հազար եօթանասուն ֆրանք , արժեք շվճարուած փոխանակագրի մը , զոր քաշած է Կ. Պոլսէն Ս. Պողոսեան 'ի վերայ Մ. Արշակի , 'ի Մարտիիս , եւ փոխանցած էք դոսք 'ի հրաման իմ , եւ դարձի հաշուոյ , զոր անվճար փոխանակագրին հետ այս փոխանակագրիս կցած եմ , որք Ձեզ պիտի արուին եթէ այս թողութիւն վճարեք :

Ա. ԲԱԳՐԱՏ

Առ Տէր

Գ. ՕՀԱՆԵԱՆ

Կ. Պոլիս

Նաֆիէ-իսն թիւ 28

Marseille, le 20 Septembre 1883

B. P. Fcs. 3070

*A vue, payez par cette seule de change, à l'ordre de moi-même, la somme de **Trois mille soixante-dix francs**, valeur en une traite de S. Bogossian, de Constantinople, sur M. Archagh, de Marseille, endossée par vous à mon ordre, non acquitée et compte de retour, le tout ci-annexé; lesquelles pièces vous seront remises sur l'acquit de la présente.*

A. PAKRAD

A Monsieur

K. OHANIAN

Constantinople

N° 28, Nafié-han

Փոխանակագիրը , ձեռք պարզ թղթի կամ մասնաւորապէս վիմագրեալ կամ տպագրեալ թղթերու վրայ կը գրուի : Ընդհանրապէս Տաճկաստանի գաւառներէն Պոլսոյ վրայ կամ Պոլսէն Տաճկաստան





Springfield

2 Jan 2/83

1883 W. V. 6

to O. V. 20

My dear Sir,  
I have the pleasure to acknowledge the receipt of your letter of the 29th inst.

in relation to the above mentioned matter.

I have the pleasure to inform you that the same has been forwarded to the proper authorities for their consideration.

I am, Sir, very respectfully,  
Your obedient servant,

Wm. H. Deane

By order of the Board of Directors

Wm. H. Deane

W. H. Deane

Վճարեցէք 'ի հրաման տիար  
Մանուկ Գոշոշևեանի  
արժեքը կանխիկ տուցած եւ:

Տրապիզոն , 2 Յունիս 1885

Տ. ՄԻՆԱՍԵԱՆ

Վճարեցէք 'ի հրաման տիար  
Ա. Աստուածատուրեանի  
արժեքն սպրանքով ընդոշնուած:

Կ. Պոլիս , 7 Յունիս 1885

Մ. ԳՈՉՈՒՆԵԱՆ

Վճարեցէք 'ի հրաման տիար  
Դաշիր Նաշրեանի  
արժեքն 'ի հաշիւ

Կ. Պոլիս , 8 Յունիս 1885

Ա.ՍՏՈՒԹՅԱՏՈՒՐԵԱՆ

Վճարեցէք 'ի հրաման տեարց  
Քնաձեանի Չարդարեանի  
արժեքն սպրանքով տուցած եւ:

Կ. Պոլիս , 9 Յունիս 1885

ԴԱԻԻԹ ՆԱՌԼԸԵԱՆ



Constantinople, le 8 Mars 1884 B.P. n° 250.

A trois mois de date veuillez payer par cette  
Première de Change (la Seconde ne l'étant) à l'Ordre  
de Monsieur G. Capamagian la Somme  
de Livres Sterling Deux cent cinquante  
Valeur reçue et que passerez en compte suivant avis

A Messieurs

D. Karagulian

P. Mouradian & Co

N°

310

Londres

Payez à l'ordre de Monsieur  
S. Chahinian  
valeur reçue comptant  
Constantinople, le 10 mars 1884

*J. Capanagian*

Payez à l'ordre de Monsieur  
O. Papazian  
valeur en compte  
Constantinople, le 15 mars 1884

*S. Chahinian*

Payez à l'ordre de Messieurs  
G. Parseghian et C<sup>ie</sup>  
valeur reçue comptant  
Constantinople, le 9 avril 1884

*O. Papazian*

Payez à l'ordre de Monsieur  
K. Mouradian  
valeur reçue comptant  
Constantinople, le 10 Avril 1884.

Payez à l'ordre de Monsieur  
N. Simonian  
valeur reçue comptant.  
Constantinople, le 15 Avril 1884.

*G. Parseghian et C<sup>ie</sup>*

տանի դաւառներու վրայ քաշուած փոխանակագիրք մեծաւ մասամբ պարզ թղթի վրայ հայերէն լեզուաւ կամ հայերէն գրով տաճկերէն լեզուաւ գրուած կ'ըլլան : Քիչեր կան , որ իրենց համար մասնաւորապէս վիմագրեալ կամ տպագրեալ փոխանակագրի թղթեր ունենան . իսկ այն փոխանակագիրք , որք Պոլսէն , Իզմիրէն , Եգիպտոսէն , Օտէսայէն , Սէլանիկէն և այլ քաղաքներէ եւրոպական քաղաքացի վրայ կը քաշուին , ընդհանրապէս մասնաւոր վիմագիր փոխանակագրի թղթերու վրայ կը գրուին դաղղիերէն , անգղիերէն և այլ եւրոպական լեզուօք : Վիմագիր փոխանակագրոց մէջ սլարապ տեղեր կը ձգուին թուականին , պայմանաժամին , փոխանակագրին քաներորդին , հրամանին , գումարին , արժէքին , վճարողին համար , որք 'ի վերջոյ գրչով կը գրուին :

Մեր ըսածներն լաւ հասկցնելու և դործի մէջ ամէն օր գործածուած կանոնաւոր փոխանակագրոց վրայ ուսանողաց ճիշդ գաղափար մը տալու համար , օգտակար համարեցինք բուն իսկ վիմատիպ փոխանակագրի երկու օրինակ դնել հոս մին հայերէն և միւսն գաղղիերէն , որոնց վրայ ինչպէս կ'երեւի , ձեռքով գրուած են վերեւ յիշուած մանրամասնութիւնք :

### Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ք

1. Պրուսայէն 14 մարտ 1884 թուականաւ , Ս. Թորոսեան՝ Լ. Օ. 45 և 59 հարիւրորդի մէկ օրինակ փոխանակագիր մը կը քաշէ , տեսութենէն . 11 օր յետոյ վճարելի , Ս. Շէրպէթճեանի վրայ , 'ի Կ. Պոլիս , Կալաթա , 'ի հրաման Սարգիս Թէոսեանի , որ փոխանցելով 'ի հրաման Մ. Թօգաթեանի , անոր կուտայ զայն՝ անկէ առած ապրանաց հաշուոյն համար :

2. Հարենց եղբարք , 'ի Կ. Պոլիս , 10 փետրուար 1884ին կը քաշեն Ն. Հարէնցի վրայ , որ յ'Իզմիր , 120 օսմ. լիրայի մի առաջին փոխանակագիր , թուականէն 7 օր յետոյ վճարելի , 'ի հրաման Գ. Սիմօնեանի որմէ կանխիկ ստացած են արժէքն :

3. Մ. Թօգաթեան 'ի Կ. Պոլիս , 19 մարտ 1884 թուականաւ կը քաշէ Տիտէպանդասէ Աքիֆ Էֆէնաթի վրայ , 'ի Տրապիզոն , 214 օս. լիրա և 29 հարիւրորդի՝ թուականէն 91 օր յետոյ վճարելի մի փոխանակագիր երկու օրինակով , այսինքն , առաջին և երկրորդ , իւր հրամանին , արժէքն իւր զրկած ապրանաց փոխարէն . յիշեալ փոխանակագրին առաջին օրինակը ընդունելութեան կը զրկէ , Ա. Մախոխեանի , որ 'ի Տրապիզոն , առանց անոր անուան փոխանցելու , և երկրորդը կը պահէ իւր քով մինչեւ մերձենալ վճարօրին . երկրորդին տակ կը գրէ առաջնոյն ընդունելութեան զրկուած ըլլալը :

4. Տ. Գարակէօզեան , 'ի Կ. Պոլիս , 17 Յունուար 1884 թուականաւ



կը քաշէ 'ի վերայ Անկլո-Աւստրիան պանքի, որ 'ի Լօնտրա, £ 500 ի մի փոխանակագիր երկու օրինակով, վճարելի թուականէն 3 ամիս յետոյ 'ի հրաման Յ. Պէյլիկճեանի, որ կանխիկ վճարած է անոր արժէքն . այդ փոխանակագիրն շրջաբերելով և այլևայլ փոխանցումներով ետին լենալով, երկայնորդ ալ փակցուած է . իսկ այդ երկայնորդն ալ լենալով, վերջին փոխանցման վրայէն սկսեալ կարմիր մեղանովալ մէկ փոխանցումն եղած է : Ուսանողին թողած եմք փոխանցմանց անուններն ինքնին յարմարցնել և փոխանցել :

5. Ա. Ծաղիկեան, որ 'ի Կ. Պոլիս, 1884 ապրիլ 1 թուականաւ, 3000 Ֆրանքի փոխանակագիր մը կը քաշէ թուականէն երեք ամսուան երկու օրինակով, 'ի հրաման Է. Նալպանեանի 'ի վերայ Ս. Հալաճեանի 'ի Մարսիլիա . արժէքն կանխիկ ընդունած է : Է. Նալպանեան երկու օր յետոյ կը փոխանցէ փոխանակագիրն Գ. Բագրատի, որմէ հետզհետէ փոխանցուելով Գ. Թագուորեանի, Մ. Զաքարեանի, Ն. Սաքաեանի, որք 'ի Կ. Պոլիս, և վերջապէս Հէնրի Ժիւէրիի, 'ի Մարսիլիա, այս վերջինն ընդունել կուտայ թուղթը և պայմանաժամին կը դանձէ :

6. Մավրո Փիզ և Ընկերք, յՕտէսա, 1884 մարտ 27 ին £ 480 ի փոխանակագիր մը կը քաշեն Վալիանօ և Ընկրց. վրայ 'ի Լօնտրա, թուականէն 2 ամիս յետոյ վճարելի, 'ի հրաման Ժ. Փ. Բասթաթիի, սակայն վախճալով որ Վալիանօ և Ընկերք չեն ընդունիր և չեն վրձարեր, իրենց թղթակիցն, Մավրո Վալիէրին կը նշանակեն, որ 'ի հարկին ընդունի և վճարէ զայն 'ի հաշիւ իրենց :

Վերոյգրեալ հրահանգները ուսանողն պէտք է պատրաստէ ամէն մանրամասնութեամբք թէ՛ հայերէն և թէ՛ գաղղիերէն օրինակներով հետեւելով մեր տուած օրինակներուն :

ՄՈՒՐՀԱԿ ԿԱՄ ՏՈՄՍԱԿ Ի ՀՐԱՄԱՆ

Մուրհակ կամ տոմսակ 'ի հրաման կ'ըսուի այն թուղթն որով պարտական մը, այն է ստորագրողն յանձն կ'առնու՝ որոշեալ թուականէ մը յետոյ և որոշեալ տեղ մը ո՛ր և է գումար մը իրական դրամով վճարել անոր մէջ նշանակեալ անձին կամ նոյնին հրամանովն ուրիշ անձի մը, և կամ փոխանցմամբ նոյն թղթին տէր եղող վերջին անձին :

Վաճառականական Օրէնքն հետեւեալ երկու յօդուածները կը պարունակէ 'ի մասին 'ի հրաման տոմսակի :

Յօդ. 144. « Վատէ վէ ճիրօ վէ եէքտիկերէ թէքէֆֆիլ քէյֆի-յէթլէրինէ տայիր վէ կերէք իհթիյաթէն խարիճտէն քէֆիլ իթասը վէ պիզլաթ վէ պիթթէվվէսսիլթ թէտիյէ վէ բրօթէսթօ հալաթը վէ բօլիչա համիլինին վազիֆէյի զիմէթ վէ իսթիհգազաթը Ինքամայիօ

մատուցսի վէ եախօտ կիւղէշթէլէր խոստուսաթընա միւթէտայիր օլուս , բօլիչա թէմէտիւքլէրինէ միւթէալիք պիլճիւմէ նիզամաթ՝ օրփինէ , եանի տայինին պատ էմր վէ սըփարըլ իտէճէկի մահալէ թէտիյէ օլունմագ իւղրէ եազըլան թահվիլէր հագգընտա տախի մէրի-իւլ իճրա տըր : »

Յօդ. 145. « Սըփարըլ թահվիլէրի (մուրհակ 'ի հրաման) մութլագա պիր թարիխ իլէ մուէրրախ օլնագ վէ մէզքիւր թահվիլտէ թէտիյէ օլունմագ մէսլաղըն մըգտարը իլէ հէր քիմին սըփարըլ վէ էմրինէ թէտիյէ օլունմագ իսէ , անըն իսմ վէ շէօհրէթ վէ նէ վազըթ ազճէսի վէրիլէճէկինի զիքր իթմէք վէ ճիհէթը գարգ վէ եախօտ էմթէա սէմէնի մի տիր եօխսա պիր հիսապ վէ եա հավալէտէն տօլայը մը տըր պէյան իթմէք լաղըմ տըր : »

Ինչպէս կ'երեւի , 'ի հրաման մուրհակն նոյն իսկ թուղթն ստորագրողը սլարտաւոր է վճարել , մինչդեռ փոխանակագրին ուրիշ մը կը վճարէ : Հետեւապէս 'ի հրաման մուրհակի համար ո՛չ փոխարէնի հարկ կայ և ո՛չ ընդունելութեան :

Ի հրաման մուրհակն եւս ենթակայ է Օրինաց այն տրամադրութեանց որք կը վերաբերին պայմանաժամու , փոխանցման , համերաշխութեան , վճարման , միջամտութեամբ վճարման , երաշխաւորութեան , բողոքագրի , փոխարէն-փոխանակագրի , տոկոսի , և փոխանակագրի տիրոջ սլարտուց և իրաւանց , զորս մի առ մի յառաջ բերինք փոխանակագրի մասին մէջ :

Գործնական ձեւ 'ի հրաման մուրհակի

Ի հրաման մուրհակ մը շինելու համար , պէտք է գրել .

1. Տեղւոյն անունն և բուսականը . փոխանակագրին պէս :

2. Մ. Վ. սկզբնատառերն , որք կը նշանակեն մուրհակ վասն , և դրամին անուան սկզբնատառն և գումարն , ինչպէս բացատրեցինք փոխանակագրին մէջ :

3. Պայմանաժամը . փոխանակագրին պէս :

4. Վճարելու յանձնառութիւնը , որ այսպէս կը գրուի , պարտիւմ կամ պարտիւմք վճարել :

5. Հրամանը , որ միշտ ուրիշի մը կը վերաբերի . հետեւաբար ստորագրողն իւր հրամանին շիրնար մուրհակ մը շինել , քանի որ վճարողն նոյն ինքն է . հրամանը կը գրուի այնպէս ինչպէս ըսինք փոխանակագրին մէջ :

6. Գումարը , որ ամբողջ գրով գրելու է , փոխանակագրին պէս :

7. Արժեքը , ինչպէս ըսինք փոխանակագրին մէջ . այսինքն արժեքը ապրանքով ընդունած եմ կը գրուի , եթէ ստորագրողն առած ապրանքին փոխարէն տուած ըլլայ թուղթը : Ի հրաման մուրհակին մէջ արժեքն յիս կամ 'ի մեզ չգրուիր :



Յ. Մուրհակը տուողին ստորագրութիւնը , և հասցէն , եթէ հարկ ըլլայ :

Հասցնիս օրինակով մը բացատրեմք .

Դիցուք թէ 1884 Յունուար 20ին , Յ. Մանիկեան 150 Օտմ. լի-  
րայի արժողութեամբ սպրանք ծախեց Ս. Թովմասեանի , վճարելի ՅԱ  
օր յետոյ , և Ս. Թովմասեան՝ սոյն 150 լիրային փոխարէն տուաւ ՚ի  
հրաման Յ. Մանիկեանի՝ ՅԱ աւուր պայմանաժամաւ տոմսակ մը :

Ահաւասիկ սոյն գործողութեան համար Ս. Թովմասեանի տուած  
մուրհակը .

Կ. Պոլիս , 20 Յունուար 1884

Մ. Վ. Լ. Օ. 150 . —

Թոռակակես երեսուն եւ մէկ օր յետոյ , պարտիս՝ վճարել ՚ի հրա-  
ման Յ. Մանիկեանի , Հարիւր յիսուն լիրա օսմանեան , արժեքն  
սպրանքով ընդունած եմ :

Ս. ԹՈՎՄԱՍԵԱՆ

Constantinople, le 20 Janvier 1884

B. P. L. T. 150 . —

A trente un jours de date, je payerai à l'ordre de  
M. H. Maniguian, la somme de **Livres turques**  
**cent cinquante**, valeur reçue en marchandises.

S. TOMASSIAN

Ի հրաման տոմսակն սարդ թղթի վրայ գրչով կը գրուի . բայց կան  
ոմանք որ իրենց համար յատկապէս տպագրեալ մուրհակի թղթեր  
չինել կուտան , թուականին , գումարին , պայմանաժամին , հրամա-  
նին և արժեքին տեղերը բայց թողլով , որք ՚ի վերջոյ կը լեցուին գրչ-  
ով , երբ տոմսակ մը աւալ հարկ ըլլայ :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ք

1. Յակոր Մինասեան 1884 յունիս 28 ին Տ. Գալիամաճեան և  
Ընկ.էն գնեց 8768 դրչի սպրանք , և փոխարէն տուաւ նոյն աւուր  
թուականաւ ՅԱ աւուր տոմսակ մը անոնց հրամանին :

2. Գրիգոր Յակոբեան՝ 1884 փետրուար 8ին Յակոբ Գարակիւ-  
եան սեղանաւորէն 238 լիրա առաւ, տարով նոյն աւուր թուակա-  
նաւ յիշեալին հրամանին տոմսակ մը 43 օր յետոյ վճարելիս:

ՄՈՒՐՀԱԿ ԿԱՄ ՏՈՄՍԱԿ ՆԵՐԿԱՅԱՅՆՈՂԻՆ

Մուրհակ կամ տոմսակ ներկայացնողին կ'ըսուի այն թուղթն  
որոյ մէջ ո՛չ պարտատիրոջ անունը կը գրուի և ո՛չ ընդունուած ար-  
ժէքն: Այս թուղթն առանց փոխանցման կը տրուի ուրիշի և վճա-  
րօրին ո՛վ որ ներկայացնէ զայն, ստակն անոր կը վճարուի:

Այս տեսակ տոմսակներն պարտականին ստորագրութենէն, այն  
է թուղթն ստորագրող անձէն զատ ուրիշ երաշխաւորութիւն մը  
չունին: Այս տոմսակն թէեւ յաճախ կը դործածուի Թուրքիոյ մէջ,  
սակայն վտանգ մ'ունի, այն է՝ թուղթը կորսուած կամ գողցուած  
ատեն զանողն կամ գողցողն կրնայ պայմանաժամին ստանալ անոր  
փոխարէնը, մինչդեռ ՚ի հրաման եղած ատեն, անպատճառ դրամն  
ստացողին անուան փոխանցուած ըլլալու է: Այս տոմսակին դործի  
մէջ ընդհանրապէս բաց տոմսակ կամ մուրհակ կ'ըսուի:

Ահաւասիկ բաց տոմսակի օրինակ մը.

Թոռակսնէս երեսուն եւ մէկ օր յետոյ, այս թուղթս ներկա-  
յացնողին (կամ թերողին) պարտիմ վճարել չարիւր քան լիրա օս-  
մանեան:

Կ. Պոլիս, 5 Նոյեմբեր 1883

Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

L. O. 120. —

A trente un jours de date, je payerai au porteur, la  
somme de **Livres turques cent vingt.**

Constantinople, le 5 Novembre 1883

K. GARABEDIAN

L. T. 120. —

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ք

1. Ս. Պարսամեան՝ 1884 փետրուար 8ին Ա. Գէորգեանէ 200 լիրա օսմ. փոխ առնելով, փոխարէն տուաւ 31 աւուր բաց տոմսակ մը :

2. Մ. Գոչունեան՝ Յ. Նշանեանէ 180 օսմ. լիրայի ամերիքան գընեց և փոխարէն տուաւ 31 աւուր բաց տոմսակ մը 1884 մարտ 28 թուականաւ :

ՀԱՄԱՊԱՐՏ ՄՈՒՐՀԱԿ

Երբ մէկէ աւելի անձինք մուրհակ մը ստորագրեն, թէ՛ ՚ի հրաման ըլլայ և թէ՛ ներկայացնողին, սոյն մուրհակն կ'ըսուի համապարտ մուրհակ :

Համապարտ մուրհակի մը ստորագրողը միմեանց համար և իւրաքանչիւրն միւս ամենուն համար երաշխաւոր ըլլալով, իւրաքանչիւր ստորագրող պարտաւոր է անոր մէջ նշանակեալ գումարն ամբողջապէս ինք վճարելու, եթէ միւսներն բան մը չվճարեն, հետեւաբար իրաւունք չունի պահանջելու որ պարտքը բաժնուի ամենուն վրայ և իրեն անկաժ բաժինը միայն վճարէ, կամ ամբողջ պարտքը գլխաւոր պարտականին վրայ ձգելու : Եթէ ստորագրողներէն մին վճարէ ամբողջ գումարը, միւս ստորագրողը այլ եւս բան մը պարտական չեն ըլլար տոմսակին տիրոջ :

Համապարտ մուրհակի մը տէրն ազատ է ստորագրողաց մէջէն իւր յարմար դատած անձին դիմելու, և թղթին վճարումն անկէ պահանջելու : Համապարտ մուրհակ մը եթէ չվճարուի, կամ վէճ մը տեղի ունենայ, թղթին տէրն իրաւունք ունի բոլոր ստորագրողաց դէմ միանգամայն դատ բանալու :

Ահաւասիկ համապարտ տոմսակի օրինակ մը .

Թոռակունիս վաթսուսն հս միկ օր յետոյ, պարտակուն եմք հս-  
մերաշխաբար միմեանց համար վճարել ՚ի հրաման Գ. Մորաւտեանի  
Հարիւր յիսուն լիրա օսմանեան, արժեքն ապրանքով ընդունուած է :

Կ. Պոլիս, 18 Ապրիլ 1884

Կ. ՍՏԵՓԱՆԵԱՆ  
Գ. ԷԳՆԱՅԵԱՆ  
Օ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Լ. Օ. 150. —

*A soixante un jours de date, nous paierons solidairement l'un pour l'autre, la somme de **Livres turques cent cinquante**, à l'ordre de M. K. Mouradian, valeur reçue en marchandises.*

Constantinople, le 18 Avril 1884

G. STEPANIAN  
K. EKNAYAN  
O. SARKISSIAN

**L. T. 150.**

**Հ Ր Ա Հ Ա Ն Ք**

Թ. Սեպուհեան՝ 1884 մարտ 2ին Ե. Սմբատեանէ երկու հարիւր օսմ. լիրա փոխ առնլով՝ Յ ամսուան պայմանաժամաւ տոմսակ մը տուաւ, որոյ վճարման համար երաշխաւոր կ'ըլլան Թ. Պօղոսեան և Յ. Պետրոսեան :

**ՎՃԱՐԱԳԻՐ ԿԱՄ ՁԵՔ**

Ձեքը՝ զոր անգղիացիք հնարած են, անգղիերէն բառ մ'է և այս անուամբ կը գործածուի ամէն առեւտրական հրապարակի վրայ : Ձեքը կամ վճարագիրք տեսակ մը թուղթ է որով վաճառական մը հրաման կ'ընէ սեղանաւորի մը, որոյ քով պահեստի դրամ ունի ընթացիկ-հաշուով, որ նշանակեալ անձին կամ թուղթը ներկայացնողին, և կամ 'ի հրաման այս ինչ անուն անձին նշանակեալ գումարն վճարէ 'ի տեսութեան :

Եթէ վճարագիր մը միայն որոշեալ անձի մը վճարելի ըլլայ, գընող անձին անունը կը դրեն, և կամ 'ի հրաման կամ ներկայացընողին բառերը գրքով կ'աւրեն : Եթէ 'ի հրաման վճարելի ըլլայ, դարձեալ գնող անձին անունը կը դրեն և «ի հրաման» բառը թողլով՝ «կամ ներկայացնողին» բառերը միայն կ'աւրեն : Իսկ եթէ ներկայացնողին վճարելի ըլլայ, յայնժամ «կամ 'ի հրաման» բառերն աւրելով՝ «ներկայացնողին» բառը միայն կը թողուն : Գիւրին է հասկնալ թէ այս ըսածնիս տպեալ վճարագրոց համար է :

Վճարագրին մէջ թուականը գրով կը գրուի :

Վճարագրին մէջ արժէքը չգրուիր և կրնայ քաշուիլ ու վճարուիլ միեւնոյն քաղաքին մէջ. ինչպէս նաեւ կրնայ հեռու քաղաքի մը կամ տարրեր երկրի մը վրայ ալ քաշուիլ փոխանակագրի պէս : Վճարագրին մէջ պայմանաժամ ալ չգրուիր, որովհետեւ ըստինքեան 'ի տեսութեան վճարելի թուղթ մ'է :

ի հրաման եղող չէքերն ալ փոխանակագրի պէս կը ծախուին և կը փոխանցուին : Անգղիոյ մէջ խարդախութեանց առաջքն առնելու համար շատ անգամ թղթին վրայ խոտորնակի երկու գիծ կը քաշեն մեղանով իրարմէ մէկ մատնաչափ հեռաւորութեամբ : Գծաւոր վճարագրոց գումարն այնպիսի մարդոց միայն կը վճարուի, որք ծանօթ են վճարող սեղանաւորին :

Երբեմն ալ վճարագրի մը տէրն իւր սեղանաւորին՝ որու պիտի դրկէ նոյն թուղթը, անունը կամ միայն եւ ընկերութիւն (1) բառերը կը գրէ թղթին վրայ խոտորնակի :

Առաջին պարագային մէջ, չէքին գումարը՝ խոտորնակի նշանակեալ սեղանաւորին միայն կը վճարուի . իսկ երկրորդ պարագային մէջ, որեւիցէ սեղանաւորի մը :

Վճարագրի մը գումարը կարելի եղածին չափ կարճ միջոցի մէջ գանձուելու է, վասն զի եթէ յանկարծ սնանկանայ այն սեղանաւորն որոյ վրայ քաշուած է վճարագիրն, անոր տէրը զայն քաշողէն բան մը պահանջելու իրաւունք չկրնար ունենալ, և այս բանին համար է որ վճարագրոց ոմանց վրայ կը դրուին երբեմն սա բառերն . արժելի մինչեւ երկու կամ երեք ամիս :

Մեր տուած վճարագրի օրինակն 'ի հրաման ըլլալով՝ «կամ ներկայացնողին» բառերն աւրուած են :

Գահիրէ, Քաան եւ Նորս Նայեմբեր 1883

Վ. Վ. Յ. 1500 . —

**Գ Թ Է Տ Ի Լ Ի Օ Ն Է**

**ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ**

**ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ՀԱՐԻԻՐ ՄԻԼԻՈՆ**

Վճարեցիք 'ի հրաման Տր. Տ. Մօքուեանի կամ ներկայացնողին  
Հազար հինգ հարիւր ֆրանք :

Թիւ 56409

ԳՐԵՏԻ ԼԻՕՆԷ

Վճարելի 'ի Փարիզ ժամը 9 հն մինչեւ 4 (2)

(1) Չէքերն ընդհանրապէս տպեալ կ'ըլլան եւրոպական ո'ւեէ լեզուաւ մը . ուստի եւ ընկերութիւն բառերն ալ եւրոպական լեզուաւ պէտք է գրել :

(2) Դրամատուներ որոշեալ ժամեր ունին իրենց համար, որմէ առաջ կամ ետքը ո'չ ստակ կ'առնուն և ո'չ կուտան :

Caire, le vingt quatre Novembre 1883

B. P. F. 1500 . —

CRÉDIT LYONNAIS

SOCIÉTÉ ANONYME

CAPITAL CENT MILLIONS

Payez à l'ordre de M. D. Mocossian ~~ou au porteur~~,  
la somme de **Mille cinq cents francs.**

N<sup>o</sup> 56409

CRÉDIT LYONNAIS

Payable à Paris de 9 à 4 heures

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ

Գ. Պողոսեան՝ 1884 մարտ 2 թուականաւ կը գնէ Պանք Օթօմանէն, որ 'ի Կ. Պոլիս, £ 250 ի չէք մը Պանք Օթօմանի վրայ 'ի Լօնտրա վճարելի իւր հրամանին :

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

Վաճառականական հրամանագիրն ճիշդ փոխանակագրի ձեւով թուղթ մ'է, սա տարբերութեամբ միայն որ անոր պէս ընդունելութեան ենթակայ չէ, և թղթին մէջ վճարեցէք այս հրամանագրովս բառերը կը նշանակուին, փոխանակ վճարեցէք այս միակ կամ առաջին և կամ երկրորդ փոխանակագրով բառերը նշանակելու :

Հրամանագիրն եւս կը փոխանցուի փոխանակագրի նման :

Ահաւասիկ օրինակ մը հրամանագրի .

Կ. Պոլիս, 30 Ապրիլ 1884

Հ. Վ. Լ. Օ. 255,12

Յառաջիկայ Յոռնիս 30 ին, վճարեցէք այս հրամանագրովս, 'ի հրաման Տր. Գ. Զարարեանի, երկու հարիւր ութսուն եւ ճիւղ յիստ օսմանեան եւ տասն երկու հարիւրորդ, արժեքն կանխիկ ընդունած եմ, եւ անցուցէք 'ի հաշիւ ըստ ծանուցման :

Գ. ԱՇՈՏ

Առ Տէր

Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Իգմիտ



Constantinople, le 30 Avril 1884

M. P. L. T. 285,12


Au 30 juin prochain, payez par le présent mandat, à l'ordre de M. K. Zakarian, la somme de **Livres turques deux cent quatre vingt cinq et douze centimes**, valeur reçue comptant, que vous passerez en compte, suivant l'avis de

A Monsieur  
G. PAKRADOUNI  
Smyrne

A. ACHOD

Հ Ր Ս . Հ Ա Ն Գ

Թ. Մինասեան, 'ի Կ. Պոլիս, 1884 մայիս 5ին կը քաշէ 'ի վերայ Մ. Հրանտի, որ 'ի Կ. Պոլիս Լ. 0. 200ի հրամանագիր մը մէկ ամսուան, 'ի հրաման Ս. Գէորգեանի, որ արժէքը կանխիկ վճարած է անոր :



**ԳՆՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԳ**



**Ը Ն Թ Ա Ց Ի Կ-Հ Ա Յ Ի Ի Ք**

Երբ երկու վաճառականք շարունակաբար գործողութիւններ ընեն իրարու հետ, այն գործողութեանց վերաբերեալ հաշիւն ընթացիկ-հաշիւ կամ հաշուընթաց կ'ըսուի :

Ընթացիկ-հաշուով եղած գործողութիւնք գլխաւորապէս երկու պայմաններով կը կատարուին, այն է՝ կամ առանց տոկոս հաշուելու կամ տոկոս հաշուելով. առաջին պարագային մէջ՝ կ'ըսուի անտոկոս հաշուընթաց, իսկ երկրորդ պարագային մէջ՝ տոկոսաւոր հաշուընթաց :

**ԱՆՏՈՎՈՍ ՀԱՇՈՒԸՆԹԱՑ**

Անտոկոս-հաշուընթացն այն է որ երկու վաճառականաց միջեւ որոշեալ ժամանակի մը մէջ կատարուած գործողութեանց բովան-

դախութիւնը և սոյն գործողութիւններէն մնացած սլարտքը կամ պահանջքը կը ցուցընէ , առանց տոկոս հաշուելու առնուած և տըրուած դումարներուն վրայ :

Դիցուք թէ , Գ. Արսէնեանի և Մ. Գոչունեանի միջեւ , փոխադարձաբար տոկոս չբանեցնելու պայմանաւ , հետեւեալ գործողութիւնները կատարուած ըլլալով , Գ. Արսէնեան սոյն գործողութեանց ընթացիկ-հաշիւը պիտի պատրաստէ :

12 Հոկտեմբեր 1885ին՝ Գ. Արսէնեան Մ. Գոչունեանի 1000 դրշի ասլրանք ծախեց :

4 Նոյեմբեր 1885ին՝ Գ. Արսէնեան Մ. Գոչունեանէն 4061 դրշի չէք մը առաւ :

12 Նոյեմբեր 1885ին՝ Մ. Գոչունեան . Գ. Արսէնեանի վրայ 1000 դրշի չէք մը քաշեց :

10 Դեկտեմբեր 1885ին՝ Գ. Արսէնեան Մ. Գոչունեանի ծախեց 4434 դրշի ասլրանք :

24 Դեկտեմբեր 1885ին՝ Գ. Արսէնեան վճարեց 'ի հաշիւ Մ. Գոչունեանի Մ. Սթավրօին 2000 դրշ :

24 Դեկտեմբեր 1885ին՝ Գ. Արսէնեան Մ. Գոչունեանի վրայ 2500 դրշի չէք մը քաշեց :

Այս գործողութիւնը արդէն օրն օրին տետրակի մէջ արձանագրուած ըլլալով՝ Գ. Արսէնեան Մ. Գոչունեանի անտոկոս ընթացիկ-հաշիւն պատրաստելու համար զանոնք մի առ մի կ'օրինակէ զատ թղթի մը վրայ հետեւեալ կերպով :

Նախ թերթ մը թղթի վրայ զրեւու է ձախ կողմի վերի ծայրը պարտք կամ պարտի եւ նոյն տողին վրայ աջ կողմի ծայրը պահանջք կամ պահանջէ բառերը և այս երկու բառերուն մէջակող ընթացիկ-հաշիւն Մ. Գոչունեանի ընդ Գ. Արսէնեանի, ի կ. Պոլիս բառերը խոշոր գրերով . յետոյ պէտք եղած սիւներն թղթին երկու երեսներուն վրայ ալ դժելով , ինչպէս կ'երեւի օրինակին վրայ , ձախ կողմի երեսին վրայ , այսինքն պարտքին կողմը պէտք է գրել Մ. Գոչունեանի պարտքը կազմող հետեւեալ գործողութիւնները .

12 Հոկտ. 1885 ին իրեն ծախած ասլրանքս . 1000 —

12 Նոյեմ. 1885 ին իւր քաշած չէքը 1000 —

10 Դեկտ. 1885 ին իրեն ծախած ասլրանքս 4434 —

24 » 1885 ին իւր հաշուոյն համար Մ. Սթավրօին վճարածս 2000 —

Եւ աջ կողմի երեսին վրայ , այսինքն պահանջքին կողմը Մ. Գոչունեանի պահանջքը կազմող հետեւեալ գործողութիւնները .

4 Նոյեմ. 1885 ին իրմէ առած չէքս 4061 —

24 Դեկտ. 1885 ին իւր վրայ քաշած չէքս 2500 —

Հաշուընթացի թղթին վրայ մէն մի գործողութիւն իւր թուա-

ՊԱՐՏԻ

ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՅԻԻ Մ . ԳՕԶՈՒՆՆԱՆԻ

ԸՆԴ Գ . ՍՐՍԵՆՆԱՆԻ Ի Կ . ՊՈՒԽՍ

ՊԱՀԱՆՁԷ

1883			
Հոկտեմբ.	12	Իրեն ծախած ապրանքս	1000
Նոյեմբեր	12	Իւր քաշած չէքին համար	1000
Դեկտեմբ.	10	Իրեն ծախած ապրանքս	4434
»	24	Մ. Սթավրոփն վճարածս	2000
			8434
Դեկտեմբ.	24	Մնացորդ հին հաշուոյն	1873

1883			
Նոյեմբեր	4	Իրմէ առած չէքս	4061
Դեկտեմբ.	24	Իր վրայ քաշած »	2500
		Կիւ ՚ի նոր հաշիւ	1873
			8434

Կանոնն այսպէս գրելէ յետոյ , թէ՛ պարտքին և թէ՛ պահանջքին գումարները թղթի մը վրայ զատ զատ գումարելով , պարտքին գումարը կ'ընէ 8434 դրչ և պահանջքինը՝ 6561 դրչ յետոյ այս երկու գումարներն իրարմէ հանելով՝ տարբերութիւնը կ'ընէ 1873 դրչ Ուրեմն Մ. Գոչունեան տակաւին պարտական կը մնայ 1873 , որ կ'ըսուի մնացորդ պարտք . իսկ եթէ ընդհակառակն 1873 դրչ պահանջող ըլլայ , սոյն տարբերութեան կ'ըսուի մնացորդ պահանջք : Մնացորդն եթէ պարտք ըլլայ , պահանջքին կը տարուի կշիռ կամ մնացորդ պարտք ի նոր հաշիւ գրելով . եթէ պահանջք ըլլայ՝ պարտքին կողմը կը տարուի կշիռ կամ մնացորդ պահանջք ի նոր հաշիւ գրելով , որով երկու սիւններուն այսինքն պարտքին և պահանջքին գումարներն իրարու կը հաւասարին : Վերոյիշեալ գործողութեան մէջ , մնացորդը պարտք ըլլալով՝ պահանջքին պէտք է տանիլ , և երկու կողման գումարներն գումարելով գոցելու է տակը զոյգ գիծեր քաշելով : Մնացորդը կամ կշիռը իբր նոր հաշիւ կը փոխադրուի դարձեալ իրեն յատուկ սիւնին մէջ , այսինքն , եթէ մնացորդը պարտք է՝ պարտքին սիւնին մէջ , մնացորդ հին հաշուոյն գրուելով , իսկ եթէ պահանջք է , պահանջքին սիւնին մէջ՝ մնացորդ հին հաշուոյն գրուելով , ինչպէս կ'երեւի վերոյգրեալ օրինակին վրայ :

ՏՈԿՈՍԱԻՈՐ ՀԱՇՈՒՆՆԱՆՑ

Տոկոսաւոր հաշուներացն այն է որոյ գումարներուն վրայ տուիտ կը հաշուեն : Հաշուընթացի մը տոկոսը թէ՛ մի և նոյն սակով կ'ըլլայ փոխադարձաբար , և թէ՛ տարբեր սակերով , այսինքն , մին 9% տոկոս տուած ժամանակ միւսն 12% տոկոս կուտայ :

Տոկոսաւոր ընթացիկ-հաշիւներն երեք եղանակներով կը շինուին որ կ'ըսուին ուղիղ , անուղիղ կամ Լաֆիթ և Համպուրկ :

Առաջին երկու եղանակներն կը գործածուին այն ընթացիկ-հաշիւները պատրաստելու համար , որոց տոկոսի սակը փոխադարձաբար նոյն է , իսկ երրորդ եղանակը այն ընթացիկ-հաշիւները շինելու համար կը գործածուի , որոց տոկոսի սակն տարբեր է :

Ընթացիկ-հաշիւներն ընդհանրապէս որոշեալ ժամանակէ մը վերջը կը դադրին , զոր օրինակ , 5 ամիսն անգամ մը , 6 ամիսն՝ անգամ մը կամ տարին անգամ մը . այսու ամենայնիւ երբ հարկը պահանջէ՝ հաշուընթաց մը տարւոյն ո՞ր և է մէկ օրը կրնայ դադրիլ :

Ուղիղ եղանակ

Ուղիղ եղանակն այն է որով՝ հաշուընթացի մը մէն մի գումարին իրական տոկոսները կը հաշուեն , այսինքն , ճիշդ այն տոկոսներն զորս թղթակիցը կը պարտի և կը պահանջէ :

Սակայն , իւրաքանչիւր գումարի իրական տոկոսներն հաշուելու համար , անպատճառ հարկ է գիտնալ թէ հաշիւն երբ պիտի դադրի . որովհետեւ թէ՛ պարտքին և թէ՛ պահանջքին գումարներուն տոկոսներն սոյն գումարներուն տրուած և առնուած օրերէն սկսելով կը բանի մինչեւ հաշուոյն դադրած օրն :

Իիցուք թէ Պօլիս գտնուող Պ. Սահակեան՝ Փարիզ բնակող Վահան Սմբատեանի հետ առեւտրական յարաբերութիւններ ունի ընթացիկ-հաշուով , տարեկան 6% փոխադարձ տոկոս բանեցնելու պայմանաւ :

1883 զեկտ. 31ին՝ վահան Սմբատեան և Պ. Սահակեան հաշիւներն կարգադրելով, վահան Սմբատեան 4825 Փր. պարտական մընացած էր Պ. Սահակեանի : Վ. Սմբատեան դարձեալ Պ. Սահակեանի ընթացիկ-հաշիւը պիտի պարտաստէ 1884 Յունուար 31 թուականաւ դադրեցնելով : Արդ սոյն թուականէն յետոյ (զեկտ. 31էն) Պ. Սահակեան զրկած է Վ. Սմբատեանի հետեւեալները .

Յունվ 2ին՝ 3000 , Փր.ի փոխանակագիր մը վճարելի Յունվ. 8ին  
 » 6ին՝ 1500 » » » » 20ին

վահան Սմբատեան ալ վճարած է Պ. Սահակեանի իւր վրայ քաջած հետեւեալ թղթերն .

Յունվ. 1ին 2500 Փր.ի փոխանակագիր մը, վճարելի Յունվ. 25ին  
 » 1ին 3600 » » » » 28ին  
 » 1ին 2500 » » » » 31ին  
 » 4ին 2000 » չէք մը » » 4ին

Արդ , նախ և առաջ Վ. Սմբատեան վերոյիշեալ գործողութիւններն կարգաւ կը նշանակէ իրենց տեղերն , ինչպէս կ'երեւի հետեւեալ օրինակին վրայ :

ՏԱՐԵՐԲ ԹԻՒ 1 ԸՅԹԱՅԻԿ—ՀԱՇՈՒՈՅ

ԸՆԹԱՅԻԿ—ՀԱՅԻՒ Պ. ՍԱՀԱԿԵԱՆԻ Ի ԿՊՈՒՅՍ ԸՆԴ Վ. ՍՄԲԱՏԵԱՆԻ Ի ՓԱՐԻՁ

Պ Ա Ր Տ Ի

Տոկոս տարեկան 6 % , դադարեալ 31 Յունուար 1884

Պ Ա Հ Ա Ն Ձ Է

Թուական		Գումար	Ծանօթութիւն		Վճարօր	Օր	Թիւ	Թուական		Գումար	Ծանօթութիւն		Վճարօր	Օր	Թիւ
1884								1884							
Յունուար	1	2500	Քաջած փոխանակագիրը	Յունուար	25			Յունուար	1	4825	Մնացող հին հաշուոյն	Դեկտեմբ.	31		
»	»	3600	»	»	28			»	2	3000	Ղրկած փոխանակագիրը	Յունուար	8		
»	»	2500	»	»	31			»	6	1500	»	»	20		
»	4	2000	» չէքը	»	4										

Սոյն հաշուընթացին դրամագլխոց կշիւը կամ մնացորդը գտնելէ յառաջ , պէտք է նախ հաշուել թէ Պ. Սահակեան որչափ տոկոս կը պարտի կամ կը սահանջէ :

Արդ , կը տեսնուի որ Պ. Սահակեանի պարտքին առաջին գումարը , այն է 2500 Փր.ի փոխանակագիրն վճարուած է Յունվ. 25 ին . Յունվ. 28 էն մինչ 31 յունուար , որ հաշուընթացին դադարման օրն է , 6 օր կայ . ուրեմն Պ. Սահակեան 2500 Փր. ին 6 աւուր տոկոսը պարտական է առ Վ. Սմբատեան , հետեւաբար օրերու յատկացեալ սիւնակին մէջ 6 գրելու է : Պարտքին կողմը գտնուած երկրորդ գումարը , այն է 3600 Փր.ի փոխանակագիրն վճարուած է յունուար 28 ին . արդ յունուար 28 էն մինչեւ 31 յունուար , 3 օր կայ , զոր կը նշանակենք օրերու սիւնակին մէջ : Դարձեալ պարտքին կողմը երեւցած երրորդ գումարն , այն է 2500 Փր.ի փոխանակագիրն վճարուած է յունուար 31 ին , որ ըսել է ճիշդ հաշուեղադարի օրը վճարուած է , հետեւաբար այն գումարը օր չունենալով տոկոս ալ չունի . ուստի թուոց սիւնակին մէջ քուական բառը և օրերուն սիւնակին մէջ գէրօ մը գրելու է : Պարտքին կողմի չորրորդ և վերջին գումարն , որ է 2000 Փր. յունուար 4 ին վճարուած ըլլալով , յունվ. 4 էն մինչ յունվ . 31 , 27 օր կայ . ուրեմն օրերուն սիւնակին մէջ կը գրենք 27 :

Իսկ պահանջքին կողմը գտնուած առաջին գումարն է 4825 Փր. այս գումարը նախորդ հաշուոյն մնացորդն ըլլալով , տոկոսը կը բանի նախորդ հաշուոյն դադարած օրէն , այսինքն , 1883 Դեկտ. 31 էն մինչեւ սոյն հաշուընթացին դադարման օրը , որ կ'ընէ 31 օր , ուստի օրերուն սիւնակին մէջ կը գրենք 31 : Պահանջքին երկրորդ գումարը , այն է 3000 Փր.ի փոխանակագիրն վճարուած է Յունուար 8 ին , որ ըսել է ճիշդ հաշուեղադարի օրը վճարուած է , հետեւաբար այն գումարը օր չունենալով տոկոս ալ չունի . ուստի թուոց սիւնակին մէջ քուական բառը և օրերուն սիւնակին մէջ գէրօ մը գրելու է : Պարտքին կողմի չորրորդ և վերջին գումարն , որ է 2000 Փր. յունուար 4 ին վճարուած ըլլալով , յունվ. 4 էն մինչ յունվ . 31 , 27 օր կայ . ուրեմն օրերուն սիւնակին մէջ կը գրենք 27 :

ըր, այն է 3000 Փր.ի փոխանակագիրն վ. Սմբատեան գանձած է յունվ. 8 ին, Յունվ. 8 էն մինչ Յունվ. 31, 23 օր կայ. ուստի օրերուն սիւնակին մէջ կը գրենք 23: Պահանջքին երրորդ գումարն, այն է 1800 Փր.ի փոխանակագիրն գանձած է յունվար 20 ին, յունվար 20 էն մինչև 31 Յունվ. 11 օր կայ. ուստի օրերուն սիւնակին մէջ կը գրենք 11:

Արդ, հաշուընթացին երկու կողման գումարներուն օրերը այսպէս գտնելէ և օրերուն յատկացեալ սիւնակաց մէջ գրելէ յետոյ, մէն մի գումար կը բազմապատկենք իրեն համապատասխանող օրերուն թուոյն հետ և արտադրեալները թուոց յատկացեալ սիւնակաց մէջ

ԹԻԻ 1 ԸՆԹԱՑԻԿ—ՀԱՇԻԻ

Ա Ռ Ա Ջ Ի Ն

**ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՇԻԻ Պ. ՍԱՀԱԿԵԱՆԻ Ի Կ.**

Պ Ա Ր Տ Ի

Տոկոս տարեկան 6%, դադար

Թուական	Գումար	Ծանօթութիւն	Վճարօր	Օր	Թիւ
1884					
Յունուար	1 2500	Քաշած փոխանակագիրը	Յունուար	23 6	15000
»	1 3600	»	»	28 3	10800
»	1 2500	»	»	31 0	7500
»	4 2000	»	»	4 27	54000
		չէքը			
		Կշիւ թուոց			155275
	10600				235075
1884					
Փետրուար	1 1249 15	Մնացորդ հին հաշուոյն	Յունուար	31	

ԾԱՆՈԹ — Վերոյգրեալ ընթացիկ-հաշուոյն սիւներուն ինչ բանի յատկացեալ ըլլալն չեն նշանակուիր, ինչպէս որ մեր եւս ասկէ վերջը գրուած ընթացիկ-հաշուոց մէջ նշանակած չենք:

կը գրենք: Յետոյ երկու կողման թիւերն զատ զատ կը գումարենք ուրիշ թիւեր մը վրայ, և այս երկու գումարներուն տարբերութիւնը գտնելով կշիւ, թուոց ըսելով կը գրենք զայն՝ նուազ թիւ պարունակող սիւնակին մէջ, որով թէ՛ պարտքին և թէ՛ պահանջքին թուոց գումարներն հաւասար կ'ըլլան:

Թիւ 1 հաշուընթացին պահանջքի թուոց գումարն է 235075  
 Իսկ պարտքին թուոց գումարն է 79800  
 Ասոնց տարբերութիւնը կամ կշիւն է, 155275  
 Կոր կը գրենք պարտքին թուոց սիւնակին մէջ, երկու կողմանց գումարներն հաւասարակշուելու համար:

ՈՒՂԻՂ, ԵՂԱՆԱԿԱԻ

Կ Ե Ր Պ

**ՊՈՒԻՍ ԸՆԴ Վ. ՍՄԲԱՏԵԱՆԻ Ի ՓԱՐԻՁ**

Գրեալ 31 Յունուար 1884

Պ Ա Հ Ա Ն Ջ Է

Թուական	Գումար	Ծանօթութիւն	Վճարօր	Օր	Թիւ
1884					
Յունուար	1 4825	Մնացորդ հին հաշուոց	1883		
»	2 3000	Ղրկած փոխանակագիրը	Դեկտեմբեր	31 31	149575
»	6 1500	»	Յունուար	8 23	69000
		»	»	20 11	16500
	25 85	Տոկոս 'ի վերայ կշուոց թուոց 1552 75			
	1249 15	Կշիւ 'ի նոր հաշիւ			
	10600				235075

Բ. Ս. Լ. Մ.

Փարիզ, 31 Յունուար 1884

Վ. ՍՄԲԱՏԵԱՆ

Թէեւ զատ զատ նշանակած եմք 'ի դիւրութիւն ուսանողին, սակայն գործի մէջ ընդհանրապէս չենք:

Թուոց սոյն տարրերութիւնը կամ կշիւը կը ցուցընէ թէ Պ. Սահակեան 155275 թիւ կը պահանջէ : Այս 155275 թիւը բաժնելով 6000 ով, որ հաստատ բաժանարարն (1) է 0/10 6ի, կ'ուենենանք 25, 85 Ֆր.ի տոկոսիք, զոր կը պահանջէ Պ. Սահակեան : Ուստի պէտք է սոյն գումարն ալ պահանջքին դրամագլխոց սիւնին մէջ գրել :

Յետոյ պարտքին և պահանջքին մասնակի գումարներն զատ թղթի մը վրայ գումարելով կ'ուենենանք պարտքին կողմը	Ֆր. 10600
Պահանջքին կողմը	» 9550,85
<b>Մնացորդ պարտք</b>	<b>Ֆր. 1249,15</b>

որ է 1884 յունվ. 31ին Պ. Սահակեանի ունեցած պարտքը առ վահան Սմբատեան : Այս գումարը կը տանինք կշիւ. 'ի նոր հաշիւ ըսելով նուազ դրամագլուխ պարունակող սիւնակին մէջ, այն է պահանջքին կողմի գումարներուն վրայ կ'աւելցնենք, երկու կողման դրամագլխոց գումարներն հաւասարակշուելու համար : Այս գործողութիւնները կատարելէ յետոյ, երկու կողման դրամագլխոց և թըւոց գումարներն գումարելով զոյգ գծով կը փակեմք հին հաշիւը և մնացորդ գումարը, որ է Ֆր. 1249, 15 փետրուար 1 թուականաւ կը գրեմք Պ. Սահակեանի նոր հաշուոյն պարտքին կողմը, իբրեւ կշիւ հին հաշուոյ, որով Պ. Սահակեանի ընթացիկ-հաշիւն պատրաստուած կ'ըլլայ :

Տոկոսաւոր հաշուընթացներուն վրայ պէտք է միշտ գրել նորա դադարման օրն և տոկոսի սակն, ինչպէս կ'երեւի Պ. Սահակեանի ընթացիկ-հաշուոյն վրայ :

Երբեմն ընթացիկ-հաշուոյ մը տոկոսիքն հաշուելու համար, փոխանակ օրերն իրենց յատուկ գումարներուն հետ բազմապատկելով արտադրեալ թիւերն նշանակելու և ապա անոնց տարրերութեան վրայ տոկոսն գտնելու, իւրաքանչիւր գումարին արտադրած թուոց վրայ անմիջապէս տոկոսն կը գտնեն զատ թղթի մը վրայ, մի առ մի թուոց սիւնակին մէջ կը նշանակեն, յետոյ երկու կողմի տոկոսեաց գումարներուն տարրերութիւնը կը գրեն նուազ տոկոսիք պարունակող սիւնին մէջ՝ գումարներն հաւասարակշուելու համար :

Թիւ 1 հաշուընթացին տոկոսիքն այս երկրորդ կերպովն ալ հաշուելով, միւսնոյն արդիւնքը կը գոյանայ, ինչպէս կ'երեւի յետագայ օրինակին վրայ :

Արնայ պատահիլ որ ընթացիկ-հաշուոյ մը մէջ մէկ կամ մէկ քանի թղթոց պայմանաժամները հաշուեղադարի օրէն յետոյ լրանան, ինչպէս է՝ թիւ 2 հաշուընթացին մէջ՝ Գ. Յակոբեանի պահանջքին

(1) Հաստատ բաժանարարի մասին պէտք եղած տեղեկութիւնը տուած ենք հաշուական գիտելեաց մէջ :



առաջին գումարն , որ է 10735 , 85 . այս գումարին տոկոսը մայիս 15 էն վերջը պիտի սկսի բանիլ , մինչդեռ ընթացիկ-հաշուոյն մնացորդին համար մարտ 31 էն սկսեալ տոկոս կը բանի : Այս գումարը կրնանք դուրս հանել մեր պատրաստելիք հաշուընթացէն , և առաջին հաշիւը գոցելէ վերջը նոր հաշուին անցընել զայն : Այսպէս ըրած ատեննիս՝ հաշուեղադարի օրէն առաջ գտնուող գումարներուն ընթացիկ-հաշիւն ըստ կանոնի պիտի պատրաստէինք և կշիռն 'ի նոր հաշիւ փոխադրելէ վերջը , նոյնպէս 'ի նոր հաշիւ պիտի գրէինք պահանջքին կողմի 10735 , 85 ի գումարը , որոյ վրայ մայիս 15 էն սկսեալ տոկոս պիտի բանէր նոր պատրաստուելիք հաշուընթացին մէջ : Բայց որովհետեւ յաճախ կրնայ պատահիլ որ երկու կողմերն ալ բոլորովին վերջացնել ուզեն հաշիւնին , և գտնուին գումարներ որոց պայմանաժամներն հաշուեղադարի օրէն վերջը լրանան , ուստի հարկ եղած է այնպիսի եղանակ մը գտնել , որ ամէն պարագայի յարմարի և հաստատ կշիռ մը տայ , որով կարելի ըլլայ նոր ընթացիկ-հաշիւ մը բանալ , առանց փակեալ հաշուոյն մի քանի գումարներուն հետ վերստին գործ ունենալու :

Բացատրեմք .

Եթէ հաշուընթացի մը մէջ թղթի մը վճարօրը դադարման օրէն առաջ լրանայ , վճարօրէն մինչեւ դադարման օրն տոկոս կը բանի անոր գումարին վրայ 'ի նպաստ նոյն թուղթը զրկողին . իսկ երբ դադարման օրը լրանայ , այն գումարն ամենեւին տոկոս չբերեր , քան զի օր չկայ : Արդ երբ պայմանաժամը դադարման օրէն վերջը լրանայ , նոյն օրէն մինչ պայմանաժամի օրն տոկոս կը բանի այն գումարին վրայ 'ի նպաստ անոր որու զրկուած է նոյն թուղթը . վասն զի փոխանակ հաշիւը դադրած օրն ստանալու՝ աւելի ուշ պիտի ստանայ թղթին գումարը . հետեւաբար յապաղման օրերուն համար տոկոս կը սլարտի թուղթը զրկող անձը : Այս կերպով՝ թուղթ մը , որոյ պայմանաժամը թէեւ հաշուեղադարէն վերջը կը լրանայ , բայց և այնպէս զրկողին պահանջքին կողմը կ'երեւի : Այս սլարագային մէջ , հաշիւն կարգադրուած օրը գտնուած տոկոսներուն կամ թուոց կշիռը կը փոխուի :

Արդ , հաշուընթաց մը գոցելու ատեն , երբ գտնուի թուղթ մը որոյ պայմանաժամը տակաւին չէ լրացած , հաշուեղադարի օրէն մինչ նոյն թուղթին պայմանաժամը եղած օրերուն տոկոսը թուղթը զրկողին պարտքին պէտք է անցընել : Ուստի սոյն թղթին գումարին թիւը կամ տոկոսը գտնելու է ըստ կանոնի , և անոր օրը և թիւը կամ տոկոսը կարմիր մելանով գրելու է , որպէս զի նոյն կողմի թուոց կամ տոկոսեաց հետ չգումարուի , և կարելի ըլլայ նոյն թիւը կամ տոկոսն որոշել և դիմացի կողմի թուոց կամ տոկոսեաց վրայ աւելցնել՝ կշիռը գտնելէ առաջ , ինչպէս կ'երեւի մեր յետագայ թիւ 2 հաշուընթացին վրայ :

Յի սկզբն զստորոս մկն  
— արցանն մի արցանք — ին  
պատճառս զայն օրն

ԹԻՒ 1 ԸՆԹԱՑԻԿ—ՀԱՇԻՒ ՈՒՂԻՂ ԵՂԱՆԱԿԱԻ  
ԵՐԿՐՈՐԳ ԿԵՐՊ

Յի սկզբն մեծացանք 2 օր  
նր օրն ետեմեկն արցանք զայն  
պատճառս զայն օրն

ԸՆԹԱՑԻԿ—ՀԱՇԻՒ Գ. ՍԱՀԱԿԵԱՆԻ Ի Կ. ՊՈՒԽՍ ԸՆԴ Կ. ՍՄԲԱՏԵԱՆԻ Ի ՓԱՐԻՋ

Պ Ա Ր Տ Ի

Տոկոս տարեկան 6%, դադարեալ 31 Յունուար 1884

Պ Ա Հ Ա Ն Ջ Է

1884 Յունուար	1	2500	Քաջած փոխանակազիրը	Յունուար	25	6	2	50	1884 Յունուար	1	4825	Մնացորդ հին հաշուոյ	1883 Գեկտեմբ. 31	31	24	90		
»	»	3600	»	»	28	3	1	80	»	2	3000	Ղրկած փոխանակազիրը	Յունուար 8	23	11	50		
»	»	2500	»	»	31	0	թուկն.	—	»	6	1500	»	»	20	11	2	75	
»	4	2000	»	»	4	27	9	—	»		25	85	Տոկոս 'ի նպաստ իրեն					
			Կշիւ տոկոսից				23	85					Կշիւ 'ի նոր հաշիւ					
		10600					39	15			1249	15						
1884 Փետրուար	1	1249	Մնացորդ հին հաշուոյն	Յունուար	31						10600	—					39	15

ԹԻՒ 2 ԸՆԹԱՑԻԿ — ՀԱՇԻՒ ՈՒՂԻՂ ԵՂԱՆԱԿԱԻ

ԸՆԹԱՑԻԿ—ՀԱՇԻՒ Գ. ՅԱԿՈՐԵԱՆԻ Ի Կ. ՊՈՒԽՍ ԸՆԴ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ Ի ՓԱՐԻՋ

Պ Ա Ր Տ Ի

Տոկոս տարեկան 5%, դադարեալ 31 Մարտ 1884

Պ Ա Հ Ա Ն Ջ Է

1884 Յունուար	23	2000	Վճարեալ Միհրանին	23	Յունուլ.	68	136000	1884 Յունուար	30	10735	85	Արժէք 2 հակ մետաքսի	15	Մայիս	45	483075	
Փետրուար	5	2000	Իւր քաջածը	29	Փետր.	31	62000	Փետրուար	19	1200	—	Խմ հրամանագիրս	25	Փետրիլ.	35	42000	
»	»	3000	»	16	Մարտ	15	45000	Մարտ	20	5689	40	Արժէք 1 հակ մետաքսի	20	Մարտ	41	62579	
»	»	3000	»	51	»	0	թուական					Կշիւ թուոց				621496	
Մարտ	26	4000	»	»	»	0	»										
			Կարմիր թիւք Պահանջք				483075										
			Տոկոս 'ի վերայ կշուոյ														
		86	30														
		3538	95														
		17625	25				726075										
1884 Ապրիլ	1	3538	Մնացորդ հին հաշուոյն	31	Մարտ			1884 Ապրիլ	1	3538	95	Մնացորդ հին հաշուոյն	31	Մարտ			

Թ. 2 հաշուենթացին մէջ միայն պահանջքին կողմը կար գումար մը , որոյ պայմանաժամը հաշուեղադարի օրէն վերջը կը լրանար . սակայն կրնայ ըլլալ որ հաշուենթացի մը թէ պարտքին և թէ պահանջքին կողմերն գտնուին գումարներ որոց պայմանաժամներն դադարման օրէն յետոյ լրանան , ինչպէս կ'երեւի յետագայ Թ. 3 հաշուենթացին մէջ :

Սոյն հաշուենթացին պարտքին կողմը եղող նոյեմ. 10 թուականնաւ 2000 Փր.ի փոխանակագրին պայմանաժամը հաշուեղադարէն 25 օր յետոյ կը լրանայ , հետեւաբար 2000ին 25 աւուր թիւն , որ է 50000 , և օրուան թիւն , որ է 25 , կարմիր մեյանով կը գրենք , իսկ պահանջքին կողմի վերջին 1776 Փր.ի փոխանակագրին պայմանաժամն ալ հաշուեղադարէն 46 օր յետոյ կը լրանայ . հետեւաբար սոյն գումարին 46 աւուր թիւը կ'ըլլայ 81696 , զորս նոյնպէս կարմիր մեյանով կը նշանակենք :

Արդ , պարտքին կողմի 50000 կարմիր թիւերն պահանջքին կողմի սեւ թուոց վրայ և պահանջքին կողմի 81696 կարմիր թիւերն պարտքին կողմի սեւ թուոց վրայ աւելցնել պէտք էր , որ ըսելէ պարտքին կողմը պահանջքին կողմէն 31696 թիւ աւելի պիտի աւելնար , որ է սոյն երկու կարմիր թուոց կշիռը : Ուստի աւելորդ աշխատութիւն է թէ պարտքին և թէ պահանջքին կողմը միանգամայն աւելցնել 50000 և 81696 կարմիր թիւերը , որք զիրար կշռելով միեւնոյն արդիւնքը կուտան . այլ բաւական է երկու կողմի կարմիր թուանշաններու կշիռը միայն գտնել և նուազ կարմիր թիւ ունեցող կողմի սեւ թուոց վրայ աւելցնել սեւ մեյանով գրելով :

Թիւ 3 հաշուենթացին պահանջքին կողմը կայ	81696 կարմիր թիւ
և պարտքին կողմը կայ	50000 » »
Տարբերութիւնը կամ կշիւն է	<u>31696</u> » »

Թիւ 3 ԸՆԹԱՑԻԿ—ՀԱՇՈՒՆՆԵՐ ԵՂԱՆԱԿԱԻ

ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՄԻԻ Մ . ՅՈՎՍԵՓԵԱՆԻ ԸՆԴ Ս . ՊՕԴՈՍԵԱՆԻ Ի Կ . ՊՈՒՍ

ՊԱՐՏԻ Տոկոս տարեկան 6%, որպէս 31 Դեկտեմբեր 1885 ՊԱՀԱՆՁԷ

1885				1885			
Սեպտեմ.	4	2000	Իրեն զրկուած փոխանգիր	10	Նոյեմբ.	31	102000
»	»	4000	» » »	15	»	46	46000
»	»	4000	» » »	20	Սեպտեմ.	102	408000
»	»	3000	» » »	10	Դեկտեմ.	21	63000
»	»	5000	» » »	25	Հոկտեմ.	67	335000
Նոյեմբեր	10	2000	» » »	25	Յունուար	25	50000
				Կշիռ կարմիր թուոց		31696	
				Տոկոս 'ի վերայ կշուոց			
				107 85		Թուոց 647248	
				26 70		1/2% 'ի վերայ 5544, 10ի	
				17 75		1% » 1766 ի	
		17152	30				
		17152	30				
				1885			
1884	1	8032	Մնացորդ հին հաշուոյն	31	Դեկտեմ.		
						17152	30
						17152	30
						985696	

1885				1885			
Սեպտեմ.	6	2000	Իւր զրկուած փոխանգիր	20	Նոյեմբ.	41	82000
»	»	4000	» » » 1/2%	11	»	50	200000
»	»	4344	» » »	19	»	42	56448
Դեկտեմ.	14	1776	» » » 1%	15	Փետրվ.	46	81696
				Կշիռ թուոց		647248	
				8032 20		Կշիռ 'ի նոր հաշիւ	
		17152	30				
		17152	30				
						985696	

**ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՇԻԻ Գ. ՍԱՀԱԿԵԱՆԻ Կ.**

Տոկոս տարեկան 6 0/0, դադար

ՊԱՐՏԻ

1884	Յունուար	1	2500	Քաշած փոխանակագիրը	25 Յունվ.	25	62500
»	»	»	3600	»	28 »	28	100800
»	»	»	2500	»	31 »	31	77500
»	»	4	2000	» <b>չէբը</b>	4 <b>չէբը</b>	4	8000
			<u>10600</u>				<u>248800</u>
1884	Փետրուար	1	1249	Մնացորդ հին հաշուոյն	31 Յունվ.		
			15				

**ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՇԻԻ Գ. ՅԱԿՈՐԵԱՆԻ**

Տոկոս տարեկան 5% դա

ՊԱՐՏԻ

1884	Յունուար	23	2000	Վճարեալ Միհրանին	25 Յունվ.	3	6000
»	Փետրուար	5	2000	Իւր քաշածը	29 Փետրվ.	40	80000
»	»	»	3000	»	16 Մարտ	56	168000
»	»	»	3000	»	31 »	71	213000
»	»	»	4000	»	»	71	284000
				Կշիռ դրամագլխոց	3625,25	71	257304
				Տկս. 'ի վեր. Կշուոյ թուոց			621496
				Կշիռ 'ի նոր հաշիւ			
			<u>17625</u>				<u>1629800</u>
			25				

(1) Այս հաշուընթացին համար Յունվար 20 թուականը համարած եմք հաշուոյն

**ՊՈՒԽՍ ԸՆԴ Վ. ՍՄԲԱՏԵԱՆԻ Ի ՓԱՐԻՁ**

րեալ 51 Յունուար 1884

ՊԱՀԱՆՁԷ

1884	Յունուար	1	4825	Մնացորդ հին հաշուոյ	31 Դեկ. 83	0	թուական
»	»	2	3000	Ղրկած փոխանակագիրը	8 Յունվ.	8	24000
»	»	6	1500	»	20 »	20	30000
				1275 կշուոյն վրայ		31	39525
				Կշիռ թուոց			155275
				Տոկոս 'ի վերայ կշուոց			
				թուոց			
				Կշիռ 'ի նոր հաշիւ			
			<u>10600</u>				<u>248800</u>
			15				

**Վ. ՊՈՒԽՍ ԸՆԴ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ Ի ՓԱՐԻՁ**

արեալ 31 Մարտ 1884

ՊԱՀԱՆՁԷ

1884	Յունուար	30	10735	Արժէք 2 հակ մետաքսի	15 Մայիս	116	1245260
»	Փետրուար	19	1200	Իմ հրամանագիրս	25 Փետրվ.	36	43200
»	Մարտ	20	5689	Արժէք 1 հակ մետաքսի	20 Մարտ	60	341340
			<u>17625</u>				<u>1629800</u>
			25				
1884	Ապրիլ	1	3538	Մնացորդ հին հաշուոյն	31 Մարտ		
			95				

(1) կղնաւորութեան թուականը :

Ուրեմն 31696 թիւը պիտի աւելցնեմք պարտքին սեւ թուանը-  
շաններուն վրայ, որով կ'ունենանք միեւնոյն արդիւնքը, զոր պիտի  
ունենայինք՝ եթէ պարտքին կողմը 31696 և պահանջքին կողմը  
50000 սեւ թիւ աւելցուցած ըլլայինք :

Վերջապէս պիտի հետեւցնեմք որ երբ հաշուընթացի մը թէ  
պարտքին և թէ՛ պահանջքին կողմերը կարմիր քիւեր ըլլան, փո-  
խանակ՝ պարտքին կողմի կարմիր թիւերը պահանջքին կողմը, և պա-  
հանջքին կողմի կարմիր թիւերը՝ պարտքին կողմը գրելու սեւ մեւա-  
նով, միայն անոնց տարբերութիւնն աւելցնելու է նուազ կարմիր  
թիւ ունեցող կողմի սեւ թուոց վրայ :

#### Անուղիղ եղանակ

Անուղիղ եղանակն այն է որով հաշուընթացի մը թիւերն կամ  
տոկոսներն այնպէս կը հաշուեն, որ երկու կողմերն ալ իրենց ունե-  
ցած թիւերն կամ տոկոսներն իրապէս չեն պարտիր իրարու . այլ  
հաշուեղադարի օրն կը դտնեն այն թիւերն կամ տոկոսներն զորս  
երկու կողմերն իրապէս կը պարտին իրարու :

Այս եղանակին անուղիղ ըսուելուն սլատճառն այս է որ՝ փոխա-  
նակ մէն մի գումարի տոկոսն՝ անոր վճարօրէն մինչեւ հաշուեղա-  
դարի օրն հաշուելու, ընդհակառակն, հաշուոյն սկսած օրէն մինչեւ  
անոր վճարօրն կը հաշուեն :

Սակայն ուղիղ եղանակաւ հաշուընթաց մը պատրաստելու հա-  
մար, նոյն հաշուոյն դադարման թուականն որոշ կերպով կանխաւ  
գիտնալ հարկ է . այս պատճառաւ ուղիղ եղանակը չյարմարիր՝  
չատ թղթակիցներու հետ տոկոսաւոր ընթացիկ-հաշիւներ ունեցող  
սեղանաւորաց, որովհետեւ իրենց թղթակցաց հաշուընթացները յա-  
ռաջմանէ պատրաստելու դիւրութիւն չեն ունենար, որով ամէն ե-  
րեք կամ վեց ամիսն անգամ մը սովորականէն շատ աւելի աշխատու-  
թիւն հարկ կ'ըլլայ : Այս անսլատեհութեան առաջքն առնելու համար  
անուղիղ կամ լաֆիթ (1) եղանակը կը գործածեն : Այս եղանակն սա  
առաւելութիւնն ալ ունի որ կարմիր թուոց տեղի չմնար ամենեւին :

#### Բացատրութիւն անուղիղ եղանակի

Ղիցուք թէ յունուար 31ին թղթակցի մը հաշիւը պիտի դոցենք,  
որ կը բաղկանայ միայն երկու գումարներէ, մին պարտքին կողմը՝  
2000 դրչ. և միւսն պահանջքին կողմը 1000 դրչ. որոց երկուքին  
ալ տոկոսներն կը բանին միեւնոյն օրէն, օրինակի համար, դեկտ. 31  
էն, որ նոյն հաշուոյն սկսած օրն է :

(1) Այս եղանակը ժողովրդական անունն նշանաւոր սեղանաւորն հնարած ըլլալուն,  
Լաֆիթ ալ կ'ըսուի :

Արդ, իբրեւ ընդհանուր կանոն, հաշուեդադարի օրն պէտք է դրամագլխոց փոքր գումարը (1000) մեծ գումարէն (2000) հանել և տարբերութեան (1000) վրայ տոկոս հաշուել այնքան օրուան համար որքան որ տեւած է հաշիւը :

Այս գործողութեամբ թղթակիցը՝ դեկտմ. 31 էն մինչեւ յունուար 31, այն է 31 օրուան համար 2000 ին տոկոսը կը պարտի և դեկտմ. 31 էն մինչ յունվ. 31, այն է 31 օրուան 1000ին տոկոսը կը պահանջէ : Ուրեմն թղթակիցը մնացորդ պարտքին այն է 1000ին միայն 31 օրուան տոկոսը կը պարտի իրապէս :

Այս է ահա անուղիղ եղանակին բոլոր գաղտնիքը :

Անուղիղ եղանակաւ հաշուընթացն այնպէս կը պատրաստուի որպէս թէ սեղանաւոր և թղթակից կանխաւ համաձայնած ըլլան իրարու զրկած գումարներուն վրայ, հաշուոյն սկսած օրէն մինչեւ իւրաքանչիւր գումարի վճարօրն փոխադարձաբար տոկոսներ հաշուել, որպէս զի այդ հաշիւը գոցուած ատեն, ուրիշ գործ մը չմնայ կատարելիք, այլ միայն դրամագլխոց տարբերութիւնը գտնելով անոր վրայ տոկոս հաշուել այնքան օրուան համար որքան օր որ տեւած է հաշիւը, և գտնուած տոկոսը կամ թիւը տանիլ այն կողմը, ուր կը գտնուի դրամագլխոց կշիռը կամ մնացորդը. յետոյ երկու կողմանց թիւերն հաւասարակշռելով, թուոց կշռոյն վրայ հաշուել իրական տոկոսն և աւելցնել զայն այն կողմի դրամագլխոց վրայ, ուր կը գտնուի թուոց կշիռը :

Ոմանք հաշուոյն բացուած օրը, այսինքն առաջին անգամ տրրուած կամ առնուած գումարին թուականէն կ'սկսին փոխադարձ տոկոս հաշուել. բայց այս օրէնք մը չէ. ո՛րեւէ օր մը կրնայ թուական ընտրուիլ, միայն թէ այն օրն առաջին գումարին վճարօրէն առաջ ըլլայ :

Այժմ՝ ըսածներնիս գործնականապէս բացատրեմք՝ ուղիղ եղանակաւ պատրաստուած թիւ 1 հաշուընթացին վրայ :

Պ. Սահակեան կը պարտի Վ. Սմբատեանի 10800 Փր., որ զանազան պայմանաժամներով չորս թղթերէ կը բաղկանայ :

Վ. Սմբատեան ալ կը պարտի Պ. Սահակեանի 9325 Փր., որ նոյնպէս տարրեր պայմանաժամներով երեք գումարներէ կը բաղկանայ :

Եթէ մէկ կողմէն Վ. Սմբատեան՝ Պ. Սահակեանի պարտուց մէն մի մասնական գումարին տոկոսիքը տայ հաշուոյն սկսած օրէն, այսինքն դեկտ. 31էն մինչ իւրաքանչիւր գումարի պայմանաժամը, և միւս կողմէն, Պ. Սահակեան՝ Վ. Սմբատեանի պարտուց մէն մի մասնական գումարին տոկոսիքն տայ, հաշուոյն սկսած օրէն մինչ իւրաքանչիւր գումարի պայմանաժամը. յայտնի է թէ Վ. Սմբատեան՝ հաշուընթացը գոցած ատեն, ուրիշ գործ մը չունի ընելիք, եթէ ոչ երկու կողմանց դրամագլխոց կշիռն առնել, և ո՛վ որ քիչ դրամագը-



լուխ ունենայ՝ շատ դրամագլուխ ունեցողին պիտի վճարէ սոյն կըշ-  
ուոյն 31 աւուր , այսինքն հաշիւը քանի որ որ տեւած է այնքան ա-  
ւուր տոկոսներն :

Արդ , վերոյիշեալ հաշիւներն մի առ մի կատարենք :

Պ. Սահակեան կը պարտի Վ. Սմբատեանի հետեւեալները .

1. 2500 Փր. Վճարօր յունուար 25 .

Որպէս զի Վ. Սմբատեան հաշուեդադարի  
օրն այս դումարին համար տոկոս ստանայ  
հաշուոյն սկսած օրէն՝ այսինքն դեկտ. 31 էն  
մինչեւ դադրած օրը , որ է յունուար 31 ,  
պէտք է որ կանխաւ տայ Պ. Սահակեանի  
2500 Փր.ին 25 աւուր տոկոսը , որոյ թիւը  
կ'ընէ

62500

2. 3600 » Վճարօր յունուար 28 .

Միեւնոյն պատճառաւ պէտք է որ 3600ին 28  
աւուր տոկոսը տայ , որոյ թիւը կ'ընէ

100800

3. 2500 » Վճարօր յունուար 31 .

Պէտք է որ 2500ին ալ 31 աւուր տոկոսը տայ ,  
որոյ թիւը կ'ընէ

77500

4. 2000 » Վճարօր յունուար 4 .

Պէտք է որ 2000ին ալ 4 աւուր տոկոսը տայ ,  
որոյ թիւը կ'ընէ

8000

10600 Փր.

248800

Ուրեմն , Վ. Սմբատեան կը պահանջէ Պ. Սահակեանէ 10600 Փր.  
և կը պարտի անոր 248800 թիւ :

Վ. Սմբատեան կը պարտի Պ. Սահակեանի հետեւեալները .

1. 4825 Փր. Վճարօր դեկտեմբեր 31 .

Դեկտ. 31ը արդէն հաշուոյն սկզբնաւորու-  
թեան թուականն ըլլալով , յորմէ սկսեալ պի-  
տի բանին փոխադարձ տոկոսներն՝ օրի միջոց  
և հետեւաբար տոկոս ալ չկայ .

2. 3000 » Վճարօր յունուար 8 .

Որպէս զի Պ. Սահակեան հաշուեդադարի օրն  
այս դումարին համար տոկոս ստանայ հաշու-  
ոյն սկսած օրէն մինչեւ դադրած օրն , պէտք  
է որ կանխաւ տայ Վ. Սմբատեանի 3000  
Փր.ին 8 աւուր տոկոսը , որոյ թիւը կ'ընէ

24000

3. 1500 » Վճարօր յունուար 20 .

9325 Փր. Նոյնպէս 1500 ին 20 աւուր տոկոսը , թիւը կ'ընէ

30000

54000

Ուրեմն, Պ. Սահակեան կը պահանջէ Վ. Սմբատեանէ 9325 Ֆր. և կը պարտի անոր 54000 թիւ :

Վ. Սմբատեանի դրամագլխոց գումարն է	10800
Պ. Սահակեանի » » »	9325
	<hr/>
Տարբերութիւնն է 'ի նպաստ Վ. Սմբատեանի, Ուրեմն Պ. Սահակեան տակաւին պարտական է տալ Վ. Սմբատեանի՝ երկու դրամագլխոց տարբերութեան, այն է 1275ին 31 աւուր տուկոսը, որովհետեւ հաշուոյն սկսած օրէն մինչեւ վերջացած օրը 31 օր է, որոյ թիւը կ'ընէ արդէն ունեցած պարտքին թիւն է	39525
	<hr/>
Հետեւաբար Պ. Սահակեան պարտական է թիւ	54000
Տարբերութիւն 'ի նպաստ Պ. Սահակեանի	93525
	<hr/>
	155275
	<hr/>
	248800
	<hr/>

Ինչպէս կ'երեւի, Պ. Սահակեանի պահանջած տոկոսները Վ. Սմբատեանի մասնական դրամագլխոց վրայ առնուեցան, և որովհետեւ Վ. Սմբատեանի դրամագլուխները Պ. Սահակեանի պարտքը կը կազմեն, հետեւաբար Պ. Սահակեանի պահանջած թիւերը կամ տոկոսներն հաշուընթացին վրայ Պ. Սահակեանի պարտքին կողմը կ'երեւին. իսկ Վ. Սմբատեանի պահանջած տոկոսները Պ. Սահակեանի մասնական դրամագլխոց վրայ առնուեցան, և որովհետեւ Պ. Սահակեանի դրամագլուխներն իւր պահանջքը կը կազմեն, հետեւաբար Վ. Սմբատեանի պահանջած թիւերը կամ տոկոսներն հաշուընթացին վրայ Պ. Սահակեանի պահանջքին կողմը կ'երեւին :

Ըսել է թէ Պ. Սահակեանի պարտքին կողմի թիւերը՝ պահանջող և պահանջքին կողմի թիւերը՝ պարտական են : Ահա այս պատճառաւ է որ անուղիղ եղանակաւ շինուած հաշուընթացի մը տոկոսներն այն կողմը պէտք է գրել ուր որ կը գրուի թուոց կշիւը :

Արդ, որովհետեւ Պ. Սահակեանի պարտքին կողմի թիւերն, զոր ինք կը պահանջէ, են

	248800
և պահանջքին կողմինները, զոր ինք կը պարտի, են	93525
	<hr/>

Ուրեմն Պ. Սահակեան կը պահանջէ տակաւին

	155275 թիւ
--	------------

զոր % 6ի հաստատ բաժանարարովն բաժնելով կ'ունենանք իբր տուկոս 25, 85 Ֆր.

զոր իւր պահանջքին կողմի դրամագլխոց վրայ աւելցնելէ յետոյ, պարտքին և պահանջքին դրամագլխոց ընդհանուր գումարներուն կշիւն գտնելով, ըստ առաջնոյն կը գոցեմք հաշիւը :

Ուղիղ եղանակաւ ինչ կշիւ որ գտնուեցաւ, անուղիղ եղանակաւ ալ միեւնոյն կշիւն գտանք. հետեւաբար տեւէ հաշուընթաց օրոյ

տոկոսի սակն միեւնոյնն է փոխադարձաբար, թէ ուղիղ և թէ անուղիղ եղանակներով պատրաստուած ատեն՝ միեւնոյն արդիւնքը կուտայ միշտ :

Թիւ 1 անուղիղ հաշուընթացին պարտքին և պահանջքին մէն մի գումարին դէմ գտնուած օրերն զատ զատ առնենք, և ուղիղ եղանակաւ պատրաստուած միեւնոյն հաշուընթացին (տես թ. 110/111) պարտքին և պահանջքին միեւնոյն գումարներուն դէմ գրուած օրերուն հետ գումարենք, զատ զատ ամենուն ալ գումարը պիտի ըլլայ 31, որ է հաշուընթացին տեւողութեան օրերուն գումարը : Եւ անպատճառ այսպէս պիտի ըլլայ. վասն զի քանի որ հաշիւն յունուար 1 ին կը բացուի և յունուար 31 ին կը գոցուի, այն գումարն որոյ վճարօրն յունուար 28 ին է, անուղիղին մէջ 28 օր վերջը վճարուած սեպտեմբ. 28 օր նշանակեցինք դէմը, իսկ ուղիղ եղանակին մէջ՝ 3 օր առաջ վճարուած համարելով, 3 օր նշանակեցինք :

Թիւ 2 հաշուընթացը ուղիղ եղանակաւ շինած ատեննիս կարմիր քուանչան գործածել հարկ եղաւ, վասն զի պահանջքին կողմի առաջին գումարին վճարօրը հաշուեդադարէն, այսինքն մարտ 31 էն վերջը կը լրանայ, մինչդեռ անուղիղ եղանակաւ շինած ատեննիս, հարկ չեղաւ կարմիր թիւ գործածել :

Անուղիղ եղանակաւ պատրաստուած թ. 1 հաշուընթացին նըկատմամբ տրուած բացատրութիւններէն կը հասկցուի թէ բոլոր գտնուած թիւերն կրնան իբր կարմիր թուանչան համարուիլ երկու պատճառներու համար, նախ՝ վասն զի թիւ արտագրող բոլոր գումարներուն վճարօրերն՝ փոխադարձաբար տոկոս հաշուելու համար որոշուած թուականէն՝ այն է հաշիւն սկսած օրէն վերջն են. երկրորդ, վասն զի այս թիւերէն գոյացած տոկոսը սկստք է աւելցնել սոյն տոկոսը բերող թուոց հակառակ կողմը գտնուող դրամագրւխոյն վրայ :

### Համպուրկեան եղանակ

Համպուրկեան (1) հաշուընթացն ընդհանրապէս հետեւեալ կերպով կը շինուի. ամէն անգամ որ երկու կողմանց մին ո՛րեւէ գումար մը զրկէ միւսին, նախ սկստք է նախընթաց կշռոյն տոկոսն կամ տոկոսեաց թիւերն հաշուել՝ նոյն կշռոյն թուականէն մինչեւ երկրորդ գործողութեան օրն, ապա յաջորդ գումարն նախորդէն իջնելով կամ անոր վրայ աւելցնելով՝ նոր կշիւը ցուցնել և այսպէս շարունակել :

Համպուրկեան եղանակն գլխաւորապէս երկու սլարագայից մէջ կը գործածուի. նախ, երբ երկու կողմանց տոկոսեաց սակերն իրարմէ տարբեր ըլլան, և երկրորդ՝ երբ տոկոսեաց տոկոսներն հաշ-

(1) Համպուրկեան եղանակն իւր անունը առած է Համպուրկ քաղաքէն, ուր հնարուած ըլլալ կը թուի տոկոսաւոր հաշուընթացի այս երրորդ եղանակը :

ուել ուզուի : Համալուրկեան եղանակաւ հաշուընթաց մը պատրաստելու համար երկու միջոցներ կան :

Առաջին միջոց

Առաջին միջոցն այն է որ իւրաքանչիւր գումար իւր պայմանաժամին կարգաւ շարելով կը շինեն հաշուընթացը . այսինքն ամենէն մօտ գտնուող պայմանաժամէն սկսելով կարգաւ ամենէն հեռու գտնուող պայմանաժամին կ'երթան :

Ինչուք թէ Գ. Մանուկեան և Ս. Մինասեան ընթացիկ-հաշուով յարաբերութեան մէջ ըլլալով, Ս. Մինասեան՝ Գ. Մանուկեանի ընթացիկ-հաշիւը պիտի շինէ յունիս 30ին :

Գ. Մանուկեանի պահանջքը կը բաղկանայ հետեւեալներէն .

ըլլան օրինաց, ապագային դատարանաց հետ սեւէ գործ մ' ունե-  
ցած ժամանակ իւր դատը պաշտպանելու կարող ըլլալու համար :

Պէտք է որ վաճառականք գոնէ տասը տարի սլահեն իրենց տես-  
տրակները :

Տումարակալութեան համար գործածուած երկու եղանակներն  
(պարզ-տումար և կրկնատումար) իրենց անունը առած են այն կեր-  
պերէն, որով մէն մի գործողութիւն կամ ըստ տումարակալութեան՝  
մէն մի յօդուած յՕրհաշիւ կ'անցնի : Վաճառականական ամէն գոր-  
ծողութեանց մէջ անպատճառ առնող մը և տուող մը կայ :

Արդ՝ պարզ-տումարն այն է, որոյ Օրհաշուին մէն մի յօդուածին  
մէջ այս երկուքէն միոյն անունը միայն նշանակուած է . իսկ կրկնա-  
տումարն այն է, որոյ Օրհաշուին մէն մի յօդուածին մէջ երկուքին  
անուններն ալ միանգամայն նշանակուած են . և ասոր համար է որ  
կրկնատումար կամ կրկնակ-տումար կ'ըսուի :

---

Հ Ա Շ Ի Ի


Տումարակալութեան մէջ հաշիւ ըսելով պէտք է հասկնալ անձի մը  
(կամ իրր գործողութին ընող համարուած իրի մը) տուած և առած  
արժէից մանրամասն վիճակը՝ այնպիսի կերպով մը պատրաստուած,  
որ առնուած արժէքներն ամենքը մէկ սիւնի մէջ գտնուին, և տրը-  
ուածներն ուրիշ սիւնի մէջ : Հաշիւ մը դէմ առ դէմ երկու երեսի  
վրայ կը բացուի տեստրակին մէջ, որոյ ձախ կողմի երեսին ծայրը  
պարտք կամ պարտի, և աջ կողմի երեսին ծայրը պահանջք կամ  
պահանջի բառերը կը գրուին . և ասոնց մէջտեղն ալ այն մարդուն  
կամ իրին անունը, որոյ համար հաշիւ բանալ կ'ուզուի : Աւրեմն ան-

ճի մը կամ իրի մը համար հաշիւ բանալ կը նշանակէ , գրել տեարակի մէջ դէմ առ դէմ երկու երեսին վրայ միանգամայն այն անձին անունը՝ որոյ հետ յարաբերութեան մէջ կը գտնուի հաշիւը բացողն . կամ այն իրին անունը , որոյ մուտքն ու ելքն մասնաւորապէս գիտնալ կ'ուզեմք : Այսպէս բացուած հաշուոյ մը պարտքին կողմը կը նշանակուին յատուկ սիւնի մը մէջ , զոր յետոյ պիտի ցուցնեմք , բոլոր այն արժէքներն , զորս կ'ընդունի նոյն հաշիւը . այսինքն այն անձը կամ իրը որոյ համար բացուած է այն հաշիւը , նոյնպէս պահանջքին կողմը կը նշանակուին բոլոր այն արժէքներն , զորս կուտայ նոյն հաշիւը : Արժէք մը հաշուոյ մը պարտքին կողմը գրելուն կ'ըսուի պարտական ընել նոյն հաշիւը , և պահանջքին կողմը գրելուն կ'ըսուի պահանջող ընել նոյն հաշիւը : Առաջին պարագային մէջ՝ այդ հաշիւը պարտական է , իսկ երկրորդ պարագային մէջ՝ պահանջող :

Այժմ կը մնայ գիտնալ թէ հաշիւ մը երբ պարտական կամ երբ պահանջող ընելու է . կամ թէ ուրիշ կերպով ըսենք , պարտականը կամ պահանջողը ինչպէ՞ս պէտք է գտնալ :

Հետեւեալ ընդհանուր սկզբունքին հետեւելու է միշտ .

Պետք է պարտական ընել այն անձը , որ իւր կամ ուրիշի մը հաշուոյն համար արժէք կ'ընդունի . պահանջող ընել այն անձը , որ կուտայ կամ որոյ հաշուոյն համար արժէք մը կը տրուի :



## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ



### ՊԱՐԳ - ՏՈՄԱՐ

Պարգ-տոմար կ'ըսուի այն եղանակին՝ որ գործողութեան մը մէջ գտնուող երկու կողմանց՝ այն է պարտականին և պահանջողին միայն մին կը նշանակուի Օրհաշուին և Մայր-հաշուին մէջ : Պարգ-տոմարի եղանակը կ'երևի թէ վաճառականութեան մէջ վարկի հաստատութեան հետ սկսած է , որ ատեն վաճառականը պարտական և պահանջող հաշիւներ միայն կը բանար իւր տեարակներուն մէջ . այսինքն , ինչ որ ապառիկ գներ և ինչ որ ապառիկ ծախսեր , զանոնք միայն կ'արձանագրէր իւր տոմարին մէջ . բայց այսօր որ Տոմարակալութիւնը մասնաւոր ուսման կարգն անցած է , Պարգ-տոմարն ալ հետզհետէ կանոնաւորութեան մէջ մտնելով , իւր յառաջադիմութիւնն ունեցած է . թէեւ ապահովագոյն եղանակ մը

չէ, սակայն այս կերպ տետրակներ ունենալն ալ գոնէ ամենեւին չունենալէն միշտ լաւ է :

**ՊԱՐԶ—ՏՈՄԱՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՏԵՏՐԱԿՆԵՐ**

Վաճառական մը իւր գործողութիւնները Պարզ-տոմարի եղանակաւ արձանագրելու համար՝ սլարտաւոր է երկու կարգ տետրակներ ունենալ, այն է, գլխաւոր և երկրորդական տետրակներ :

**ԳԼԽԱԻՈՐ ՏԵՏՐԱԿԻ ՊԱՐԶ—ՏՈՄԱՐԻ**

Պարզ-տոմարի մէջ գլխաւոր տետրակները հետեւեալներն են.

1. Օրհաշի .
2. Մայր-հաշի .

**ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՏԵՏՐԱԿԻ ՊԱՐԶ—ՏՈՄԱՐԻ**

Երկրորդական տետրակներուն թիւը (թէ՛ Պարզ-տոմարին և թէ՛ Կրկնատոմարին մէջ) գործոյն տեսակին համեմատ կրնայ աւելնալ կամ սլակսիլ, բայց ընդհանրապէս ամենէն աւելի գործածականները հետեւեալներն են .

1. Ձեռատետր .
2. Տետր դրամարկդի կամ սնտուկի .
3. Տետր արձանագրութեան գանձելի տոմսակաց .
4. » » վճարելի »
5. Մթերագիր կամ մթերատետր .
6. Տետր ընդօրինակութեան նամակաց .
7. Տետր հրամանի կամ ապսպրանաց . եւայլն :

Այս երկրորդական տետրակներէն միայն ձեռատետրին ձեւը պիտի ցուցնենք հոս . իսկ մնացեալներուն ձեւերը Կրկնատոմարին վրայ խօսած ատեննիս պիտի ցուցնենք, իւրաքանչիւրին համար զատ զատ մանրամասն ծանօթութիւններ տալով, որովհետեւ սոյն տետրակաց ձեւերը փոփոխութիւն մը չեն կրեր Պարզ-տոմարին կամ Կրկնատոմարին մէջ :

**ՁԵՌԱՏԵՏՐ**

Ձեռատետրը սլարգ տետրակ մ'է, որոյ մէջ կ'արձանագրուին մանրամասնարար վաճառատան մը օրական ամէն գործողութիւնները զատ զատ յօդուածներով : Այս տետրակը թէև երկրորդա-




Ֆրանսիայի սահմաններէն առաջին և կարեւորն է. ըստ որում գործողութիւն մը՝ կատարուած պահուն նախ սոյն տեսքին մէջ կը գրուի և յետոյ կ'անցնի միւս տեսքակները: Ուստի պէտք է մեծ ուշադրութեամբ և նոյն իսկ գործողութիւնը կատարուած պահուն անմիջապէս արձանագրել ամէն գործողութիւն. առնուած և ծախուած քարանքներն, դանձուած և վճարուած դրամները, առնուած եւ տրուած տոմսակներն, վաճառատան և տան համար եղած ծախքը, և, վերջապէս ինչ գործողութիւն որ տեղի կ'ունենայ:

Չեռատեսորը բռնելու, այսինքն գործողութիւն մ'անոր մէջ արձանագրելու համար փասնաւոր ուսում մը չկայ. բաւական է որ ճիշդ և յստակ կերպով գրուին բոլոր գործողութեանց մանրամասնութիւնները, վասն զի ամենափոքր զանցառութիւն մը, մտաւոր անկարգ մը կամ սխալմունք մը միւս տեսքակաց մէջ կ'անցնին և ՚ի վերջոյ մեծ անպատեհութեանց և աշխատութեանց տեղի կուտան:

**Ձեռ եւ կազմութիւն Չեռատեսորի**

Չեռատեսորը ամբողջաբար գործածելի միաձայլ թղթոց մեծութեան դիրքով կ'ըլլայ, որոյ իւրաքանչիւր երեսին վրայ երկայնքին, այսինքն վերէն ՚ի վար պէտք է գծուին կամ գծուած ըլլան հինգ սիւներ, մին՝ ձախ կողմի եզերքը և չորսն աջ կողմի եզերքը, հետեւեալ ձեւով.



Ձախ կողմի սիւնին մէջ՝ իւրաքանչիւր յօդուածին քով կը գրուի Օրհաշուին երեսի թիւը, ուր անցած է նոյն յօդուածը. աջ կողմի առաջին երկու սիւնին մէջ կը գրուի գործողութեան մասնական գումարը (լիւրա և զրչ. , եթէ չկրայ է), (Ֆրանք և սանթիմ, եթէ Ֆրանք է). միւս երկու սիւնին մէջ մասնական գումարներուն հաւաքական գումարը (լիւրա , զրչ. , զրչ. փր. Ֆրանք , սանթիմ և):

Ճեռատետրին վաճառման կամ գնման գործողութեանց վերաբերեալ իւրաքանչիւր յօդուած պէտք է պարունակէ հետեւեալ վեց կէտերն կամ մասունքն .

1. Թուական, այսինքն ամիսը, ամսոյն օրը և տարւոյն թուականը, իւրաքանչիւր յօդուածին ճակատը երկու հաւասար ~~տարի~~ գծերու միջեւ :

2. Գործողութեան տեսակը, այսինքն, գնել, ծախել և այլն :

3. Անունը և մականունը և ո՞ր տեղացի ըլլան այն անձին, որոյ հետ եղած է գործողութիւնը :

4. Գործողութեան պայմանները, այսինքն կանխիկ թէ ապառիկ, պարտամուրհակով թէ փոխանակագրով :

5. Ապրանաք տեսներ, որակը, քանակութիւնը, գինը և այլն :

6. Մասնական գումարները, ( եթէ կան ) և հաւաքական գումարը :

Վերոյգրեալ վեց կէտերն աւելի որոշ կերպով հասկցնելու համար, ձեռատետրի օրինակ մը կը դնեմք հոս մէկ յօդուածով, որոյ մասունք նշանակել են թուանշաններով :

### Օրինակ ձեռատետրի

(1) 3 Փետրոսար 1884

<p>(2) Ծախեցի (3) Կարնեցի Պօղոս Գէորգեանի հետեւեալը, (4) վճարելի կանխիկ (5) 2 սնտուկ ըսպարմաչէթ Ա. տեսակ Գ. 600 ՊՂ</p>	<p>(6) 1200</p>
--	-----------------

### ՕՐՀԱՇԻՒ ՊԱՐԶ—ՏՈՄԱՐԻ

Ինչպէս քիչ մ'առաջ տեսանք՝ Օրհաշիւը օրինաց պահանջած տեսակներէն մին է, յորում կ'արձանագրուին՝ վաճառականի մը և սեղանաւորի մը ըրած բոլոր գործողութիւնները զատ զատ յօդուածներով ձեռատետրէն քաղելով : Այս տետրակը մաքուր, կանոնաւոր և յստակ ոճով մը բռնելու է, առանց գրուած մը մեղանով աւրելու :

Ծանօթ. — Սոյն օրինակին վրայ տեսնուած 1. 2. 3. թիւերը բացատրելի վեց կէտերը նշանակելու համար դրած ենք միայն գործի մէջ այդ թիւերը չեն գրուիր ձեռատետրին վրայ :

կամ աւրելէ վերջը գրելու , և զգուշանալու է յաճախ վմեխով քերթելէ որպէս զի՝ ՚ի հարկին դատարանաց ներկայուած ատեն՝ գործողութիւնք խարդախուած ըլլալու կասկածներ չգոյանան : Օրհաշուին ձեռատետրէն ունեցած տարբերութիւնն այս է որ՝ օրհաշուին յօդուածները կսկսին պարտի և պահանջի բառերով , որք կը գրուին պարտական և պահանջող հաշուոց անուան առջեւ , որով մէկ նայուածքով այդ հաշուոյն պարտական կամ պահանջող ըլլալն կ'իմացուի :

Ձեւ եւ կազմութիւն Օրհաշուի

Օրհաշուի տումարը կանոնաւոր կազմով և մեծադիր գրքի մը ձևն ունի . և ընդհանրապէս պատրաստ կը ծախուի : Օրհաշուին իւրաքանչիւր երեսին վրայ երկայնքին պէտք է գծուին կամ գծուած ըլլան հինգ սիւներ , նման ձեռատետրի սիւներուն , որոց մին ձախ կողմը և չորսն աջ կողմը . ձախ կողմի սիւնին մէջ կը նշանակուի իւրաքանչիւր յօդուածին մայր-հաշուոյ քանի՞երրորդ երեսը փոխադրուած ըլլալն , աջ կողմի առաջին երկու սիւներուն մէջ գործողութեան մասնական գումարները . եթէ կան (լիրա , զրչ . եթէ տումարները լիրայի վրայ բռնուած են , ֆրանք սանթիմ . եթէ ֆրանքի վրայ բռնուած է) . իսկ միւս երկու սիւներուն մէջ հաւաքական գումարը :

Օրհաշուին յօդուածները պէտք է պարունակեն հետեւեալ վեց մասուներն .

1. Թուական , այսինքն ամիսը , ամսոյն օրը և տարւոյն թուականը , իւրաքանչիւր յօդուածին ձախատը երկու հաւասար ուղիւ գծերու միջեւ :

2. Պարտականին անունը և տեղը պարտի բառով սկսելով և սահանջողին անունը և տեղը պահանջի բառով :

3. Գործողութիւնը , այսինքն գնումն , վաճառումն և այլն :

4. Գործողութեան պայմաններն , կանխիկ կամ ապառիկ և այլն ըլլալը :

5. Ապրանաց որակը , քանակութիւնը և գիները :

6. Մասնական գումարները , եթէ կան , կամ հաւաքական գումարը :

Այս ըսուածներէն պէտք չէ հետեւեցնել թէ՛ օրհաշուին ամէն գործողութիւնք անպատճառ այս պայմանները պարունակելու են , կան գործողութիւնք , որոց մէջ սոյն պայմաններէն մին կամ աւելին գոյութիւն չունի . ինչպէս սխալ տեսնուին ՚ի կարգին :

Օրհաշուին ամէն էջին վրայ շարունակեալ թիւ դնելու է , որ պատրաստ ծախուածներուն մէջ տպեալ կ'ըլլայ ընդհանրապէս :

Օրհաշուին մէկ երեսը լեցուած ատեն՝ հաւաքական գումարներ-

րուն ընդհանուր գումարը ընելու է և նոյն սիւնին մէջ ստորեւը գրուելու է գումարին քով փոխադրելի բառը աւելցնելով, ապա նոյն գումարը յաջորդ երեսին նոյն սիւնին մէջ փոխադրելու է գումարին առջև փոխադրեալ բառը գրելով: Եթէ սլատակի որ՝ քանի մը մասնական գումարներ ունեցող գործողութիւն մը ամբողջապէս միեւնոյն երեսին վրայ գրուելու տեղ չմնայ, և հարկ ըլլայ անոր մէկ մասը փոխադրել յաջորդ երեսը, այն ատեն նոյն գործողութեան գրուած մասնական գումարներն ալ գումարելու է իրենց սիւնին մէջ, և ապա թէ՛ մասնական և թէ՛ հաւաքական գումարներուն ընդհանուր գումարները փոխադրելու է իրենց յատուկ սիւներուն մէջ, դարձեալ փոխադրելի և փոխադրեալ նոյն բառերը գրելով իրենց առջև:

Թի Ի՞նչպէս անցնելու է Ձեռատետրի մը յօդուածը պարզ-տոմարի Օրհաշուին մէջ

Ձեռատետրի մը յօդուածը պարզ-տոմարի Օրհաշիւն անցնելու համար՝ պէտք է գտնալ նոյն յօդուածին մէջ պարտականը կամ պահանջողն այն կերպով, ինչպէս որ բացատրեցինք ընդհանուր կերպով Տոմարակալութեան վրայ խօսած ատեննիս: Քիչ մ'առաջ իբրև օրինակ տրուած Ձեռատետրին յօդուածն առնելով կը տեսնենք թէ՛ Պօղոս Գէորգեանի ապրանք ծախուեր է, ուրեմն Պօղոս Գէորգեան պարտական է, վասն զի ապրանք աուեր է ուստի Օրհաշուին մէջ պիտի գրուի

ՊԱՐՏԻ ՊՕՂՈՍ ԳԵՈՐԳԵԱՆ և այլն .

Այս կերպով կ'անցնին յ'Օրհաշիւ Ձեռատետրին ամէն յօդուածները:

Օրինակ Օրհաշուոյ պարզ-տոմարի

(1) 3 Փետրուար 1884	
(2) ՊԱՐՏԻ ՊՕՂՈՍ ԳԵՈՐԳԵԱՆ ԿԱՐՆԵՅԻ	(6) 1200
(3) Հետեւեալ վաճառման համար	
(4) Վճարելի կանխիկ	
(5) 2 սնտուկ ըսպարմաչէթ Ա. տեսակ	
Գ. 600 ՂՐԸ	

Ծանօթ. — Օրհաշուին օրինակին վրայ տեսնուած 1. 2. 3. և այլն թիւերը միմիայն բացատրութեան կէտերը նշանակելու համար գրած ենք, գործի մէջ այդ թիւերը չեն գրուիր:

ՄԱՅՐ—ՀԱՂԻԻ ՊԱՐԶ—ՏՈՄԱՐԻ

Մայր-հաշիւը՝ որուն ընթացիկ-հաշուոյ տեսրակ ալ կ'ըսուի, այն տեսրակն է, յորում հաշիւ կը բացուի այն անձանց համար որք Օրհաշուին մէջ կը գտնուին իբր պարտական կամ պահանջող :

Մայր-հաշիւը Օրհաշուին ընդօրինակութիւնն է ուրիշ եղանակաւ գրուած, այսինքն, Օրհաշուին մէջ պարտականի մը պարտական եղած գումարները՝ Մայր-հաշուին մէջ նոյն պարտականին անուամբը բացուած հաշուոյն պարտքին կողմը կ'անցնին. և պահանջողի մը պահանջած գումարներն ալ՝ Մայր-հաշուին մէջ նոյն պահանջողին անուամբը բացուած հաշուոյն պահանջքին կողմը կ'անցնին :

Այս տեսրին Մայր-հաշիւ ըսուելուն պատճառն այն է որ, միւս տեսրակներէն մեծ կ'ըլլայ բաղդատարար :

Ձեւ եւ կազմութիւն Մայր-հաշուի

Մայր-հաշուի տոմարը մեծադիր գրքի մը կը նմանի, բռնուած Օրհաշուի տոմարին համեմատ մեծութեամբ : Այս տեսրը պատրաստ ալ կը ծախուի . և վաճառականի մ'ալ տոմարները շնորհօք և վայելուչ ըլլալու համար՝ պէտք է որ բոլոր տեսրակներն և գլխաւորապէս Օրհաշուի, Մայր-հաշուի և Սնտուկի տեսրակները պատրաստ շինուած առնուի :

Մայր-հաշուի երեսներուն ձեւն այսպէս է : Մայր-հաշուի մէջ հաշիւ մը բանալու համար տոմարին երկու երեսները միանգամայն կը բացուի . ձախ կողմի երեսին վերի ծայրը պարտի, և աջ կողմի երեսին վերի ծայրը պահանջե բառերը գրելու է խոշոր գրերով . հետեւաբար, տոմարին դէմ առ դէմ բացուած երկու երեսներուն վրայ շարունակութեան միեւնոյն թիւը կը գրուի . պարտի և պահանջե բառերուն մէջտեղը կը գրուի խոշոր գրով անունը և տեղն այն անձին, որոյ համար հաշիւ կը բացուի : Այս բառերուն տակը՝ տեսրակին մէկ ծայրէն միւս ծայրը լայնքին հաստ զոյգ կամ մէկ գիծ մը կը քաշուի, և այս գծին տակի անմիջապէս առաջին տողէն հաշիւը կը գրուի . որոյ համար վեց սիւներ գծուած կան թէ՛ պարտքին և թէ՛ պահանջքին երեսներուն վրայ զատ զատ : Սոյն վեց սիւները հաշուոյն վերաբերեալ զանազան մասերը կը պարունակեն հետեւեալ կերպով . իւրաքանչիւր երեսի ձախ կողման առաջին սիւնին մէջ կը գրուի տարին և ամիսը . երկրորդ սիւնին մէջ՝ ամսոյն օրը . երրորդին մէջ՝ որ միւսներէն լայն է, գործողութեան տեսակը որոշ և համառօտ կերպով, որպէս զի միայն մէկ տողի վրայ սեղմի : Չորրորդ սիւնին մէջ՝ Օրհաշուին երեսի թիւը, ուսկից 'ի Մայր-հաշիւ կը փոխադրուի գործողութեան մը յօդուածը . հինգերորդին մէջ՝ վրան, (եթէ տոմարները լիրայի վրայ բռնուած են), կամ Փրանքը (եթէ

Ֆրանքի վրայ բռնուած են) . վեցերորդին մէջ՝ կոտորակները , այսինքն զըշը , հարիւրորդը կամ փարան եւ :

Այս բացատրութիւններն աւելի որոշ հասկցնելու համար՝ իրրեւ օրինակ , Մայր-հաշուոյ երես մը կը դնեմք հոս , ուր փոխադրուած կ'երեւի քիչ մ'առաջ իրրեւ օրինակ տրուած Օրհաշուին յօդուածը :

Օրինակ Մայր-հաշուոյ պարզ-տոմարի

ՊՕՂՈՍ ԳԵՈՐԴԵԱՆ ԿՍՐՆԵՅԻ

1 Պարտի (Չախտիւմ Կերտի) 1 Պահանջի (Աւախտի Կերտի)

1884											
Փետր.	5	Ծախ. ասորնք.	1	600	—						
1.	2.	3.	4.	5.	6.	1.	2.	3.	4.	5.	6.

Պարզ-տոմարի Ձեռատետրին , Օրհաշուին և Մայր-հաշուին ձեւերը և պէտք եղած տեղեկութիւնները տալէ վերջը , այլ եւս հարկ չենք տեսներ զատ Օրհաշիւ և այլն շինել , ըստ որում սոցա գրութեան վրայ ուրիշ դժուարութիւն չմնար . այլ կ'սկսինք ընդարձակօրէն բացատրել կրկնատոմարը , որ ըստ մեզ աւելի կարեւորն է և օգտակար :

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**

**Կ Ր Կ Ն Ա Տ Ո Մ Ա Ր**

Վաճառականի մը կամ ընկերութեան մը ըրած բոլոր գործողութիւնները կանոնաւորապէս և ըստ օրինի՝ գործողութիւնը կատարող երկու կողմանց անունները միանդամայն Օրհաշուին և Մայր-հաշուին մէջ նշանակելով գրելու արհեստին կ'ըսուի կրկնատոմար կամ կրկնակ-տոմար :

Ծանօթ. — Ուսանողաց դիւրութեան համար աւելորդ չեմք համարել կրկնել թէ՛ Մայր-հաշուոյ օրինակին սիւներուն տակ գրուած 1—6 թիւերը միայն սիւներուն ինչ բանի յատկացեալ ըլլալը հասկցնելու համար է , գործի մէջ անտարակոյս այդ թիւերն նոյնպէս և ազախտի և յախտիւմ Կերտի բառերը չեն գրուիր :



Կրկնատումարի եղանակն ամբողջապէս հետեւեալ երկու սկզբանց վրայ կը կայանայ :

1. Օրհաշուին մէջ՝ իւրաքանչիւր պարտական հաշիւ պէտք է որ իրեն համապատասխան պահանջող հաշիւ մ'ունենայ և փոխադարձաբար :

2. Բոլոր հաշիւները հաւաքելով (գումարները) միշտ ճիշդ կշիռ մը արտադրելու են . այսինքն , պարտական և պահանջող հաշուոց ընդհանուր գումարներն իրարու հաւասար ըլլալու են Կրկնատումարի Մայր-հաշուոյն մէջ :

Արդէն տեսանք թէ՛ Պարզ-տումարի Օրհաշուին մէջ ամէն յօդուածի միայն մէկ կողման անունը կար , այսինքն կամ միայն պահանջող և կամ միայն պարտական . մինչդեռ Կրկնատումարի Օրհաշուին իւրաքանչիւր յօդուածին մէջ այդ երկուքն ալ միանգամայն կը գրուին . զորօրինակ , Գրիգորը , որոյ տետրակը պիտի գրուի , Յակոբին ծախեց ապրանք ապառիկ . այս գործողութեան համար պարզ-տումարին մէջ պիտի գրենք .

ՊԱՐՏԻ ՅԱԿՈԲ և այլն .

Կրկնատումարին մէջ պիտի գրենք .

ՅԱԿՈԲ ՊԱՐՏԻ ԳՐԻԳՈՐԻՆ և այլն .

Այս օրինակէն յայտնի կ'երեւի թէ՛ պարզ-տումարի յօդուածին մէջ միայն պարտականին անունը կ'ըլլայ , և պահանջող անունը զօրութեամբ կ'իմացուի . մինչդեռ Կրկնատումարի յօդուածին մէջ երկու անուններն ալ յայտնի կը գրուին : Ուրեմն ըսել կ'ըլլայ թէ՛ միեւնոյն գործողութեան գումարը Մայր-հաշուոյն մէջ երկու անգամ կը փոխադրուի . մին՝ պարտական հաշուոյն պարտքին , և միւսը՝ պահանջող հաշուոյն պահանջքին կողմը . ահա այս կրկին անգամ փոխադրութեան համար է որ Տումարակալութեան այս եղանակը՝ կրկնակ-տումար կամ կրկնատումար անունն առած է :

Կրկնատումարին նոյնպէս և պարզ-տումարին նախատակը միեւնոյնն է , այսինքն , տեղեկացնել վաճառականին իւր թղթակիցներուն հետ ունեցած վիճակը , իւր գործոց ընթացքը , իւր շահն ու վնասը , վերջապէս իւր ստացուածքը : Նաեւ Կրկնատումարի միջոցաւ կրնայ գիտնալ թէ՛ արդեօք տետրակներուն մէջ սխալ գրութիւն մը սարդամծ է , զի եթէ թուոց կամ փոխադրութեան սխալ ըլլայ՝ Մայր-հաշուոյ մէջ բացուած հաշուոց սլարտքին և պահանջքին գումարներն իրարու չեն համաձայնիր , ուսկից յայտնի կ'ըլլայ սխալը : Բայց որովհետեւ Պարզ-տումարին մէջ միայն այն անձանց համար հաշիւ կը բացուի , որոց հետ գործ կ'ընէ վաճառականը , մինչդեռ Կրկնատումարի մէջ այդ հաշիւներէն զատ ուրիշ հաշիւներ ալ բացուելով , (զորս քիչ վերջը պիտի ցուցնեմք) անոնցմով վաճառականը կրնայ իւր վիճակը ճիշդ և որոշ կերպով հասկնալ : Տետրակները Կրկնատումարի ձեւով

գրող վաճառականը՝ շատ առաւելութիւններ կրնայ ձեռք բերել, զորօրինակ . ուզած ժամանակ կրնայ գիտնալ թէ՛ որչափ է իւր գույք շահը ապրանքներէն, և թէ որչափ է իւր տան ծախքը: Ասկէ զատ, աւելի մանրամասնութեան մտնելով՝ եթէ վաճառականին ըրած գործը մի քանի տեսակ ապրանաց վրայ ըլլայ՝ ամէն ատեն կրնայ գիտնալ թէ 10 քանի՞ շահեր է կերպասէն, բամպակէն, և այլնէն . ասոնք գիտնալով և հասկնալով, որ տեսակին վրայ որ աւելի շահ գտնէ՝ այն ճիւղը աւելի կը մշակէ և յառաջ կը տանի, և ընդհակառակն, որ տեսակէն որ վնաս տեսնէ՝ այլեւս կը դադրի այն տեսակ ապրանք բերելէ:

Որովհետեւ արդէն ըսինք (թիւ 155) թէ ամէն գործողութեան մէջ երկու անձ կամ հաշիւ կան կատարող, որոց մին արժէք մը կ'ընդունի, և միւսը զայն կուտայ: Արդ՝ արժէքն ընդունող անձը կամ հաշիւը պարտական կ'ըլլայ զայն տուողին, ուսկից կը հետեւի կրկնատումարի հետեւեալ հիմնական սկզբունքը թէ՛ ընդունող անձը կամ հաշիւը պետք է որ պարտական ըլլայ եւ նոյն ատեն տուող անձը կամ հաշիւը պահանջող:

Կրկնատումարի այս եղանակը նոր հնարուած ժամանակ՝ ամէն գործողութիւն Օրհաշուին մէջ երկու յօդուածով կը գրուէր, որոց մէկուն մէջ՝ արժէքն ընդունող անձը կամ հաշիւը պարտական կ'ըլլար, իսկ երկրորդին մէջ՝ այդ արժէքը տուող անձը կամ հաշիւը պահանջող, բայց յետոյ գիտուելով որ յարաբերութիւն մը կայ այդ երկու հաշիւներուն մէջ, որոց մին կ'ընդունէր և միւսը կուտար, ուստի այս յարաբերութիւնը Օրհաշուին մէջ միայն մէկ յօդուածով նշանակել սկսան հետեւեալ ձեւով, այսինչ պարտի այնինչին, որն որ դարձեալ 'ի վերջոյ հետեւեալ բարեփոխութիւնն կրելով՝ այսինքն պարտին մէջտեղէն վերցուելով, մնաց այսինչ առ այնինչ կամ այսինչ այնինչին:

Այսպէս՝ պարտի.....ին կամ պարզապէս ին բառերով դիւրաւ կը հասկցուի երկու հաշուոց միջեւ եղած յարաբերութիւնը, որոյ իւրաքանչիւրն միւսին ընդդիմակողմը կ'ըսուի, այսինքն պարտական հաշիւը՝ պահանջող հաշուոյն ընդդիմակողմն կ'ըսուի և փոխադարձաբար:

Վաճառականը, որոյ տետրակներուն վրայ կը խօսուի, ամէն գործողութեան մէջ անպատճառ երկու կողման մին ըլլալով, ասկէ կը հետեւի թէ՛ կրկնատումարի Օրհաշուին իւրաքանչիւր յօդուածին մէջ պէտք է երեւայ վաճառականը կամ իբր պահանջող կամ իբր պարտական, բայց յայտնի է որ վաճառականը իւր անունը իբր պահանջող կամ պարտական գրած ատեն, պարզ-տումարի պէս միայն իւր հաշիւը գրած կ'ըլլայ հասկնալու համար այն անձէն ունեցած պահանջքը և միւսին ունեցած պարտքը, որով իւր նպատակին չհասնիր:

Ասոր համար է որ վաճառականին անունն իւր տետրակներուն

մէջ չնշանակուիր , այլ անոր տեղ ուրիշ հաշիւներ կը գործածուին ,  
և վաճառականին տեղ անոնք պարտական կամ պահանջող կ'ըլլան :

### ԿՐԿՆԱՏՈՄԱՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՀԱՇԻՒՆԵՐ

Ինչպէս վերը ըսինք՝ կրկնատոմարի տետրակներուն մէջ վաճառա-  
կանին անունը չյիշուիր , այլ անոր տեղ երկու տեսակ հաշիւներ կը  
գործածուին , որք կ'ըսուին Գլխաւոր և Մասնաւորաց հաշիւներ :  
Այս հաշիւներն՝ որոց մէկ մասը զվաճառականը կը ներկայացնեն ,  
իբր առանձին անձինք իրենց մէջ կ'առնեն ու կուտան . ասոնց միջո-  
ցաւ վաճառականը ուզած ատեն իւրաքանչիւրէն զատ զատ տեղե-  
կութիւններ քաղելով՝ իւր գործոց ընթացքին վրայ ճիշդ գաղափար  
մը կրնայ կազմել :

### ԳԼԽԱՒՈՐ ՀԱՇԻՒՆԵՐ

Որովհետեւ վաճառականական գործողութեանց մէջ սովորաբար  
փոխանակելի նիւթերն են , դրամ , ապրանք , գանձելի տոմսակներ ,  
վճարելի տոմսակներ , և շահ և վնաս (վերոյգրեալ գործողութիւններէն  
յառաջ եկած) , և ասոնք ալ վաճառականին անձին կը վերաբերին .  
և քանի որ գիտենք թէ վաճառականին անունը չպիտի յիշուի , ուստի  
ահա այս նիւթոց համար բացուելիք հաշիւներն են , որ զվաճառա-  
կանը պիտի ներկայացնեն հետեւեալ անուններով .

1. Դրամարկդ կամ Սնտուկ .
2. Ընդհանուր ապրանք .
3. Գանձելի տոմսակք .
4. Վճարելի »
5. Շահ եւ վնաս կամ Շահ եւ գեց .

Վաճառականն իբր օտար անձ մը՝ իւր ստացուածքը այս հինգ  
բարոյական անձանց կը յանձնէ , այսինքն , մէկուն կուտայ իւր դրամն ,  
միւսին իւր ապրանքները , ուրիշի մը իւր թղթապանակն ունեցած  
գանձելի թղթերն , ուրիշ մը եւս իւր վրայ կ'առնու որոշեալ վնասն  
և շահն և այլն :

Այս հաշիւները պարտական կամ պահանջող կ'ըլլան ըստ տե-  
սակի գործողութեան , այսինքն ապրանքի գործողութեան համար՝ ընդ-  
հանուր ապրանքի հաշիւը , դրամի գործողութեան համար՝ դրամարկդի  
հաշիւը , գանձելի կամ վճարելի տոմսակաց համար՝ գանձելի կամ վճա-  
րելի տոմսակաց հաշիւը , իսկ շահ կամ վնասի համար՝ շահ եւ վը-  
նասի հաշիւը :

Բաց ի դրամարկդի հաշուէն՝ միւս չորս հաշիւներն իրենց ստո-  
րաբաժանումունքն ունին , այսինքն՝ այնչափ հաշիւներու կը բաժնուին ,  
որչափ որ գործին տեսակը պահանջէ :

ԴՐԱՄԱՐԿՂԻ ՀԱՇԻԻ

Դրամարկղի հաշիւը պէտք է պարտական ընել բոլոր առնուած ստակներուն համար և պահանջող՝ որ և է պատճառաւ բոլոր վճարուած ստակներուն համար, այսինքն ոսկի, արծաթ դրամներ, և արժէթղթեր, որք իբր դրամ երկրին մէջ կը շրջաբերին, առանց ո և է զեղջի, ինչպէս լուսայագիրք և այլն :

Երբեմն տեսօրին վճարելի փոխանակագրերն և վճարագրերն եւս իբր դրամ այս հաշուոյն կ'անցնեն, բայց աւելի լաւ կ'ըլլայ որ դրամը գանձուելու է վերջը գրուի, վասն զի կրնայ սլատահիլ որ այդ թըղթերը չվճարուին, որ ատեն կրկին անգամ գրութիւն ընել հարկ կ'ըլլայ :

Որովհետեւ ըսինք քիչ մ'առաջ թէ՛ այս և սորա ընկեր միւս հաշիւները զվաճառականը կը ներկայացնեն, ուստի այս կերպ հաշիւ անցնելը դիւրաւ ըմբռնելու համար, հետեւեալ բացատրութիւնները տալ հարկ համարեցինք : Դրամարկղը իբր գանձապետ մը համարելու է, որոյ կը վստահի որ իւր դրամն : Ենթադրելով որ վաճառականը գանձապետ մ'ունի, ուրեմն պէտք է որ անոր համար հաշիւ մը բանայ, գիտնալու համար թէ որչափ է անոր վստահացած գումարը և այն ատեն այս հաշիւը պարտական կ'ընէ պահելու համար տրուած գումարին չափ, վասնզի այս դրամը գանձապետին չվերաբերիր : Բայց եթէ վաճառականը պարտական ըրաւ զգանձապետը անոր յանձնած դրամին համար, ապա ուրեմն անկէ առած դրամին համար ալ պահանջող ընելու է զայն, վասնզի գանձապետը այդ դրամը անոր տուաւ և հետեւաբար այլեւս այն տուածին համար պարտական չէ :

Վաճառականը իւր դրամարկղին հաշիւ մը բանալով, կ'անձնարարէ զդրամարկղը, յորում կը դնէ իւր դրամը. այս հաշիւը պարտական և պահանջող կ'ընէ, իբր թէ գանձապետը պարտական կամ պահանջող կ'ընէ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԻ ՀԱՇԻԻ

Այս հաշուոյն կը վերաբերին ապրանաց վերաբերեալ բոլոր գործողութիւնները : Վաճառականը՝ այս հաշիւը պարտական կ'ընէ, գնած, փոխ առած, փոխանակած, վերջապէս ո՛րեւէ կերպով վաճառատունը մտած ապրանաց համար, իրենց ծախքերովն, պահանջող ընելով միանգամայն զայն տուող անձը : Իսկ պահանջող կ'ընէ ընդհանուր ապրանքի հաշիւը, ծախած, փոխ տուած, փոխանակած, ճրի տուած, գողցուած, այրած կամ վնասուած, վերջապէս ո՛րեւէ կերպով վաճառատունէն դուրս ելած ապրանաց համար, պարտական ընելով միանգամայն զայն առնող անձը կամ հաշիւը :

ինչպէս որ ըսինք Իրամարկի Հաշուոյն համար, ընդհանուր ապրանքի հաշիւն ալ լաւ ըմբռնելու համար, պէտք է վաճառատուներ համարիլ իրր պաշտօնեայ մը, զայն հսկելու պարտաւոր: Այս տեսակէտով, վաճառատուներ սլարտական է վաճառականին բոլոր այն ապրանաց համար, որք հոն գրուած են, մինչեւ որ զանոնք առնէ, և երբ զանոնք առնելու ըլլայ՝ այլեւս վաճառատուներ բան մը պարտական չըլլար անոր: Ուրեմն վաճառականը հաշիւ մը պիտի բանայ վաճառատանը համար, ընդհանուր ապրանք անուամբ: Այս հաշիւը պիտի գրէ այնպէս ինչպէս պիտի գրէր պաշտօնէի մը հաշիւը, որոյ յանձնած է իւր ապրանքը, այսինքն զայն պարտական պիտի ընէ իւր վաճառատուներ մտածներուն համար, և պահանջող՝ անկէ ելածներուն համար:

Ստորաբաժանմունք Ընդհանուր ապրանաց հաշուոյ

Գլխաւոր հաշիւները թուած ժամանակնիս ըսինք թէ՛ բացի դրամարկդէն, միւս չորս հաշիւներն իրենց ստորաբաժանմունքն ունին. այժմ կարգն եկաւ թուել զանոնք հոս ընդհանուր ապրանքի հաշուէն սկսելով:

Ընդհանուր ապրանաց հաշիւը շատ մը ստորաբաժանմունք կրնայ ունենալ, և որք կը պատահին՝ երբ վաճառական մը շատ տեսակ ապրանաց վրայ գործ ընելով, ուզէ մասնաւորապէս գիտնալ իւրաքանչիւր տեսակէն յառաջ եկած շահը կամ վնասը, զորօրինակ, եթէ վաճառական մը թէ՛ թիֆթիկի և թէ՛ տպածոյի գործ ընէ, և ուզէ գիտնալ այս երկու տեսակ գործէն ըրած շահը առանձինն, այն ատեն անոնց համար զատ հաշիւ կը բանայ, թիֆթիկի հաշիւ, տպածոյի հաշիւ անուամբ: Այս ստորաբաժանմունքն ևս՝ ընդհանուր ապրանաց հաշուոյն պէս պարտական և պահանջող կ'ըլլան այնչափի համար՝ որչափի որ դնուին կամ վաճառուին իրենց ծախքերովն:

Ընդհանուր ապրանաց հաշուոյն ստորաբաժանմանց համար թիւ մը չենք կրնար դնել, վասն զի ըստ գործոյն և ըստ պարագային կրնան աւելնալ այլ մենք հոս պիտի դնենք ամենէն գործածականներն:

1. Հաշիւ տպածոյի, բամպակի, թիֆթիկի, եւայլ գանազան ապրանաց.
2. Հաշիւ քօնսոյիտի, երկաթուղւոյ բաժնետոմսի, ընկերութեանց բաժնեթղթոց, եւ այլ արժեթղթոց.
3. Հաշիւ ապրանաց ընկերակցութեամբ կամ  $\frac{1}{2}$ ի,  $\frac{1}{3}$ ի հաշուով.
4. Հաշիւ ապրանաց՝ իմ հաշուոյս յանձնառողջերով կամ անանդով այսինչ անձին քով.
5. Հաշիւ գործարանի.
6. Հաշիւ անշարժ ստացուածոց (իւրաքանչիւրն իւր անունովը, այսինքն՝ տուն, խանութ, հող և այլն).



- 7. Հաշի կարասեաց .
- 8. Հաշի նաւոն .
- 9. Հաշի տօնավաճառի .

Հաշի տպածոյի , բամպակի , թիֆթիկի եւայն

Ինչ որ ըսինք ընդհանուր ապրանց հաշուոյն համար՝ նոյնը պէտք է հասկնալ նաեւ այս հաշուոց համար . այսինքն՝ մտած ապրանց համար պարտական , և ելածներուն համար պահանջող ընել նոյն հաշիւները իրենց մասնաւոր անուամբը :

Հաշի արժեթղթոց

Երբ վաճառական մը արժէթղթեր ալ ունենայ , անոնց համար զատ հաշիւ կը բանայ իւրաքանչիւրին անուամբը , և պարտական կ'ընէ զանոնք գնած գնոյն և վճարած ծախքերուն համար (միջնորդութիւն , և այլն) . և պահանջող կ'ընէ զանոնք , այդ արժէթղթերէն տարեկան կամ վեցամսեայ առած տոկոսին , շահու բաժնին , վիճակահանութենէն շահած գումարին , և կամ ծախած ատեն՝ բռնած զուտ գումարին համար :

Հաշի ապրանց ընկերակցութեամբ , կամ ապրանք  $\frac{1}{2}$  ի ,  $\frac{1}{3}$  ի հաշուով

Երբ վաճառական մը՝ իւր սովորական գործողութիւններէն բացառիկ կերպով մէկ կամ մէկ քանի վաճառականաց հետ որոշեալ գործողութեան մը համար ընկերութիւն մ'ընէ , որոյ արդիւնքը զատ գիտնալ հարկ կ'ըլլայ , այս գործողութեան համար զատ հաշիւ մը պէտք է բանալ վրան նշանակելով ապրանք ընկերակցութեամբ կամ ապրանք  $\frac{1}{2}$  ի հաշուով , եթէ երկու ընկեր ըլլան կէս առ կէսի հաշուով ,  $\frac{1}{3}$  ի հաշուով՝ եթէ ընկերք երեք ըլլան . և  $\frac{2}{3}$  ի հաշուով՝ եթէ ընկերք երկուք ըլլան , բայց մին՝ երկու բաժին ունենայ , և այլն : Եթէ այս տեսակ ընկերութեամբ եղած գործողութիւնը միայն մէկ ընկերը կատարէ , այսինքն սա ապրանքը գնէ և ծախէ միանգամայն , այն ատեն այսպէս պէտք է ընել :

Դիցուք թէ երկու անձի հետ ընկերութեամբ գործողութիւն մը ընել որոշեցինք :

Երբ ապրանքը մենք գնենք և դրամը կանխիկ վճարենք , երկու ընկերներուն հաշիւը՝ իրենց բաժնին համար , և մեր բաժնին համար ալ ընդհանուր ապրանքի հաշիւը պարտական կ'ընենք սնտուկին այնչափ գումար , որչափ որ վճարեցինք ապրանքները գնելու համար : Յետոյ ապրանք ընկերակցութեամբ հաշիւ մը բանալով , որ ամբողջ ընկերութիւնը կը ներկայացնէ , գնուած ապրանց համար վճարեալ



ծախքերուն և մեր յանձնառողջէքին համար պարտական պէտք է ընել զայն :

Ապրանքները մաս առ մաս և կամ ամբողջապէս ծախուած ատեն՝ նոյն հաշիւը պահանջող ընելու է այնչափ գումարի համար, որչափի որ ծախուին :

Արդ՝ այս հաշուոյն կշիռը (այսինքն վաճառման գումարէն ծախքերը հանելով) կ'ըլլայ ապրանաց վաճառման զուտ գումարը, որ պիտի բաժնուի ընկերաց միջեւ, իրենց բաժնին համեմատութեամբ զանոնք զատ զատ՝ իսկ մեր բաժնին համար՝ ընդհանուր ապրանքը յառաջագոյն վճարած գումարնուս չափ՝ և շահ եւ վնասը այս գործողութենէն մեր բաժնին ինկած շահուն համար պահանջող ընելով : (Մանրամասնութիւնք տես Ձեռատետր թ. 132 յօդուածը) : Իսկ եթէ մենք ոչ վաճառման և ոչ գնման գործողութիւնը կատարենք, այն ատեն միայն ընկերութեամբ ապրանաց հաշիւը պարտական պէտք է ընել գնման գումարին մեր բաժնին համար, սովորական պահանջողն եւս նշանակելով :

Ապրանքը ծախուելէն վերջը՝ մեր բաժնին համար այդ հաշիւը պահանջող պէտք է ընել, զայն ծախող ընկերնիս պարտական ընելով :

---

Հաշիւ ապրանաց իմ հաշուոյս ..... անձին քով յանձնառողջէքով  
կամ աւանդով

Երբ վաճառական մը՝ իւր թղթակցին իբր աւանդ և կամ յանձնառողջէքով իւր հաշուոյն ծախելու համար ապրանք զրկէ, ըստ որում աւանդառուն կամ յանձնառուն դեռ ապրանքը չծախած պարտական չհամարուիր, ուստի՝ ապրանք յանձնառողջէքով կամ աւանդով ..... անձին քով ըսելով հաշիւ մը պէտք է բանայ. կամ եթէ զրկած ապրանքը միայն մէկ տեսակ ըլլայ՝ ապրանքին անունովը կրնայ հաշիւ բանալ և ըսել մետաքսներս ..... ին քով կամ կերպասներս ..... ին քով :

Այս հաշիւներն պարտական պէտք է ընել իրենց բուն արժէքին և եղած ծախուց գումարին չափ, և պահանջող՝ այնչափի համար, որչափի որ ծախուի ապրանքը :

Այս հաշուոյն կշիռը, որ շահը կամ վնասը կը ցուցնէ շահ եւ վնասի հաշուով կը գործուի :

(Տես Ձեռատետր թ. 131 յօդուածնիս) :

---

### Հաշիւ գործարանի

Երբ մէկը գործարան մը ունենայ՝ անոր համար մասնաւոր հաշիւ մը կը բանայ, և պարտական կ'ընէ այդ հաշիւը՝ նոյն գործարանին համար գնած գործիքներուն և նախնական նիւթոց համար, հոն աշխա-

տող գործաւորաց վճարած ամսականին , և վերջապէս յիշեալ գործարանին համար ըրած ամէն տեսակ ծախուցը համար . իսկ պահանջող կ'ընէ գործուած և ծախուած ապրանաց գնոյն համար :

Երբ այս հաշիւը գոցել ուզուի , դեռ չծախուած ապրանաց գին մը դնելով , ինչ գումար որ բռնելու ըլլան , այդ գումարին վրայ պէտք է աւելցնել գործիքներուն օրուան արժէքը և ամբողջ գումարին համար գործարանի հաշիւը պահանջող ընելու է , և այդ հաշուոյն կշիռը , որ շահը կամ վնասը կը ցուցնէ , շահ եւ վնասի հաշուով կը գոցուի :

Իսկ միայն գործարանատէր եղողը կրնայ զատ զատ հաշիւներ բանալ , ապրանքի հաշիւ , գործաւորաց հաշիւ , գործիքներու և այլնի հաշիւ ըսելով :

### Հաշիւ անշարժ ստացուածոց (1)

Երբ վաճառական մը մէկ կամ աւելի անշարժ ստացուածքներ ունենայ , թէ՛ ստակով դնած և թէ՛ մէկէ մը ժառանգած , զատ հաշիւ մը կը բանայ անշարժ ստացուածք անուամբ . իսկ թէ որ անոնց վրայ զատ զատ մանրամասն տեղեկութիւն ունենալ ուզէ՝ իւրաքանչիւրին համար մասնաւոր հաշիւ մը պէտք է բանալ ստացուածքին անուամբը . զորօրինակ տուն 'ի Բերայ ..... փողոց ք ..... վաճառատուն 'ի ..... փողոց ք ..... կամ ագարակ 'ի Եայօվա :

Այս հաշիւը պարտական կ'ըլլայ ստացուածքի մը ծախու աւուած գումարին չափ և անոր վրայ եղած ամէն ծախուց համար , այսինքն նորոգութիւն , տուրք , ապահովագրութիւն և այլն . իսկ պահանջող կ'ըլլայ բերքերուն հասոյթին համար՝ եթէ այդի պարտէզ և այլն է . և վարձքին համար՝ եթէ տուն , վաճառատուն և այլն է , եթէ ծախուելու ըլլան՝ բռնած գումարին չափ . տարւոյն վերջը ընդհանուր կշիռի ատեն օրուան արժէքին համար . տարբերութիւնը շահեւ վնասի հաշուով գոցելով : Զորօրինակ , Բերայ տուն մը գնեցի 700 լիրայի . տարուան մը համար վարձու տուի 60 լիրայի , միեւնոյն միջոցին ուրիշ ծախքեր ալ ըրի 30 լիրայի . նոյն տարւոյն վերջը՝ տունը գնահատելով 600 լիրա արժէք մը դրի : Արդ , որովհետեւ տունը առինք 700 լիրայի , ուստի նոյն տան հաշիւը պարտական կ'ընեմ 700 լիրայի համար . յետոյ տանը բերած վարձքին 60 լիրային համար պահանջող կ'ընեմ . իսկ նոր ըրած ծախուցս համար դարձեալ 30 լիրայի պարտական կ'ընեմ : Արդ՝ ընդհանուր կշիռի ատեն կշիռը կը գտնեմ

(1) Անշարժ ստացուածք կ'ըսուին հող , այգի , ագարակ եւ այլն և ամէն տեսակ շէնք ու հաստատութիւնք , որ շինուած են հողի վրայ ու տեղէ մը ուրիշ տեղ չեն փոխադրուիր :

որ է 670 , բայց որովհետեւ տունը 600 լիրայի գնահատեցինք , ուստի տարբերութիւնը 70 լիրա շահեւծնասի հաշուոյն անցնելով , մնացեալ կշիռը կ'ըլլայ 600 լիրա , որ է տանը նոր արժէքը :

### Հաշի կարասեաց

Եթէ վաճառական մը միայն մէկ բանի ածան կարասիներու և գործիքներու , զորօրինակ , պարզ աթոռ , գրասեղան , մամուլ և այլնի պէտք ունենայ , զանոնք գնած ատեն՝ անոնց արժէքն ընդհանուր ծախուց պարտքին կ'անցնէ . եթէ սուղ բաներ ըլլան , զորօրինակ , երկաթեայ դրամարկղ , թաւշապատ բազմոցներ և ուրիշ այս կարգի արժէքաւոր կարասիներ , հաշի կարասեաց անուամբ հաշիւ մը պէտք է բանայ , և զայն պարտական ընէ առնուած կարասեաց արժէքին համար . և 'ի վերջոյ եղած նորոգութեանց համար . 'ի հարկին եթէ ծախուելու ըլլայ , բռնած գումարին համար պահանջող ընելու է : Ընդհանուր կշռի ատեն՝ նոյն կարասեաց օրուան արժէքը գնահատելով , այս հաշուոյն կշռոյն և նոր արժէքին միջեւ եղած տարբերութիւնը շահեւծնասի հաշուով կը գոցուի անշարժ ստացոնածոց հաշուոյն պէս : Օրուան արժէքով ըսինք , վասն զի կարասիքներն և գործիքներն գործածուելով կը հիննան . և ամէն տարի անոնց արժէքը կը նուազի . ուստի լաւ կ'ըլլայ և սովորութիւն ալ է արդէն այս կարգի կարասեաց և գործիքներու արժէքին վրայ % 10-20 զեղջ մ'ընել ամէն տարի :

### Հաշի Գաւռ

Նաև ունեցող կամ նաև մը գնող վաճառականը՝ զատ հաշիւ մը կը բանայ նաևուն անուանովը Հաշի ..... Գաւռ ըսելով :

Այս հաշիւը պէտք է պարտական ընել նաևը գնելու համար վճարուած ստակին , մէջի կարասեաց , նաևաստեաց ամսականին , ապահովագրութեան և այլ ծախուց համար . իսկ պահանջող պէտք է ընել՝ նաևուն վարձքէն և ճանապարհորդներէն եղած հասոյթին համար :

Երբ նաևը ծախուի , պահանջող ընելու է այս հաշիւը բռնած գումարին համար . և կշիռը գոցելու է շահեւծնասի հաշուով :

Տարեկան հաշուոյ ատեն՝ նաևուն և կարասեաց օրուան արժէքը դնելով , մնացորդը շահեւծնասով գոցելու է . նաևուն օրուան արժէքը դնելու է ըսինք , վասնզի նաևը մէկ տարուոյ միջոցին մէջ կը հիննայ , և միշտ առնուած գնոյն վրայ % 10 կամ 20 պակաս կ'արժէ :

### Հաշի Տօնավաճառի

Երբ վաճառականը տօնավաճառները ծախուելու համար ապրանք դրկէ , տօնավաճառին անուանովը այսինքն հաշի ..... տօնավաճառի

ըսելով հաշիւ մը կը բանայ և զայն պարտական կ'ընէ զրկած ապրան-  
նաց արժէքին և փոխադրութեան համար եղած, ինչպէս նաեւ տո-  
նավաճառը զրկած իւր պաշտօնէից հոն ըրած ծախուցը համար : Իսկ  
պահանջող կ'ընէ՝ ապրանաց վաճառման արժէքին և չծախուելով  
ետ բերուած ապրանաց արժէքին համար, և կշիռը, որ շահը կամ  
վնասը կը ցուցնէ, շահեւ վնասի հաշուով կը գոցուի :

### ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՅ ՀԱՇԻԻ

Այս հաշուոյն կը վերաբերին բոլոր այն թղթերն որոց փոխա-  
րէնը պիտի ստանանք, ինչպէս են վաճառականին իւր թղթակից-  
ներուն վրայ քաշած և ընդունուած փոխանակագրերը, հրամանա-  
գիրները, և ապրանքի փոխարէն առնուած ՚ի հրաման կամ բաց տոմ-  
սակներն, և ուրիշ ստակով գնուած փոխանակագրերը : Այս հա-  
շիւը պէտք է պարտական ընել ուրիշներէ առնուած և նոյն իսկ  
վաճառականին իւր քաշած թղթոց համար, և պահանջող՝ ուրիշնե-  
րու տուած կամ ծախած և կամ վճարօրին իւր ձեռօք գանձած-  
ներուն համար :

Գիտնալու համար թէ ինչպէս պիտի բռնուի գանձելի տոմսակաց  
հաշիւը, լաւ կ'ըլլայ դիտել թէ՛ վաճառականը առած այս կարգի  
թղթերն իւր թղթապանակն դնելով, զայն կը համարի իբր մի պաշ-  
տօնեայ, որոյ յանձնուած ըլլայ այդ թղթոց հոգը : Այս տեսակէ-  
տով՝ պաշտօնեայն պարտական է բոլոր այն թղթոց համար զորս  
վաճառականը կը յանձնէ անոր, հետեւաբար վաճառականը պար-  
տաւոր է անոր համար հաշիւ մը բանալ, որպէս զի իրեն տուած  
թղթերուն (այսինքն թղթապանակն մտածներուն) համար պարտա-  
կան ընէ . վասն զի պաշտօնեայն արդարեւ պարտական է այդ թղթե-  
րուն համար : Բայց եթէ վաճառականը պարտական ըրաւ զպաշ-  
տօնեայն բոլոր այն թղթերուն համար, զորս պահելու համար ա-  
նոր տուած էր, ապա ուրեմն անկէ առած թղթոց համար ալ պէտք  
է պահանջող ընել, վասն զի այլեւս պաշտօնեայն պարտական չէ այն  
թղթոց համար, զորս վաճառականը թղթապանակէն կը հանէ փո-  
խարէնը գանձելու համար :

Ուրեմն վաճառականն իւր թղթապանակին հետ այնպէս կը վարուի  
իբր թէ պաշտօնէի մը հետ . և իւր թղթապանակին համար հաշիւ  
մը կը բանայ գանձելի տոմսակք կամ գանձելի թղթեր ըսելով :

Գանձելի տոմսակաց հաշիւը կրնայ իւր ստորաբաժանմունքն ու-  
նենալ, այսինքն փոխանակագրի հաշիւ, տոմսակաց հաշիւ և այլն .  
բայց այսչափ մանրամասնութեան մտնելն աւելորդ աշխատութիւն  
է : Արդէն Պոլսոյ մէջ շատ վաճառականք՝ ըրած առեւտուրներուն  
համար առած հրամանի կամ բաց տոմսակներին զանոնք տուողին հա-  
շուոյն չեն անցներ մինչեւ որ չգանձեն . իսկ եւրոպական փոխա-

Նակագրոց համար, փոխանակագրի հաշիւ անունով զատ հաշիւ մը  
կը բանան : Բայց այն սեղանաւորք՝ որ եւրոպական զանազան տե-  
սակ փոխանակագրի վրայ շատ գործ կ'ընեն, նոցա իւրաքանչիւրէն  
թէ ըրած շահերնին առանձինն գիտնալու, և թէ՛ նոցա մուտքն ու  
էլքն հասկնալու համար, իւրաքանչիւր տեսակ փոխանակագրի հա-  
մար զատ հաշիւ կը բանան, զորօրինակ . սթէուլին լիբայի փոխանա-  
կագրոց համար, Սթեուլինի փոխանակագիր և Ֆրանքի փոխանակագ-  
րոց համար, Ֆրանքի փոխանակագիր և այլն, որով ուզուած ժամա-  
նակ կրնան գիտնալ թէ՛ թղթապանակն ո՞րչափ Ֆրանքի, և ո՞րչափ  
սթէուլին լիբայի փոխանակագիր ունին :

### ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՅ ՀԱՇԻԻ

Այս հաշուոյն կը վերաբերին վաճառականին՝ ապրանքի կամ ուրիշ  
հաշուոյ մը փոխարէն ստորագրած տոմսակներն, և ընդունած փո-  
խանակագրերը, որոց համար այս հաշիւը պէտք է պահանջող ընել,  
իսկ պարտական պէտք է ընել՝ պայմանաժամուն վճարուածներուն  
համար :

Առաջին նայուածքով՝ այս տեսակ վճարելի տոմսակաց հաշիւն  
կանցնելու մէջ կը շուարի մարդ : Այնպէս կը կարծուի թէ՛ երբ մէ-  
կու մը տոմսակ մը ստորագրելով տանք, վճարելի տոմսակաց հա-  
շիւը պարտական ընելու է, վասն զի անոր գումարը պարտական ենք,  
և պահանջող ընելու է, երբ վճարելու ըլլանք, մինչդեռ ասոր հա-  
կառակն է : Չուարելու համար թէ՛ վճարելի տոմսակաց հաշիւը  
երբ պարտական ընելու է և երբ պահանջող, լաւ կ'ըլլայ դիտել  
որ վճարելի տոմսակներն վաճառականութեան մէկ տարերքն են, զորս  
պէտք է համարիլ իբր տեսակ մը ապրանք, զոր կուտանք մեր գնած  
ապրանքի փոխարէն : Հետեւաբար, այն վաճառականը՝ որ ապրանք  
կը գնէ և անոր արժէքն այս տեսակ տոմսակաւ կը վճարէ, արդարեւ  
անպարտ կը համարուի այն անձին նկատմամբ, որոյ համար տոմսակն  
ստորագրած է . և վճարելի տոմսակաց հաշիւը, որ իբր ընդհանուր  
ապրանքի հաշիւ կրնայ համարուիլ, պահանջող և պարտական կ'ըլլայ :

Ըսածնիս աւելի որոշ հասկցնելու համար օրինակով մը բացատ-  
րենք . ենթադրենք թէ Յակոբ՝ Գրիգորէն 200 լիբայի ապրանք ա-  
ռաւ և վճարեց զայն անոր հրամանին տոմսակ մը տալով : Այս ա-  
ռեւտուրին մէջ արդարեւ փոխանակութիւն մը կայ :

Գրիգոր 200 լիբայի ապրանք տուաւ և Յակոբէն առաւ նոյնչափ  
գումարի համար տոմսակ մը . երկու կողմն ալ անպարտ են : Այս  
վերաբով՝ Յակոբ վճարած եղաւ : Ուստի այս գործողութիւնը իւր  
տեսարակներուն մէջ արձանագրելու համար, Յակոբ՝ ընդհանուր  
ապրանքի հաշիւը պարտական պիտի ընէ և վճարելի տոմսակաց  
հաշիւը պահանջող :



Այս հաշիւն ալ կրնայ իւր ստորաբաժանմունքն ունենալ, վճարելի տոմսակներ, վճարելի փոխանակագիրք եւ անուամբ :

ՇԱՀԵԻՎՆԱՍԻ ՀԱՇԻԻ

Այս հաշուոյն միջոցաւ վաճառականը կը գիտնայ իւր ըրած շահն ու վնասը որոշեալ ժամանակի մը մէջ : Այս հաշիւը պարտական կ'ըլլայ եղած վնասին, և պահանջող՝ եղած շահուն համար : Այս հաշուոյն պարտքին գումարը՝ վնասը, և պահանջքին գումարը՝ շահը կը ցուցնէ, հետեւաբար կշիռը կ'ըլլայ զուտ շահը կամ վնասը :

Շահեւվնասի հաշիւն ի՞նչպէս գրելը լաւ հասկնալու համար, այդ հաշիւը պէտք է համարիլ իբր ոք արդար և խիստ, որ մեր յաջողութեան համար զմեզ կը վարձատրէ՝ և մեր անյաջողութեան համար կը պատժէ, պատճառներն ինչ որ ալ ըլլան : Ուրեմն, յաջողութեան ատեն մեզի շահ կուտայ, որուն համար պէտք է պահանջող ընել զինքը, իսկ անյաջողութեան ատեն վնասին գումարը կ'առնէ մեզմէ, որուն համար պէտք է պարտական ընել : Առաջին պարագային մէջ՝ մեր դրամագլուխը կ'աւելցնէ, իսկ երկրորդին մէջ՝ զայն կը պակսեցնէ :

Ստորաբաժանմունք Շահեւվնասի

Այս հաշիւը կրնայ ստորաբաժանիլ այնչափ հաշիւներու, որչափ տեսակ շահու կամ վնասի հաշիւներ ըլլան : Մենք պիտի դնենք հոս անոնցմէ գլխաւորները :

1. Հաշիւ ընդհանուր ծախուց .
2. » անճնական »
3. » տան »
4. » տոկոսի կամ տոկոս եւ գեղջի .
5. » յանճնառողջքի .
6. » ժառանգութեան .
7. » մարսի .

Այս հաշիւները կը գործածէ վաճառականը՝ երբ ուզէ գիտնալ իւր ծախուց մանրամասնութիւնը, այսինքն թէ՛ որոշեալ ժամանակի մը մէջ որչափ ծախք ըրեր է իւր անճնականին, տանը և մարսի համար :

Հաշիւ ընդհանուր ծախուց

Այս հաշիւը պարտական ընելու է այն ծախուց համար, որը շարունակ ամէն տարի կը նորոգուին, որպիսի են, վաճառատան վարձք, պաշտօնէից ամսական, և ուտելիք, (եթէ ըլլայ) ճամբորդութեան



ծախք գործի համար, ապրանաց համար հրդեհի դէմ ապահովագրութեան, վաճառատան պաշտօնէից տրուած տարեկան պարգեւ, վառելու փայտ և ճրագ, թղթատարի և՛ ծախքեր :

Այս հաշիւը կը գոցուի շահեւ վնասի հաշուով :

### Հաշիւ անճնական ծախուց

Վաճառականն այս հաշիւը պարտական կ'ընէ իւր անճնականին ըրած ծախքերուն համար, որպիսի են, հագուստի, կերակրոյ, ըզբօսանքի համար կառքի, ձիու, այլեւայլ անճանց տուած ողորմութիւններուն և նուէրներուն համար : Այս հաշիւն ալ շահեւ վնասի հաշուով կը գոցուի :

### Հաշիւ տան ծախուց

Ահա այս այն հաշիւն է՝ որ վաճառականական օրինագրքին 3<sup>07</sup> յօդուածին տրամադրութեան մէկ մասին կը համապատասխանէ . այսինքն, սովաւ վաճառականը կը գիտնայ իւր տանը համար եղած ամսական այլեւայլ ծախուց գումարը . զորօրինակ, ուտելիքի ծախք, սպասաւորաց ամսական, տան վարձք, տան կարասիք, և՛ որոց համար այս հաշիւը պէտք է պարտական ընել :

Այս ալ շահեւ վնասով կը գոցուի :

### Հաշիւ տոկոսի

Այս հաշիւն ընդհանրապէս սեղանաւորք և այն վաճառականք կը բանան, որք տոկոսի վերաբերեալ գործողութիւններունին : Այս հաշիւը պէտք է պարտական ընել վաճառականին հաշուոյ մը համար տուած տոկոսին, և զեղչել տուած թղթոց զեղչերուն համար, իսկ պահանջող ընելու է՝ առած տոկոսներուն և զեղչած թղթերուն համար վար դրած զեղչերուն համար : Այս ալ միւսներուն պէս շահեւ վնասով կը գոցուի :

### Հաշիւ յանճնառողջեքի

Այս հաշիւը կը բանայ յանճնառու վաճառականը, որով միայն կ'ընայ գիտնալ իւր շահը : Առած յանճնառողջէքին համար այս հաշիւը պահանջող կ'ընէ, և շահեւ վնասով կը գոցէ :

### Հաշիւ ժառանգութեան

Այս հաշիւն այն ատեն կը բացուի, երբ մէկը ժառանգութիւն մ'ունենայ, որոյ գործը կամաց կամաց և մաս առ մաս կարգադրուիլ հարկ ըլլայ :

Այս հաշիւը պէտք է պահանջող ընել հետզհետէ այդ ժառանգութենէն առնուած արժէքներուն համար, զորօրինակ, դրամ, կալ-

ուած , կարասիք , և զանազաններէ գանձուած պահանջք և այլն . իսկ պարտական պէտք է ընել՝ եղած ծախուց , կտակաւ թողեալ պարգեւաց և մեռնողին ունեցած պարտուցը համար : Երբ ժառանգութեան պահանջքը գանձուին և պարտքերը վճարուին , այս հաշուոյն կշիւը դրամագլխի հաշուոյն կ'անցնի :

Եթէ ժառանգութեան մը գործը մանրամասնութիւն չունենայ , և մէկ անգամով ձեռք բերուի , այդ անուամբ հաշիւ բանալն աւելորդ է : Այս տեսակ պարագայի մէջ՝ ժառանգութեան զուտ գումարը ուղղակի դրամագլխի հաշուոյն պէտք է տանիլ :

Հաշիւ մարսի

Այս հաշիւը կարեւոր է այն վաճառականին համար , որ օտար երկրէ ապրանք բերել տալով , անոնց համար վճարած մաքսին որքանութիւնը գիտնալ կ'ուզէ : Այս հաշիւը պարտական ընելու է մաքսի համար վճարուած գումարին և ապրանայ փոխադրութեան աւթիւ եղած ծախուց համար :

Այս ալ շահեւէնասի հաշուով կը գոցուի :

ՄԱՍՆԱԻՈՐԱՑ ՀԱՇԻՒՆԵՐ

Ինչպէս պարզ-տոմարին , նոյնպէս նաեւ կրկնատոմարին մէջ , վաճառականը՝ հետերնին շարունակ գործ ըրած մարդոց համար իրենց անուանովը զատ զատ հաշիւներ կը բանայ , զորս պահանջող պէտք է ընել՝ անոնցմէ առած արժէնիւթոց համար , իսկ պարտական՝ անոնց տրուած արժէնիւթոց համար :

Այս հաշիւն ալ գլխաւորաբար հետեւեալ ստորաբաժանմունքները կ'ունենայ :

1. Հաշիւ գանազան պարտականաց եւ պահանջատեարց
2. » մեր Պ. այսինչի .
3. » » » » դրամագլխոյ .
4. » » » » տոկոսաւոր ստակին .
5. » » » » ընթացիկ-հաշիւը .
6. » » » » ճամբորդութեան
7. » ..... անձին , իւր ապրանքի կամ դրամական հաշիւը .
8. » » սնանկացող եւ կասկածելի անձանց

Հաշիւ գանազան պարտականաց եւ պահանջատեարց .

Կը պատահի շատ անգամ որ վաճառական մը մէկու մը հետ առաջին անգամ քիչ կամ շատ գործ մ'ընէ , և որոյ հետ շարունակաբար գործ պիտի ընէ թէ ոչ կանխաւ չկրնալով դիտնալ , այն անձին և այն կարգի անձանց համար՝ իւրաքանչիւրին զատ զատ

հաշիւ բանալով իւր Մայր-հաշիւը լեցնել չուզեր շատ մը հաշիւներով, որք չուտ մը ամբողջ տետրակը պիտի գրաւեն, ուստի այս անպատեհութեան դարման ըլլալու համար, զանազան պարտականք եւ զանազան պահանջատեարք անուն հաշիւներ պէտք է բանալ Մայր-հաշուին մէջ :

Զանազան պարտականաց հաշիւը պարտական ընելու է՝ այլեւայլներու ապրանք կամ որեւէ արժէք մը տրուած ատեն, իսկ պահանջող՝ առնուած արժէնիւթոց համար :

Նոյնպէս ընելու է նաեւ Զ. պահանջատեարց հաշիւը իւր կարգին :

---

### Հաշիւ մեր Պ. այսինչին

Երբ վաճառական մը ընկեր ալ ունենայ մէկտեղ, այդ վաճառատունը դարձեալ իբր մէկ անձի կը համարուի ամէն գործողութեանց համար. իսկ գալով ընկերներուն անձնականին, անոնց իւրաքանչիւրին համար զատ հաշիւ կը բացուի, որք կ'ըլլան պահանջող՝ ընկերներուն դրած դրամագլխոյն, և բացէն ընկերութեան մէջ բերած արժէքներուն համար. իսկ պարտական կ'ըլլան՝ ընկերութենէն առած ստակներնուն համար :

Տարեգլխուն կամ հաշիւ տեսնուած ատեն՝ դոյացեալ շահէն իւրաքանչիւր ընկերի բաժնին համար իրենց հաշիւը պահանջող՝ և վնասին համար (եթէ ըլլայ) պարտական կ'ըլլայ : Այս հաշիւը ելիցկշիտ անուն հաշուով կը գոցուի, որոյ վրայ մասնաւորաց հաշիւներէն վերջը պիտի խօսիմք :

---

### Հաշիւ մեր Պ. այսինչին դրամագլխոյ

Երբ երկու կամ աւելի անձինք՝ վաճառականութիւն ընելու համար ընկերութիւն մը կազմեն և իւրաքանչիւրին դնելիք դրամագլուխն որոշուի, և ընկերութեան կանոնագրին համեմատ՝ ընկերք ազատ ըլլան իրենց որոշեալ դրամագլուխն անմիջապէս չդնելով մաս առ մաս բերելու, այն ատեն իւրաքանչիւր ընկերին համար իրեն անունովը ..... այսինչին դրամագլխի հաշիւը ըսելով հաշիւ մը կը բացուի :

Այս հաշիւը նախ պարտական ընելու է ընկերաց դնելիք դրամագլխոց գումարին համար և բուն դրամագլխոյ հաշիւը պահանջող :

Երբ ընկերք սկսին բերել իրենց որոշեալ դրամագլուխը մաս առ մաս, այս հաշիւը պահանջող ընելու է : Այս հաշիւը կը գոցուի ինքնին երբ ամէն ընկեր իւր դրամագլուխն ամբողջացնէ : Ընկերք կամ կանխիկ

դրամով կը լրացնեն իրենց դնելիք դրամագլուխը կամ ապրանքով և այլ արժէթով՝ եթէ կանխաւ այնպէս պայման դրուած ըլլայ :

### Հաշիւ մեր Պ.....ին տոկոսաւոր ստակին

Ընկերութեանց մէջ կը պատահի երբեմն որ ընկերք՝ իրենց դնելիք դրամագլխէն զատ, ընկերութեան մէջ բացէն ստակ բերելու համար մէջերնին որոշումն ընեն, այդ ստակը բերող ընկերին համար տոկոս մը կը տրուի ընկերութեան կողմանէ :

Այս տեսակ պարագայի մէջ՝ տոկոսով ստակ բերող ընկերին համար մասնաւոր հաշիւ մը կը բացուի մեր Պ.....ին տոկոսաւոր ստակին հաշիւը ըսելով, և զայն պահանջող կ'ընեն հետզհետէ բերած ստակներուն համար, և առածներուն համար պարտական :

Տարեգլխուն, կամ հաշիւ տեսնուած ատեն՝ տոկոսով ստակ բերող ընկերին տոկոսի հաշիւն ընելու է մինչեւ հաշիւ տեսնուած օրն, և այդ հաշիւը պահանջող ընելու է, որչափ որ տոկոս բերած է :

Պէտք է դիտել սակայն թէ, երբ ընկերութիւնը լուծուի՝ որ ատեն իւրաքանչիւր ընկերի իւր դրամագլխի բաժինը տալ հարկ կ'ըլլայ, պէտք է նախ և առաջ փոխ ստակ տուող ընկերաց դրամը և անոր տոկոսները տալ : Այնպէս որ՝ եթէ ընկերութիւնը իւր գործառնութիւններէն վնաս ըրած ըլլայ՝ փոխ ստակ տուող ընկերն իւր բաժինին չափ պիտի կրէ այդ վնասն իւր դրամագլխի հաշուովն, բայց իւր տոկոսաւոր ստակի հաշիւը նախապէս պիտի վճարուի իրեն . վերջապէս եթէ ընկերութեան գործը շատ ձախող փիճակ մ'ունենայ, յորում հաշիւ տեսնուած ատեն անկարող գտնուի փոխ տուող ընկերին դրամը վճարել, միւս ընկերն անոր անձնապէս պարտական պէտք է ըլլայ վճարել անվճար գումարին կէսին չափ, վասնզի փոխ տուող ընկերն իբր զատ դրամատէր անձ մը տուած է այդ ստակը, հետեւաբար իւր դրամագլուխը ամբողջապէս կամ մէկ մասը թերեւս կորսնցնէ, բայց փոխ տուած ստակը իւր դրամագլխէն նախամեծար պէտք է համարիլ, որովհետեւ դրամագլուխը մասնաւոր առանձնաշնորհութիւն մ'ունէր, այսինքն շահէն բաժին մ'առնել, մինչդեռ փոխատուն՝ ուրիշ առաւելութիւն մը չունի, եթէ ոչ տարեկան 6-9 կամ աւելի տոկոս մը միայն առնել :

### Ընթացիկ-հաշիւ մեր Պ.....ին

Այս անուամբ հաշիւ մը կը բացուի իւրաքանչիւր ընկերի համար, զոր պարտական ընելու է, առանց տոկոսի, ընկերներուն առած գումարներուն համար :

### Հաշիւ մեր Պ.....ին ճամբորդութեան

Ընկերութեան մը անդամներէն կամ վաճառատան մը պաշտօնեայներէն մին՝ ընկերութեան գործոց համար ճամբորդութիւն ըրած ատեն, վերոյգրեալ անուամբ հաշիւ մը կը բացուի, զոր պարտական կ'ընեն՝ ճամբայ ելած ատեն ճամբորդողին տրուած գումարին, յետոյ իրեն ղրկուած գումարին, թղթակիցներէն առածներուն, և վաճառատան վրայ քաշած փոխանակագրոց կամ հրամանագրոց համար:

Պահանջող պէտք է ընել այդ հաշիւը՝ յիշեալին ղրկած ստակներուն, կանխիկ առած ապրանաց, զանազանաց քով ձգած գումարներուն, իւր վրայ քաշուած փոխանակագրոց կամ հրամանագրոց, վերջապէս ճամբորդութեան համար ըրած բոլոր ծախուց համար:

Դարձին՝ այս հաշիւը կը գոցուի այն գումարովն, զոր ճամբորդը կուտայ կամ կ'առնէ:

### Այսինչին իւր ապրանքի կամ դրամական հաշիւը

Երբ վաճառական մը իւր թղթակիցներուն հետ թէ՛ ապրանքի և թէ՛ դրամական գործողութիւններ ընէ միանգամայն, և այդ երկու գործողութեանց արդիւնքը զատ զատ գիտնալ ուզէ, զատ հաշիւներ կը բանայ ..... իւր ապրանքի հաշիւը, կամ իւր դրամական հաշիւը ըսելով: Ապրանքի հաշիւը պարտական կ'ըլլայ այն ծախուց համար, զոր կ'ընենք երրորդի մը մեզ ղրկած ապրանաց հաշուոյն, կանխավճարին, վճարեալ փոխանակագրոց կամ հրամանագրոց համար, ղրկուած ստակներուն, կամ երրորդին հաշուոյն համար առնուած ապրանաց համար. իսկ պահանջող կ'ըլլայ՝ ծախուած ապրանաց գումարին, մեզ ղրկուած գումարներուն, իրեն վրայ քաշուած փոխանակագրոց կամ հրամանագրոց համար. վերջապէս այդ ապրանքին առթիւ բոլոր առնուած արժէքներուն կամ գանձուած ստակներուն համար: Երբ այն գործողութիւնը վերջանայ՝ այդ հաշուոյն պարտքին կողմը պէտք է տանիլ մեզ վերաբերեալ տոկոսներն, նամակի ծախքերն, յանձնառողչէքն և այլն. այս հաշիւը կը գոցուի իւր ընթացիկ-հաշուովն: Եթէ Դրամական գործողութիւն ըլլայ, փոխանակ ապրանքի ըսելով՝ իւր Դրամական հաշիւը ըսելով հաշիւ մը կը բացուի:

### Հաշիւ սնանկացող եւ կասկածելի անձանց

Վաճառականն այս անուն հաշիւ մ'ալ կը բանայ իւր տետրակին մէջ, երբ տարեգլխուն կամ ուրիշ առթիւ հաշիւ տեսած ժամանակ՝ իւր պահանջից մէջ դտնէ այնպիսիներ՝ որոնցմէ ստակ առնուիլը

կասկածելի ըլլայ և կամ սնանկացողներ դռնուին . այն ատեն իւր ճիշդ շահը հասկնալու համար , զանոնք միւս ողջ առնելիքներէն զատելով՝ վերոյգրեալ անուամբ հաշուին կ'անցնէ , և եթէ անոնցմէ ստակ դանձելու ըլլայ , այդ հաշիւը պահանջող կ'ընէ :

**ՄԻ ՔԱՆԻ ՀԱՇԻՒՆԵՐ , ՈՐՔ ԳԼԽԱՒՈՐ ՀԱՇՈՒՈՑ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄՈՒՆՔՆ ԶԵՆ ՀԱՄԱՐՈՒԻՐ**

Գլխաւոր և մասնաւորաց հաշիւներէն զատ՝ կրկնատոմարի մէջ անհրաժեշտ է բանալ տակաւին խիստ կարեւոր և տարբեր տեսակ երեք հաշիւներ , որք մեծ դեր ունին կատարել կրկնատոմարի տեսարակներուն գործը կատարելագործելու համար : Այս հաշիւները հետեւեալներն են .

1. Հաշիւ դրամագլխոյ .
2. » ելից կշռի .
3. » մտից »

**ՀԱՇԻՒ ԴՐԱՄԱԳԼԽՈՑ**

Դրամագլուխ ըսելով սկտք է հասկնալ վաճառականի մը գոյքը՝ պարտքը իջնալէն ետքը :

Զորօրինակ , դիցուք թէ՝ Պողոս վաճառականն ունի	10,000	ոսկի
Փոխարէն պարտք ունի այլեւայլներու	3000	»
	<u>7000</u>	<u>ոսկի</u>

Ուրեմն ունեցած զուտ հարստութիւնը 7000 ոսկի է , հետեւաբար այս կ'ըլլայ Պողոսին դրամագլուխը : Ամէն վաճառականութիւն կամ արուեստ իրեն յատուկ դրամագլուխն ունի :

Վաճառականը միմիայն անձնական միջոցներով սահմանափակեալ չէ , քանզի վարկը իրեն կը հայթայթէ մի տեսակ նոր դրամագլուխ , որն որ արդարեւ ժամանակաւոր , բայց կրնայ միշտ վերստին նորոգուիլ և այսպէս ըսենք յարատեւ ըլլալ : Դրամագլուխը վարկէն օգնութիւն գտնելով՝ վաճառականութեան հոգին է . առանց դրամագլխի ամէն գործողութիւն անկարելի կ'ըլլայ : Դրամագլուխը աշխատողին միջոցն ու կէտ նպատակին է , նա է վերջաբան հաշուակալութեան :

Տոմարակալին համար Դրամագլխի քաշիւն արժէքի հաշիւ մ'է , որ վաճառականին հարստութիւնը կը ցուցնէ գործի ձեռնարկած ատեն , ինչպէս նաեւ տարեկան արդիւնքը՝ հաշուեկշռի ատեն :

Երբ մէկը վաճառականութեան սկսի , Դրամագլխոյ հաշիւը պահանջող ընելու է նախ իւր դրած դրամագլխոյն համար . (պատրաստ



դրամ, կամ այլեւայլ իրեր, ապրանք, գանձելի թղթեր և այլն) • իւր ազգականներէն իրեն ինկած ժառանգութեանց, կամ բախտի դիպուածով չահած մեծ գումարին համար, և հաշիւ տեսած ատեն՝ գոյացած չահուն համար • իսկ պարտական ընելու է զայն՝ եղած մեծ վնասի մը համար, մեծ գումար պարգեւ մը տուած ատեն, և հաշիւ տեսած ատեն՝ եղած վնասուն համար : Վերջապէս բոլոր այն գումարներուն համար, որք իւր դրամագլուխը կը պակսեցնեն :

Կրկնատումարի տեսրակները (Օրհաշիւ և Մայր-հաշիւ) նախ դրամագլխի հաշուով կ'սկսին, այս հաշիւն ընդհանուր հաշուեկշռի ատեն կը գոցուի և նորէն կը բացուի, մնացորդն 'ի նոր հաշիւ փոխադրուելով :


Երբ դրամագլխոյ հաշուոյն պահանջքին գումարը պարտքեցաւ ըլլայ՝ մնացորդը պահանջող կ'ըլլայ, այսինքն քիչ մ'առաջ տրուած օրինակին վրայ խօսելով՝ Պօղոս 10000 լիրա ունէր, որն որ իւր դրամագլխոյ հաշուոյն պահանջքին գումարն է, և 3000 ոսկի պարտք՝ որ նոյն հաշուոյն պարտքին գումարն է, ըսել է թէ մնացորդ 7000ը պահանջող է, իսկ ընդհակառակն՝ երբ պարտքին գումարը պահանջքին չատ ըլլայ,

Այսինքն, պարտքին գումարը ըլլայ	13000
Եւ պահանջքինը ըլլայ	10000
	3000

այն ատեն ըսել է թէ՝ նոյն վաճառականն իւր դրամագլուխը կորսընցնելէն զատ՝ 3000 ոսկի ալ բաց մ'ունի, որ ատեն այդ վաճառականը սնանկութեան վիճակի մէջ կ'ըլլայ :

**ՀԱՇԻՒՔ ՄՏԻՅ ԵՒ ԵԼԻՅ ԿՇՌԻ**

Այս հաշուոց վրայ առ այժմ բան մը չպիտի ըսենք, ըստ որում եթէ ըսելու ըլլանք՝ ուսանողը բան մը չպիտի հասկնայ, վասնզի այս հաշիւները տեսրակները գոցելու, այսինքն տարեգլխին կամ հաշիւ տեսած ատեն հարկ կ'ըլլայ գործածել • մենք ալ որովհետեւ տակաւին տեսրակները գրել չսկսանք, ուստի ասոնց վրայ խօսիլ առայժմ զանց ըրինք, և յարմարագոյն դատեցինք այս հաշուոց վերաբերեալ պէտք եղած տեղեկութիւններն այն ատեն տալ՝ երբ մեր պատրաստելիք Ձեռատետրը, Օրհաշիւը և Մայր-հաշիւը վերջացնենք :



## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ



### ԿՐԿՆԱՏՈՄԱՐԻ ՄԷՋ ԳՈՐԾԱԾՈՒՄԺ ՏԵՏՐԱԿՆԵՐ

Վաճառականի մը գործողութիւնները կրկնատոմարի ձեւով գըրելու համար երկու տեսակ տետրակներ կը գործածուի, որոց մէկ մասը կ'ըսուի գլխաւոր և մէկ մասը երկրորդական տետրակներ:

### ԳԼԽԱՒՈՐ ՏԵՏՐԱԿՆԵՐ

Կրկնատոմարի մէջ գործածուած գլխաւոր տետրակներն են հետեւեալները .

1. Օրհաշիւ .
2. Մայր-հաշիւ .

### ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՏԵՏՐԱԿՆԵՐ

Գլխաւոր տետրակներէն զատ՝ վաճառականը պէտք է ունենայ ուրիշ տետրակներ ալ, որոց մէջ կը գրէ այնպիսի մանրամասնութիւնք, որոց միշտ պէտք կ'ունենայ, և զորս Օրհաշուին մէջ չգրեր զայն չխճողելու համար, այս տետրակներուն կ'ըսուի երկրորդական տետրակներ: Կրկնատոմարի ինչպէս նաեւ պարզ-տոմարի մէջ գործածուած երկրորդական տետրակներուն թիւը և տեսակը՝ գործին տեսակին և վաճառականին պիտոյից համեմատ կը փոխուին . մենք հոս պիտի դնենք անոնց ամենէն գործածականները .

1. Չեռատետր .
2. Գնման տետր .
3. Վաճառման տետր .
4. Մթերագիր կամ մթերատետր .
5. Տետր դրամարկդի կամ սնտուկի .
6. » արձանագրութեան գանձելի տոմսակաց .
7. » » վճարելի »
8. » փոխանակագրի արձանագրութեան .
9. » հաշուրնթացի .
10. » նամակաց ընդօրինակութեան .
11. » գանազան պարտականաց .
12. » կանխիկ վաճառմանց .

- 13. Տեւր հաշուեկշռի .
- 14. » ապսպրանաց կամ հրամանի .
- 15. » տան ծախուց .

Ինչպէս վերը կերեւի՝ վաճառականական տետրակներուն երկու տեսակի, այսինքն գլխաւոր և երկրորդական անուամբ բաժանումը համաձայն չէ վաճառականական օրինագրքին 3<sup>րդ</sup> և 4<sup>րդ</sup> յօդուածոց տրամադրութեան, որք միայն Օրհաշիւ, հաշուեկշռի եւ նամակաց ընդօրինակութեան տետրակները կը պահանջեն վաճառականէն: Սակայն, օրէնքն այսպէս ըսելով՝ միայն արդարութիւնը երեւան հանելու միջոցները խորհած և ըստ այնմ այդ երեք տետրակներն որոշած է, մինչդեռ Տոմարակալը՝ գիտնալով հանդերձ օրինաց պահանջմանց համակերպիլ, ուզած է վաճառականին ընդհանուր հաշուակալութիւն մը պատրաստել, որ միշտ կարող ըլլայ տեղեկացնել զինքը իւր վիճակին, և մէկ օժանդակ հաշուակալութիւն մը (երկրորդական տետրակներ), որով կարենայ գիտնալ իւր վաճառատունը մտած և ելած ապրանաց օրքանութիւնը, դրամարկը մտած և ելած ստակը, և թղթապանակն մտած և ելած արժէթղթերն, իւր վճարելի և գանձելի տոմսակաց վճարօրերը, թղթակիցներուն հետ տոկոսաւոր ընթացիկ-հաշիւները պատրաստել և այլն, ահա ասոնք են լաւագոյն պատճառներ, որոց համար երկրորդական տետրակներ ունենալը վաճառականի մը համար շատ կարեւոր է:

Ձ Ե Ռ Ա Տ Ե Տ Ր

Ձեռատետրը պարզապէս թղթէ կարուած կամ հաստատ կազմուած տետրակ մ'է (1), որուն ամէն անգամ դիմել հարկ կ'ըլլայ՝ երբ Օրհաշիւ յօդուածներէն միոյն մանրամասնութեանցը մէջ սխալ մը սպրդի: Ասոր համար ըսինք թէ վաճառականը իւր տետրակները պէտք է որ ժամանակ մը պահէ:

Վաճառականի մը ըրած գործողութիւնները պատահած պահուն անմիջապէս Օրհաշիւ անցնելն եթէ ոչ անկարելի՝ գէթ շատ դժուար պիտի ըլլար, ըստ որում շատ սխալներ պիտի պատահէր, զորս ուղղել հարկ պիտի ըլլար, և որովհետեւ քիչ մ'առաջ վաճառականական օրէնքէն տեղեկացանք թէ՛ Օրհաշիւն մէջ սխալ շտկելու համար քերթուածք և՛ չպիտի ըլլայ, ուստի նախապատրաստական աշխատութեան մը հարկը զգալի եղած է և այդ աշխատութիւնը ուրիշ տետրակի մը, այսինքն Ձեռատետրը գրելու գործն է: Ուրեմն

(1) Կազմուածը նախապատիւ համարելու է, զի թղթէ տետրակ մը շատ անգամ կորսուելու կամ գործածութեամբ պատուուելու ենթակայ է:

Ձեռատետրը սահմանուած է հաւաքել բոլոր այն նախնական իրերն , որոցմով Օրհաշիւը պիտի բաղկանայ :

Ձեռատետրը արդարեւ միւս երկրորդական տետրակներուն ամենէն կարեւոր ու օգտակարն է , ըստ որում ամէն գործողութեան մանրամասնութիւն առաջին անգամ հոս կը գրուի և ասկէ կ'երթայ միւս տետրակները , ուստի մեք ևս նախ Ձեռատետրին վրայ պիտի խօսինք :

Ձեռատետրին մէջ կը գրուին ամէն օր պարզ և որոշ կերպով , վաճառականին ըրած ամէն տեսակ գործողութիւններն , առանց բացառութեան . այսինքն , կանխիկ և ապառիկ գնած և ծախած ապրանքները , վճարած տոմսակները , ընդունած և վճարած փոխանակագրերը , մէկու մը զրկած ապրանքներն և այլն :

Ձեռատետրին մէջ ամէն անձի անունը պէտք է որոշակի գրել իւր յատուկ անուամբն ու տեղւոյն անունովը . առ այս խիստ ուշադրութիւն ընելու է , վասն զի կը սխառակի շատ անգամ որ վաճառական մը՝ միեւնոյն անուամբ , այսինքն Պօղոս Յակոբեան անունով , երկու մարդոց հետ (բայց մէկը Պօլսեցի , միւսը Տրապիզօնցի) գործողութիւններ ընելով՝ մէկուն հաշիւը սխալմամբ միւսին հաշուոյն անցնի , որով սխալ գրութիւնք տեղի կ'ունենան , զորս ուղղելը շրջափոխութիւն և ժամանակի կորուստ կը պատճառէ : Այս տետրին մէջ ամէն գործողութիւն իւր կարեւոր պարագայներովը պէտք է արձանագրել , այսինքն , եթէ ապրանքի վերաբերեալ ըլլայ՝ ըստ տեսակին , ապրանքին կշիւրը , հակին թիւն ու նշանագիրը և այլն . եթէ տոմսակ կամ փոխանակագիր՝ թիւը , քաշողին անունը , վճարօրն և այլն :

Ձեռատետրը՝ ինչպէս նաեւ միւս տետրակները սկսուած ատեն , տետրակին ճակատը պէտք է գրել վաճառականին անունը , ըրած գործը , բնակութիւնը և սկսուած թուականը . նաեւ բոլոր տետրակներուն կողքին վրայ կամ ետին թղթի կտորի մը վրայ տետրակին անունը գրելով փակցնելու է : Արդէն Օրհաշուի և Մայր-հաշուի համար անուննին ետին նշանակուած յատկապէս շինուած տետրակներ պատրաստ կը գտնուին թղթավաճառաց քով :

Ձեռատետրին մէջ որեւէ գործողութիւն մը գրելու համար մասնաւոր ուսում կամ շարադրութեան ձեւ մը չկայ , տոմարակալութիւն չգիտցող անձ մ'ալ կրնայ զայն գրել , միայն թէ գործողութեան կարեւոր մանրամասնութիւնները գրել մոռնալու չէ , որպէս զի Ձեռատետրին յօդուածներն յ'Օրհաշիւ փոխադրող տոմարակալը պէտք չունենայ դիմել միւս սկզբնական թղթերուն , (հաշուեցոյցի , նամակի և այլն) : Գործի մէջ ժամանակը սուղ է , Ձեռատետրը պէտք է արագ գրել միանգամայն և ուղիղ . և եթէ անուշադրութեամբ սխալ մ'ալ սպրդելու ըլլայ , կրնայ քերթուիլ Ձեռատետրին մէջ , իսկ Օրհաշուին մէջ բնաւ :

Ձեւ եւ կազմութիւն Ձեռատետրի

Պատրաստ ծախուած Ձեռատետրին իւրաքանչիւր երեսին վրայ զանազան գիծեր կան, որք կը բաղկանան կարմիր, մոխրագոյն և կապոյտ գոյներէ . թէ ինչ են այդ գիծեր և թէ ինչ բանի համար քաշուած են, զայն աւելի որոշ հասկցնելու համար հոս կը ներկայացընենք Ձեռատետրին երեսներուն վրայ տեսնուած գիծերը սեւ մեւ լանուլ :

Ձեռատետրին երեսի գիծերը

1	2	8	9	3	4	5	6	7

Թիւ 1—2 սիւնին մէջ կը գրուի յօդուածի մը Օրհաչուին քանի-երորդ երեսը փոխադրուած ըլլալուն թիւը . կամ փոխանակ թիւ գրելու՝ «նյա» բառը . սակայն թիւը գրելը լաւագոյն է : Թիւ 2—3 միջոցին մէջ կը գրուի Ձեռատետրին յօդուածը, նախ ճակատը դըժեւով 2—3 երկու ուղիղ գիծեր՝ (թ. 8—9) մէջտեղը պարսպ թողլով ուր պէտք է գրել գործողութեան թուականը, այսինքն ամսոյն օրը, ամիսն և տարին : Թիւ 3—4 սիւնին մէջ կը գրուի գործողութեան մասնական գումարը (եթէ ունենայ), (լիրա, Ֆրանք, և այլն) : Թիւ 4—5 սիւնին մէջ՝ նոյն գումարին կոտորակը, (այսինքն, սանթիմ, փարայ և այլն : Թիւ 5—6 սիւնին մէջ՝ գործողութեան հաւաքական գումարը, և թիւ 6—7ին մէջ՝ նոյն գումարին կոտորակը :

Երբ Ձեռատետրին սեւէ մէկ յօդուածին յաջորդող միւս յօդուածին իւր նախորդին թուականն ունենայ, վերջնոյն համար կրկին թուական գրելն աւելորդ է, այլ պէտք է գրել (թուականին համար որոշեալ տեղը) նոյն բառը կամ չակերտ մը (»), որ միեւնոյն թուականը կը նշանակէ :

Հսածնիս որոշ կերպիւ հասկցնելու և Ձեռատետրին գրութեան ձեւը ցուցնելու համար օրինակով մը բացատրենք .

Օրինակք .

1884 մարտ 10ին՝ կանխիկ ծախեցի Գրիգոր Մինասեանի 100 կապոց կապոյտ մանած թ. 6/8, գ. 60 զրչ :

Նոյն օրը գնեցի 500 կապոց ճերմակ վաթէր (մանած) թ. 12/14  
 գ. 40 ՂՐԸ :

Արդ , այս երկու գործողութիւնները Ձեռատետրը պիտի ան-  
 ցնենք այսպէս , անշուշտ Ձեռատետրին վրայ պէտք եղած գիծերը  
 քաշելէն յետոյ , եթէ Ձեռատետրը սովորական անգիծ թղթերէ  
 շինուած ըլլայ :

10 Մարտ 1884	
Մախեցի կանխիկ Գրիգոր Մինասեանի 100 կապոց կապոյտ մանած թ. 6/8 գ. 60 ՂՐԸ	6000 —
»	
Գնեցի կանխիկ 500 կապոց ճերմակ վաթէր թ. 12/24 գ. 40 ՂՐԸ	20000 —

Գործողութիւնք այսպէս կը դրուին Ձեռատետրին մէջ . սակայն  
 գործողութիւնները դրուած ատեն պէտք է լաւ քննել հաշուոց ճշ-  
 դութիւնը :

Շատեր Ձեռատետրին իւրաքանչիւր յօդուածին սկիզբը ձախ կող-  
 մը կարգի թիւ մը կը դնեն , որպէս զի երբ Օրհաշուին մէջ մասնաւոր  
 ուշադրութեան արժանի յօդուած մ'ըլլայ՝ Ձեռատետրին թուովը յի-  
 շատակուի :

Ձեռատետրին սահմանը , ձեւը , և դրութեան եղանակը ցոյց  
 տալէ վերջը , կարեւոր է այժմ ուսանողին համար գիտնալ թէ՛ գոր-  
 ծողութիւն մը որ Ձեռատետրն անցած է , ինչպէս յ'Օրհաշիւ պիտի  
 անցնի , և թէ ինչ է Օրհաշուին ձեւը և այլ մանրամասնութիւնք :

## Գ Լ Խ Ա Ի Ո Ր Տ Ե Տ Ր Ա Կ Ն Ե Ր

### Օ Ր Հ Ա Շ Ի Ի

Օրհաշիւք՝ ինչպէս տեղեկացանք արդէն , օրինաց սլահանջած տետ-  
 րակներէն մին է , յորում վաճառականը կ'ընդօրինակէ որոշ յստակ  
 բայց քիչ մը համառօտ կերպով , Ձեռատետրին մէջ գրուած յօդ-  
 ուածներն իրենց կարեւոր մանրամասնութիւններովն , այսինքն ,  
 գնուած ու ծախուած ապրանաց տեսակը , քանակութիւնը , գինը ,  
 ծախողին ու գնողին անունը , և այլն . այնպէս որ՝ եթէ սլատճառով  
 մը Օրհաշիւը դատարանի առջեւ ներկայացնել հարկ ըլլայ՝ գործողու-  
 թիւնն իւր սլարագայներովը հոն նշանակուած ըլլայ , առանց ուրիշ  
 երկրորդական տետրակներու դիմելու :



Արդէն գիտենք թէ՛ օրէնքը շնորհունիր Օրհաշուին մէջ քերթ-  
ուածք կամ արատք , ուստի տումարակալ մը Օրհաշիւը գրելու սու-  
տեն՝ մեծ հոգ և խնամ տանելու է որ սխալ չսպրդի և տետրակը մա-  
քուր մնայ : Հոս չենք ուզեր կրկնել Օրհաշուի մասին օրինաց տրա-  
մադրութիւնը , զոր 'ի մէջ բերինք յառաջագոյն :

Այս տետրին Օրհաշի անունը տրուելուն պատճառն այն է որ՝  
վաճառականին ըրած բոլոր գործողութիւններն օրուան թուականի  
կարգաւ իւր մէջ կը պարունակէ . սա մի պատմութիւն է վաճա-  
ռականին որոշեալ ժամանակի մը մէջ ըրած գործողութեանց :

Օրհաշիւը Ձեռատետրին մաքուր ընդօրինակութիւնն է . արդա-  
րեւ Ձեռատետրի բոլոր յօդուածներն յ'Օրհաշիւ կ'անցնին այսինչ այն-  
ինչին ձեւի սկզբնաւորութեամբ , զոր բացատրեցինք կրկնատումարին  
վրայ խօսած ատեննիս :

Բ. գլուխին մէջ ըսինք որ կրկնատումարի Օրհաշուին իւրաքանչիւր  
յօդուածին մէջ պարտական մը և պահանջող մը կ'ըլլայ , այդ պար-  
տական և պահանջող անունները , որ քիչ մ'առաջ ըսուած այսինչ այն-  
ինչին ձեւով կ'սկսի , խոշոր գրերով ( շեղագիր կամ ոտնտ )  
գրելու է , յօդուածին միւս մասերէն զատուելու և շուտով աչքի  
զարնելու համար : Նաեւ պարտական և պահանջող անձանց բնա-  
կած քաղաքնին ալ իրենց քով նշանակելու է , մանաւանդ այն ատեն՝  
երբ միեւնոյն անուամբ ու մականուամբ երկու անձինք գտնուին :

**Ձեւ եւ կազմութիւն Օրհաշուի**

Կրկնատումարի Օրհաշուին ձեւը նոյնն է ինչ որ էր Պարզ-տումարի  
մէջ : Կրկնատումարի Օրհաշուին ամէն երեսին վրայ երեսի թիւ պէտք  
է ըլլայ , որն որ տեսակ մը վաւերականութիւն կուտայ այդ տետրին ,  
վասն զի առանց այդ թուոյն՝ կրնայ ըլլալ որ մէկը այդ տետրակէն  
մէկ քանի թերթեր մէջէն հանէ , չար նպատակի մը համար :

Օրհաշուին ամէն երեսին վրայ հետեւեալ գիծերը քաշուած են :

**Ձեւ Օրհաշուի**

1

1 Հոկտեմբեր 1884

1.	2.	3.	3.	4.	4.

Ինչպէս կ'երեւի՝ իւրաքանչիւր երեսի առաջին յօդուածին ճակատը կը գրուի, գրչով գծուած երկու գծերուն մէջտեղը, որք յօդուածներն իրարմէ կը զատեն, յօդուածին թուականը, այսինքն, ամիսը, ամսոյն օրը և տարւոյն թուականը: Տարւոյն թուականը ամէն նոր երեսին ճակատը կրկնելու է, վասն զի քիչ գործողութիւն պարունակող Օրհաշուի մը մէջ, որ մէկ քանի տարուան գործողութիւններ կրնայ պարունակել, երբ ամէն երեսի վրայ տարւոյն թուականը գրուած չլլայ, և յօդուածի մը որ տարւոյն վերաբերիլը գիտնալ ուզենք, այն ատեն հարկ պիտի ըլլայ նոյն տարւոյն մինչեւ յունուար ամիսն երթալ, որպէս զի հոն տեսնուի տարւոյն թուականը:

Երբ Օրհաշուին մէկ յօդուածն իւր նախորդին թուականն ունենայ՝ վերջնոյն կրկին թուական գրելն աւելորդ է, այլ պէտք է գրել նոյն բառը կամ աւելի աղէկ (») չակերտ մը, որ միեւնոյն բանը կը նշանակէ:

Թիւ 1 նեղ սիւնին մէջ՝ յօդուածի մը պարտական և պահանջող հաշուոց Մայր-հաշուին քանի՞երորդ երեսը փոխադրուած ըլլանին կը գրուի հասարակ կոտորակի ձեւով այսպէս  $\frac{2}{6}$ , եթէ նոյն յօդուածին պարտականն ու պահանջողը մէկ հատ ըլլայ. կամ աւելի լաւը, իւրաքանչիւր հաշուոյ ճիշդ դիմացը դարձեալ նոյն սիւնին մէջ դնել երեսի թիւերը, եթէ պարտականը և պահանջողը տակէ տակ գրուած ըլլան: Թիւ 2 ընդարձակ սիւնին մէջ՝ յօդուածին ամբողջութիւնը կը գրուի այնպէս՝ ինչպէս որ քիչ մը վերջը պիտի ցուցնեմք:

Թիւ 3 լայն սիւնակին մէջ կը գրուի գործողութեան մասնական գումարները, այսինքն, լիրա, ֆրանք, դրչ. և այլն. իսկ թ. 3 նեղ սիւնին մէջ՝ մասնական գումարաց կոտորակները, եթէ ըլլան, ինչպէս, դրչ. սանթիմ, փարայ, և այլն:

Թիւ 4 լայն սիւնին մէջ կը գրուի գործողութեան հաւաքական գումարը, կամ առանց մասնական գումարի՝ միայն մէկ գումարը, եթէ յօդուածը մէկ գումարով ըլլայ. իսկ թ. 4 նեղ սիւնին մէջ՝ նոյն գումարին կոտորակները:

Վերոյիշեալ թիւ 4-4 սիւներուն գումարները գումարելու է ամէն երեսին տակը գիծ մը քաշելով և զայն յաջորդ երեսը փոխադրելու է, փոխադրելի և փոխադրեայ բառերն աւելցնելով գումարներուն առջեւ:

Իսկ երբ ամիսն լմնայ և փորձակշիռ ընել հարկ ըլլայ՝ այն ատեն Օրհաշուին գումարն ընելու է դարձեալ եթէ երեսին սկիզբն կամ մէջտեղն ալ ըլլայ, որպէս զի փորձակշիռն գումարին հետ բաղդատուի:

ԼՈՒԾՈՒՄՆ ԶԵՌԱՏԵՏՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ

ԿԱՄ

Զեռատեարին յօդուածները կրկնատումարի Օրհաշիւն անցնելու կերպը

Օրհաշուին վրայ խօսած ատեննիս ըսինք թէ՛ այս տետրը Զեռատեարին ընդօրինակութիւնն է ուրիշ կերպով գրուած . այժմ պիտի բացատրեմք թէ ինչպէս պէտք է ընդօրինակել կամ փոխադրել Զեռատեարին յօդուածներն Օրհաշուին մէջ :

Ասի լաւ ըմբռնելու համար , պէտք է յիշել ինչ որ ըսինք կրկնատումարի սահմանին վրայ խօսած ատեննիս , այսինքն թէ ,

1. Կրկնատումարի Օրհաշուին իւրաքանչիւր յօդուածին մէջ անպատճառ գոնէ պարտական մը և պահանջող մը ըլլալ պէտք է :

2. Կրկնատումարի տետրակներուն մէջ վաճառականին անունը չյիշուիր , այլ անոր տեղ կը գործածուին ուրիշ հաշիւներ զորս մանրամասնօրէն ցուցուցած եմք արդէն :

Ուրեմն Զեռատեարի յօդուած մը յՕրհաշիւ փոխադրելը նոյն յօդուածին պահանջող և պարտական հաշիւները գտնալով զանոնք գրել ըսել է . բայց թէ ինչպէս գտնալու և գրելու է , աստ մանրամասնօրէն և յստակ կերպով բացատրել պիտի աշխատինք :

Զեռատեարին յօդուածներն Օրհաշուի յօդուածի կը փոխարկուին , անոնց հաշուոց անունները տալով : Հաշիւներ ըսածնիս անոնք են , զորս գլխաւոր և մասնաւոր անուամբ բացատրեցինք արդէն : Պէտք է գիտնալ թէ՛ Զեռատեարի մը յօդուածներն երկու տեսակի կը բաժնուին , պարզ յօդուած և բաղադրեալ յօդուած :

Պարզ յօդուածը այն է , որոյ մէջ մէկ պարտական մը և մէկ պահանջող մը միայն կ'ըլլան . իսկ բաղադրեալ յօդուածը այն է , որոյ մէջ պարտականը կամ պահանջողը և կամ երկուքն ալ միանգամայն մէկէն աւելի կ'ըլլան :

Յօդուածի մը մէջ պարտական և պահանջող հաշիւները ղիւրաւ գտնալու և ըստ այնմ յՕրհաշիւ անցնելու համար , հետեւեալ երկու հարցումներն ընել պէտք է , որն որ կրկնատումարի օրէնքն է :

1. Հարցումն . Ո՞ր հաշիւն առաւ :

2. » Ո՞ր հաշիւն տուաւ :

Առաջին հարցման պատասխանը կ'ըլլայ պարտական հաշիւը , և երկրորդ հարցման պատասխանը՝ պահանջող հաշիւը :

Այս կէտերը լաւ ըմբռնելէ վերջը՝ այլեւս դժուարութիւն չը մնար Զեռատեարին յօդուածները յՕրհաշիւ փոխադրելու համար :

Պարզ յօդուածք Ձեռատետրի

Օրինակ Ա.

Գնեցի Յակոբ Նշանեանէ 1000 դրչի ապրանք , վճարելի 21 օրէն :

Օրինակ Բ.

Ծախեցի Գրիգոր Սիմօնեանի 1000 դրչի ապրանք , վճարելի 31 օրէն :

Լոռոնոս՛ն Ա. օրինակի

1. Հարցումն . Ո՞ր հաշիւն առաւ :

Պատասխան . Ընդհանուր ապրանքի հաշիւը (որովհետեւ վաճառատուներս ապրանք աւելցաւ) :

2. Հարցումն . Ո՞ր հաշիւը տուաւ :

Պատասխան . Յակոբ Նշանեան (որովհետեւ ապրանքը տուաւ և փոխարէն դեռ բան մը չառաւ) :

Ուրեմն պիտի ըսենք Օրհաշուին մէջ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ՅԱԿՈԲ ՆՇԱՆԵԱՆԻ (1) (պարտին զօրութեամբ կ'իմացուի )

Յիշեալէն առած ապրանքիս համար , վճարելի 21 օրէն 1000 դրչ :

Լոռոնոս՛ն Բ. օրինակի

1. Հարցումն . Ո՞ր հաշիւն առաւ :

Պատասխան . Գրիգոր Սիմօնեան , (որովհետեւ ապրանքն առաւ և փոխարէն դեռ բան մը չտուաւ) :

2. Հարցումն . Ո՞ր հաշիւը տուաւ :

Պատասխան . Ընդհանուր ապրանք , (որովհետեւ ապրանք ելաւ վաճառատուներէն) :

Ուրեմն պիտի ըսենք Օրհաշուին մէջ ,

ԳՐԻԳՈՐ ՍԻՄՕՆԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԻՆ

Իրեն ծախած ապրանքս , վճարելի 31 օրէն 1000 դրչ :

Այս կերպով Օրհաշիւ կ'անցնին ապառիկ գնուած և ծախուած ապրանաց պարզ յօդուածները :

Օրինակ Գ.

Գնեցի կանխիկ Մ. Թօգաթեանէ 2000 դրչի ապրանք :

Լոռոնոս՛ն

1. Հարցումն , Ո՞ր հաշիւն առաւ :

Պատասխան . Ընդհանուր ապրանք :

2. Հարցումն . Ո՞ր հաշիւը տուաւ :

Պատասխան . Սիտուկ :

(1) Պարտական և պահանջող այս անուաները Օրհաշուին մէջ ոմանք այսպէս քովէ քով կը գրեն և ոմանք մէկ տողին վրայ պարտական հաշիւը, և յաջորդ տողին վրայ ալ պահանջող հաշիւը կը գրեն :

Ուրեմն կը գրենք ,  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ՍՆՏՈՒԿԻՆ

Մ. Թօզաթեանէ կանխիկ ստակով գնած ապրանացս արժէքը 2000:

Նորավարժն առաջին անգամ այս տեսակ խնդրոյ մը պատահած ատեն շատ անգամ կը սխալի , զորօրինակ , վերոյիշեալ յօդուածին մէջ , Մ. Թօզաթեանի պարտական կ'ընէ ընդհանուր ապրանքը որ սխալ է , վասն զի ապրանքը թէեւ Մ. Թօզաթեանէն առինք , սակայն ստակը միեւնոյն ատեն տուինք , ըսել է թէ կանխիկ առինք , այսինքն , վաճառատունս ապրանք մտաւ բայց անոր փոխարէն սնտուկէս ստակ ելաւ , հետեւաբար պիտի ըսենք՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ՍՆՏՈՒԿԻՆ

Այսպէս պէտք է յօրհաշիւ անցնել կանխիկ ստակով կատարուած գնման գործողութեանց ամէն յօդուածներն առանց պահանջող ընելու այն անձը , որմէ ծախու առինք ապրանքը :

Բաղադրեալ յօդուածք Ձեռատետրի

Օրինակ Ա.

Ծախեցի Եօրկի Պալիին 8000 զրշ.ի ապրանք , զոր վճարեց ինձ 3000 զրշ. կանխիկ և 5000 զրշ.ի տոմսակ մը իմ հրամանիս 31 աւուր :

Լռածումն

Ըստ սկզբան՝ նախ ընդհանուր ապրանքի հաշիւը պահանջող պիտի ընենք , վասն զի ապրանքնիս պակսեցաւ . յետոյ Եօրկի Պալիին տուածները դիտելով կը տեսնենք , 1. դրամ , որոյ համար ստուկի հաշիւը պարտական պիտի ընենք , վասն զի սնտուկը ստակ մտաւ , 2. հրամանի տոմսակ մը , որ է գանձելի տոմսակ , այս հաշիւն եւս պէտք է պարտական ընել , հետեւաբար այս յօդուածին մէջ երկու պարտական հաշիւներ կ'ունենանք , զորս Օրհաշուին մէջ կը գրենք հաւաքապէս Զանազանք ըսելով . և ապա իրենց կարգին զատ զատ կը գրենք պարտականները .

ԶԱՆԱԶԱՆՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԻՆ

Եօրկի Պալիին ծախած ապրանքս և նորա վճարումը .

ՍՆՏՈՒԿ

Տուած ստակին համար 3000

ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ

Մէկ տոմսակ իմ/հ 31 աւուր 5000

8000

Օրինակ Բ.

Գնեցի Պողոս Գաբրիէլեանէ 250 լիրայի ամերիքան , 100 լիրան կանխիկ վճարեցի և 150 լիրային համար իւր հրամանին 41 աւուր մուրհակ մը տուի :

Հոծոտման

Այս գործողութիւնը նախորդին հակառակն է , հոս մենք ապրանք աւեր ենք , ուստի ընդհանուր ապրանքի հաշիւը պարտական պիտի ընենք . փոխարէն տուեր ենք , 1. Դրամ , որուն համար պահանջող պիտի ընենք սնտուկը , 2. Տոմսակ մը , որուն համար ալ վճարելի տոմսակի հաշիւը պահանջող պիտի ընենք , հետեւաբար այս յօդուածին մէջ երկու պահանջող հաշիւներ կ'ունենանք , զորս Օրհաշուին մէջ կը գրենք հաւաքապէս Զանազանաց ըսելով , և ապա իրենց կարգին զատ զատ կը գրենք պահանջողներն այսպէս .

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ԶԱՆԱԶԱՆԱՑ

Գնեցի Պողոս Գաբրիէլեանէ 250 լիրայի ամերիքան և վճարեցի այսպէս .

ՍՆՏՈՒԿԻՆ

Կանխիկ տուած դրամս 10000

ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ

Ի/հ իմ տոմսակս 41 աւուր 15000 25000

Օրինակ Գ.

Հետեւեալներուն տուի հետեւեալները .

Պարոյրին , կանխիկ դրամ 2500

Յակօրին , փոխանակագիր մը 4500

Գրիգորին , ի/հ իմ տոմսակս 31 աւուր 3000 10000

Հոծոտման

Ասի յօդուած մ'է , որոյ թէ պարտական և թէ պահանջող հաշիւներն երեք հատ են , զորս յ'Օրհաշիւ անցնելու համար պիտի ըսենք Զանազանք Զանազանաց , և ապա նոցա մանրամասնութիւնը պիտի թուենք տակէ տակ :

Զանազաններու տուեր ենք դրամ , գանձելի տոմսակ մը և վճարելի տոմսակ մը . ուրեմն պահանջող պիտի ընենք , 1. Սնտուկը , 2. Գանձելի տոմսակը , 3. Վճարելի տոմսակը , վասն զի այս երեք հաշիւները տուին . իսկ Պարոյր , Յակօր և Գրիգոր , որ այս արժէքներն առին , պարտական պիտի ընենք , և պիտի գրենք Օրհաշուին մէջ այսպէս .



**ՋԱՆԱԶԱՆՔ ԶԱՆԱԶԱՆԱՑ**

Հետեւեալներուն տուածներս .

**ՊԱՐՈՅՐ**

Տուած կանխիկ դրամս

2500

**ՅԱԿՈՒՅՐ**

Տուած փոխանակագիրս

4500

**ԳՐԻԳՈՐ**

Տուած տոմսակս ի/հ 61 աւուր

3000

10000

**ՍՆՏՈՒԿԻՆ**

Պարոյրին տուած դրամս

2500

**ԳԱՆԶԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ**

Յակորին տուած փոխանակագիրս

4500

**ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ**

Գրիգորին տուած տոմսակս ի/հ 61 աւուր

3000

10000

Պէտք է գիտնալ որ 10000 դրշ.ը մէկ անգամ միայն պիտի անցնի Օրհաշուին հաւաքական դումարի սիւնին մէջ :

Ձեռատետրի յօդուածները յ'Օրհաշիւ փոխադրելու համար տուած մարակալ մը կրնայ զանազան համառօտութիւններ ընել, զորօրինակ, կրնայ ըլլալ որ միեւնոյն թուականով չորս յօդուածով ապրանքի վաճառումներ ըլլան զանազաններու, փոխանակ ասոնց համար չորս յօդուած գրելու, մէկ յօդուած մը միայն բաւական է յ'Օրհաշիւ անցնելու համար այսպէս,

**ՋԱՆԱԶԱՆՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԻՆ**

(Պարտականներուն անուկները կարգաւ գրելով)

Նոյնպէս միեւնոյն թուականաւ երեք յօդուած, յորս երեք անձերէ ստակ առնուած է, այս ալ մէկ յօդուածի կրնայ վերածուիլ այսպէս.

**ՍՆՏՈՒԿ ԶԱՆԱԶԱՆԱՑ**

(Պահանջող անուկները կարգաւ գրելով)

Կարելոր է յիշել որ՝ այս զանազանք ըսածնիս մասնաւոր հաշիւ չէ և հետեւաբար ասոնց համար Մայր-հաշուին մէջ հաշիւ չբացուիր . այլ սա միայն անձական մ'է, որմէ վերջը զօրութեամբ կ'իմացուի հաշիւներ բաւը, այսինքն զանազանք ըսելով պէտք է հասկնալ զանազան հաշիւք, որոց անուկները վերջէն կը շարուին յօդուածին մէջ :

Ձեռատետրի մը մէջ երբեմն կը պատահին այնպիսի բաղադրեալ յօդուածներ, զորս վարժ տումարակալ մը կրնայ պարզ յօդուածի վերածելով գրել, և կամ կարելի եղածին չափ աւելորդ հաշիւները հանել, որք յօդուածին ոգւոյն մասս մը չեն բերեր : Արպէս զի մեր ուսանողք եւս այս տեսակ յօդուածոց վրայ գաղափար մ'ունենան, հոս օրինակով մը բացատրենք :

Օրինակ

Գնեցի Պողոս Գասպարեանէ 230 եարտա թաւիչ, Գ. 75 դրչ, փոխարէնը վճարեցի հետեւեալ կերպով .		17250
Փոխանակագիր մը Թօլէտօի վրայ 70 աւուր	18000	
70 աւուր համար 0/0 125ն դեղչ	420	
	<u>17580</u>	
Պողոսէն ետ առած ստակս	330	17250

Լրօծումն

Վերոյգրեալ յօդուածն ինքնին չորս գործողութիւն կը պարունակէ իւր մէջը .

1. Պողոսէն թաւիչ գնուած .
2. Պողոսին գանձելի ստմասկ մը տրուած .
3. Տոմսակ վեղչուած .
4. Պողոսէն վրայ ստակ առնուած .

Այս տեսակ յօդուածները պէտք է պարզել և յետոյ դատ թղթի մը վրայ իւրաքանչիւր մասունքը դատ դատ լուծել այսպէս , Աւաջին գործողութեան համար սխաի գրէինք ,

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ՊՅՂՈՍԻՆ 17250  
 Երկրորդ գործողութեան համար

ՊՅՂՈՍ ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ 17580  
 Երրորդ գործողութեան համար

ՇԱՀ ԵՒ ՎՆԱՍ(1) ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ 420  
 Իսկ չորրորդ գործողութեան համար

ՄՆՏՈՒԿ ՊՅՂՈՍԻՆ 330

Արդ՝ այս չորս գործողութիւններն , որք չորս յօդուած արտադրեցին, մէկ յօդուածի վերածելու համար կը դիտենք որ նախ Պողոս պահանջող եղաւ

յետոյ նոյնպէս տուած ստակին համար դարձեալ պահանջող եղաւ սնտուկէն

330  
 17580

ընդամենը 17580 դրչ նոյնչափ ալ պարտական եղաւ գանձելի տոմսակաց . ըսելէ թէ՛ Պողոս այլեւս բան մը չպահանջեր , հետեւաբար վերոյգրեալ չորս գործողութեանց մէջ գանուած Պողոսի անունները ջնջելով , ինչպէս մենք ջնջած եմք վերը , կը մնայ պարտական հաշիւներ հետեւեալները ,

(1) Կամ ԳԻՆԻ և ՎԷՂԸ եթէ այս սնտուածը հաշիւ բացուած ըլլայ Մայրհաշուին մէջ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ	17250	
ՇԱՀ ԵՒ ՎՆԱՍ	420	
ՍՆՏՈՒԿ	<u>330</u>	18000
Իսկ պահանջող հաշիւը միայն ,		
ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ		18000

Եւ որովհետեւ գիտենք թէ յօդուածի մը մէջ երբ պարտական հաշիւը մէկէն աւելի ըլլայ՝ զանազանք պիտի ըսենք , ուստի սոյն յօդուածն յՕրհաշիւ կ'անցնենք ըսելով ,

**ԶԱՆԱԶԱՆՔ ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ**

Պօղոս Գասպարեանէ գնեցի 230 եարտա թաւիչ գ. 75 դրշ. և փոխարէն տուի Թօլէտօի 70 աւուր փոխանակագիրը 180 լիրայի % 12 զեղչով :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ		
Թաւշին արժէքը	17250	
ՇԱՀ ԵՒ ՎՆԱՍ		
Փոխանակագրին զեղչը	420	
ՍՆՏՈՒԿ		
Փոխանակագրին մնացորդը ետ առի	<u>330</u>	<u>18000</u>

Հոս կը վերջանան մեր տալիք տեղեկութիւններն Օրհաշուի մասին՝ զոր կարելի եղածին չափ լաւ բացատրելու համար ամէն մանրամասնութիւն դրինք , որպէս զի 'ի վերջոյ երբ մեր բուն Օրհաշիւը գրենք՝ ուսանողը կատարեալ տեղեակ ըլլայ անոնց :

**ՄԱՅՐ—ՀԱՇԻԻ**

Պարզ-տոմարին մէջ ըսինք թէ՛ Մայր-հաշիւը Օրհաշուին ընդօրինակութիւնն է տարբեր եղանակաւ գրուած , յորում հաշիւներ կը բացուին Օրհաշուին մէջ գտնուող պարտական և պահանջող անձանց համար , մինչդեռ կրկնատոմարին մէջ՝ ըստ իւր սկզբան և նպատակի , զոր ուսանք արդէն , Մայր-հաշուին մէջ ո՛չ միայն անձերու համար , այլ նաեւ վաճառականութեան տարերց համար եւս հաշիւներ կը բացուին ընդհանուր ապրանքին , սնտուկին , զանձելի տոմսակաց , վճարելի տոմսակաց և շահեկցասի :

Մայր-հաշուին մէջ այսպէս թէ՛ անձերու և թէ՛ իրերու համար հաշիւներ բացուելով՝ վաճառականն իւր վիճակը կ'իմանայ թէ՛ իւր թղթակիցներուն հետ և թէ՛ նոյն ինքն իրեն հետ : Ուրեմն տետրակ մը որ այսպէս գրուած է , շատ կարեւոր և օգտակար է վաճառականի մը համար , վասն զի մէկ ակնարկով պիտի գիտնայ թէ՛ Պարոյր կամ Յակոբ ո՞րչափ պարտք ունի իրեն , և թէ Գրիգոր ո՞րչափ կը պահանջէ իրմէ , սնտուկը ո՞րչափ դրամ ունի և այլն : Մինչդեռ եթէ Մայր-հաշիւը չըլլար , Օրհաշուին մէջ այդ հաշուոց պարտական

գումարները պիտի հաւաքուէր, որ արդարեւ շատ տաղտկալի ըլլալով հանդերձ՝ սխալմունքէ ալ զերծ չէր կրնար ըլլալ :

Ձեւ եւ կազմութիւն Մայր-հաշուի

Մայր-հաշուի տեսքին ձեւը՝ միածալ գրքի մը պէս է, ստուարութիւնը Օրհաշուին համեմատութեամբ : Մայր-հաշուին մէջ բացուած ամէն հաշիւ պարտի և պահանջեովկը գրուի տեսրակին երկու երեսին վրայ (դէմ առ դէմ), որոյ երեսի թիւերն երկու կողմն ալ միեւնոյնը կը շարունակեն, փոխանակ Օրհաշուին պէս զատ զատ ըլլալու :

Չախ կողմի երեսին ձախ ծայրը՝ խոշոր գրով կը գրուի պարտի բառը, և աջ կողմի երեսին աջ ծայրը՝ պահանջի բառը. և այս երկու բառերուն միջեւ և տեսրակին մէջ տեղը անունն այն անձին կամ իրին, որոյ համար հաշիւ բանալ ուղուի : Այս բառերէն ետքը կուգայ տեսրակին ճակատը՝ մէկ ծայրէն միւս ծայրը քաշուած լայնքին հաստ զոյգ գիծ մը և այս գծին տակ կը փոխադրուի Օրհաշուին յօդուածները վեց սիւներու մէջ, որք պատրաստ ծախուած տեսրակներուն մէջ պարտի և պահանջի կողմը արդէն գծուած կ'ըլլան, ինչպէս կ'երևի յետագայ թ. 198-199 երեսներուն վրայ :

Մայր-հաշուի երեսից (երկու կողման) թ. 1 սիւնոց մէջ կը գրուի՝ Օրհաշուէն փոխադրեալ յօդուածին տարին և ամիսը՝ տարին թուանշանով. երբ յաջորդ յօդուածին թուականը իւր նախորդին նման ըլլայ, կրկին թուական գրելու հարկ չկայ, այլ չակերտ (») դնել բաւական է :

Թ. 2. սիւնոց մէջ կը կը գրուի ամսոյն օրը թուանշանով :

Թ. 3 սիւնոց մէջ, որ միւսներէն լայն է, պարտական կամ պահանջող հաշուոյն անունը և մեկնութիւնը համառօտ և յստակ կերպով, սրպէս զի մէկ տողի վրայ սեղմի : Գործի մէջ Մայր-հաշուին մէջ շատեր միայն հաշուոց անունները կը գրեն առանց բացատրութիւն գրելու :

Թ. 4 սիւնոց մէջ՝ փոխադրեալ յօդուածին Օրհաշուին քանի՞երորդ երեսը գրուած ըլլալը :

Ոմանք այս սիւնին քով ուրիշ սիւն մ'ալ կը գծեն և հոն կը գրեն՝ փոխադրեալ հաշուոյն Մայր-հաշուին քանի՞երորդ երեսը գրուած ըլլալը յայտնող թիւը, սակայն այս սիւն չգործածուիր գործի մէջ. մենք մեր Մայր-հաշուին մէջ թէեւ դրինք, բայց աւելի նորավարժից դիւրութեան եւ տեղեկութեան համար :

Թ. 5ին մէջ՝ գումարը, լիրա, դրշ. ֆր. և այլն :

Թ. 6 սիւնոց մէջ՝ գումարին կոտորակը, դրշ. փր. սանթիմ, և, եթէ ըլլայ : Աերոյգրեալ վեց սիւներէն զատ՝ ոմանք գանձելի և

1  
Պարտի (Ձեռագրեր)

Օրինակ Մախաչուխի  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ

1  
Պահանջի (Անունը Կրտսերի)

1.	2.	3.	4.	5.	6.
----	----	----	----	----	----

1.	2.	3.	4.	5.	6.
----	----	----	----	----	----

1  
Պարտի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ

1  
Պահանջի

1884 Մարտ	10	ՅԱԿՈՒՐ ՆՇԱՆՆԱՆԻ. գնած ապրանքս	1	1000
--------------	----	-------------------------------	---	------

--	--	--	--	--

2  
Պարտի

ՅԱԿՈՒՐ ԱՆՆԱՆ

2  
Պահանջի

--	--	--	--	--

1884 մարտ	10	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԻՆ. տուած ապրանքը	1	1000
--------------	----	-----------------------------------	---	------

վճարելի տուածակաց հաշուոց համար պարտքին և պահանջքին կողմը 7<sup>րդ</sup> սիւնմ'ալ կը գծեն, յորում կ'արձանագրեն ստորագրուած տուածակներուն և ուրիշներէ առնուած տուածակներուն թիւը : Բայց այս սիւնը շատ ստիպողական չէ, վասն զի տուածակին կամ փոխանակագրին թիւը Օրհաշուին յօդուածոց մէջ գրել բաւական է :

Նոյնպէս Տաճկաստանի վաճառականք ոմանք՝ որ Եւրոպիոյ կամ օտար երկրի հետ յարաբերութիւն ունին, օտար երկրի մէջ դանդաղ իրենց թղթակցաց համար Մայր-հաշուին մէջ բացուած հաշուոյն երկու կողմն ուրիշ սիւներ ալ կ'աւելցնեն, որոց մէջ կը գրին յիշեալ անձանց հետ ըրած գործողութիւններուն գումարը, այն երկրին

դրամին տեսակովն նշանակելով. զորօրինակ, Լօնտրայի հետ գործընող Պօլսեցի մը՝ Տաճկաստանի ստակին համար եղած սիւնէն զատ Մայր-հաշուին մէջ երկու կողմն ալ ուրիշ երեքական սիւն գծելու է, որոց առաջնոյն մէջ՝ որ բնականաբար ամենէն լայն պէտք է ըլլայ, կը գրուի անգղիական լիրան, Բ.ին մէջ շիլլինը, Գ.ին մէջ՝ բէնան (եթէ ըլլան). իսկ եթէ Ֆրանսայի հետ գործ ունենայ՝ Ֆրանքին և իւր կոտորակին համար երկու սիւն կը գծէ, առաջնոյն մէջ՝ որ աւելի լայն է, Ֆրանքը կը գրէ, և Բ.ին մէջ՝ սանթիմը. նոյնպէս ուրիշ տեսակ դրամներու համար իրենց կոտորակին համեմատ գիծեր կը քաշուին :

Օրհաշուին յօդուածներն 'ի Մայր-հաշիւ փոխադրելու կերպը

Մայր-հաշուին ձեւը և երեսներուն վրայ գտնուած սիւնոց բացատրութիւնները տալէ վերջը՝ կը մնայ մեզ ցուցնել թէ Օրհաշուին յօդուածներն ինչպէս 'ի Մայր-հաշիւ պիտի փոխադրուին : Ասոր համար ասկէ առաջ իբր օրինակ յիշուած յօդուածները , զորս յ'Օրհաշիւ փոխադրեցինք , մի առ մի առնելով պիտի անցնենք 'ի Մայր-հաշիւ պարզ յօդուածէն սկսելով :

Օրինակ Ա. Օրհաշուի

4

10 Մարտ 1884

1 2	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ՅԱԿՈՅ ՆՇԱՆԵԱՆԻ		
	Իրմէ առած ապրանքս վճարելի 21 օրէն (Հոս պէտք է գրել ապրանքը)	1000	—

Օրհաշուին այս յօդուածն 'ի Մայր-հաշիւ փոխադրելու համար՝ նախ պարտական հաշիւը առնելով՝ որ է ընդհանուր ապրանքը , անոր համար Մայր-հաշուին մէջ հաշիւ մը կը բանաւք և անոր պարտքին կողմը կը գրենք պահանջողին անունը ծայրը ին մասնիկն աւելցրնելով , որով ըսել կ'ըլլայ թէ ընդհանուր ապրանքը պարտի Յակոբ Նշանեանին :

Յետոյ պահանջող հաշիւն առնելով , որ է Յակոբ Նշանեան , ասոր համար ալ Մայր-հաշուին մէջ հաշիւ մը կը բանաւք և անոր պահանջքին կողմը կը գրենք պարտականին անունը եւ մասնիկն աւելցրնելով , որով ըսել կ'ըլլայ թէ՝ Յակոբ Նշանեան կը պահանջէ ընդհանուր ապրանքէն :

Ահաւասիկ հոս բացատրուեցաւ կրկնատոմարի սահմանին մէջ ըսածնիս այսինքն թէ՝ միեւնոյն գործողութիւնը Մայր-հաշուին մէջ երկու անգամ կը փոխադրուի , մին պարտական հաշուոյ պարտքին կողմը . միւսը պահանջող հաշուոյն պահանջքին կողմը :

Այսպէս կ'անցնին 'ի Մայր-հաշիւ Օրհաշուին պարզ յօդուածները , այսինքն այն յօդուածներն , որոց մէջ սլարտական ու պահանջող հաշիւները միայն մէկ հատ են , ինչպէս կ'երևի նախընթաց թ. 198-199 երեսներուն վրայ :

Օրհաշուի մը յօդուածն ամէն անգամ որ 'ի Մայր-հաշիւ անցնի , պարտական հաշիւն անցուցած ատեն պահանջող հաշուոյն կամ անձին անուանվերջը ին մասնիկն աւելցնելու է (պարտին զօրութեամբ կ'իմացուի) պահանջող հաշիւը անցնելու ատեն , պարտական հաշուոյն ծայրը եւ մասնիկն աւելցնելու է (պահանջէն զօրութեամբ կ'իմացուի) :



### ԲԱՂԱԴՐԵԱԼ ՅՕԴՈՒԱԾՔ

Օրինակ Ա.

4

15 Մարտ 1884

4	ԶԱՆԱԶԱՆՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԻՆ Եօրկի Պալիին ծախսցի և փոխարէն առի (Հոսպէտք է գրել ծախուած ապրանաց մանրամասնութ.)				
3	ՄՆՏՈՒԿ Առած ստակս	3000	—		
5	ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ Խմիչ և ր տոմսակը 31 աւուր	5000	—	8000	—

Այս տեսակ բաղադրեալ յօդուած մը 'ի Մայր-հաշիւ փոխադրե-  
լու համար, ինչպէս ըսինք յառաջադոյն, գանազանքի համար  
հաշիւ բանալ հարկ չէ Մայր-հաշուին մէջ, այլ սլարտականները,  
այսինքն, սնտուկը և գանձելի տոմսակը իրենց գումարներովը սլար-  
տական ընելու է ընդհանուր ապրանքին և ապա ընդհանուր ապ-  
րանքն ալ պահանջող ընելու է գանազանքի ըսելով այսպէս:

3 Պարտի
ՄՆՏՈՒԿ
3 Պահանջի

1884 Մարտ	15	Ընդհ. ապրանքին	4	3000	—						
3			5			ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ					5
											Պահանջի

1884 Մարտ	15	Ընդհ. ապրանքին	4	5000	—						
4			4			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ					4
											Պահանջի

						1884 Մարտ	15	Զանազաններէ	4	8000	—
--	--	--	--	--	--	--------------	----	-------------	---	------	---

Այսպէս կ'անցնին 'ի Մայր-հաշիւ Օրհաշուին բաղադրեալ յօդ-  
ուածները , այսինքն , այն յօդուածներն որոց մէջ պարտականը կամ  
պահանջողը և կամ երկուքը միանգամայն մէկէն աւելի կ'ըլլան :

Մեր այժմու 'ի Մայր-հաշիւ փոխադրած յօդուածին պարտական-  
ները միայն երկուք էին , իսկ այն յօդուածներն որոց թէ՛ պարտա-  
կան և թէ՛ պահանջող հաշիւները մէկէն աւելի ըլլան , զանոնք 'ի  
Մայր-հաշիւ փոխադրելու համար դժուարութիւն չկայ , այլ պարտա-  
կանները զատ զատ և սահանջողները զատ զատ որու որ պարտական  
են և որչափ գումարի համար՝ պարտական և պահանջող ընելու  
է , առանց շուարելու գանազանք գանազանաց ածականներուն վը-  
րայ , որք հաշիւ չեն ունենար Մայր-հաշուին մէջ :

Փ Ո Ր Զ Ա Կ Շ Ի Ռ

Կ Ա Մ

Կրկնատոմարի տետրակներուն փորձը

Բաւական չէ միայն գիտնալ թէ Ձեռատետրին յօդուածներն ինչ-  
պէս կը փոխադրուին յՕրհաշիւ՝ և թէ Օրհաշուին յօդուածներն ինչ-  
պէս 'ի Մայր-հաշիւ . վասն զի թէեւ ամէն տոմարակալի կամ գրա-  
գրի պարտքն է ուշադրութեամբ անցնել զանոնք , սակայն գրեթէ  
սխալմունք կրնան պատահիլ թէ՛ Օրհաշուին մէջ և թէ՛ Մայր-հաշ-  
ուին մէջ . ուրեմն կը մնայ գիտնալ թէ՛ Օրհաշուին յօդուածներն  
արդեօք ուղիղ կերպով 'ի Մայր-հաշիւ փոխադրուած են . զայս գիտ-  
նալու համար՝ կրկնատոմարի մէջ փորձակշիռ անուամբ գործողու-  
թիւնն ընել հարկ է : Կրկնատոմարի սահմանին վրայ խօսուած ատեն  
ըսինք թէ՛ Մայր-հաշուին միջ բացուած հաշուոց պարտքին եւ պա-  
հանջքին գումարներն իրարու հաւասար պետք է ըլլան , վասն զի  
ինչպէս տեսանք՝ Մայր-հաշուին մէջ հաշուոց գումարն երկու ան-  
գամ փոխադրուեցաւ . մին՝ պարտքին կողմը , և միւսը՝ պահանջքին  
կողմը , և որովհետեւ այդ գումարն ալ Օրհաշուէն փոխադրեցինք ,  
ըսել է թէ Մայր-հաշուին մէջ բացուած հաշուոց պարտի և պահանջի  
սիւնոց գումարներն և Օրհաշուին գումարը ( որոչեալ ժամանակի  
մը մէջ ) պէտք է հաւասար ըլլան իրարու , ասի ալ կ'ըլլայ փորձա-  
կշիռի գործողութեամբ :

Փորձակշիռն ընդհանրապէս ամիսն անգամ մը կ'ըլլայ . բայց շատ  
գործ ընող վաճառատանց և դրամատանց մէջ գրեթէ ամէն օր կամ  
չարաթն անգամ մը կ'ըլլայ . եթէ սխալմունք մ'եղած է՝ առաջին ամ-  
սոյն յայտնի կ'ըլլայ և շուտով կ'ուղղուի : Մայր-հաշուին մէջ տեղի  
ունենալիք սխալմունքը քիչ վերջը մի առ մի ցուցուցած ենք , ահա  
բոլոր այդ սխալները ( եթէ տեղի ունեցած են ) ուղղելու կամ սխալ-

մունք եղած չլլալուն վստահ ըլլալու համար է որ փորձակշիռը հնարուած է , որ հետեւեալ կերպով կը կատարուի :

Նախ՝ Օրհաշուին երեսի գումարներն ընելու է մինչեւ ամսոյն վերջը կամ այն թուականը՝ յորում փորձակշիռն ընել կ'ուզուի . յետոյ Մայր-հաշուին մէջ գտնուած հաշուոց առաջինէն սկսելով պարտքին և պահանջքին գումարներն ընելու , և դիժ մը քաշելով գումարը տակը գրելու է կամ եթէ այսպէս ընել չուզուի , գտնուած գումարը կապար գրչով վերջին տողին քովը գրելու է , յետոյ զատ թղթի մը վըրայ , որոյ ձեւն ՚ի ստորեւ կ'երեւայ , այս հաշուոց պարտքին գումարները գրելու է պարտքին սիւնին մէջ տակէ տակ , և պահանջքինները պահանջքին սիւնին մէջ , ապա գումարել զատ զատ երկու սիւնները . երբ հաշուոց պարտքին և պահանջքին գումարներն իրարու հաւասար և Օրհաշուին գումարին համապատասխան ըլլան՝ ըսել է թէ նոյն ամսոյ գործողութեանց մէջ սխալմունք մը տեղի ունեցած չէ :

Փորձակշիռի թղթին ձեւը

Փորձակշիռ..... ամսոյ 188.....

Երեսը Մայր-հաշուի	Անուանք հաշուոց	Պարտի		Պահանջք	
		3	4	5	6
1	2				

ԾԱՆՕԹ. — Ցուցակիս վրայ գրուած անուններն և սիւնոց տակի թիւերն ուսանողին դիւրութեան համար գրած ենք , գործի մէջ ատոնք չեն գրուիր փորձակշիռին վրայ :

Փորձակշիռի թղթին թիւ 1 սիւնին մէջ կը գրուի՝ հաշուոց Մայր-հաշուին մէջ քանի՞երորդ երեսը բացուած ըլլալը . թ. 2 լայն սիւնին մէջ՝ հաշուոց անունը . թ. 3-4ին մէջ՝ հաշուոց պարտքին կողման սիւնոց գումարները կոտորակով մէկտեղ . թ. 5-6ին մէջ՝ հաշուոց պահանջքին կողման սիւնոց գումարները կոտորակով մէկտեղ : Իսկ

փորձակչուի թղթին կամ տետրակին վրայ պէտք է գրել ո՛ր ամսոյ փորձակչիուն ըլլալը :

Եթէ փորձակչուին արդիւնքը սխալ ըլլայ՝ պէտք է վերաքննել Օրհաշուին յօդուածոց 'ի Մայր-հաշիւ փոխադրութիւնը կէտադրելով . այսինքն, նոյն ամսոյ Օրհաշուին յօդուածները զատ զատ նայիլ թէ ճիշդ անցած են 'ի Մայր-հաշիւ , և Օրհաշուին ամէն նայուած յօդուածին գումարին առջեւ կապար գրչով կէտ մը դնել , նոյնպէս Մայր-հաշուին գումարներուն քով . որով ըսել կ'ըլլայ թէ նոյն գումարները քննուած և ճիշդ գտնուած են : Դիւրութեան և ժամանակի կորուստ չըլլալու համար , եթէ փորձակչուի մը գումարը՝ զորօրինակ , պարտքին գումարը միւսներէն տարբերի , միայն պարտքի վերաբերեալ փոխադրութիւնները կէտադրելու է . իսկ եթէ պահանջքինը տարբեր ըլլայ՝ պահանջքի վերաբերեալ փոխադրութիւնները կէտադրելու է . իսկ այն ժամանակ ամբողջ Օրհաշուին փոխադրութիւնը կէտադրելու է , երբ երեք գումարն ալ տարբեր ըլլան իրարմէ :

Փորձակչուի ատեն՝ Մայր-հաշուին մէջ եթէ գոցուած հաշիւներ ըլլան՝ այսինքն , պարտքին և պահանջքին գումարները հաւասարած , անոնց գումարն ալ մէկտեղ առնելու է , որպէս զի փորձակչուին գումարն Օրհաշուին գումարին հաւասարի :

Գործի մէջ՝ փորձակչիւորը փոխանակ զատ թղթերու վրայ շինելու , թղթեայ մասնաւոր տետրակ մը կը յատկացնեն ամէն տարւոյ փորձակչուի համար , որպէս զի մէկ տարուանն ամիսփ տեղ մը երեւայ :



## Գ Լ Ո Ւ Խ Զ Ո Ր Ր Ո Ր Դ



### ՕՐՀԱՅՈՒԻՆ ԵՒ ԾԱՅՐ-ՀԱՅՈՒԻՆ ՄԷՋ ՍՊՐԳԵԱԼ ՍԽԱԼՆԵՐՆ ՈՒՂՂԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Որովհետեւ , հակառակ ամէն ուշադրութեան , կրնայ ըլլալ որ Օրհաշուին և Մայր-հաշուին մէջ սխալներ սպրդին կամ սխալ յօդուած գրուի՝ ուստի կարեւոր է հոս մանրամասնօրէն բացատրել այն սրխալներն որք կրկնատոմարի Օրհաշուին և Մայր-հաշուին մէջ կըրնան սպրդիլ և զանոնք ուղղելու կերպը , որպէս զի , ուսանողն այդ տեսակ պարագայի մէջ չչուարի , այլ կարող ըլլայ ուղղել զայնս :



ՕՐՀԱՇՈՒԻՆ ՄԷՋ ՍՊՐԴԵԱԿ ՍԻԱԼՄՈՒՆՔՆ

Օրհաշուին մէջ կրնայ պատահիլ հետեւեալ սխալներն կամ մոռացմունքն . և որովհետեւ գիտենք թէ Օրհաշուին մէջ քերթընուածքը հակառակ է օրինաց տրամադրութեան , ուստի զայնս ուղղելու համար ուրիշ միջոց կայ :

1. Ամբողջ յօդուած մը յՕրհաշիւ անցնել կը մոռցուի :
2. Յօդուած մը երկու անգամ Օրհաշիւ կ'անցնի :
3. Հաշիւ մը փոխանակ պարտական ընելու՝ պահանջող ընել , կամ փոխանակ պահանջող ընելու՝ պարտական ընել :
4. Հաշուոյ մը տեղ սխալմամբ ուրիշ մը պարտական կամ պահանջող ընել :
5. Մասնաւոր կամ հաւաքական գումարի սխալմունք :

Կերպ ուղղութեան

1. Երբ ամբողջ յօդուած մը յՕրհաշիւ անցնել մոռցուած է ժամանակին՝ պարզապէս Օրհաշուին շարունակութեան մէջ պէտք է անցընել յիշեալմոռցուած յօդուածն իւր թուականովը , միայն թէ՛ յիշելու է յիշեալ յօդուածին մէջ իւր կարգին անցնել մոռցուած ըլլալը :
2. Երբ միեւնոյն յօդուածն երկու անգամ փոխադրուած ըլլայ՝ նոյն երկու յօդուածոց հակառակ երրորդ յօդուած մ'անցնելու է , որպէս զի աւելորդ գրուած մէկ յօդուածը ջնջուի :

Զորօրինակ , գիցուք թէ՛ Օրհաշուին մէջ հետեւեալ յօդուածն երկու անգամ գրած ըլլանք .

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ԳՐԻԳՈՐԻՆ 10000

Զայս ուղղելու համար՝ պէտք է գրել Օրհաշուին մէջ երրորդ յօդուած մը այսպէս .

ԳՐԻԳՈՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԻՆ 10000

..... թուական յօդուածն երկու անգամ գրուած ըլլալով՝ մին ջնջելու համար :

Այսպէս գրուած ատեն՝ Գրիգորին հաշիւը՝ որ երկու յօդուածով 20000 զրչ. պահանջող եղած էր Մայր-հաշուին մէջ, այս երրորդ յօդուածով 10000 զրչ. ալ պարտական եղաւ , որով մնաց իւր պահանջքը միայն 10000 , որ իւր ճիշդ առնելիքն է :

3. Դիցուք թէ՛ Պարոյրին ապրանք ծախուեր և ստակը կանխիկ առնուեր է , բայց սխալմամբ Օրհաշուին մէջ այսպէս անցեր է .

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ՍՆՏՈՒԿԻՆ

Ինչպէս կը տեսնուի՝ այս յօդուածը սխալ է , զի փոխանակ գրուելու

ՍՆՏՈՒԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԻՆ

Հակառակը գրուած է .

Արդ՝ այս տեսակ սխալներն ուղղելու համար Օրհաշուին մէջ երկու յօդուած գրել հարկ է, առաջինը՝ սխալ անցած յօդուածը ջնջելու համար, իսկ երկրորդը՝ որ ուղիղն է, միւսներուն տեղը բռնելու համար. արդ՝ մեք եւս այս սխալն ուղղելու համար, պիտի գրենք նախ յօդուած մը այսպէս,

**ՄԵՏՈՒԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԻՆ**

..... Թիւ յօդուածը սխալ գրուած ըլլալով զայն ջնջելու համար : Յետոյ ուղիղը գրելու համար կ'ըսենք .

**ՄԵՏՈՒԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԻՆ**

Վերոյգրեալ յօդուածին ուղիղը .

4. Ինցուք թէ՛ Գրիգոր անունով երկու անձի հետ գործ կ'ընենք, մէկը Յակոբեան՝ միւսը Սերովբեան . Գրիգոր Յակոբեանի ապրանք ծախեցինք ապառիկ, բայց Օրհաշուին մէջ սխալմամբ Գրիգոր Սերովբեանը պարտական ըրինք . այս տեսակ սխալմունքն եւս ուղղելու համար, նախ յօդուած մը պիտի գրենք՝ Գրիգոր Սերովբեանը, զոր ի գուր պարտական ըրած էինք, պահանջող ընելու համար այսպէս .

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ԳՐԻԳՈՐ ՍԵՐՈՎՐԵԱՆԻ**

..... Թուական յօդուածը սխալ գրուած ըլլալով, զայն ջնջելու համար :

Վերջը ուղիղը գրելու համար ուրիշ յօդուած մը եւս կը գրենք .

**ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈՅԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԻՆ**

..... յօդուածին ուղիղը :

5. Ինցուք թէ՛ Օրհաշուին մէկ յօդուածին 5000ի գումարը սխալմամբ սիւնակին մէջ 3000 անցուցած ենք, նոյնպէս ի Մայր-հաշիւ . արդ այս պակաս գումարին այն է, 2000ին համար ուրիշ յօդուած մ'ալ պէտք է գրել . իսկ եթէ փոխանակ պակասի աւելի գրուած ըլլայ՝ դարձեալ տարբերութեանը համար հակառակ կերպով ուրիշ յօդուած մը գրել պէտք է : Բոլոր այս սխալմունքը գտնելէ և Օրհաշիւն անցընելէ վերջը՝ բնականաբար զանոնք պէտք է անցնել նաեւ ի Մայր-հաշիւ :

**ՄԱՅՐ—ՀԱՇՈՒԻՆ ՄԷՋ ՍՊՐԴԵԱԼ ՍԽԱԼՄՈՒՆՔՆ**

Օրհաշուի յօդուածներն ի Մայր-հաշիւ փոխադրելու առեւն կրնայ հետեւեալ սխալմունքը պատահիլ :

1. Ամբողջ յօդուած մը ի Մայր-հաշիւ անցնել կը մոռցուի :
2. Յօդուած մը երկու անգամ կը փոխադրուի :
3. Հաշիւ մը փոխանակ պահանջքին՝ պարտքին կողմը կ'անցնի և հակառակը :
4. Գումարի մը տեղ ուրիշ գումար մը կ'անցնի :
5. Ուրիշ հաշուոյ մը վերաբերեալ գումար մը կ'անցնի տարբեր հաշուոյ մը :



Կերպ ուղղութեան

1. Եթէ յօդուած մը մտուցուի՝ նշմարուած պահուն իսկ այդ յօդուածն անմիջապէս պէտք է անցնել ՚ի Մայր-հաշիւ իւր թուականովն:

2. Եթէ մի և նոյն յօդուածն երկու անգամ անցած ըլլայ՝ առանց Օրհաշուին մէջ բան մը գրելու, հակառակ կերպով կը ջնջուի. այսինքն, եթէ հաշուոյ մը պարտքին կողմը մի և նոյն գումարն երկու անգամ անցած է՝ զայն ուղղելու համար, նոյն հաշուոյն պահանջքին կողմը պէտք է աւելցնել երկու անգամ պարտքին անցած գումարին միոյն չափ գումար մը, որպէս զի ճշդուի: Իսկ ընդհակառակն եթէ հաշուոյ մը պահանջքին կողմն երկու անգամ անցած ըլլայ՝ հակառակ կողմը պէտք է աւելցնել երկու անգամ պահանջքին անցած գումարին միոյն չափ գումար մը:

Այս կարգի սխալմունքն ուրիշ կերպով ալ կ'ուղղուի, այսինքն, Օրհաշուին մէջ յօդուածներ գրելով սխալը ուղղել և ուղիղը գրել. սակայն ասի շատ երկար գործ է:

3. Եթէ հաշիւ մը փոխանակ պարտքին՝ պահանջքին կողմն անցնի և հակառակը, այս եւս կ'ուղղուի առանց Օրհաշուին մէջ յօդուած գրելու, միայն Մայր-հաշուին մէջ հաշիւ մ'անցնելով. առաջին պարագային մէջ՝ պարտքին կողմի սիւնին մէջ պէտք է անցնել սխալմամբ պահանջքին կողմն անցած գումարին կրկինը. իսկ երկրորդ պարագային մէջ՝ առաջնոյն հակառակը: Պէտք է դիտել որ՝ այս կերպով Մայր-հաշուին մէջ այդ հաշուոց գումարներն աւելցան, առանց Օրհաշուին գումարն ալ միանգամայն աւելնալու, որով փորձակշիռ ըրած ատեննիս՝ Մայր-հաշուին հաշուոց ընդհանուր գումարներն Օրհաշուին գումարին չափով համաձայնին, այսինքն, Մայր-հաշուին գումարները աւելի պիտի ըլլան. ասոր առաջքն առնելու համար, Մայր-հաշուին մէջ կրկին գրուած գումարներուն առջեւ աստղանիշ մը դնելու է կամ զանոնք կարծիր մելանով գրելու է, որպէս զի փորձակշիռ ատեն այդ գումարները մէկտեղ չառնուին:

4. Գումարի մը տեղ ուրիշ գումար մը կ'անցնի:

5. Ուրիշ հաշուոյ մը վերաբերեալ գումար մը տարբեր հաշուոյ կ'անցնի:

Այս երկու սխալներն ալ, որք գումարի վրայ միայն կը կայանան, կրնան քերթուելով ուղիղը գրուիլ:

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՏԵՏՐԸԿՆԵՐ

Երկրորդական տետրակներէն միայն Ձեռատետրին վրայ խօսեցանք ասկէ յառաջ, այժմ միւս երկրորդական տետրակներուն ալ ձեւերը մի առ մի պիտի ցուցնեմք, հանդերձ մանրամասն տեղեկութեամբք :

#### ԳՆՄԱՆ ՏԵՏՐ

Այս տետրակը՝ յորում կ'ընդօրինակուին ուրիշներէ գնուած ապրանաջ հաշուեցուցակները, կ'ըսուի Գնման տետր, որն որ Ձեռատետրին պէս կը գրուի և անոր պէս իւրաքանչիւր երեսին վրայ թիւ կ'ըլլայ : Մէկէ մը գնուած ապրանքի մը հաշուեցոյցն երբ շատ ընդարձակ և բազմանիւթ ըլլայ՝ որոյ մանրամասնութիւնը յ'Օրհաշիւ գրելն երկար կ'ըլլայ, այդ հաշուեցոյցերուն ինչպէս նաեւ ամէն հաշուեցոյցերուն օրինակը կը գրուի այս տետրին մէջ :

#### ԳՆՄԱՆ ՏԵՏՐ

8

2 Մարտ 1884			
<b>ՊԱՀԱՆՁԷ Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ</b>			
Իւր հաշուեցոյցին համար, վճարելի 41 օրէն .			
2 հակ վաթէր մանած. [Թ. 12 14 Գ. 800	1600	—	
3 » » » » 20 24 » 4000	3000	—	
3 » կապոյտ » » » » 4425	7125	—	11725 —
<hr/>			
6 Մարտ			
<b>ՊԱՀԱՆՁԷ Յ. ՆՇԱՆԵԱՆ</b>			
Իւր հաշուեցոյցին համար, վճարելի 61 օրէն .			
100 ծրար ամերիքան 5 1/2 լիպր Գ. 30 ՂՐԸ.	3000	—	
200 » » 6 1/2 » » 35 »	7000	—	10000 —
<hr/>			
11 Մարտ			
<b>ՊԱՀԱՆՁԷ Կ. ՀԱՄԱՄՃԵԱՆ</b>			
Իւր հաշուեցոյցին համար, վճարելի 31 օրէն .			
100 ծրար սափաշպուր 6 բուպնոց Գ. 18 1/2 ՂՐԸ.	1850	—	
20 » մատամբօլ [Թ. 300 » 75 ՂՐԸ.	1500	—	3350 —
			25075 —

Գնման տետրին իւրաքանչիւր ամսոյ գումարը պէտք է հաւասար

ըլլայ՝ Մայր-հաշուին մէջ բացուած ընդհանուր ապրանքի հաշուոյն նոյն ամսոյ պարտքին դումարին :

Այս տետրին մէջ իւրաքանչիւր անձի անունը պահանջէ սկզբնաւորութեամբ կը գրուի :

Պոլսոյ վաճառականը գրեթէ այս անուամբ տետրակ չեն գրեր , այլ կը շատանան միայն ստացած հաշուեցոյցներին մասնաւոր տետրակի մը մէջ սլահել . և ամէն տարի զատ կատարող ընել . բայց և այնպէս մենք պիտի ցուցնենք հոս Գնման տետրին ձեւն և գրութեան կերպը :

ՎԱՃԱՌՄԱՆ ՏԵՏՐ

Այս տետրը իւր նախորդին հակառակն է , այսինքն , Գնման տետրին մէջ կ'որինակուին ուրիշներէ գնուած ապրանայ հաշուեցոյցներն , իսկ վաճառման տետրին մէջ կ'որինակուին ուրիշներու ծախուած ապրանայ հաշուեցոյցներն : Այս ալ միւսին պէս գիծեր և երեսի թիւ ունի :

Այս տետրին կարեւորութիւնը մեծ է , վասն զի այս տետրին միջոցաւ վաճառականը կրնայ առաջքն առնել իւր ծախած ապրանայ քանակութեան եւ ի համար ըլլալիք վէճերուն :

Այս տետրակն ալ Պոլսոյ վաճառականք ուրիշ կերպով կը գրեն : Այս տետրին մէջ կը գրեն միայն զանազաններու ապառիկ ծախուած ապրանքներն իրենց կարեւոր մանրամասնութեամբը , եթէ չուզեն անոնց համար Մայր-հաշուին մէջ զատ հաշիւներ բանալ :

ՎԱՃԱՌՄԱՆ ՏԵՏՐ

6

5 Մարտ 1884			
ՊԱՐՏԻ ՅԱԿՈՒ ՄԱՐԹԱ ՕՂՆՈՒ ՄԱՐԶԸ. վճա. 41 օրէն			
1	հակ վաթէր մանած թ. 20 <sup>24</sup> դ. 4020	1020	—
2	» կապոյտ » » » 4425	2850	—
4	» վաթէր » » 12 <sup>14</sup> » 810	810	—
		<u>4680</u>	—
7 Մարտ			
ՊԱՐՏԻ ԿԱՐԱՊԵՏ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՍԻՎՐԻ. վճա. 61 օրէն			
20	ծրար կարմիր տպածոյ 800 եարտա դ. 2 շրշ.	1600	—
30	» տպածոյ քուէթօն 4200 » » 3 »	3600	—
		<u>5200</u>	—
»			
ՊԱՐՏԻ ԿԱՐԱՊԵՏ ՊԱԼԹԱՃԵԱՆ ԿԱՐՆ. վճա. 91 օրէն			
20	ծրար ֆանէլա սաթրանճ 805 եարտա 8 շրշ.	6440	—
5	» » ճերմակ 200 » 7 »	1400	—
		<u>7840</u>	—
		<u>17720</u>	—

Վաճառման տեսքին մէջ կը գրուին այլեւայլներու անունները պարտի կամ պարտին սկզբնաւորութեամբ . և կամ պարզապէս առանց այս բառերուն միայն անուննին գրելով և տակը ծախուած ապրանայ մանրամասնութիւնը :

Այս տեսքին ալ իւրաքանչիւր ամսոյ գումարը (կանխիկ ծախուածներն ալ աւելցնելով) պէտք է հաւասար ըլլայ Մայր-հաշուին մէջ բացուած ընդհանուր ապրանքի հաշուոյն նոյն ամսոյ պահանջքին գումարին :

Մ Թ Ե Ր Ա Տ Ե Տ Ր

Մքերատետրը կարեւոր է մեծաքանակ-վաճառականաց համար , որք անդ կ'արձանագրեն հետզհետէ դնած և ծախած ապրանքներնին , որով ուղած ժամանակնին կրնան դիւրաւ և շուտով դիտնալ վաճառատունը պատրաստ գանուած ապրանայ որքանութիւնը , և միանգամայն գործին տէրը շուտով կը հասկնայ իւր գործածած մարդոց հաւատարմութիւնը կամ անհաւատարմութիւնը : Այս տեսքին միջոցաւ վաճառականը կրնայ դիտնալ նաեւ իւրաքանչիւր ապրանայ

ՄԹԵ

Մ ու տ ր

Թուական		Թիւ	Քանակ.	Տեսակ ապրանայ	Գին	Վաճառող	Տեղի
1884							
Յուլիս	10	20-35	16	Հակ վաթէր թ. 8/14	800	Հաճօրուլօ	'ի Կ. Պոլիս
Յուլիս	10	—	500	Հ. խահուէ	8	Ա. Հարենց	Ղալաթիա
Յուլիս	14	70-71	400	Մրար մատամբօլ	70	Ղաղարոսեան	'ի Կ. Պոլիս

ի'նչ գին դնած և ի'նչ գնով ծախած , ու'սկից առած և որու ծախած ըլլալը :

Մքերագրին վրայ , որոյ ձեւը վերեւ կ'երեւայ , տետրակին երկու երեսը միանգամայն բացուելով պէտք եղած գիծերը դժուելէ վերջը՝ ձախ կողման երեսին վրայ մուտք , և աջ կողման երեսին վրայ էլք բառերը կը գրուին : Երբ տետրակն այսպէս կը պատրաստուի՝ գնուած կամ ո՛րէ պատճառաւ վաճառատունը մտած ապրանքները ձախ երեսին վրայ , այսինքն , մուտքին կողմը կը գրուին . իսկ ծախուած կամ ո՛ր է պատճառաւ վաճառատունէն դուրս ելած ապրանքներն ալ աջ երեսին վրայ , այսինքն , էլքին կողմը կը գրուին իրենց

Թուակահաններու կարգաւր : Բայց որովհետեւ չըլլար որ ասորանք մը միշտ մէկ անգամէն ծախուի , վասն որոյ ելքին կողմն աւելի զիծեր ձգելու է ըստ տեսակի ասորանքին , որպէս զի կարենայ բոլոր ելքերը պարունակել :

Ասկէ կը հետեւի թէ՛ մթերատետրը երբէք չյարմարիր փոքրաքանակ-վաճառականաց , դեղադործաց և մանրավաճառաց ( Խոր-դաշնի ) որք վանազան տեսակ ասորանքներէ միշտ մաս առ մաս ծախսելուն համար՝ անոնց ամենուն դրութեանը համար մասնաւորապէս դրադիր մը յատկացնել հարկ պիտի ըլլայ : Բայց և այնպէս , եթէ դործին տեսակը ներելու ըլլայ՝ աշխատելու է միշտ մթերատետրը ունենալ , այսինքն , եթէ դործը տպածոյի ըլլայ՝ առանց տեսակի տարբերութեան , միայն ծրարի հաշիւ բռնելու է , իսկ եթէ բամբակի ըլլայ՝ կապոյցի հաշիւ բռնելու է :

Մթերատետրին հիմնական ձեւը թէ՛ եւ շիտխուիր , այսինքն , մէկ կողմը վաճառատունը մտած ասորանքները կը գրուին և միւս կողմը ելածները , սակայն վաճառականին դործին տեսակին համեմատ յիշեալ տետրին երեսի զիծերը կրնան աւելնալ կամ պակսիլ :

Մէկ քանի տեսակ ասորանքի վրայ դործ ընող վաճառականը՝

ԲԱՏԵՏԲ

Ելք

Թուակահան	Թիւ	Քանակ	Տեսակ ասորանաց	Գին	Գնող	Տեղի	
1884							
Յուլիս	12	20-22	3	Հակ վաթէր թ. 8/14	820	Յ. Մարթա օղ.	'ի Կ. Պոլիս
»	14	23-25	3	» » »	820	Կոստիկեան	»
Յուլիս	17	—	100	Ծրար մատամբօլ	80	Նաթան	»
»	19	—	50	» »	82	Նանի Ծիրա	»
»	22	—	100	» »	81	Նաքար Նիսիս	»

նոցա իւրաքանչիւրին մուտքն ու ելքը գիտնալու համար , մթերատետրին վրայ զատ երեսներ կը յատկացնէ իւրաքանչիւր տեսակ ասորանքի համար . զորօրինակ , մէկ երեսին վրայ կը նշանակէ խահուէի մուտքն ու ելքը և միւսին վրայ՝ անառիւնը եւ :

Մենք դրած ենք հոս օրինակ մը մթերատետրի , որ կը յարմարի կէս-մեծաքանակ վաճառականաց . սակայն այդ ձեւին վրայ կրնան համառօտութիւններ ըլլալ ըստ դործոյն , զորօրինակ , մուտքին կողմի վաճառողաց անուններն և տեղը , և ելքին կողմի գնողներուն անունը և գնոյն սիւնը վերցուիլ , եթէ վաճառականն ուզէ միայն ասորանաց մուտքն ու ելքը գիտնալ :

1  
Մ ո ՚ ւ տ ք

1884 Ս Ն Տ Ո Ւ Կ Յ Ո Ւ Ն Ո Ւ Ա Ր Ա Մ Ս Ո Յ

1  
Ե լ ք

1884	Յունուար	1	Դրած դրամագլուխս .....	100000
»	»	8	Կանխիկ ծախք .....	19000
»	»	27	» .....	2645
»	»	30	Հօրեղբորմէս փոխ առածս .....	20000
				141645
				20

1884	Յունուար	1	Գնած զանազան կարասեացս համար .....	3000
»	»	6	Տ. Գարակէօղեանի հաշուեցոյցը վճարուած .....	53500
»	»	16	Պանք Օթօմանի վճարուած .....	20000
»	»	26	Մէհմէտ էֆէնտիի հաշուեցոյցը վճարուած .....	3200
»	»	»	Գ. Պօղոսեանի վճարուած .....	19503
»	»	29	Մարգար Տատրեանի վճարուած .....	9800
»	»	31	Վաճառատանս զանազան ծախքերը վճարուած .....	1300
				31342
				20
				141645
				20

2  
Մ ո ՚ ւ տ ք

1884 Ս Ն Տ Ո Ւ Կ Փ Ե Տ Ր Ո Ւ Ա Ր Ա Մ Ս Ո Յ

2  
Ե լ ք

1884	Փետրուար	1	Սնտուկը պատրաստ դրամ .....	31342
»	»	»	Պանք Օթօմանէ առնուած .....	5000
»	»	9	Յ. Մանիսալեանի տոմսակին գումարը .....	17400
»	»	10	Գ. Մըսրեանի վրայ բացած վարկս .....	5000
»	»	12	Բ. Գարսեղեանի փոխանակադրին գումարը .....	5400
»	»	12	Պանք Օթօմանէ առնուած .....	3000
				67142
				20

1884	Փետր.	1	Թիւ 1 տոմսակս վճարեցի .....	4320
»	»	16	Հօրեղբորորդւոյս նուէր .....	1000
»	»	20	Պանք Օթօմանի .....	30000
»	»	29	Զանազան ծախք վաճառատան .....	1300
				30522
				20
				67142
				20

ՏԵՏՐ ԴՐԱՄԱՐԿՂԻ ԿԱՄ ՍՆՏՈՒԿԻ

Ինչպէս որ Մքերատետրին միջոցաւ վաճառականը գիտցաւ իւր վաճառատունը պատրաստ գտնուած ապրանց քանակութիւնը, նոյնպէս ալ պէտք է գիտնայ իւր առ ձեռն դրամոց հաշիւը, այսինքն թէ՛ որչա՞փ և ո՞ւրկէ դրամ կուգայ և թէ՛ որչա՞փ և որո՞ւ դրամ կը վճարուի, և սնտուկը որչա՞փ դրամ կայ, այս մանրամասնութեանց պատկերը ներկայացնող տետրակին կ'ըսուի Դրամարկղի կամ աւելի գործնականն ըսելով՝ Սնտուկի տետրակ, որ շատ կարեւոր է վաճառականութեան համար:

Սնտուկի տետրին ձեւը ճիշդ Մայր-հաշուի երեսին կը նմանի.

այսինքն՝ մէկտեղ կը բացուին տետրակին երկու երեսները, որոց վրայ միեւնոյն երեսի թիւը գրուած է կամ կը գրուի ՝ ձախ երեսին վրայ ծայրը կը գրուի մուտք, և աջ երեսին վրայ դարձեալ ծայրը ելք. մէջտեղը 188. Սնտուկ ..... ամսոյ բառերը:

Սնտուկի տետրակին երկու երեսին վրայ ալ երեք սիւն կայ. առաջինը թուականի, երկրորդը գումարի և երրորդը՝ գումարին կոտորակին համար (եթէ ունենայ): Սնտուկին ձախ երեսին վրայ, այսինքն, մուտքին կողմն անմիջապէս կը գրուի, միայն մէկ տողի վրայ իւր թուականովը՝ սնտուկը մտած դրամը տուողին անունն և կամ ինչ հաշուէ եկած ըլլալը նշանակելով իսկ աջ երեսին վրայ, այսինքն



քրն, ելքին կողմը դարձեալ անմիջապէս իւր թուականովը և մէկ տողի վրայ, սնտուկէն ելած դրամն առնողին անունը և կամ ինչ հաշուի համար վճարուած ըլլալը նշանակելով. պատրաստ ծախուած սնտուկի տետրակին վրայ երրորդ սիւն մ'ալ կ'ըլլայ, ուր կը գրուին հաւաքական գումարներն, երբ մէկ երեսն ամբողջ լենալու ըլլայ : Արդ՝ քանի որ Սնտուկի տետրին մէկ կողմն առնուած դրամները գըրենք և միւս կողմը տրուածները, ըսել է թէ այս երկու կողման գումարներուն տարբերութիւնը սնտուկին վիճակը պիտի ցուցնէ, այսինքն, սնտուկին մէջ գտնուած դրամին որքանութիւնը : Արոչեալ ժամանակի մը մէջ՝ զորօրինակ, շարթէ շարթ կամ ամսէ ամիս պէտք է նայիլ սնտուկին հաշիւը, որոյ կ'ըսեն սնտուկին փորձն քնել : Սնտուկին փորձն ընել ըսելով պէտք է հասկնալ այն գործողութիւնը, որով սնտուկն եղած պատրաստ դրամին որքանութիւնը՝ սնտուկին տետրին ցուցուցած որքանութեան հետ կը բաղդատուի, և ճիշդ կամ սխալ ըլլալը կը հասկցուի : Սնտուկին փորձն ընելու համար՝ սնտուկի տետրին մուտքին և ելքին կողմի գումարները պզտի թղթի մը վրայ առնելով նոցա մնացորդը գտնալու է, որ կը ցուցնէ սնտուկին պատրաստի դրամն՝ եթէ մուտքին գումարը ելքին գումարէն շատ ըլլայ. իսկ եթէ հաւասար ըլլան, ըսել է թէ սնտուկը պատրաստ դրամ չպիտի ըլլայ . իսկ ելքին գումարը մուտքինէն շատ չկրնար ըլլալ, վասն զի առանց մուտք ըլլալու ելք չըլլար . եթէ ոչ՝ սխալ գրուած բան մը կայ, այսինքն, կամ մուտք մը գրել մոռցուած է և կամ ելք մը աւելի գրուած է, զոր աչքէ անցնել հարկ է զատ զատ : Սնտուկին կշիւը ճիշդ գտնելէ վերջը՝ զայն պէտք է փոխադրել ելքին կողմը երկու գումարները հաւասարցնելու և երկու զոյգ գիծ քաշելով հաշիւը դոցելու համար . ապա կշիւը փոխադրելու է մուտքին կողմը հետեւեալ օրուան թուականը դնելով և գրելով սնտուկը պատրաստ դրամ կամ պարզապէս պատրաստի :

Սնտուկին փորձն ընելու համար շարթը կամ ամիսը մէկ անգամ ըսինք, սակայն լաւ կ'ըլլայ զայն ամէն օր ընել մանաւանդ այն վաճառատանց համար, ուր ամէն օր ստակի տուրեւառի գործողութիւնք շատ կը պատահին, վասն զի օրուան սխալը գտնելն աւելի դիւրին է, քան շարթէ մը կամ ամիսէ մը վերջը, որ ատեն գրեթէ սխալն ալ գտնել եթէ ոչ անկարելի՝ դէթ շատ տաղտկացուցիչ և յուսահատիչ կ'ըլլայ : Մեծ վաճառատուններու և դրամատանց մէջ՝ սնտուկի գործը, այսինքն սնտուկի տուր և առի գործողութիւնները մասնաւորապէս մէկ անձի մը յատկացեալ է, որն որ միայն ստակ կ'առնէ և կուտայ և միանգամայն առածն և տուածը սնտուկի տետրին մէջ կ'արձանագրէ . այդ անձին կ'ըսուի գանձապետ : Սնտուկի տետրին ամէն ամսոյ մտից և ելից գումարներն ինչպէս նաեւ կշիւը հաւասար պէտք է ըլլան՝ Մայր-հաշուին մէջ բացուած սնտուկի հաշուոյն ցուցուցած գումարներուն և կշուոյն :

ՏԵՏՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՓԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ

Այս տետրին մէջ վաճառականը կ'ընդօրինակէ ուրիշներէ առած գանձելի տոմսակները, իւր քաջած փոխանակագրերը, և այն թղթերը, զորս իւր թղթակիցներէն կ'ստանայ իրր դրամ: Այս տետրին մէջ կրնան անցնիլ նաև որոշեալ օր մը գանձելի հաշուեցոյցերն:

Այս տետրին միջոցաւ վաճառականն ամէն ատեն իր աչքին առջեւ կ'ունենայ իւր առձեռն թղթոց վճարօրը. և ըստ այնմ կը հոգայ զանոնք գանձելու գործը:

Այս տետրը 12 մասի կը բաժնուի, իւրաքանչիւրը տարւոյն մէկ ամսոյն սեպհականեալ. այն վաճառատան համար՝ ուր տամսակի գործ շատ կ'ըլլայ, իւրաքանչիւր ամսոյ համար երկու կամ աւելի երես յատկացնել հարկ է: Այս տետրին իւրաքանչիւր երեսին ճակատը գրելու է 188. գանձելի տոմսակը .....ամսոյ և տակը քաշելու է դիժեր, որք կը կազմեն 10 սիւներ, որոց առաջնոյն մէջ կը գրուի տամսակին կամ փոխանակագրին կարգի թիւը 1էն սկսելով. 2<sup>րդ</sup> սիւնին մէջ՝ թղթին թուականը, 3<sup>րդ</sup>ին մէջ՝ տոմսակը ստորագրողին կամ փոխանակագիրը քաշողին անունը, ( եթէ փոխանակագիր է ), 4<sup>րդ</sup>ին մէջ՝ թղթին վերջին փոխանցողին անունը, 5<sup>րդ</sup>ին մէջ՝ թուղթը վճարողին անունը, 6<sup>րդ</sup>ին մէջ՝ վճարման տեղը, 7<sup>րդ</sup>ին մէջ՝ պայմանաժամը ( այսինքն թղթին քանի օրուան կամ ամսուան ըլլալը ), 8<sup>րդ</sup>ին մէջ՝ վճարօրը, 9<sup>րդ</sup>ին մէջ՝ թղթին գումարը, 10<sup>րդ</sup>ին մէջ՝ ծանօթութիւնք, այսինքն թէ՛ վճարօրին գանձեցինք, թէ ոչ մէկու մը ծանօթեցինք: Իւրաքանչիւր տոմսակ այս տետրին մէջ մէկ տողի վրայ միայն կ'արձանագրուին:

Տոմսակ մը կամ փոխանակագիր մը այս տետրին մէջ արձանագրելու համար՝ տոմսակին պայմանաժամը հաշուելով վճարօրն ո՛ր ամսոյն մէջ որ պատահի, նոյն ամսոյ յատուկ երեսին վրայ պէտք է արձանագրել զայն: Զորօրինակ, յունուար 1ին Արամէն տոմսակ մ'առինք 91 աւուր, զոր արձանագրելու համար, հաշուեցինք և գտանք որ վճարօրն սպրիլ 2ին է, ուստի այդ տոմսակը տետրակին մէջ ապրիլ ամսոյ յատկացեալ երեսին վրայ պիտի արձանագրենք:

Թուղթ մը այս տետրին մէջ արձանագրելէ վերջը՝ կարգին թիւը կը գրուի թղթին վրայ եւս: Շատ վաճառականներ իրենց անուան յատուկ կնիք ունին, զոր սեւ կամ գունաւոր մեղանով կը զարնեն տոմսակին կամ փոխանակագրին վրայ, և այս կնիքին մէջի պարսպ մասին մէջ կը գրեն նոյն տոմսակին կամ փոխանակագրին կարգի թիւը:

Այն վաճառատանց մէջ ուր շատ տոմսակի գործ չըլլար՝ կարգի թիւը ոմանք 101էն, 501էն, կամ 1001էն կ'սկսին դնել, որով կ'ուզեն իրենց գործոց կարեւորութիւն մը տալ:

1884 ՔԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿԻ ՄԱՐՏ ԱՄՍՈՑ

Դից	Թուական	Քաղոկի կամ Պարտական	Փոխանցող	Ընդունող կամ Վճարող	Յուրմացի Տեղի վեջ	յոթացույց	Վճար	Ծանոթություն
1	1884 Մարտ	Ս. Պալլարեան	Գ. Մլարեան	Հ. Պալլարեան	Պղկա	21	100	Գանձուած
2	»	12 Գ. Սիմոնեան	Օ. Յակոբեան	Ն. Սիմոնեան	»	11	200	»

1884 ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԻ ՅՈՒՆԻՍ ԱՄՍՈՑ

Դից	Թուական	Քաղոկի կամ Պարտական	Հրաման	Վճարող	յոթացույց	Վճար	Ծանոթություն
12	1884 Մարտ 19	Ի. Լեօն	Պ. Աստարճեան	Թօլէտո	18	250	Գանձուած

ՏԵՏՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ

Այս տետրին մէջ վաճառականն ու սեղանաւորը կ'ընդօրինակեն իրենց ստորագրած վճարելի տոմսակներն, այն փոխանակազիրք զորս ընդունած են վճարելու համար, և որչեալ օր մը իրենց վճարելիք հանձնեցոյցերն :

Այս տետրին միջոցաւ վաճառականն ամէն օր իւր աչաց առջեւ կ'ունենայ իւրաքանչիւր տոմսակի և փոխանակազրի վճարօրը, և ըստ այնմ կանխաւ կը հոգայ զանոնք վճարելու գործը :

Այս տետրն ալ 12 մասի կը բաժնուի, իւրաքանչիւրը տարւոյն

մէկ ամսոյն յատկացեալ. այն վաճառատան համար, ուր շատ վճարելի տոմսակ կ'ստորագրուին, իւրաքանչիւր ամսոյ համար երկու կամ աւելի երես յատկացնել հարկ է: Այս տետրին իւրաքանչիւր երեսին վրայ ճակատը գրելու է 188..... վճարելի տոմսակք ..... ամսոյ և տակը քաշելու է գիծեր, որք կը կազմեն 9 սիւներ, որոց առաջնոյն մէջ կը գրուի տոմսակին կամ փոխանակագրին կարգի թիւը 1էն սկսելով, 2<sup>րդ</sup> սիւնին մէջ՝ թուականը, 3<sup>րդ</sup> ին մէջ՝ թուղթը ստորագրողին անունը, 4<sup>րդ</sup> ին մէջ՝ որո՞ւ հրամանին ըլլալը, 5<sup>րդ</sup> ին մէջ՝ թուղթը վճարողին անունը (եթէ փոխանակագիր է), 6<sup>րդ</sup> ին մէջ՝ պայմանաժամը, 7<sup>րդ</sup> ին մէջ՝ վճարօրը, 8<sup>րդ</sup> ին մէջ՝ թղթին գումարը, 9<sup>րդ</sup> ին մէջ՝ ծանօթութիւնք, այսինքն վճարեալ ըլլալը յիշատակել: Այս տետրին մէջ ալ տոմսակ կամ փոխանակագիր միայն մէկ տողի վրայ կ'ընդօրինակուի: Տոմսակ մը այս տետրին մէջ ընդօրինակուելէ վերջը՝ կարգի թիւը տոմսակին վրայ եւս կը գրուի և կնիքը կը զարնուի:

Այս տետրին մէջ ևս տոմսակ մ'արձանագրելու համար այնպէս ընել պէտք է՝ ինչ որ ըսինք գանձելի տոմսակաց տետրին համար:

1884 ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ ՅՈՒՆՈՒԱՐ ԱՄՍՈՑ (1)

Թիւ	Թուական	Պարտական	Հրաման	Պայմանաժամ	Վճար	Գումար	Ծանօթութիւն
1	1884 Յուն.	6	Տ. Աշոտ	Ս. Տօլինկէր	25	31	4320 վճար. 1 փետր.

1884 ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ ՄԱՐՏ ԱՄՍՈՑ

2	1884 Յուն.	30	Գ. Աբգար	Գ. Արշակեան	61	31	30000
---	---------------	----	----------	-------------	----	----	-------

ՏԵՏՐ ՓՈՒԱՆԱԿԱԳՐՈՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ (2)

Այս անուամբ տետրակ մը պէտք է այն վաճառականաց կամ սեղանաւորաց համար, որք եւրոպական քաղաքաց վրայ քաշուած փոխանակագիր կը գնեն ու կը ծախեն: Այս տետրին մէջ՝ վաճա-

(1) Այս ձեւը միմիայն վճարելի տոմսակաց համար է:

(2) Գործի մէջ traites et remises կ'ըսեն այս տետրին:

նականը կամ սեղանաւորը կ'ընդ օրինակէ ուրիշներէ գնած և իւր քաշած փոխանակադրերը եւրոպական քաղաքաց վրայ :

Այս տետրակին ձեւն , ինչպէս տրուած օրինակէն կ'երևայ , եթէ ոչ ըստ ամենայնի , գէթ ըստ սկզբան նման է մթերատետրին . վասն զի վաճառականն այս տետրին միջոցաւ ամէն տանն կը դիտնայ իւր թղթապանակն ունեցած փոխանակադրերը , որք իբր իրական դրամ արժէք ունին :

Այս տետրակին , որ մեծ վաճառատանց համար յատկապէս տրուադրեալ շինել կը տրուի , երկու երեսը մէկտեղ կը բացուի , որուն ձախ կողմը Մուտքն և աջ կողմն Ելքը կը նշանակուի : Մուտքին կողմը կը գրուի՝ վաճառականին ուրիշներէ գնած և իւր քաշած փոխանակադրերը . իսկ Ելքին կողմը՝ ուրիշի ծախած և կամ իւր թղթակիցներուն իբր դրամ դրձած փոխանակադրերը :

Այս տետրին Մուտքին կողմը կայ 11 սիւներ , որոց առաջնոյն մէջ կը գրուի՝ թիւ դասակարգութեան 1էն սկսելով . 2<sup>րդ</sup>ին մէջ՝ փոխանակադրոց թուականը . 3<sup>րդ</sup>ին մէջ՝ փոխանակադիրը քաշողին անունը . 4<sup>րդ</sup>ին՝ փոխանակադիրը քաշողին բնակած քաղաքը . 5<sup>րդ</sup>ին մէջ՝ անունն այն անձին որոյ վրայ քաշուած է փոխանակադիրը . 6<sup>րդ</sup>ին մէջ՝ անունն այն քաղաքին ուր կը բնակի փոխանակադիրը վճարողը . 7<sup>րդ</sup>ին մէջ՝ անունն այն անձին , որոյ հրամանին քաշուած է թուղթը . 8<sup>րդ</sup>ին մէջ՝ փոխանակադրին տեսակը , այսինքն , քանի օրուան համար քաշուած ըլլայը , զորօրինակ , Վամսուան , 2 ամսուան , 3 ամսուան , եւ . 9<sup>րդ</sup>ին մէջ՝ վճարօրը . 10<sup>րդ</sup>ին մէջ՝ փոխանակադրին գումարը՝ եթէ անգղ . լիրա ըլլայ փոխանակադիրը . 11<sup>րդ</sup>ին մէջ՝ դարձեալ գումարը՝ եթէ Փրանք ըլլայ նշանակեալ փոխանակադիրը :

Մեր դրած օրինակին վրայ Մուտքին և Ելքին կողմը գումարի համար երկու սիւն կայ , այսինքն , անգղիական լիրայի և Փրանքի համար . սակայն այն սեղանաւորն որ միայն անգղիական լիրայի փոխանակադրոց վրայ գործ կ'ընէ՝ Փրանքի սիւնն աւելորդ կ'ըլլայ իրեն համար , նոյնպէս լիրային սիւնն աւելորդ կ'ըլլայ այն սեղանաւորին համար , որ միայն Փրանքի փոխանակադրոց վրայ գործ կ'ընէ :

Ելքին կողմը կայ 10 սիւներ , որոց առաջնոյն մէջ կը գրուի՝ թղթապանակէն դուրս ելած , այսինքն , ծախուած կամ ուրիշի մը ղրկուած փոխանակադրոց գումարը , եթէ Փրանք ըլլայ ղրկուած կամ ծախուած փոխանակադիրը . իսկ 2<sup>րդ</sup>ին մէջ՝ անգղ . լիրան , եթէ անգղ . լիրա ըլլայ փոխանակադիրը . 3<sup>րդ</sup>ին մէջ՝ անունն այն անձին , որոյ ծախուած կամ ղրկուած է փոխանակադիրը . 4<sup>րդ</sup>ին մէջ՝ փոխանակադրին ծախուած կամ ղրկուած թուականը . 5<sup>րդ</sup>ին մէջ՝ փոխանակադրին վերջին կամ գլխաւոր փոխանցողք , եթէ

No.	Date		Fourn.	Ville	sur qui	Ville	Banc.	Nature	Echéance	Entrée			Sortie			Négocié en Premier et	Date	Londres importants	au leuven chez	à l'acceptation chez	No.	Just d'achat et de vente		Coulins
										£	Sh	S.	£	Sh	S.							£	Sh	
2842	Mai	9	Banque Imp. Ottomane	Cons/ple	Banque Imp. Ottomane	Londres	S. Malbanian	3m, date	Août	42	750										14240	110	110 <sup>1</sup> / <sub>2</sub>	Hatem
2843	"	49	D. Karagheusian	"	Anglo-Austrian Bank	"	B. Kaprielian	"	"	22	1000										19240	23	110 <sup>3</sup> / <sub>8</sub>	Chahbazian
2844	Juin	8	Tékéian frères	"	Tékéian frères	Marseille	S. Minassian	3m, "	"	8			5000								744		22.80	



ըլլան . 6<sup>րդ</sup>ին մէջ՝ այն անձին անուընը , որոյ համար ի հարկին դի-  
մել նշանակուած է փոխանակագրին վրայ (եթէ ըլլայ) . 7<sup>րդ</sup>ին  
մէջ՝ այն անձին անուընն՝ որոյ զրկուած է փոխանակագրին մէկ օ-  
րինակն ընդունելութեան համար , (եթէ սա ևս նշանակուած ըլ-  
լայ) . 8<sup>րդ</sup>ին մէջ՝ փոխանակագրին բուն թիւը . 9<sup>րդ</sup>ին մէջ՝ գնման և  
վաճառման գինը . 10<sup>րդ</sup>ին մէջ՝ միջնորդին անուընը , որոյ ձեռք գըն-  
ուած կամ ծախուած է թուղթը , եթէ միջնորդի ձեռք գործողու-  
թիւնը կատարուի :

Գանձելի տոմսակաց պէս , այս տետրին մէջ ալ փոխանակագիր  
մը արձանագրելէ վերջը՝ տետրին կարգի թիւը փոխանակագրին վը-  
րայ ևս կը գրուի :

Այս տետրակը գանձելի տոմսակաց պէս 12 մասի չէ բաժնուած ,  
այլ հետզհետէ խառն կ'օրինակուին հոն փոխանակագիրք : Մնուկի  
տետրին պէս , ամէն ամսագլուխ այս տետրին ալ մուտքն ու ելքը  
գումարելով կշիւը քննելու է թղթապանակն եղածին հետ բաղդա-  
տելով . եթէ ճիշդ ըլլայ՝ կշիւը կը փոխադրուի յաջորդ ամիսն :

Փոխանակագրոց արձանագրութեան տետրակը գաղղիերէն է ,  
ըստ որում հոն օրինակեալ եւրոպական փոխանակագրերը մեծաւ  
մասամբ գաղ . կամ անգղ . լեզուաւ գրուած կ'ըլլան :

### ՏԵՏՐ ՀԱՇՈՒՂՆԹԱՑԻ

Այս տետրակն իւր կարեւորութիւնը կ'ունենայ այն վաճառա-  
կանին կամ սեղանաւորին համար , որ շատերու հետ ընթացիկ-  
հաշիւ ունենալով , անոնց հետ ըրած գործողութիւններն անմի-  
ջապէս իրենց հաշուոյն կ'անցնէ :

Այս տետրակին ձեւը՝ ինչպէս ինքնին կ'երեւայ , ընթացիկ-հաշ-  
ւոյ թղթին պէս է . տետրակին երկու երեսը մէկտեղ բացուելով կը  
կը գրուի այնպէս , ինչպէս որ կը գրուի ընթացիկ-հաշիւն : Ասոր  
համար աւելորդ է կրկին ցուցնել ձեւն այս տետրին , որոյ իւրա-  
քանչիւր երկու երեսն ուրիշ բան չէ , եթէ ոչ՝ ընդօրինակութիւն  
իւրաքանչիւր անձի ընթացիկ-հաշուոյ : Շատեր այս տետրակը չեն  
ունենար , և միայն ընթացիկ-հաշիւ պատրաստուած ատեն , զանոնք  
կ'ընդօրինակեն նամակաց ընդօրինակութեան տետրին մէջ :

### ՏԵՏՐ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԱՑ

Այս տետրակը՝ ինչպէս գիտենք , վաճառականական օրինագրին  
պահանջած տետրակներէն մին ըլլալով՝ շատ կարեւոր է նոյն իսկ  
վաճառականին համար : Այս տետրին մէջ վաճառականը կ'ընդօրինա-  
կէ առ իւր թղթակիցս զրած նամակները , հաշուեցոյցները , վա-

ճառման հաշիւները , հեռագիրներն և այլն : Այս տետրին իւրաքանչիւր երեսին վրայ թուահամար կայ : Նամակներն այս տետրին մէջ ընդօրինակուելով , վաճառականը կարող կ'ըլլայ ապագային գիտնալ թէ գործողութիւններն ինչ կերպով առաջարկուած , ընդունուած և գործադրուած են : Օրէնքն այս տետրակն անոր համար պահանջած է որ վաճառականը եթէ վէճ մ'ունենայ՝ և իւր հակառակորդն երեւան չհանէ ստացած նամակներն , վաճառականին ընդօրինակութեան տետրակը նայուի , վասնզի շատ գործողութիւններ և պայմաններ գործի մէջ նամակի ձեւով կը գրուին և հետեւաբար այս տետրին մէջ օրինակուելով , վաճառականին ըրած կարգ մը գործողութեանց պատմագիրը կրնայ համարուիլ : Հին ատենը նամակները մասնաւոր տետրակի մը մէջ գրչով կ'ընդօրինակուէին , զոր յատկապէս մէկ մարդ մը հազիւ պիտի կրնար ընդօրինակել շատ թղթակիցներ ունեցող վաճառականի մը նամակներն , սակայն այսօր այնպէս չէ . այլ յատկապէս այս գործին համար շինուած պզտի մամուլի մը միջոցաւ կ'ըլլայ շուտ և դիւրին կերպով : Նամակաց ընդօրինակութեան տետրակը , որ թղթավաճառաց քով յատկապէս պատրաստ կը ծախուի , սիկարի թղթի նման բարակ և թափանցիկ թղթերէ կը բաղկանայ , որպէս զի գրուած նամակին մելանը շուտով անցնի անոր և գրերն երեւան : Ամէն մելանով գրուած նամակները չեն օրինակուիր , այլ նամակի ընդօրինակութեան համար յատկապէս մելան կը ծախուի , ա՛յդ մելանով գրուած նամակները միայն կրնան ընդօրինակուիլ մամուլով , որ նոյնպէս թղթավաճառաց քով կը գտնուի : Մամուլ նամակ մ'ընդօրինակելու համար՝ տետրակին աջ կողմի թըղթին ետին ծծուն թուղթ մը դնելով վրցինով և պարզ ջրով թըջել պէտք է , յետոյ նոյն երեսին վրայ ալ ծծուն թուղթ մը դնելով տետրակը գոցել . վերջէն նորէն բանալով՝ առջի ծծուն թուղթը հանելու և քիչ մը ծծունով չորցնելէ վերջը , տեղը նամակը դնելու է , ապա տետրակը գոցելով մամուլին տակ սեղմելու է , և ահա երկու վայրկեանի մէջ նամակին օրինակը կ'երեւայ թղթին վրայ :

### ՏԵՏՐ ԶԱՆԱԶԱՆ ՊԱՐՏԱԿԱՆԱՑ

Արդէն խօսեցանք թէ վաճառական մը՝ որուն գործը գլխաւորաբար զանազան տեղացի շատ մը մարդոց հետ ապառիկ գործեր ընելու վրայ կը կայանայ , փոխանակ յիշեալ անձանց իւրաքանչիւրին համար զատ զատ հաշիւներ բանալով իւր Մայր-հաշուին հաշիւները շտտցընելու , անոնց ամենուն մէկէն , Զանազան պարտականք անուն հաշիւ մը կը բանայ և հետզհետէ ըրած գործողութիւնները հոն կ'արձանագրի :

Սակայն նոյն հաշուոյն վրայ նայած ատեն չի կրնար գիտնալ թէ Պողոսը կամ Յակոբը օրչափ պարտք ունի, ուստի ուրիշ տետրակ մը կը յատկացընէ Մայր-հաշուին ձեւով, այսինքն՝ տետրակին երկու երեսը մէկտեղ բանալով կը գրէ ծախ կողմը պարտի և աջ կողմը պահանջի, վրան մարդուն անունը, երեսներուն վրայ երեսի թիւ մը. ըրած գործողութիւնները, այսինքն՝ ծախած ապրանքները պարտքին, իսկ առած ստակները պահանջքին կողմը կ'արձանագրէ :

Այս տետրին կ'ըսուի Տետր գանազան պարտականաց :

Ըսածնիս աւելի լաւ հասկցընելու համար՝ հոս կը շինենք նոյն տետրին մէկ պզտի օրինակը :

ՏԵՏՐ ԶԱՆԱԶԱՆ ՊԱՐՏԱԿԱՆԱՑ

ՈՒՈՔԵԼ ԱԼԹՈՒՆԵԱՆ ՇԱՊԻՆԳԱՐԱՀԻՍԱՐՑԻ

1				1			
Պարտի				Պահանջի			
1884				1884			
Յունվ.	1	Առած ապրիքը	1000	Մարտ	8	Տուած ստակը	1000
»	29	»	1500	»	31	»	500
Մարտ	2	»	500			Մնցրդ. պրտքը	1500
			<u>3000</u>				<u>3000</u>

ՄԿՐՏԻՉ ՓԷՐՄԱՆԵԱՆ ԿԱՐՆԵՑԻ

2				2			
Պարտի				Պահանջի			
1884				1884			
Յունվ.	15	Առած ապրիքը	3050	Ապր.	10	Տուած ստակը	1000
»	30	»	1000	»	30	»	1500
			<u>4050</u>			Մնցրդ. պրտքը	1550
			<u>4050</u>				<u>4050</u>

ՏԵՏՐ ԿԱՆԻԻԿ ՎԱՃԱՌՄԱՆՑ

Այն վաճառատանց մէջ՝ ուր ապրանքները մաս առ մաս կը ծախուին, կանխիկ ծախուածներուն կարեւոր մանրամասնութիւնները

պարունակելու համար կանխիկ վաճառմանց տեսրակ անունով տեսրակ մը կը գործածուի, և հետզհետէ եղած կանխիկ գործողութիւններն այս տեսրին մէջ կը գրուին :

Իւրաքանչիւր օրուան կամ ամսոյ կանխիկ ծախուց գումարը Արնտուկը, և անտի Օրհաշիւը կ'անցնի :

Ահաւասիկ կանխիկ վաճառմանց տեսրակի մը ձեւը :

ՏԵՏՐ ԿԱՆԻՒԻԿ ՎԱՃԱՌՄԱՆՑ

1 Յոռնի. 1884						
10 ծրար տպածոյ, 302 մէթրօ.	դ.	3	906	—		
2 » մատամբօլ, թ. 150	»	95	190	—		
10 մէթրօ սեւ սաթէն.	»	8	80	—		
						1176
2						
20 եարտա սեւ լահօրաքի.	դ.	13	260	—		
5 զոյգ բամպակ գուլպա.	»	10	50	—		
100 մէթրօ տամաքօ տպածոյ.	»	5	500	—		
						810
3						
5 ծրար տպածոյ 145 մէթրօ.	դ.	4	580	—		
105 եարտա ֆանէլա.	»	8	840	—		
3 տուզինա թաշկինակ.	»	20	60	—		
						1480

ՏԵՏՐ ՀԱՇՈՒԵԿՇՈՒ

Այս այն տեսրակն է, զոր վաճառականական օրէնքը կը պահանջէ իւր 4<sup>րդ</sup> յօդուածովն զոր կարդացինք արդէն Տումարակալութեան սկիզբը (տես երես թ. 154) : Այս տեսրին մէջ վաճառականը պարտի ընդօրինակել ամէն տարի կամ որեւէ ատեն իւր պատրաստած հաշուեկշիռն իւր բոլոր մանրամասնութեամբը, այսինքն, պատրաստ ասլրանաց իւրաքանչիւրին տեսակը, որակը և գինը, թղթապանակը գտնուած գանձելի տոմսակները զատ զատ, վճարելի տոմսակները նոյնպէս, զանազաններու ունեցած պարտքը և զանազաններէ ունեցած պահանջքը :

Ըսածնիս աւելի լաւ պիտի հասկցուի, երբ մենք ալ քիչ մը վերջը չինենք մեր հաշուեկշիռը :

### ՏԵՏՐ ԱՊՍՊՐԱՆԱՑ ԿԱՄ ՀՐԱՄԱՆԻ

Այս տետրակն ալ իւր կարեւորութիւնն ունի այն վաճառականաց համար, որք օտար երկիրներէ այլոց միջոցաւ ապրանք բերել կուտան միշտ: Վաճառականն այս տետրին մէջ կ'ընդօրինակէ ամէն անգամ ոչ հրաման մը զրկէ նամակաւ կամ մասնաւոր ցուցակաւ: Վարեւոր է այս տետրակն, ըստ որում վաճառականն ամէն ատեն կը տեսնայ իւր ապսպրած ապրանքն իրենց բոլոր մանրամասնութեամբը, որոց համաձայն եղած ատեն կ'ընդունի ապրանքը. իսկ հակառակ պարագայի մէջ՝ չընդունիր: Այս տետրին մէջ ամէն ապսպրանք իւր թուականը և թիւն ունենալու է, որ կը համապատասխանէ ապրանքանաց ցուցակին վրայ նշանակեալ թուոյն:

Այս տետրը մասնաւոր ձեւ մը չունի, այլ պարզ տետրակ մ'է: Ամէն անգամ որ ապսպրանք մը գայ հասի, տետրակին մէջ նոյն ապսպրանքին մէջ կը գրուի « Եկաւ կամ հասաւ » բառը կարմիր կամ կապոյտ գոյն մեղանով, որ շուտով աչքի զարնէ:

---

### ՏԵՏՐ ՏԱՆ ԾԱԽՈՒՑ

Ըստ որում գիտենք թէ վաճառականն իւր տան ծախուց գումարն ամէն ամիս իւր տետրակն անցնել պարտաւոր է ըստ օրինի, ուստի ամսոյն մէջ ըրած ծախքերը տետրակի մը մէջ գրել հարկ է, այս տետրին կ'ըսուի Տետր տան ծախուց: Այս տետրին մէջ վաճառականը կը գրէ ըրած ծախքերը մանրամասնաբար, ինչպէս են, կերակրոյ, հագուստի, սպասաւորաց ամսական և այլն, և ամսոյն վերջը գումարն Օրհաշիւը կ'անցնէ:



## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ




### ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍՆ ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ

#### ՁԵՌԱՏԵՏՐ , ՕՐՀԱՇԻԻ , ՄԱՅՐ—ՀԱՇԻԻ

Վերջապէս հասանք այն տեղ, ուր պէտք է որ գործնապէս 'ի կիրարկանենք այն տեղեկութիւններն ու ծանօթութիւնները, զորս նախընթաց գլխոց մէջ ուսանք : Այժմ որ գիտենք թէ ինչ է Տոմարակալութիւնը, կրկնատումարի մէջ գործածուած հաշիւներն և նոցա դերը, Ձեռատետրին, ինչպէս նաեւ Օրհաշիւին և Մայր-հաշիւին մէջ գործողութեանց արձանագրութեան եղանակն և այլն, ասոնք ամէնքը տեսականապէս ուսնելէ վերջը՝ այլևս ուսանողը պէտք է որ զանոնք գործնականապէս 'ի կիրարկանէ, որպէս զի իւր ուսածը լաւ ըմբռնած ըլլայ, ահա այս նպատակաւ պիտի սկսինք այժմ պատրաստել ընդարձակ Ձեռատետր մը, որ կը պարունակէ այլազան գործողութիւններ, որք ամէն օր կը պատահին գործի մէջ : Ուսանողաց դիւրութեան համար՝ մասնաւորապէս խնամք տարած եմք նախ պարզ յօդուածներ դնել և ապա հետզհետէ բաղադրեալները : Երբ մէկն այս Ձեռատետրին յօդուածներն ուշադրութեամբ լուծելով Օրհաշիւ և 'ի Մայր-հաշիւ անցնէ, կրնանք ըսել թէ կրկնատումարի սկզբունքը լաւ ըմբռնած կը համարուի և գործի մէջ տետրակ գրելու սկսած ատեն չչուարիր :

Այս Ձեռատետրին միայն Օրհաշիւը և Մայր-հաշիւը պատրաստեցինք, երկրորդական տետրակները գրել աւելորդ համարեցինք, զանոնք ուսանողին թողլով որ մի առ մի պատրաստէ հետեւելով մեր ցուցուցած օրինակաց :

Մեր պատրաստելիք Ձեռատետրը կը վերաբերի Արամ-Նորայր անուն վաճառականի մը, որ իւր հօրմէն 10000 ոսկւոյ գումար մը ժառանգած ըլլալով՝ փափաքած է վաճառականութեան ձեռնարկել 1883 Յունուար 1ին : Իւր վաճառատուներ հաստատած է Պոլիս Մեծ Նոր խանը միջնայարկ թ. 9-10 սենեակները : Արամ-Նորայր իրեն գործ որոշած է կէս-մեծաքանակ վաճառականութիւն զանազան ապրանց վրայ և քիչ մ'ալ դրամական գործողութիւններ . իրեն թղթակիցներ ընտրած է 'ի Փարիզ, և 'ի Մանչէսթըր, որոց հետ շարունակ գործ պիտի ունենայ :





# Չ Ե Ռ Ա Տ Ե Տ Ր

Կ Ր Ա Մ - Ն Ո Ր Ա Յ Ր Ի

Ի Կ. Պոլիս, սկսեալ 'ի 1 Յունուար 1885

1 ————— 1 Յունի. 1885 —————		
Վաճառականութեան սկսելու համար դրամագլուխ		1000000 —
2 ————— » —————		
Վարձած սենեկացս վեցամսեայ վարձքը վճարեցի		3000 —
3 ————— » —————		
Վաճառատանս համար գնեցի կանխիկ հետեւեալ կարասիքը		
Մէկ դրամարկղ ստակներս պահելու համար	2000	
Երկու գրասեղան	500	
Վեց աթոռ	100	
Տետրակներ, ընդօրինակութեան մամուլ, ևն.	900	3500 —
4 ————— 2 —————		
Գնեցի Մ. և Օ. Յակոբեանէն հետեւեալ երեք հակ տը- պածոյները վճարելի 31 օրէն .		
Թ. 8061, 200 ծր. 8010 երտ. դ. 2 դր:	16020	
» 8072, 150 » 4500 » » 2 $\frac{1}{4}$	10125	
» 8078, 240 » 7252 » » 2 $\frac{22}{40}$	<u>18492 <math>\frac{1}{2}</math></u>	44637 20
5 ————— » —————		
Գնեցի կանխիկ Ա. Աստուածատուրեանէն.		
Թ. 4620 20 կոյ. կապոյտ մանած 20/24	1380	
» 4621 20 » » » »	1380	
» 4622 20 » » » »	1380	
» 4710 20 » վ.թ.էր » »	975	
» 4712 20 » » » »	975	
» 4738 20 » » սպիտակ »	1025	
» 4739 20 » » » »	1025	
» 4758 20 » » մանած 12/14	790	
» 4760 20 » » » »	790	9720 —

6		3	Յ Յոսևի. 1885		
Մախեցի կանխիկ կրնեցի Գ. Մըսրեանի հետեւալները					
100	ծրար տպածոյ	4003	երտ գ. 2 <sup>3</sup> / <sub>8</sub>	9507	
50	»	1500	» » 2 <sup>5</sup> / <sub>8</sub>	5937 <sup>1</sup> / <sub>2</sub>	
թ. 4758	20 կպ. վաթէր մանած		թ. 12 14	800	14244 20
<hr/>					
7		»			
Մախեցի Պրուսացի Յակոբ Պալապան օղլուին վճարելի ամսոյս մէջ .					
50	ծրար տպածոյ	2000	երտ. գ. 2 <sup>16</sup> / <sub>40</sub>	4800	
40	»	1210	» » 2 <sup>7</sup> / <sub>8</sub>	3478 <sup>3</sup> / <sub>4</sub>	
թ. 4760	20 կպ. վաթէր մանած		12 14	800	
» 4738	20 » » սպիտակ		20 24	1045	10123 30
<hr/>					
8		4			
Գռէտի Լիօնէի տեղւոյս ճիւղին հետ ընթացիկ-հաշիւ մը բացի տարեկան 0% 6 փոխադարձ տոկոսով, այսօր զրկեցի յիշեալ դրամատան 5000 . Լ. 0.					
500000 —					
9		»			
Գնեցի Պ. Գարրիէլեան և ընկ. էն հետեւեալ ապրանքները, փոխարէն տալով ի/հ. 91 աւուր իմ տոմսակս :					
200	ծրար ամերիքան 6 լիպրա	գ. 55		7000	
150	»	7	» » 40	6000	
1500	» թէնգիֆ	—	» » 36	54000	
<hr/>					
10		5			
Մախեցի Ամասեացի Կիպրիանոսեան եղբարց հետեւեալ ապրանքները, փոխարէն առնելով իմ/հ. 91 աւուր իրենց տոմսակը .					
50	ծրար տպածոյ	2007	երտ. գ. 2 <sup>1</sup> / <sub>4</sub>	4515 <sup>3</sup> / <sub>4</sub>	
100	»	3000	» » 2 <sup>1</sup> / <sub>2</sub>	7500	
200	»	6042	» » 2 <sup>3</sup> / <sub>4</sub>	16615 <sup>1</sup> / <sub>2</sub>	
<hr/>					
11		»			
Մախեցի հետեւեալներուն վճարելի ամսոյս մէջ .					
Յակոբ Մարթաօղլուին, Մարգրվանցի					
թ. 4620	20 կպ. կապոյտ մանած		20 24	1400	
» 4621	20 »		»	1400	
» 4710	20 » վաթէր		»	1000	3800
<hr/>					

	փոխադրեալ	3800	
Կարապետ Պալթաճեանին, Կարնեցի			
50	ծրար ամերիքան 6 լիպ. դ. 38	1900	
50	» » 7 » » 44	2200	
200	» թէնպիֆ » 38	7600	11700
			15500
12 ————— 5 Յունի. 1885 —————			
<p>Անտուկիս փորձն ընելով տեսայ որ մէկ լիրա սրակաս կուգայ. պէտք եղած հաշիւներն աչքէ անցնելէ վերջը՝ սրակասը չի կրցի դառնալ, ուստի այս սրակասին համար այս յօդուածը դրել սրարտաւորեցայ.</p>			
13 ————— 8 —————			100
<p>Այս առաւօտ փաճառատանա բեռնակիրն ինձ յանձնեց մէկ լիրա, զոր աւլած ժամանակ դտած էր, ասի կորսուած լիրան է.</p>			
14 ————— » —————			100
<p>Մախեցի հետեւեալներուն հետեւեալ տարանքները, փոխարէն առնելով իմ   հ. 61 աւուր իրենց տունակը.</p>			
Միհրան Մալխասեանին, Արապկերցի			
թ. 4622	20 կալ. կապոյտ մանած 20/24	1400	
» 4712	20 » վաթէր » »	1000	
» 4739	20 » » սպիտակ »	1050	3450
Մինաս Տ. Միքայէլեանին, Արապկերցի			
100	ծրար ամերիքան 6 լիպ. դ. 38	3800	
50	» » 7 » » 44	2200	
300	» թէնպիֆ » 38	11400	17400
			20850
15 ————— 9 —————			100000
Գարձեալ զրկեցի Գուտի Լիօնէին ընթացիկ-հաշուով			
16 ————— » —————			32850
Գնեցի կանխիկ, Չայլքեան միջնորդին ձեռօք, Պանք Օթօմանէն £ 300 3/4 ամսեայ փոխանակագիր դ. 109 1/2			
<p>Այս հաշուոյն համար « Սիւրբի փոխանակիչ » անուն հաշիւ մը պիտի բացուի, որպէս զի « Գանձիչ Գոմարտ » հաշուոյն հետ չըփոթի:</p>			
17 ————— » —————			
Շուսթըր սըն և ընկն. հետպայման դրի որ 0% 2 յանձ-			

<p>նառողջէքով և տարեկան 6 % տոկոսի ընթացիկ-հաշ- ւով ապրանք աստարեմ իրենց . 'ի հաշիւ այսօրուան տը- ւած հրամանացս՝ զրկեցի իրենց £ 300 , Պանք Օթ- մանի թուղթը . 110էն .</p>	<p align="right">53000 —</p>
<p>18 ————— 10 Յոսևի . 1885 —————</p>	
<p>Յակոբ Պալապանօղլու վճարեց իւր պարտքը .</p>	<p align="right">10123 30</p>
<p>19 ————— » —————</p>	
<p>Մախեցի Տրապիզօնցի Առաքել Խաչեանի</p>	
<p>50 ծրար ամերիքան 6 լիպ . դ . 39</p>	<p align="right">1950</p>
<p>50 » » 7 » » 45</p>	<p align="right">2250</p>
<p>500 » թէնզիֆ » 39</p>	<p align="right">19500</p>
<p>վճարեց հետեւեալ կերպով</p>	<p align="right"><u>23700</u></p>
<p>կանխիկ դրամ</p>	<p align="right">5700</p>
<p>իւր/հ. իւր տոմսակը 61 աւուր</p>	<p align="right"><u>20000</u></p>
<p>20 ————— 12 —————</p>	
<p>Ղրկեցի Գուէտի Լիօնէին .</p>	<p align="right">50000 —</p>
<p>21 ————— » —————</p>	
<p>Գնեցի կանխիկ Սալէմ միջնորդին ձեռօք</p>	
<p>£ 2000 դ . 109</p>	<p align="right">218000</p>
<p>Տոկոս Լօնտրայի անցած օրերուն համար</p>	<p align="right"><u>240</u></p>
<p>Տօն և Զեղ անուամբ հաշիւ մը բանալու է և տրուած</p>	<p align="right">218240 —</p>
<p>տոկոսներուն համար ( թէ՛ Լօնտրայի և թէ՛ Պօլսոյ տոկոս ) այդ հաշիւը պարտական ընելու է, և առնուածներուն համար պահանջու :</p>	
<p>22 ————— 13 —————</p>	
<p>Ղրկեցի Շուսթըր սըն և ընկն . 'ի հաշիւ իմ ընթացիկ -հաշուոյս £ 500 .</p>	<p align="right">55000 —</p>
<p>Շուսթըրին զրկած ստակնիս, ինչպէս նաեւ անկէ գալիք հաշ- ուեցուցականներուն գումարը՝ անգղ. լիբան 110էն պիտի հաշուենք .</p>	
<p>23 ————— » —————</p>	
<p>Գուէտի Լիօնէի հետ համաձայնեցանք որ իւր Փարիզի տան վրայ փոխանակագիր քաշեմ մինչեւ 100000 Ֆրանքի . նոցա փոխարէնն իրենց վճարօրին մօտ կամ առաջ զրկելու պայմանաւ և տարեկան 6 % տո- կոսի ընթացիկ-հաշուով . զրկած ֆրանքի փոխանակա- գրերս օրուան տոկոսի սակովը ղեզձելով՝ զուտն իմ հաշ- ուոյս պիտի անցնի : Այսօր քաշեցի 5000 ֆր . ի 3   ամս- եայ փոխանակագիր մը իմ/հ .</p>	<p align="right">21739 —</p>

Ինչպէս որ Լօնտրայի փոխանակագրոց համար «Սթեյթս Բանկ» անուամբ հաշիւ մը բացինք որպէս ի «Գանձելի Գանձակոց» հաշուոյն հետ չչփոթի, նոյնպէս ալ Ֆրանքի փոխանակագրոց համար մասնաւոր հաշիւ մը բանալու է «Ֆրանքի Գանձակոց» անուամբ: Ֆրանքները 23էն պիտի հաշուենք:

24 \_\_\_\_\_ 15 Յունիւլ. 83 \_\_\_\_\_

Մախեցի ապառիկ 0% 12 տոկոսով Պ. Ժամկոչեանի.  
 £ 300 փոխանակագիր դ. 109 3/4 32925  
 Տոկոս Լօնտրայի անցած օրերուն համար 30 32955

Ապառիկ ծախուած ապրանաց համար զանազան անձերու հաշիւ բացինք, փոխանակագիր ալ սկսանք ապառիկ ծախել, ուստի փոխանակագրի պարտականներն առջիններէն զատուելու, կամ Մայր—հաշուին մէջ շատ հաշիւներ չունենալու համար, «Փոխանակագրի գանազան պարտական» անուն հաշիւ մը կը բանանք.

25 \_\_\_\_\_ » \_\_\_\_\_

Յակոր Մարթասօլլու վճարեց իւր սլարտքը. 3800

26 \_\_\_\_\_ 16 \_\_\_\_\_

Կարնեցի Կարապետ Պալթաճեանի դիւրութիւն չունենալով կանխիկ դրամ վճարելու, 120 օտմ. լիրայի Համազասպ Պալարեանի ամսոյս 30ին վճարելի մի փոխանակագիրը տուաւ, յորմէ իւր սլարտքը 117 լիրան զեղչելով՝ մնացորդ 3 լիրան իրեն ետ տուի ձեռքէ. 12000

27 \_\_\_\_\_ » \_\_\_\_\_

Մախեցի կանխիկ 5000 Ք.ի փոխակցիր. դ. 22,85 21882  
 Տոկոս 3 աւուր 0% 4 7 21889

28 \_\_\_\_\_ 17 \_\_\_\_\_

Պ. Ժամկոչեան վճարեց թերհաշիւ. 15000

29 \_\_\_\_\_ » \_\_\_\_\_

Մախեցի Կիւմիւշճեան եղբարց 500 ծր. թէնդիՔ դ. 38, վճարելի 2 ամիսէն կամ կանխիկ 0% 2 զեղչով. 19000

30 \_\_\_\_\_ 19 \_\_\_\_\_

Մախեցի ապառիկ Կ. Համամճեանի.  
 £ 500 դ. 110 55000  
 Տոկոս Լօնտրայի 10 աւուր 0% 4 61 55061

31 ————— 19 Յոռնի. 1883. —————		
Կիւմիւշճեան Եղբարք զեղչով վճարեցին իրենց սլարաքը վճարածնին		18620
վար դրած զեղչերնին 2 %		380
		<u>19000</u>
<p>Պէտք է Պահանջու ընել Կիւմիւշճեան եղբարք 19000ին համար , իսկ սնտուկը Պարտական 18620ին՝ և տոկոս և զեղչի հաշիւը 380ին համար :</p>		
32 ————— 20 —————		
Քնեցի կանխիկ Մուրատեան եղբարցմէ		
500 կպ. ճերմակ թիրէ Տ լիպ. 6/16. դ. 30		15000
500 » էսմէր » » » » 24		12000
		<u>27000</u>
35 ————— » —————		
Մախեցի Համբարձում ճանիկեանի 2 ամիս պայմանա- ժամաւ		
200 կպ. ճերմակ թիրէ Տ լիպ. 6/16 դ. 34		6800
200 » էսմէր » » » » 28		5600
		<u>12400</u>
Սակայն ինքը նախամեծար համարեց % 2 զեղչով վը- ճարել ,		
վճարածը		12152
վար դրած զեղչը		248
		<u>12152</u>
<p>Այս գործողութիւնը թէեւ թ. 31 յօդուածին տեսակէն ըլլալ կ'երեւի , բայց այնպէս չէ . այս յօդուածին մէջ զեղչը Օրհաշիւն անցնել հարկ չկայ , զի ծախած ապրանքնիս թէեւ 12400 ի է , բայց 248ը անմիջապէս զեղչուելուն , զուտ 12152ի ծախած եղանք , հետեւաբար նոյնչափ գումարի համար պէտք է պահանջու ընել ընդ- հանուր ապրանք և սնտուկը պարտական . փոխանակ սնտուկը 12152 ի և քսիս և զեղչը 248ի համար պարտական ընելու , որք աւելորդ գրութիւններ են :</p>		
34 ————— 22 —————		
Ստացայ հետեւեալներէն 'ի հաշիւ իրենց փոխանակա- գրի սլարաուց ,		
Պ. Ժամակոչեանէ		15000
Կ. Համամճեանէ		20000
		<u>35000</u>
35 ————— » —————		
Ղրկեցի Քուէտի Լիօնէին հոս		80000



36		25 Յունի 1885		
<p>Շուսթըրը սրն և ընկ. կ'իմացնեն թէ՛ պատրաստէն գը- ներ են, ըստ իմ հրամանի, 645 ծրար տպածոյ զանազան տեսակ և հաշուեցոյցին դումարը <b>Ճ 362, 10,9 Յուն-</b> <b>ուար 16</b> թուականու իմ պարտքիս անցուցեր են.</p>				
<p>Շուսթըրին համար արդէն բացուած հաշիւը պահանջու պէտք է ընել <b>Լ. Ս. 362, 10,9</b> ին համար 110էն հաշուելով, և ընդհա- նուր ապրանքը պարտական. թէեւ ապրանքը դեռ վաճառատուննիս չմտաւ, սակայն ճամբայ ելած ըլլալով և արժէքին համար ար- դէն զիս պարտական ըրած ըլլալուն. ես ալ նոյնը հոս ընելու հա- մար այս կերպով պէտք է 'ի հաշիւ անցնել այս գործողութիւնը.</p>				
37		24		
Մախեցի Նիքօլի Էմմանուէլիտիին				
300	կալ. էսկէր թիրէ 5	իւլ. 6/16	գ. 35	10500
300	» ճերմակ »	» »	» 29	8700
				<u>19200</u>
Վճարեց այսպէս				
իմ/հ.	իւր տոմսակը	31	աւուր	8500
»	» »	61	»	8500
Աթանաս	Թէլլի օղլուի	5	աւուր մի փոխակգիրքը	2200
				<u>19200</u>
38		»		
Գնեցի Գասթէլիէն 100 ծրար սեւ սաթէն բրդեայ				
4768	երտ. գ. 6	1/4		29800
				<u>29800</u>
Վճարեցի հետեւեալ կերպով				
ի/հ.	իմ տոմսակս	51	աւուր	15000
Հրամանագիր	մը 5	աւր. հոս Գուէտի	Լիօնէին վրայ.	10000
Կանխիկ	դրամ			4800
				<u>29800</u>
39		26		
Քաշեցի Գուէտի Լիօնէի վրայ, 'ի Փարիզ, իմ/հ. 4500				
Ֆրանքի չէք մը :				19565
40		»		
Մախեցի ապառիկ Կ. Համամճեանի				
1500	Փր.ի չէք	գ. 22, 82	1/2	19715 1/2
	Տոկոս	85	աւուր 0/10 3 1/2	162 3/4
				<u>19878</u>
41		27		
Գնեցի կանխիկ Կիւլպէնկներէն, Հաթէմ միջնորդին				
10000	Փր.ի 3/ամսեայ	փոխակգիրք.	գ. 22, 97 1/2	43525 20

42	27 Յունիվ. 1885	<p>Ղրկեցի Փարիզ Գուլտի Ախոնէին 10000 ֆր.</p> <p>Որովհետեւ յիշեալին ղրկուած Ֆրանքներն օրուան տոկոսի սակովը զեզչուելով իմ պահանջքիս պիտի անցնի. սւտաի չեմք կլնար այժմէն գիտնալ թէ զուտ ի՞նչ պիտի բանեն, որ ըստ այնմ զինքը պարտական ընեմք, ուրեմն թէ՛ այս գործողութեան և թէ՛ սորա նմաններուն համար « ֆրանքի բռնի » անուն հաշիւ մը կը բանամք և ղրկած փոխանակագրերնուս համար որ բռնի կ'ըսուի, այս հաշիւը պարտական կ'ընենք ըսելով, ֆրանքի բռնի ֆրանքի փոխանակութիւն, նոյնպէս անգղիական լիբրային համար « ֆրանքի բռնի » հաշիւ մը բանալու է. ֆրանքները 23էն և սթէուլինը 110էն հաշուելով միշտ .</p>	43478
43	28	<p>Ս.ս.աքել Խաչեանի տոմսակը զեղջել տուի  առի կանխիկ <span style="float: right;">19713 <sup>1</sup>/<sub>2</sub></span>  զեղջ 43 աւուր <sup>0</sup>/<sub>10</sub> 12 <span style="float: right;">286 <sup>1</sup>/<sub>2</sub></span></p>	20000
44	»	<p>Գնեցի Ֆոթիատիէն 10 ծրար կերպաս գունաւոր  450 մէթրո գ. 70 ղրջ <span style="float: right;">31500</span></p> <p>Վճարեցի հետեւեալ կերպով  ի/հ. իմ տոմսակս 31 աւուր <span style="float: right;">10000</span>  » » » 61 » <span style="float: right;">10000</span>  կանխիկ <span style="float: right;">6500</span>  մնացեալն ուղած տտեն վճարելի <span style="float: right;">5000</span></p>	31500
45	29	<p>Թէլիօղլուի փոխանակագիրը գանձեցի .</p>	2200
46	30	<p>Մախեցի Եօրիաքի Փափաղօղլու խանութպանին 30  ծրար սեւ սաթէն բրդեայ 1410 երտ. գ. 7 <sup>1</sup>/<sub>2</sub> . կէսը  21 օրէն և կէսը 61 օրէն վճարելի</p>	10575
47	»	<p>Համադասայ Պալարեանի փոխանակագիրը գանձեցի</p>	12000
48	31	<p>Ստացայ հետեւեալներէն ՚ի հաշիւ իրենց փոխանակագրի պարտուց .</p>	

Պ. Ժամակոչեանէն	2955	
Կ. Համամճեանէն	20000	
»	10000	32955 —
49 ————— 31 Յունիվ. 1885 —————		
Ղրկեցի Գուէտի Լիօնէին .		70000 —
50 ————— » —————		
Ամսադրոյ առթիւ հետեւեալ ծախքերս վճարեցի		
վաճառատան պաշտօնէից ամսական	1200	
տան ծախքի համար	800	
անձնականի »	300	2300 —
(Ընդհանուր ծախք անուն հաշոյն պիտի անցնի ամբողջապէս)		
51 ————— 1 Փետրիվ. 1885 —————		
Պրուսացի Յակոբ Պողոսեանի հետ համաձայնեցանք որ՝ իւր հաշոյն 0% 2 յանձնառողչէքով և տարեկան 9 0% ընթացիկ-հաշով ծախեմ իւր մետաքսները : Այսօր ստացայ իրմէ երկու հակ մետաքս ,		
թ. 15 . 1 հակ մետաքս 120 հօխա		
» 16 . 1 » » 122 »		
Յիշեալ երկու հակերուն փոխադրութեան ծախք վճարեցի .		
		30 —
(Ըստ որում յայտնի չէ տակաւին թէ ոյդ երկու հակը քանի՞ն պիտի ծախուին , ուստի Յակոբ Պողոսեանի յարտաք անուն հաշիւ մը կը բանամք և զայն պարտական կ'ընենք ըրած 30 զրշ. ծախքերնու համար . ապրանքները ծախուած ատեն պահանջող կ'ընենք բռնած գումարին չափ :		
52 ————— « —————		
Պ. Ժամակոչեանէն տակոս իւր պարտքին համար		61 —
53 ————— 2 —————		
Առի Գուէտի Լիօնէէն		30000 —
54 ————— » —————		
Մ. և Օ. Յակոբեանին ունեցած պարտքս վճարեցի		44637 20
55 ————— 3 —————		
Գրեցի Փարիզ Գուէտի Լիօնէին , որ իմ հաշոյս վճարէ 1500 ֆր. Լ. Բօլին իրեն յանձնարարած կառքիս համար .		
		6584 —
1500 ֆր. 23էն պիտի հաշուենք և իւր չէք 86 օրուան 0% 4էն տակոսն ալ վրան պիտի աւելցնենք .		
Գուէտի Լիօնէն պահանջող և ընդհ. ծախքը պարտական պիտի ընենք :		
		30

56	3 Փետրվ. 1883		
	Ֆոթիատի ունեցած պարտքս վճարեցի		5000
57	»		
	Պրուսացի Յակոբ Պողոսեանի հրամանին համեմատ իւր հաշւոյն վճարեցի Սարգիս Թէոսեանի 80 լիրա օսմ. Յաւիթ Պողոսեան անուն հաշիւ մը պիտի բանամք և այս գումարին համար զայն պարտւած պիտի ընեմք :		8000
58	»		
	Պրուսացի Յակոբ Պողոսեանի մետաքսներէն ծախեցի Միհրան Եղիազարեանի		
	Թ. 15 . մէկ հակ 120 հօխ. դ. 175	21000	
	Փոխարէն իրմէ առի		
	Իմ/հ. իւր տոմսակը 21 աւուր	10500	
	» » » 61 »	10500	21000
59	5		
	Ծախեցի ապառիկ Պ. Ժամակոչեանի		
	£ 200 . դ. 110 1/4	22050	
	Տոկոս անցած օրերուն համար	100	22150
60	»		
	Ստացայ Կ. Համամճեանէն իւր մնացորդ պարտքը		9878
61	6		
	Պրուսացի Յակոբ Պողոսեանի մետաքսին միւս հակը ծախեցի Մարտիրոս Կարապետեանի 91 որ պայմանաժամաւ .		
	Թ. 16 . մէկ հակ 125 հօխ. դ. 180		22140
62	8		
	Փարիզի Գուէտի Լիօնէէն նամակ ստացայ որով կ'իմացընէ թէ՛ իրեն զրկած 10000 ֆր.իս զուտը 9905 , 55 իմ պահանջքիս անցուցեր է փետր. 2 թուականաւ , ըստ իւր զրկած ղեղչի ցուցակին		
	Զուտ	9905 , 55 ֆր.	
	Զեղչ	94 , 45 »	43478
		10000 ֆր.	
	Անցեալ ամսոյ 27ին իրեն զրկած գումարնիս է , զոր այս անգամ 85 օրուան համար 0/0 4էն ղեղչելով , զուտը 9905, 55 ֆր.		

իմ պահանջքիս անցուցեր է . այս գումարը զրկած ատեննիս ֆրան-  
 քի ուրիշ անուն հաշիւը պարտական ըրինք , հիմա որ հաշիւն եկաւ  
 պէտք է որ նոյն հաշիւը պահանջու ընենք այնչափ գումար որչափի  
 որ պարտական ըրինք յառաջագոյն . իսկ Գուտի Լիօնէն պարտական  
 պիտի ընենք միայն զուտ գումարին համար . զեղչին համար ալ  
 Տոկոս եւ ղէղչե հաշիւը .

63 ————— 8 Փետրւի . 1883 —————

Պրուսացի Յակոբ Պողոսեանի մետաքսներուն վաճա-  
 ռումէն ինձ վերաբերեալ 0% 2 յանձնառողչէքս 'ի վերայ  
 43140ի . 863 . զոր իւր ասորանքի հաշուոյն պարտքին  
 անցուցի .

863 —

64 ————— 9 —————

Պրուսացի Յակոբ Պողոսեանի զրկեցի իւր մետաքսնե-  
 րուն վաճառման հաշիւն այսպէս

Թ. 15	1 հակ	120 հ. դ.	175	21000
» 16	1 »	123 » »	180	22140
				<u>43140</u>

ըրած ծախքս	30	
իմ յանձնառողչէքս 2 %	863	893
		<u>42247</u>

42247 —

Այս գումարը 15 ապրիլ Թուականաւ իւր ընթացիկ-  
 հաշուոյն անցաւ .

65 ————— » —————

Ստացայ հետեւեալներէն

Կ. Համամճեանէն , մնացորդը	15061
» » տոկոս	255
	<u>15316</u>

15316 —

66 ————— 11 —————

Մարթինիկի Գ. Խոսրովեան իմ հաշուոյս համար Օրօր  
 շոգեհաւուով ճամբայ հաներ է 60 սլարկ սուրճ Մարթի-  
 նիկի . զուտ կշիւ 7200 հօխ . դ. 2 , 40 Ֆրանքի հօ-  
 խան .

ծախք զանաղան	17280 ֆր.
	1056 , 80
	<u>18316 , 80</u>

և փոխարէն իմ վրայ քաշեր է հետեւեալ փոխանակադ-  
 րերը .

28 փետրուարին վճարելի	Ֆ. 6000
31 մարտին »	» 6316 , 80
30 ապրիլին »	» 6000
	<u>79638</u>

79638 —

Այս 18316, 80ին համար օսմ. լիբան 23 ֆր. էն պիտի հաշուենք .  
 Այս փոխանակագիրք Թէեւ ֆր. է են , բայց Պոլիս վճարելի լինե-

ըլն՝ տսոնք քրանի քսիանախաբին չպիտի անցնենք, այլ վճարելի քսիանայ հաշւոյն :

67 ————— 11 Փետր. 1885 —————

Շուսթըրէն եկած ապրանաց մաքսատուրքը վճարեցի

2000 —

68 ————— 12 —————

Ծախեցի Մամաս Սարայտարեանի հետեւեալները

5 ծրար կերպաս դունաւոր	220 եր. դ. 88	19360
100 ծրար տպածոյ	5010 » » 3	9030
10 պարկ սուրճ մարթինիկի	1200 հօխ. » 12	14400
		<u>42790</u>

վճարեց այսպէս

իմ/հ. իւր տոմսակը	41 աւուր	20000
9 սնտուկ ըսպարմաչէթ	1050 քիլօ դ. 10	10500
10 տակառ Պօւլտօյի գինի	800 հօխ. » 8	6400
կանխիկ դրամ		5890
		<u>42790</u>

42790 —

69 ————— 14 —————

Մարթինիկի Գ. Խոսրովեանի քաշած 18516, 80 Փր.ի փոխանակագրերը ընդունեցի

79638 —

70 ————— » —————

Ղրկեցի Կարին Յովակիմ Խրէեանի հետեւեալները

150 ծրար տպածոյ	4620 եր. դ. 2 <sup>7</sup> / <sub>8</sub>	13282 <sup>1</sup> / <sub>2</sub>
10 պրկ. սուրճ մրթնիկի	1155 հօխ. դ. 12 <sup>1</sup> / <sub>2</sub>	14457 <sup>1</sup> / <sub>2</sub>
15 ծրար սեւ սաթէն բուրդ	710 երտ. դ. 8	5680

53400 —

փոխարէն քաշեցի իւր վրայ 91 աւուր փոխանակազիր զոր դրի թղթապանակս .

71 ————— 15 —————

Տոմսակ մը տուի 61 աւուր 200 օսմ. լիրայի Ն. Սիմօնեանի ի/հ. և փոխարէն առի իրմէ նոյնչափ դումարի միեւնոյն պայմանաժամով իւր տոմսակը իմ/հ.

20000 —

72 ————— » —————

Անձնական պիտոյիցս յատկացուցի մթերանոցս գանձւած Պօւլտօյի գինիներէն մէկ տակառ 80 հ. դ. 8

640 —

Այս մէկ տակառին համար առնուած գնով ընդհանուր ծախել պարտական և ընդհանուր ապրանքը պահանջող պիտի ընենք .



75	16	Փետր. 1883			
Ծախսեցի հետեւեալներուն հետեւեալ ապրանքները					
Բարսեղ Չամբարխանեանին					
100	ծրար տպածոյ	5020	եր. դ. 3		9060
Ա. Օհանեանին					
200	ծրար տպածոյ	6050	եր. դ. 3	18150	
10	պարկ սուրճ	1125	հօ/ս. » 12	13500	31650
					<u>40710</u>
74			17		
Ծախսեցի կանխիկ Օրտուցի Չօրպանեան Յարութիւնին					
30	ծրար տպածոյ	910	երտ. դ. 2 1/2		2275
75			»		
Գնեցի Ռուսիոյ երկաթուղեաց բաժիններէն 10 հատ. դ. 45 ֆ.					
76			18		1980
Հետեւեալները վճարեցին իրենց պարտքն այսպէս					
Ա. Օհանեան					
	խմ/հ. իւր տոմսակը	61	աւուր	10000	
	5000 ֆր. թուականէն	51	աւուր		
Մարտիկա Թէքէեանի վրայ քաշուած					
	փոխանակադիր մը	դ. 23 , 10		12987	
	տոկոս 59	աւուր 0/0	45ն	85	13072
				<u>8320</u>	
	կանխիկ վճարեց			258	8578
	վար դրած զեղչը 0/0	3			<u>31650</u>
Բարսեղ Չամբարխանեան					
	խմ/հ. իւր տոմսակը	61	աւուր	4000	
	£ 40 Լօնտրայի փոխակադիր. Յամ-				
	սըւան դ. 110			4400	
	կանխիկ դրամ			660	9060
				<u>660</u>	<u>9060</u>
77			»		40710
Ղրկեցի Գուէտի Լիօնէին					
					30000
78			»		
Զեղչեցի Կէօմրիւքճիօղլուի 50 լիբանոց մի փոխանակա-					
կադիրը , վճարելի ապրիլ 21ին					

վճարեցի	4900	
վար դրած զեղչս 2 0/10	<u>100</u>	5000 —
<p>Տոմսակ և փոխանակագիր զեղչելու և զեղչել տալու գործողութիւնք սովորաբար ասիս և զեղչ հաշուով Օրհաշիւը կ'անցնին, սակայն այն սեղանաւորք, որք թղթերու վրայ շատ գործ կ'ընեն փոխանակ ամէն գործողութեան համար զատ զատ ասիս և զեղչ կամ շահեւէասի հաշիւը գործածելու, միայն տոմսակաց արժէքին այսինքն ծախու առնուած գնոյն և ծախուած գնոյն չափ պարտական և պահանջող կ'ընեն ասիսայ հաշիւներն. իսկ այս հաշուոց շահը կը գոյանայ տոմսակաց հաշուոյն տարբերութենէն, ընդհանուր ասիսներն պէս :</p>		
79	20 Փետր. 83	
Ստացայ հետեւեալներէն		
Պ. Ժամակոչեանէն	10000	
Եօրկաքի Փափազողուէն, իւր սլարտքին կէսը	<u>5287 1/2</u>	15287 20
80	»	
Ա. Օհանեանէն առած 3000 Ֆր.ի փոխանակագիրս զրկեցի Փարիզ Գոէտի Լիօնէին.		
81	21	
Ստացայ Շուսթըրներէն Մակտալա շոգենաւով իմ հաշուոյս զրկած 4 հակ 1025 ծրար տպածոյի հաշուեցոյցն, գումարը £ 520, 10, 7 իմ սլարտքիս անցուցեր են փետր. 5 թուականաւ.		
82	»	
Ղրկեցի Շուսթըրսըն և ընկն. £ 40 ի փոխանակագիր		
83	25	
Գնեցի Գոէտի Լիօնէէն ՚ի հաշիւ իմ ընթացիկ-հաշուոյս արժէք փետր. 21 թուականաւ £ 1500 4.		
109 1/4	163875	
Տոկոս անցած օրերուն	<u>110</u>	163985 —
84	»	
Հետեւեալ փոխանակագրերը զեղչել տալով փոխարէնը առի :		
Ա. Օհանեանի 61 աւուր տոմսակը	10000	
Միհրան Եղիազարեանի 61 աւուր տոմսակը	<u>10500</u>	
	<u>20500</u>	

կանխիկ առի	20170	
զեղչ 12 % տարեկան	330	20500 —
<hr/>		
85 ————— 24 Փետր. 1885 —————		
Գասթէլիի հրամանին տուած տոմսակո վճարեցի		15000 —
86 ————— » —————		
Հետեւեալ տոմսակները գանձեցի		
Նիքօլի էմմանուէլիտի տոմսակը	8500	
Միհրան Եղիազարեանի »	10500	19000 —
<hr/>		
87 ————— 25 —————		
Ծախեցի Յ. Նշանեանին ապառիկ		
£ 400 դ. 110	44000	
Տոկոս անցած օրերուն	30	44030 —
<hr/>		
88 ————— » —————		
Մակտալա շոգենաւով եկած 4 հակ տպածոյին մաք- սատուրքը վճարեցի		3100 —
89 ————— » —————		
Ծախեցի Պօղոս Աստարճեանի 91 օր պայմանաժամաւ		
4 սնտուկ ըսպարմաչէթ 450 քիլօ դ. 12	5400	
65 ծրար տպածոյ 2010 եր. դ. 2 1/2	5025	10425 —
<hr/>		
90 ————— 26 —————		
Ծախեցի հետեւեալներուն		
Գ. Մուրատեանին կանխիկ		
£ 500 դ. 109 7/8	54937 1/2	
տոկոս Լօնտրայի	50	54987 1/2
<hr/>		
Յ. Ստամպօլլուեանի ապառիկ		
£ 400 դ. 110	44000	
տոկոս Լօնտրայի	47 1/2	44047 1/2
<hr/>		
Կ. Համամճեանի		
£ 300 դ. 110	33000	
տոկոս Լօնտրայի	165	33165
<hr/>		
Կ. Համամճեան վճարեց	20000	132200 —
մնացեալը քանի մը օրէն վճարելի		

91	26 Փետր. 1885		
Քաղեցի Փարիզ Գուտի Լիօնէի վրայ հետեւեալները			
Փր. 3000. — Յամսեայ իմ/հ.			
» 2798, 85 2/ամսեայ հ/ Գ. Սիմօնեանի			
Փր. 5798, 85			25212
Այս փոխանակագրերը 23 Փր.էն պիտի հաշուենք, դնոյն և տոկոսի տարբերութիւնը 'ի հաշիւ չառնելով, որք 'ի վերջոյ մեր շահը պիտի կազմեն ծախուած ատեն .			
92	»		
Ծախեցի հետեւեալներուն			
Գ. Սիմօնեանի ապառիկ			
Փր.	2798, 85	2/ամսուան դ. 22, 75	12303
		տոկոս 30 աւուր 0/0 4	41 12344
Սէմէրճեան եղբարց կանխիկ			
Փր.	3000	3/ամսուան դ. 22, 80	13158
			25502
93	27		
Ղրկեցի Գուտի Լիօնէին			
			100000
94	»		
Գնեցի կանխիկ Պալապանօղլու սեղանաւորէն			
£ 58. 9. 5. Յամսեայ փոխանակագիր դ. 109 1/4			
			6588
95	»		
Եօրկաքի Փափաղօղլու սնանկանալով իւր պարտապահանքը հաւանեցան 0/0 60 առնել .			
Առի 0/0 60			3172 1/2
Ըրած վնասս			2115
			5287 20
Մնառկը 3172 1/2 դր. մտաւ, զոր վճարեց Եօրկաքի Փափաղօղլու որուն համար զինքը պահանջը պէտք է ընել, բայց որովհետեւ արդէն ինքը 5287 1/2 դր. պարտական եղած էր, ուստի մնացորդ 2115 դր.ին համար որ վնաս մ'է, շահեւնասը պարտական պիտի ընենք, որպէս զի Մայր—հաշուին մէջ Փափաղօղլուի հաշիւը գոցուի :			
96	28		
Գնեցի կանխիկ Կիւլպէնկներէն			
Փր.	7000	3/ամսեայ դ. 23, 10	30303
97	»		
Առի Գուտի Լիօնէէն			
			40000

98	28 Փետր. 83		
Պայմանաժամեին այսօր լրացեալ վճարեցի ,			
Գ. Խոսրովեանի հրամանին 6000 Փր.ի փոխա-			
նակագիրս դ. 23		26087	
Տօթիատիի հրամանին տոմսակս		10000	36087
99	»		
Ամսադլխոյ առթիւ հետեւեալ ծախքերս վճարեցի			
վաճառատան սլաշտօնէից ամսական		1200	
տան ծախուց համար		800	
անձնական ծախուց համար		300	2300
100	1 Մարտ		
Ղրկեցի Փարիզ Գուէտի Լիօնէին Փր. 7000			30435
101	»		
Ստացայ Շուսթըրսըն և ընկ.էն Սէսսթրիս շողենա-			
ւով իմ հաշուս դրկած 30 հակ մանածի հաշուեցոյցն ,			
դումարը £ 277. 9. 4 փետր. 20 թուականաւ իմ պարտ-			
քիս անցուցեր են .			30521
թ. 17/26	10 հակ վաթէր	12/14	20 կպ.նոց
» 27/36	10 »	20/24	» »
» 37/41	5 » կապոյտ	»	» »
» 42/46	5 » էքսթրա	»	40 »
	<u>30 հակ</u>		
102	»		
Ղրկեցի Շուսթըրսըն և ընկ. իմ ընթացիկ-հաշուս			
համար £ 300			33000
103	»		
Քաշեցի Փարիզի Գուէտի Լիօնէին վրայ			
Փր. 2500 3/ամսուան			
» 2000 1/ »			
» 3200 չէք			
<u>Փր. 7700</u>			33478 20
104	»		
Գնեցի Տարածի միջնորդին ձեռ.օք , փոխարէնը 5 օրէն			
առանց տոկոսի իրեն վճարելու պայմանաւ .			

£ 500	3/4	ամսեայ	Կիւմիւզկէրտան		
» 500	»	»	Նսայեան		
» 400	»	»	Վիթէլ		
» 600	»	»	Թօմսըն		
<hr/>					
£ 2000	դ. 109		$\frac{17 \frac{1}{2}}{40}$		218875
<hr/>					
105	2 Մարտ 1885				
Մօրեղբայրս մեռնելով ժառանգեցի իրմէ հետեւեալները,					
Պատրաստ դրամ				50400	
100 հատ երկաթուղեաց բաժին 38 ֆ.էն				16720	
Բերա Թագսիմին ետին թ. 71 սոււն մը				23000	
Կարասիք				1880	
Զանազաններու վրայ ունեցած պահանջքը				8000	
				<hr/>	100000
Այս գումարին դէմ պիտի վճարեմ իւր պարտքը մի քանիներու				20500	
Նաեւ իւր ըրած կտակը Ա.դգ. Հիւանդանոցին				9500	
				<hr/>	
Այս մասին պէտք եղած բացատրութիւնը տրուած է թ. 176—177 երեսը .					
Կարեւոր է յիշել թէ՛ սյլեւայներու վրայ եղած 8000 դրշ.ի պահանջքին համար Զանազան պարտական + Ժառանգութեան անուանով հաշիւ մը բանալու է :					
106	»				
Վճարեցի Ֆարաճիին թերհաշիւ					50000
107	»				
Ծախեցի կանխիկ					
£ 800	դ. 109	$\frac{3}{4}$		87800	
				Տոկոս Լօնտրայի	200
				<hr/>	88000
Ֆ. 3200	չէք	դ. 22,	$87 \frac{1}{2}$	13989	
Տոկոս 85 օրուան $\frac{0}{10} 3 \frac{1}{2}$				115	14104
				<hr/>	102104
108	3				
Վճարուած Ֆարաճիին					140000
109	»				
Ծախեցի կանխիկ					



Ֆ. 2500 3/ամսուան դ. 22, 80	10965		
Տոկոս 2 անուր 0/0 5	2		10967
Ֆ. 2000 1/ամսուան դ. 22, 77 1/2	8781 1/2		
Տոկոս 62 անուր 0/0 5	45 1/2		8827
			19794
<b>110</b> <del>.....</del> 5 Մարտ. 85 <del>.....</del>			
Ս. Յուլիանի փարիզ ճամբորդելուն պատճառաւ ուղեց որ իրեն 8000 ֆր. վարկ մը բանամ, զոր կատարեցի տալով իրեն վարկադիր մը ուղղեալ առ Գուէտի Լիօնէ 'ի փարիզ. ֆր. 8000 դ. 22, 85			
		35011	
	տոկոս 85 անուր 0/0 4	330	35341
փոխարէնը կանխիկ առի իրմէ			
<b>111</b> <del>.....</del> 4 <del>.....</del>			
Վճարուած Ֆարաճիին մնացորդը			
			28875
<b>112</b> <del>.....</del> » <del>.....</del>			
Սէսութրիսով եկած 30 հակ մանածներուն մաքսատուրքը վճարեցի			
			3500
<b>113</b> <del>.....</del> » <del>.....</del>			
Ղրկեցի Նաիրաքըլ տօնալաճառը հետեւեալ ապրանքները .			
425 ծրար տպածոյ 12750 երտ.			
25 » սեւ սաթէն բրդեայ 1182 երտ.			
թ. 17/21	5 հակ վաթէր 12/14	20 կպ.նոց	
» 27/31	5 » » 20/24	» »	
» 37/8	2 » կապոյտ	» »	
» 42/45	2 » էքսթրա	» 40 կպ.	
10 պարկ սուրճ մարթինիկի 1130 քիլօ			
Յիշեալ ապրանաց պատատման ծախք, նաւողչէք և վճարուած .			
			582
<b>114</b> <del>.....</del> 5 <del>.....</del>			
Գնեցի Կարապետ Չամբէրթէնեանէն 30 հակ, 1822 հօխ. թիֆթիկ ընտիր դ. 21 1/2 շրջ			
		39173	
վճարեցի այսպէս			
կանխիկ դրամ			
		173	
հրամանագիր մը Գուէտի Լիօնէի վրայ			
		39000	39173

115	Տարս 1885		
Փարիզի Գուտի Լիօնէն կ'իմացնէ թէ՛ փետր. 20ին իրեն զրկածս 3000 ֆր.ին զուտը ֆր. 2992, 25 իմ պահանջքիս անցուցեր է փետր. 26 թուականաւ, ըստ իւր զեղչի ցուցակին			
զուտ		ֆր. 2992, 25	
զեղչ		» 7, 75	
		<u>ֆր. 3000</u>	15045 20
116	»		
Մախեցի կանխիկ Մ. Գասպարեանի			
5 տական գինի Պօռտոյի 402 հօ/ս. գ. 10			
			4200 —
117	»	6	
Ժառանգած տանս զանազան նորոգութեանցը համար վճարեցի			
			1500 —
118	»		
Ժառանգած տանս Յամսեայ վարձքը ստացայ			
			2500 —
119	»		
Ժառանգած կարասիներս ծախեցի			
			2000 —
Կարասիքը 1880 զրշ.ի արժեցուցած էինք, 120 զոշ. աւելին համար շահեւ քնարը պահանջու ընելու է .			
120	»	7	
Վճարեցի Ազգ. հիւանդանոցին մօրեղբօրս կտակը			
			9500 —
121	»		
Մօրեղբօրս ունեցած պահանջքն ամբողջ գանձեցի			
			8000 —
122	»		
Մօրեղբօրս 100 հատ երկաթուղեաց բաժինները ծախեցի գ. 40 ֆր.			
			17600 —
Այս 100 երկաթուղիները 16720 զրշ.ի արժեցուցած էինք մեզի, հիմայ որ 17600 զրշ.ի ծախեցինք, ըսել է թէ 880 զրշ. շահ մը գոյացաւ, որուն համար լահե-քնարի հաշիւը պահանջու ընելու է .			
123	»		
Մօրեղբօրս զանազաններու ունեցած պարտքը վճարեցի			
			20500 —

124 ————— 8 Մարտ 1883 —————

Գնեցի Գաւիթ Նաուրեանէն  
17 պարկ 1620 հօխ. դահրի դ. 7.  
փոխարէնը 8-10 օրէն վճարելի

11340 —

125 ————— » —————

Մ. Գասպարեանի ամուսն Յին ծախուած 5 տակառ դի-  
նիի հաշուոյն մէջ 180 դրչի սխալ մը եղեր է, այսինքն ,  
փոխանակ 4020ի 4200 դրչ. առեր եմ, տարբերու-  
թիւնը 180 դրչ. իրեն վճարեցի .

180 —

Այս 180 դրչ.ին համար ընդհանուր ապրանք պարտական ընելու է,  
վասն զի յառաջագոյն նոյնչափ դումար աւելի պահանջող ըրած  
էինք դիտմամբ :

126 ————— » —————

Շուսթըր՝ փետր. 21ին իրեն զրկած 5 40ի փոխանա-  
կագիրս չընդունուելուն համար բողոքով ինձ ետ զրկեր  
և բողոքոյ ծախքի համար 5 1. 2. 3. փետր. 28 թուա-  
կանաւ իմ պարտքիս անցուցեր է .

4522 —

Մենք Լ. Ս. 40ի փոխանակագիրը զրկած ատեննիս Շուսթըրսըն  
և ընկ.ը պարտական ըրինք . հիմայ որ ետ եկաւ , զինքը պահանջող  
պէտք է ընել . նոյնպէս և Լ. Ս. 1. 2. 3. ի ծախքին համար ,  
ուստի Սիւրբի Ժիւնիսիւսի Լ. Ս. 40ին և շահեւճասը Լ. Ս. 1.  
2. 3ին համար պարտական կ'ընենք Շուսթըրսըն և ընկ.ն

127 ————— 10 —————

Ստացայ հետեւեալներէն	
Պ. Ժամակոչեանէն մնացորդ	12150
» » տոկոս	184
Կ. Համամճեանէն մնացորդ	13165
» » տոկոս	52
Յ. Նշանեանէն	20000
Յ. Ստամբուլուեանէն	20000

65551 —

128 ————— » —————

Շուսթըրսըն և ընկ.էն ետ եկած 5 40ի փոխանակա-  
գիրը բողոքագրով մէկտեղ ներկայացնելով Բարսեղ Զամ-  
պախճեանի , որմէ գնած է վայն , փոխարէնը ստացայ  
այսպէս .

Փոխանակագրին համար իրեն վճարածս	4400	
Այն օրէն մինչ այսօր 12 0/0 տոկոս	29	
Բողոքոյ ծախք £ 1, 2, 3 110 ֆն	122	4551 —
<p>Լ. Ս. 1, 2, 3ին համար Շահե-Քար և 29 զրշ. տոկոսին համար Տի... և 2եղև հաշիւը պահանջը պէտք է ընել :</p>		
129 ————— 10 Մարտ 1883 —————		
Գանձեցի այսօր հետեւեալ տոմսակները		
Միհրան Մալխասեանինը	3450	
Մինաս Տ. Միքայէլեանինը	17400	20850 —
130 ————— 11 —————		
<p>Իմ հաշուոյս ծախուելու համար զրկեցի Լօնտրա Եսայեանի տունը 17 պարկ դահրիներս . և նոցա փոխադրութեան ծախք վճարեցի :</p>		
		270 —
<p>Եսայեանի +սվ գահրիներս անուն հաշիւ մը բանալու է և 270 զրշ. ին համար զայն պարտական ընելու է :</p>		
131 ————— » —————		
<p>1/3ի ընկերութեան հաշուով գնեցի Պօղոս Մարգարեան և Սարգիս Մինասեանի հետ 33000 զրշի ցորեան և փոխարէնը վճարեցի կանխիկ :</p>		
		33000 —
<p>Այս մասին տեղեկութիւն տե՛ս թ. 169 —170 երես :</p>		
132 ————— 12 —————		
<p>Վերոյգրեալ ապրուանաց համար միջնորդութիւն վճարուած</p>		
		300 —
<p>1/3ի հաշուով ցորեան անուամբ հաշիւ մը բանալու է և զայն պարտական ընելու է այս 300 զրշ. ծախքին համար :</p>		
133 ————— » —————		
<p>Ղրկեցի Գուէտի Լիօնէին</p>		
		40000 —
134 ————— » —————		
<p>Փարիզի Գուէտի Լիօնէն կ'իմացնէ թէ՛ ամսոյս ին իրեն զրկած 7000 Փր.իս զուտը Փր. 6936 , 20 իմպահանջքիս անցուցեր է մարտ 7 թուականաւ :</p>		
Զուտ	Փր. 6936 , 20	
Զեղշ »	63 , 80	
	Փր. 7000	30435 —

135	15 Մարտ 1885		
Մախեցի կանխիկ Թօմարնին			
30 պարկ 1820 հօխ. թիֆթիկ, դ. 24		43680	
Միջնորդութիւն 1%		440	43240
136	16		
1/3ի հաշուով դնուած ցորեանները ծախեցի կանխիկ			
1/3ի հաշուով ցորեան հաշիւը պահանջող պիտի ընենք :			
137	»		
Մախեցի հետեւեալներուն			
Պ. Ժամակոչեանի ապառիկ			
£ 400 դ. 110 1/4		44100	
տոկոս Լօնտրայի		135	44235
Սալէմին կանխիկ			
£ 658, 9, 5 դ. 110 1/8		72514	
տոկոս Լօնտրայի		251	72765
138	17		
Վճարեցի Դաւիթ Նաուրեանի ունեցած պարտքս			
139	»		
1/3ի հաշուով ցորեանները ծախուած ըլլալով՝ հաշիւը պէտք է դոցենք այսպէս			
Ապրանաց վաճառման գումարը		36000	
Զեղչ՝ վճարուած միջնորդութիւնը		300	
		<u>35700</u>	
Այս գումարը պիտի բաժնուի երեքի			
1/3ը Պօղոս Մարգարեանի		11900	
1/3ը Սարգիս Մինասեանի		11900	
1/3ը իմ բաժնիս		11900	35700
140	19		
Ղրկեցի Գուէտի Լիօնէին			
141	»		
Ստացայ թերհաշիւ Եստիրաքը տօնավաճառէն թըղ- թատարով ծրար մը 200 Օամ. լիրայի			
			20000

142	19 Մարտ 1885		
<p>Գնեցի Շէրպէթճեանէ կանխիկ Փր. 5000 Յ/ամսեայ դ. 25, 02 1/2</p>			21715
143	»		
<p>Ղրկեցի Փարիզ Գուէտի Լիօնէին Փր. 5000</p>			21739
144	21		
<p>Լօնտրայ զրկած դահրիներու հաշուոյն քաշեցի Եսայ- եաններուն Լօնտրայի տան վրայ £150ի 1/ամսեայ փո- խանակագիր մը .</p> <p>Սկիզբնի փոխանակագիրը պարտաւան՝ և Եսայեանի +սէ գահրէներս հա- շիւը պահանջը պէտք է ընել :</p>			16500
145	22		
<p>Ստացայ հետեւեալներէն</p> <p>Պ. Ժամակոչեանէ 20000 Յ. Նշանեանէ 10000 Յ. Ստամպոլլուեանէ 15000 Գ. Սիմօնեանէ 5000</p>			50000
146	23		
<p>Ստացայ դարձեալ 'ի հաշիւ Եսայրաքը տօնավաճա- ռին 50 Օսմ. լիրայի 3 աւուր փոխանակագիր մը Գ. Թօրալեանի վրայ .</p>			5000
147	»		
<p>Ծախեցի Ղազարոս Ալվէրեանի 61 օր պայմանաժա- մաւ</p> <p>100 ծր. տպածոյ 3028 երտ. դ. 2 1/2 7570 Թ. 22/23 վաթէր 2 հակ. 20 կպ. դ. 810 1620</p>			9190
148	25		
<p>Գանձեցի Մամաս Սարայտարեանի տոմսակը</p>			20000
149	26		
<p>Գանձեցի Նիքօլի Էմիանուէլիտի տոմսակը</p>			8500
150	»		
<p>Եսայրաքը տօնավաճառի հաշուէն մնացեալը ստացայ այսպէս ,</p>			



Թղթատարով ծրար մը	20000	
Փոխանակագիր մը 3 աւուր Թէլիօղլուի վրայ	<u>22000</u>	42000 —
151 ————— 26 Մարտ 1885 —————		
Նաիրաքլը տօնավաճառը զրկած ասրանքներս զուտ բուններ են 67000 զրշ. հոն իրենց ըրած ծախքերը իջնե- լէ վերջը .		67000 —
վանորոյ այս հաշիւը պէտք է գոցել :		
152 ————— 28 —————		
Քանձեցի Ք. Թօրալեանի փոխանակագիրը		5000 —
153 ————— » —————		
Ծախեցի կանխիկ £ 150 Նսայեանի վրայ քաշած փո- խանակագիրս գ. 110 1/2	16575	
տուրս 67 աւուր 0% 3 1/2	<u>108</u>	16683 —
154 ————— » —————		
Ստացայ Նսայեանէն 17 սփարի դահրիներուս վաճառ- ման հաշիւն , դումարն է	£ 152 , 18 , 7	
իւր վրայ քաշած փոխանկգ. զեղչելով	» 150 , — , —	
	<u>» 2 , 18 , 7</u>	
Մնացորդը £ 2 , 18 , 7 իրենց հրահանգին համեմատ ստացայ հաստեղի իրենց տունէն գ. 110 1/2		323 20
Սնորհէ պարտան և Նսայեանի տւ գահրիներս հաշիւը պահան- ջալ պէտք է ընել :		
155 ————— » —————		
Գահրիներուն հաշիւը պէտք է գոցել վաճառման դումարն եղած էր	16823 1/2	
եղած ծախքը զեղչելով	270	
զուտն եղած է	<u>16553 1/2</u>	16553 20
Ընդհանուր սպրանտը պահանջալ և Նսայեանի տւ գահրիներս պարտա- ն ընելու է :		
156 ————— 29 —————		
Քանձեցի Թէլիօղլուի փոխանակագիրը		22000 —
157 ————— » —————		
Ղրկեցի Գուէտի Լիօնէին		100000 —
158 ————— 30 —————		
Վճարեցի Ֆօթիաթի հրամանին տոմսակս		10000 —

159	31 Մարտ 1885		
